Ltn
1835

1999

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ ԵՒ ԻՒՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՑ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ

ԵՒ

ԻՒՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՑ



Հ· ԲԱՐՍԵՂ Վ· ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Ի

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

1801

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1895

Հ§ 1841 91835-ա

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Իրաւունք այն սիրալիր ընդունելութենէն՝ զոր ցոյց տուաւ ազգիս ինասէր եւ քննասէր դասը ասկէց հինգ տարի յառաջ երկասիրած մեր մէկ Քննադատութեան, կը հրատարակենք եւ երկրորդը՝ յուսով հանդիպելու մի եւ նոյն ընդունելութեան: Այս անգամ մեր քննադատութեան նիւթ ընտրեցինք *Հ. Մանդակունի*, փոխանակ մի ուրիշ պատմագրական հեղինակութեան, որուն ուսումնասիրութիւնն անշուշտ կարող էր աւելի բազմակողմանի կարեւորութիւններ ունենալ քան զայս. սակայն հարկ կը համարիմ ծանուցանել ուշիմ ընթերցողաց, թէ ստուգիւ Մանդակունւոյ քննադատութեան ձեռք չպիտի զարնէի, եթէ անոր մէկ կարեւոր գրուածքը իբրեւ անհարազատ՝ երկբայութեան ենթարկուած չլինէր. երկրորդ շարժիչն եղաւ իմ հայասէր բարեկամս, Ուս. Եմիլիոս Տեզա, որ իւր ցոյց տուած մեծ համակրութեամբն առ Մանդակունի եւ հարցասիրութեամբ՝ իմ սէրս եւ գրիչս եւս շարժեց առ այն. ուստի սիրոյս եւ գրչիս արդիւնքն իսկ պիտի համարուի եւ ընդունուի իբրեւ դուզնաքեայ նուէր մի առ նա:

Թերեւս պահանջէին քննասէրք ազգիս՝ որ ես զմանդակուս նին իւր ժամանակով եւ մանր պարագաներով ուսումնասիրէի. սակայն այս իմ նպատակէս դուրս լինելով համդերձ, բոլորովին զանց ըրած չեմ. եւ անոր էական մասունքը պիտի գտնեն ընթերցողք՝ երկասիրութեանս Ա. գլխոյն մէջ։ Իմ գլխաւոր նպատակիս հետ՝ ուսումնասիրութիւնքս իսկ կեդրոնացած են Մանդակունւոյ ծանօթ հրատարակութեան գրչագրաց համեմատութեանց, քնագրի վերականգնման եւ վաւերաբանութեան մէջ. եւ այս պատեհաւս շատ կարեւոր խնդիրներ եւս բարգաւաճուած եւ լուծուած են. որք ազգային ուրիշ մատենագրական եւ եկեղեցական իրաց ապագայ քննութեանց դիւրութիւնները պիտի ընծեռեն։

Իսկ այսպիսի փոքրիկ աշխատութեանս ուրիշ վարձատրութեան աչք չունիմ, բաց ի այն հեշտորնկալ ընթերցանութենէն, որ պիտի լինի ինձ իբրեւ մի նոր խթան եւ խրախոյս՝ յօժարափոյթ մխելու յայլ ուսումնասիրութիւնս նախնեաց։

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՒՈՑ

ԵՒ

ԻՒՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԻ ՅՈՀ. ՄԱՆԴԱԿՈՒՆՒՈՑ ՎՐԱՑ

ԻՆԳԵՐՈՐԴ դարու մեր եկեղեցւոյ մէջ վայլող լուսաւիւս վարդանեարքն և հաստատեղոյս սիւներէն մին է մեծանուն հայրապետս։ Ընդհանրապէս երկրորդ, կամ լաւ եւս՝ կրասեր թարգմանչաց գասէն եղած կը կարծուի. բայց առանց տարակուսի կարող ենք ասել, թէ նաև Մովսէս. Խորենացւոյ հասակակից էր, իսկ ազնուատոհմութեամբն՝ ի վեր քան զամենայն։ Նա իբրև իշխանազն ազատորդի չատ հաւանական է, որ իւր մանկական դաստիարակութեան հետ՝ պատանեկութեան ուսմունքն իսկ առ ոտս կաթողիկոսին՝ Ս. Սահակայ[1] ուսած ըլլայ՝ յունարէնիս հանդերձ, և կամ Մեսրովբայ մեծ վարդապետի գպրոցին մէջ։

1. Աւ. այս նախ գիտել կու տանք, որ Ր. Կանանաբրէ մէջ Բան կանանչան գրութեան մի վայ մակագրուած է այսպէս. «Նորին Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի, Խաբֆրանէ ալէքերթելոյ ձեռն սրբոյն Սահակայ հայրապետին»։ Այս բանիս կրկին ուրիշ կռուանները եւս ունինք. նախ որ Ի. գրուս հեղինակաց քով քնաւ ակնարկութիւն չկայ, թէ Յոհ. Մանդակունին առ Ցոյնս գացած և հոն ուսած ըլլայ։ Ր. Մանդակունին կրասեր թարգմանչաց մէջ, — ինչպէս յետոյ եւս պիտի ցուցնենք, — առաջին և միակն է, կրնանք ըսել, որ ոչ միայն ազատ է յունաբանական թերութիւններէ, այլ ուղիղ ընդհատ յերեցպազան թարգմանչաց՝ զուտ հայկազեան։ Այս բանս ամենազժուար էր, չըսեմ անկարելի, եթէ նա առ Սահակայ, կամ Մեսրովբայ գպրոցին աշակերտած չըլլար և վայելչ դիրս իրեն ընտանեցուցած։

Ինչպէս մեր միւս թարգմանչաց, այսպէս և Մանդակունւոյ մասին մեզ հասած աւանդութիւնք գրեթէ ոչինչ են և անորոշ։ Ոակեղէն գարու առաջին կիսում հանդիպած այն ահագին ճգնաժամին մէջ իսկ՝ երբ հայրենիք և կրօնք կը համախմբուէին ի ժողովն Աբտաշատայ՝ Յազկերտի հրաւիրանաց և մոխրապաշտութեան դէմ, և եկեղեցական դասը քաղաքականին հետ ձեռք ձեռքի տուած՝ կը խորհէին և կը գործէին հասարակաց փրկութեան համար, Յոհաննու մասին բնաւ յիշատակութիւն չկայ. մինչդեռ Սահակ և Փարսման զոյգ մի Մանդակունիք կը փայլեն ի թիւս քաջաց Վարդանանց։ Կարելի՛ է արդեօք ասկէց հետևցնել, թէ այդ ժամանակ, այսինքն է յամին 450–453 Յոհ. Մանդակունի դեռ ոչ քահանայական ասպճանին հասած էր, և ոչ իսկ իբրև տոհմիկ՝ նշանաւոր դիրք ստացած։ Կարծեմ թէ ոչ։ Եւ ստուգիւ, Կորիւն՝ ի վերջկոյս Պատմութեան Ս. Մեսրովբայ, որ գրուած կը կարծուի անոր մահուանէն քիչ տարիներ վերջ, այսինքն է 445–450 ի միջոցին, յետ ձգելոյ զվարագոյր սըքսուր մահուան ամոլակից և զուգափառ վարդապետացն Սահակայ և Մեսրովբայ, իւր խօսքը կը դարձնէ նոցա աշակերտաց վրայ, և կ'ըսէ այսպէս. «Եւ զնորին աշակերտ Թոպիկ[1] անուն՝ զայր զգաստ և բարեպաշտօն, հանդերձ եղբարբք երանութեանն հասելոց՝ ապաստատոր սըրբոցն ի վտառ Աստուծոյ կարգէին, և զլխաւորս վերակացուս պեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց, որոց առաջինն՝ Յովսէփ ընտրեալ Ժողովոյն. և երկրորդն՝ այլ աշակերտ Յովհան անուն, այր իսկ սուրբ, վարդապետասէր և ճշմարտապատում. որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն (Յովսեփայ?), բազում ազգի ազգի փորձու-

1. Այս Թոպիկս անտարակոյս նոյն է խորենացւոյ Գ. Գրքի Կէ. գլխում յիշուած Թոպիկին հետ, որ զոյգ ընդ Վահանայ Ամատունւոյ յուզարկաւորք եղան Ս. Սահակայ և Մեսրովբայ։ Եղիշէ (Բ. եզ. և Թ. եզ.) և Ղազար կը յիշեն զնա յամին 444 Աբտաշատում ժողոված հարց մէջ, և նահատակուած կը համարին յԱսորեստան՝ ըստ Ղազարայ Բ. Դր. Գլ. ԽՀ. և ըստ Հ. Մկր. Զարհեանի՝ յամի Տեառն 454, որ ինձ անճիշտ կ'երևի։ Արդ՝ եթէ Թոպիկոյ նահատակութեան տարեթիւն Ղևոնդեանցին հետ նոյն իսկ համարինք, այն է յամին 453, այն ժամանակ դժուար կ'ըլլայ այս տեղիս՝ Կորեան հարազատ մի քան ընդունել. որովհետև ինչպէս Յովսէփ տեղապահն 451 էն վերջ չէր կարող յանձնել Կորեան որ Ս. Մեսրովբայ պատուէրները դրէ, այսպէս և Կորիւն այնպիսի մի փոքրիկ աշխատութիւն չէր կարող երկար տարի վերջ աւարտել, այլ նոյն տարին։ Իսկ արդ այս տեղ Յոհ. Մանդակունւոյ միջադէպն էս կը յիշուի, որ Յովսեփայ մահուանէն թերևս չատ վերջ հանդիպած ըլլայ։ Ձեռք այս նոյն փարպեցւոյ աւանդածին հետ. ուր կը յիշուին առանց մանրամասնութեան Մանդակունւոյ երթն ի պատերազմն, բանակիչն Յաբտազ, և անկանելն վիրաւոր ի Պարսից և վերադարձն ի Հայս։

թեանց և կապանաւոր վշտաց, մենամարտիկ երկպատական բռնութեան ի Տիզրոն քաղաքի, ուստ Փրխատոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. ուստ որոյ և զխոստովանողական անուն ժառանգեաց, ի նոյն վերակացու-ներ[1] դառնայր յերկիրն Հայոց»։

Կորեան յիշած Յովսէփն անտարակոյս Պաղնացին չի կրնար ըլլալ, այլ այն արդիւնաշատ երէցն՝ որ եղաւ տեղապահ կաթողիկոսական սթոռոյն, զոր խորենացի Գ. Գլ. Կէ. և Ղազար՝ Ա. Դրուագի մէջ վայոցձորեցի կ'անուանեն, ի խոզոցիմ գեղջէ։ Այսպէս ուրեմն յիշեալ Յովհանն ևս Մանդակունին ըլլալու է, և ոչ թէ եկեղեցացին։ Այս բանիս ի հաստատութիւն նախ դիտելու ենք, որ այն երիցունք և վերակացուք իբրև յանցաւոր տարուեցան ի Տիզրոն և դատուեցան, որոնք ժողովրդեան մէջ կ'ապրէին և կը գրգռէին ժողովուրդը Յազկերտի և մոգուց դէմ. իսկ այն վարդապետներն՝ որոնք քաշուած կեանք կ'անցնէին և գրականութեամբ կը պարապէին, յորոց մին էր և Յովհան եկեղեցացին, այնպիսի դժնդակ հարկի չենթարկուեցան բնաւ. և նոյն իսկ Ե. դարու միւս պատմագիրներէն ոչ մին ատանգած չէ, որ Յովհ. եկեղեցացին Տիզրոն տարուած և խոստովանող անունը ժառանգած ըլլայ երբեք։ Մանաւանդ Եղիշէն՝ ուրիերորդ եղանակին մէջ մի առ մի բոլոր նահատակուող և խոստովանող անուան արժանի եղող եկեղեցականներն յիշելով՝ Յովհան անունը բնաւ չյիշեր, որ յայտնի նշան է, թէ Կորեան մէջ յիշուած Յովհանն, ինչպէս և անոր Տիզրոն երթալու միջադէպը՝ մի ուրիշ ժամանակի վերաբերելի է, և ոչ թէ յամին 453 նահատակուող, և կամ հաւանօրէն անկէ մի տարի վերջ հանդիպած Ղևոնդեանց նահատակութեան ժամանակ։ Երկրորդ՝ դիտելու ենք որ Կորիւն այս տեղ զՅովսէփ՝ պեղապահ և ընտրեալ ժողովոյն կ'անուանէ, իսկ զՅովհան՝ աշակերտ։ Այս բանս Յովսէփ Պաղնացւոյ և Յոհ. եկեղեցացւոյ համար անհասկնալի է, վասն զի թէ փարպեցին թէ խորենացի և թէ նոյն ինքն Կորիւն նախնապար կը ծանուցանեն[2] որոշակի, թէ այդ վերջիններդ արդէն իրարու հաւա-

1. Վերակացու-ներ, վերակացու՝ բացատրութեամբ միայն եպիսկոպոս-ներ և եպիսկոպոսներ չեն հասկցուիր, այլ նոյն իսկ իբրև քահանայական վարչութիւն և տեսուչք հօտին, ըստ նախնեաց բացատրութեան։ Մանդակունին՝ իւր ճառերու մէջ այս վերջին իմաստով կը գործածէ։ Սակայն մենք կարող ենք ուղղակի եպիսկոպոսութեան իմաստով առնուլ զայն, և ըսել, թէ յամին 454 երբ Գիւտ՝ կաթողիկոսութեան աթոռը բարձրացաւ, նա չայրողեցաւ յետս կոչել զՅովհան ի Հայս և կարգել յեպիսկոպոսութիւն Մանդակունեաց, կամ մի այլ վիճակի։

2. Ղազար, Պատմ. Հայ. Ա. Դրուագ, էջ 41. — Մովսէս. Պատ. Հայ. Գ. Գրքը Գլ. ԾԳ.— Կորիւն՝ Պատմ. Ս. Մեսրովբայ, տպ. Վենետկոյ 1833. էջ 10։

կակից էին, և նոյն իսկ նշանագրոց գիւտէն անմիջապէս վերջ Ս. Մեսրովբայ հետ սկսան թարգմանել Սողոմոնի Առակաց գիրքը։ Երբորդ՝ Շահապիվանի[1] ժողովի Հարց մէջ դարձեալ կը յիշուին Յովհէ և Յոհան զուգակից երիցունք. և Սահեփաննոս[2] Սիւնեցիէն գիտենք, թէ այդ տեղ յիշատակուածն է նա ինքն Յոհ. Մանդակունի նեցին. վասն զի խօսելով Սիւնեաց մեռրապոլսին Անանիայի վերայ, կ'ըսէ. «Գնաց ի ժողովն Շահապիվանի, ուր էր և Յովհան Մանդակունեցի և արարին կանոնս»։ Ուրեմն տարիներ յառաջ, այն է յամին 446–448 համախմբուած ժողովին մէջ իրրև պատուաւոր երէց բազմոյ Յովհ. Մանդակունին՝ կարէր և պէտք է որ գոնուէր նաև 450ին մօտ գումարուած Աբրահատու ժողովոյն մէջ. և չյիշուելուն պատճառն այն է, որ կամ եղիչէ և Ղազար՝ միայն եպիսկոպոսաց անուանքն ուզած են յիշատակել. և կամ այդ ժամանակամիջոցին գուցէ թէ Յոհ. Մանդակունի բացակայ էր, այսինքն է, կը գտնուէր այն իշխանական տոհմերէն հաւաքուած ազատանի մանկտեաց խմբին մէջ, որոց համար կ'ըսէ Ղազար Բ. Դրուագի ԽԲ. գլխուն մէջ, թէ «ըստ քաջոյ իշխանին Սիւնեաց յառաջագոյն տայր (Յազկերտ) խաղացուցանել ի Տիգրան»։

Մանդակունի ծնած է Աբշարունեաց Ծախնոտ[3] գիւղը։ Ղազ. փարպեցին՝ առ վահան Մամիկոնեան գրած թղթոյն մէջ կը ծանուցանէ, թէ էր նա եղբօրորդի մեծանուն կաթողիկոսին Գիւտի կամ Գատայ, որուն հանգանման բարեմասնութեամբք իսկ ճոխացած էր ի բնէ։ Ոչ ոք մեր հին մատենագիրներէն որոշակի նշանակած է Յովհաննու ծննդեան ճիշտ թուականը։ Մեծ տարաձայնութիւն մ'այլ անոր կաթողիկոսութեան և մահուան տարեթուոց մասին կը տիրէ պատմագրաց մէջ։ Հիներէն ոմանք[4] Գատայ անմիջական յաջորդ կը

1. Շահապիվանի առաջին ժողովն եղած կը կարծուի յամի Տեառն 446։ Տես Հ. Ղ. Ալիշանի Այրարատ, էջ 518–519։

2. Պատմ. Սիւնեաց, գլուխ ԺԵ։

3. Տես Սահեփ. Առաղիկ, Պատմ. Բ. Գլուխ Բ։ Իսկ ուրիշներ՝ ուրիշ կերպ կը գրեն.

4. Ղ. փարպեցին Դրուագ Բ. Գլ. ԿԲ. «Յետ կատարման սուրբ կաթողիկոսին Յովսեփայ՝ յաջորդեաց զկաթողիկոսութիւն աչխարհիս Հայոց տէր Մեսրոբ, որ էր յազգէն Մանազկերտացեացն և զհետ նորա տէր Մովսէս, որ էր ի նոյն ազգէ... ապա տէր Գիւտ»։ Իսկ Գիւտի մասն յիշատակելէն վերջ՝ այնուհետև կը սկսի Յովհ. Մանդակունին յիշել իբրև կաթողիկոս։ Յոհան կաթ. Պատմ. ապ. ի Մոսկուա էջ 55 կ'ըսէ. «Զայսու ժամանակաւ մեծ հայրապետն Գիւտ, որ յՈմիմոյ գեղջէ՝ կացեալ ամս ոտան յաթոռ հայրապետութեան՝ վախճանի։ Եւ վնիւ նորա յաջորդէ ղՏիոս հայրապետութիւն Յոհան Մանդակունի»։

թուին ցուցնել զնա. բայց ընդ մէջ Գիւտի և տեղապահին Յովսեփայ Վայոցձորեցւոյ կը կարգեն չՄելչ ոմն յամին 452–456, և չՄովսէս յամին 475–479. ոմանք[1] միաժամանակ իսկ կաթողիկոս ընտրուած կը համարին զՅովհ. Մանդակունի Պարսից բաժնին վրայ, իսկ զԳիւտ՝ ի կողմն Յունաց։ Հուսկ ապա ոմանք[2] ի նոր՝ Թովմայ Արծրունւոյ հետևելով չԲրէյոփոփոր (Ա.) կը գնեն Գատայ և Մանդակունւոյ մէջ տեղ, մօտ յամն 475–479։

Բաց ասոնք կայ ուրիշ չփոթութիւն մ'այլ նկատմամբ ոմանց՝ յորս վարեցին զկաթողիկոսութիւն Գիւտ և Մանդակունի։ Սահեփաննոս Առաղիկ՝ Բ. Գլ. Բ. և Յովհ. Կաթողիկոս պատմագիր՝ 10 տարի կը հաշուեն կաթողիկոսութեան առաջնոյն. ըստ Սամուէլի Անեցւոյ՝ 14 տարի, այսինքն է՝ յամի Տեառն 470–484։ Իսկ Կիրակոս՝ ընդհակառակն՝ 15 տարի կը հաշուէ։

Հ. Մկր. Զամչեան առաջին կէտի նկատմամբ կը հետևի մերթ Ղազարայ, ընդունելով իրրև պատմական Մելեհի և Մովսէսի կաթողիկոսութիւնը. և մերթ կը տարաձայնի անկէ՝ ճանչնալով Թովմ. Արծրունւոյ հետ Մանդակունիէն յառաջ Քրիստափորը, զոր Ղազար և Յովհ. պատմագիր կաթողիկոս գլխովին կ'անգիտանան։ Գ. խաչատեանց՝ իւր ծանօթ մի երկասիրութեան[3] մէջ իրրև ամենատոյգ հաստատելով Ղազարայ վկայութիւնը, իրրև սխալ յայտնապէս կը մերժէ Զամչեանի փաստերը Քրիստափորի մասին։ Սակայն ինձ այնպէս կ'երևի, թէ ոչ միայն Զամչեան, այլ նոյն իսկ Ղազարայ ընծայուած տեղին կասկածելի է և քննութեան կարօտ։

Նախ և յառաջ Յովսեփայ Պարսկաստան տարուելէն, այն է 452 էն մինչև 465, որ կը նշանակուի իրրև տարեթիւ կաթողիկոսութեան Գատայ, կայ 10–12 ամաց միջոց մի. և ըստ ինքեան այդ նեղ միջոցին իսկ կարէին երբարու յաջորդել Մելէտ և Մովսէս. բայց թէ իրօք յաջորդեցին, այս մասին ես չատ կը տարակուսիմ, ոչ եթէ Ղազարայ՝ այլ անոր ընծայուած յիշեալ տեղւոյն վրայ կասկածելով, որ նախ և յառաջ այնպիսի պարագաներ[4] ցոյց կու

1. Վարդան Պատմիչ ապ. Վենետկոյ գլ. ԻԸ. էջ 55 համաձայն Ղազարայ և Յոհան կաթողիկոսի՝ իւր կարծիքն յայտնելէն վերջ, կը յաւելու, թէ «կէսք՝ ի կողմն Յունաց ասեն զԳիւտ կաթողիկոս. և զՅովհան ի պարսից ի միում ժամանակի»։ Մեծն Վարդան որուն ժամանակագրական սխալներն մեծագոյն ևս են, կը չփոթէ զՅովհ. Մանդակունին՝ Յովհաննէս Բ. կամ Գ. բոլորի հետ։

2. Հ. Մկր. Զամչեան և անոր հետևող նոր պատմագիրք։

3. Ղազար փարպեցի և իւր նոր, տպ. Մոսկ. 1883, էջ 104։

4. Ես առաջիւ՝ գիտելու ենք նախ՝ որ այստեղ Մելեհի համար կ'ըսուի, թէ

տայ մեզ, որոնք նոյն իսկ Ղազարայ ուրիշ տեղ աւանդածներուն կը հակառեն։

Բ. Բոլոր այն հին և միջին պատմագիրք, ինչպիսի են Յովհ. Պատմիչ, Ասողիկ Բ. Գլ. Բ. Վարդան, Կիրակոս և Սամուէլ, որոնք Ղազարայ հետ ընդունելով զՄանդակունին իբրև անմիջական յաջորդ Գիւտի, չեն ճանչնար զՄելէտն և զՄովսէս՝ իբրև նախորդ կաթողիկոսներ։ Եղիշէն՝ առաջինը միայն կը յիշէ Աբրահամեան ժողովոյն մէջ՝ իբրև սոսկ եպիսկոպոս մի. Թովմ. Արծրունեն ևս կը յիշէ առանձին Ս. Յովսեփայ այսպէս. «Ղեւոնդ... տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս (երէց) և Մովսէս և Մեղէս[1]»։ Իսկ որովհետև անկարելի է այսպիսի մի բան, եթէ նոքա Ղազարայ հին ձեռագրաց մէջ հանդիպած ըլլային այնպիսի պատմական որոշ վկայութեան. ուրեմն պէտք է ըսել, թէ կամ Ղազարայ այդ տեղին անհարազատ գրչէ մի յետոյ ներմուծուած է, և կամ իրեւ լոկ տեղապահներ են անոնք յաչս Ղազարայ, ինչպէս Ղեւոնդ և Յովսէփ, — գուցէ և այն Հայոց մի մասի հաւանութեամբ միայն. և թէ այդ պատճառաւ իսկ ինչպէս Ղազար՝ իրր կաթողիկոսներ չյիշել արժան համարած է, այսպէս այլ միւս պատմիչներն իրրև ոչ կաթողիկոս ի լռութեան դատապարտած են զանոնք։

«Էր յազգէն Մոկացւոց, մինչդեռ ուրիշ տեղ եղիշէի մերձաւոր ձեւով «Մոկաց ՚ներոյ» կը գրուի առ Ղազարայ։ Այս տեղ Գիւտի համար կ'ըսուի, թէ «էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Աբահեղց», զոր ուրիշ պատմագիրք քնաւ յիշած չեն. մինչդեռ կԻ. գլխու մէջ, ընդհակառակն, գրուած կը գտնենք, թէ էր նա Վշնասդ գաւառի Որմոս գիւղէն, ուր և թագնցաւ ի դիրս հարց իւրոց։ Բ. Դիտելու է, որ ԿԲ. գլուխն՝ յորում կը յիշուին Մելէտ և Մովսէս կաթողիկոսք, մինչանկուլ մի բան է, որ ոչ միայն իւր նախորդ և հետևորդ գլխոց հետ սերտ կապ չունի, այլ նոյն իսկ կրկնութիւն է անցելոց բանից Ղազարայ։ Օրինակով պարզենք։ Ի վերջկոյս ԿԱ. գլխու վերջին պարբերութեան կ'ըսուի վասն կապելոյն Հայոց, թէ Պետրոս Թարգմանչութեան վերադարձ տարին ազատուած վերադարձան ի Հայս. և վախճանելով Թադեւսեան ի դիրս հարցն իւրեանց։ «օրհնեալք ամենեքեան ի քերանոյ սուրբ կաթողիկոսին Գիւտայ»։ Իսկ ԿԲ. վերջին պարբերութեան մէջ դարձեալ կը պատմէ Ս. Վարդանայ եղբօր Հմայեկայ վնասի և որդւոց ազատման մասին՝ յաւուրս, այն է «յամին հօթեւտասաներորդի Յազկերտի գահակալութեան», որ տարիներ յառաջ էր քան զՊետրոս, ըսելով. «զոր ըզեղեն վաթսուն խղդրեայ պարգեւս ի յաղքատէն Պարսից Յազկերտէ»։ Նոյնը կը կրկնէ նաև Գ. Դրասխանակերտցին, իբրև նոր բնչ։

1. Այս անուանս տարբեր ձեւով գրուելն, այսպէս նաև Աբծրունեայ յիշած միւս պարագաներէն յայտնի կը տեսնուի, թէ Թովմա՝ Ղազարէն փոխ առած չէ այդ տեղին։

Գ. Ունինք ընտիր գրչութեամբ[1] երկու հին և վաւերական յիշատակարաններ, ոմով գրուած, որոց առաջնոյն մակագիրն է. Ժամանակ[2] կաթողիկոսացն Հայոց, ևյ երկրորդին՝ է Շարագրոցն[3] հայրապետացն Հայոց։ Այս կրկին և ըստ ամենայնի պատմական գրուածոց ձեռքով կարելիք բոլորովին պարզուած համարել խնդրոյ նիւթ եղող կաթողիկոսաց, այսինքն է Մելէտի, Մովսէսի, Գիւտայ, Բրխատփորի և Յովհ. Մանդակունւոյ քօղի տակ ծածկուած և կնճռոտ հանգոյցը։ Ցիշատակարաններուս՝ առաջնոյն մէջ՝ Յովսէփի անգամ կաթողիկոսաց կարգն անցուած չէ, այլ անմիջապէս յետ սրբոյն Սահակայ Պարթեւի՝ կու գայ «Տէր Գոգ[4] ամս Ժէ։ Տէր Յովհան Մանդակունի՝ (ամս) ԺԲ։ Տէր Բաբգէն՝ Ե։ Տէր Սմուէլ՝ Ժ։ Տէր Մուշէ՝ Ը։ Տէր Սահակ՝ Ժ։ Տէր Բրխոսփոր (առաջին) Զ»։ — Իսկ երկրորդն՝ յետ Ս. Սահակայ, զոր «Սուրբ հանուրդի» կ'անուանէ, կը կարդէ այսպէս. «Սրբակ՝ յաւուրս մեծին սրբոյն Սահակայ՝ ամ մի. և յետ կատարմանն (իմա՝ Սահակայ) այլ ևս ամս Զ։ Տէր սուրբ Յովսէփ յաշակերտութենէ Ս. Մեսրովբայ՝ ամս Գ։ Տէր Գէորգ ի վանանդայ Ոլոմաղ գեղջէ, յաշակերտութենէ սրբոյն Սահակայ՝ ամս Ժ։ Սա ընդ առաջինն կոչեալ՝ հաստատեաց զաթոռ հայրապետութեան ի Դւին, ղինէ կոտորման սրբոց վարդանանցն։ Տէր Յովհան Մանդակունի՝ յազատ տանէ՝ ամս Զ։ Տէր Բաբգէն՝ ի վանանդայ

1. Մին է Ագաթանգեղեայ Զ. օրինակն, որուն յէջ 347 կայ նաև Նշանաւոր կրթութ Բանէն Եղիան Երէցու և Գրիգորի Յամախասպատումը։

Իսկ միւսն է Զ. Մաշտոցի Սոց, մարգարտաշար բոլորգիր՝ նուրբ մագաղաթի վրայ գրուած յամին 1345, ի խնդրոյ Տէր Յովհաննէս արշիեպիսկոպոսի և ամենայն սուրբ առաքելոյն Բարգողիմէոսի։ Գրիչն է Գրիգոր գպիր, և գրած է գեղ ասիլի հին գրչագրէ մի։

2. Այս պատառիկս՝ որ իրրև ամբողջացուցիչ ցուցակ մի կը յաջորդէ եղնկայ «Նշանագիր կարգաց» կաթողիկոսաց գրութեան, որ ի գարու առաջին քառորդին, այսինքն է, յամին 925–926 գրուած է. որովհետև Ս. Լուսաւորչէն սկսեալ կաթողիկոսաց ցանկը՝ կը հասցնէ մինչև Սահականաս Բ. որ յամին՝ 925 եղաւ կաթողիկոս, և յամին 926 վախճանեցաւ։

3. «Աբգ գինի համբարձման Տեառն մերոյ» հակիրճ յատաջաբանով մի կը սկսի հայ կաթողիկոսաց պատմական վիպագր յետեալ ժամանակագրութիւնն, և Ս. Գրիգորէ սկսեալ, և կը հասցնէ մինչև Սահակ Յակոբ կաթողիկոսի փոխանորդ Տէր Մխիթար Գոշներցւոյ ժամանակը։ Այս յիշատակարանս՝ թէ անուանց և թէ պատմական նորոգութեանց յիշատակութեամբ առաջինէն աւելի յարգի է, քան իս։

4. Առանց երկբայութեան այս տեղ յիշուած Գագը՝ նոյն է հետագայ յիշատակարանին մէջ յիշուած Գիւտ Վանանդացւոյն հետ. զի եղիշէ և Ղազար իսկ գիտեն «Տէր Գագ Վանանդեցի եպիսկոպոս» յամին 450։

Ոթմուզ գեղջէ, ամս Զ։ Տէր Սահ–էլ՝ ի Բղնունեաց՝ ի գեղջէն Աբիկէր, ամս ժ։ Տէր Մո–չէ՝ ի Կոտաց՝ ի գեղջէն Աքբելէց՝ ամս Ե։ Տէր Ղբէսոփոր՝ ի Բագրեւանդայ՝ ի գեղջ Տէրա–ծոյ՝ ամս Ե» ...։

Արդ՝ չնայելով այս կրկին յիշատակարանաց մէջ նշանակուած կաթողիկոսաց տարեթիւներուն իրարմէ ունեցած տարբերութիւնքը, զոր ճիշդ ժամանակագրական միջին հաշուով[1] մի կարենք իրերաց համաձայնեցնել, երկուքն ևս Գիւտէն յառաջ Մելէտ և Մովսէս կաթողիկոսներ բնաւ չեն գիտեր, և ոչ իսկ զԲրիատափոր անն՝ զոր Թովմ. Արծրունի և Հ. Մխ. Զամչեան կը դնեն ընդ մէջ Գիւտի և Մանդակունւոյ, այլ ասկէց 21–36 տարի վերջ։ Եւ երկաքանչիւրին վկայութիւնն այնքան ուժգին հիմնաւոր համարելու ենք, որքան որ անոնք իրարմէ բոլորովին անկախ և հնագոյն աղբիւրներէ յառաջ եկած են։ Վերջին յիշատակարանի մէջ Գիւտի համար եղած այս բացատրութիւնս, թէ «Սա ընդ առաջինան (այսինքն է՝ ընդ Յովսեփայ և Մեսրովբայ՝ զոր յիշեց անմիջապէս) կացեալ՝ հաւատոցեաց ընծա հայրապետութեան է Դ–ին, ընկէ կոպրման արքոյ վարդանանց», յայտնապէս կ՝ակնարկէ Գիւտի կաթողիկոսընտրութեան ժամանակամիջոցն, այն է 453–454, յորմէ չորս տարի յառաջ կատարուած Արտաշատու ժողովի պաշտօնագրին[2] մէջ՝ իսկ Տէր, այսինքն է իրրև եպիսկոպոս արդէն յիշուած է։ Ուրեմն այս թուտյս վերայ աւելցնելով անոր կաթողիկոսութեան 17 տարիները՝ ըստ այսմ նորա մահն եղած կ՝ըլլայ յամի Տեառն 470–471[3]։

1· Դիտելով որ երկու ժամանակագրութեանց մէջ եղած տարբերութիւնը կը կայանայ գլխաւորապէս Սուրմակի և Յովսեփայ տարեթուոց վրայ, զոր զուտ թողուցել է ժամանակ հայր· Հայոց գրութեան հեղինակն, և անոնց տեղ Գիւտի և Մանդակունւոյ տարիները աւելցուցեր է· ուստի եթէ այս վերջնոց վրայ բարդենք Յովսեփայ տեղապահութեան 7 տարիները, յետ Սուրմակայ, — այն ժամանակ Սուրմակայ կաթողիկոսութենէն մինչև Մանդակունւոյ կաթողիկոսութեան վերջին տարին կը հաշուին 29 տարիներ, ըստ երկաքանչիւր ժամանակագրութեան։

2· Եղիշէ՝ Բ· եզ· Պատճէն թղթոյն առ Յազկերտ· Գ· Փարպեցի, Բ· Դրուագ· Գլ· ԻԳ։

3· Այս թիւերս խիստ քիչ կու գան, և քնաւ չենք կրնար միաբանել Ղազարայ պատմագրութեան և Սեբէոսի քով եղած պատմական տոյժ անցից հետ, որոնք բոլորովին տարբեր ժամանակագրական կէտեր կը ներկայացնեն մեզ։ Փարպեցին՝ Գ· Դրուագի, այսինքն ԻԳ· գլուխն մէջ Մամիկոնեից Գագիկայի սուտ զրպարտութիւններն առ Պերոզ, և ապա կոչէն զԳիւտ ի գուռն արքունի պատմելէնքիչ յառաջ՝ կըսէ տուրք կաթողիկոսին համար, թէ «Ադաբէնի գաղտ և պատգամաւորս միանգամ և երկիցս առ թագաւորն Յունաց Լևոն»։ Արդ՝ Սեբէոս՝ տպ· կ· Պոլսի 1851, Դպր· Բ· էջ 39, կ՝ըսէ Յունաց այս բարեսէր կայսր համար, թէ «Յոմէ ԻԵԲԲԴԲ Պե-

Իսկ գալով Մանդակունեցւոյն՝ կը հետևի, — այդ յիշատակարանի աւանդածին համեմատ, — որ նա իբրև անմիջական յաջորդ Գիւտի՝ յամի տեառն 471–472 ընտրուած լինի կաթողիկոս, և 483–484ին կնքած իւր մահկանացուն, եթէ ուրիշ միջանկեալ դէպքերու և դժուարութեանց պատճառաւ կաթողիկոսական աթոռն պարապ մնացած մի չտանք։

Բայց մեկ կողմէն ի նկատի առնելով Գիւտի և Մանդակունւոյ ժամանակ Պարսից՝ Հայոց հետ ունեցած քաղաքական լարուած յարաբերութիւններն, և մեւս կողմէն այլ կաթողիկոսական աթոռոյ պարապ մնացողները, զոր թէև չեն հաշուեր ոչ վերոյիշեալ ժամանակագրութեանց հեղինակներն և ոչ այլ հին պատմագիրք, բայց անհրաժեշտ եղելութիւնք են, այն ատեն չենք կրնար ընդունել, որ Գիւտի և Մանդակունւոյ կաթողիկոսութեան տարիներն այդ թիւերու անցուկ չըլլանէն ապին անցած չըլլան։ Ուրեմն հարկ է ուրիշ կերպ մեկնաբանել այդ յիշատակարանաց աւանդածները։

Սամուէլ՝ իւր ժամանակագրութեան մէջ Գիւտի ընտրութիւնը կը դնէ 470ին, իսկ մահը՝ 484։ Մանդակունւոյ կաթողիկոսընտրութիւնը՝ յամին 485, իսկ մահը 496ին։ Աղեցի ժամանակագրին ընծայած այս տարեթիւերս անշուշտ չափազանց պիտի երևին. և հետևեալ հակաժամանակագրական սխալներն[1] իրաւամբ աւելի

բով՝ թագաւորէ Լևոն զառաջինն»։ Այսպէս կ՝ըսե նաև Ղազար կՋ· գլխուտ, յարելով և Վազգէնի մահը Վրաց Վախթանգ թագաւորի ձեռքով։ Իսկ որովհետև այս դէպքս կու դայ ճիշտ յամի Տեառն 482–484· որովհետև ըստ Նոլտէկի (Tabari, էջ 435, և ցուցակ Սահ· թագաւորաց) Պերոզ 457–459, Յուլիս 30 գահակալած է· ուրեմն կրնանք ըսել, թէ Գիւտ կաթողիկոս 483–484ին դէտ կենդանի էր։ Իսկ եթէ անոր ի Տիզբոն երթալուն և յաղթանակաւ վերադառնալուն համար իսկ առնուազն մի տարի հաշուենք, կ՝ունենանք 485 թուականն՝ իբրև վերջակէտ կաթողիկոսութեան և պատուական կենաց Ս· Հայրապետիս։ Ղազարն ևս Գլ· ԿԻ· ճիշդ այս ժամանակս կը դնէ նորա մահը՝ «երկայն ծերութեամբ», և ԿԵ· գլխուտ կը շարունակէ նոյն ուրացող Գաղիշոյի քստութիւնքը Վահանայ դէմ, զոր ԿԳ· գլխու մէջ սկսաւ։ Ասկէց առքը այլ ևս Գիւտի վրայ չի խօսուիր առ Ղազարայ· կաթողիկոսի կատարեալ պատմութիւն մի զգալի կ՝երևի։

1· Այդ սխալները մի առ մի այստեղ ուղղելն աւելորդ կը համարիմ, վասն զի այն ուղղելի տարեթիւերն արդէն ամենուն ծանօթ են· միայն դիտել կու տանք, որ Ներսիսեան ընծայած 53–54 տարեթուոց մէջ կը պատուհասուին նոյնպէս անոր նախորդին փառներսէհի և յետագայ կաթողիկոսաց Սահակայ Հարքացւոյ, Զաւէնի և Ասպետարակեցի 20 տարիները· և թէ այս պատճառաւ է, որ Սամուէլի ժամանակագրութիւնը կը կարգայ։ Իսկ Ս· Սահակայ կաթողիկոսընտրութեան տարեթիւն է 398–399, և ոչ թէ 417, որ զերծ գիւտէն ալ 13 վերջ կ՝երևնայ, հակառակ ակնյայտնի վկայութեան Կորեան· և մահը՝ 439ին։

կարծես կասկածելի կ՚ընեն նաև նախընթացները։ Այս ինքն է՝ նա Ս. Սահակայ ընտրութիւնը 417ին և մահը կը դնէ 467ին. Ղազկեդոնի ժողովն՝ յամին 472, և Եփեսոսի Ա. ժողովն 438. Մեծին Ներսէսի ընտրութիւնն՝ յամին 370, և մահը 403։ Հ. Մկ. Զամչեան միջին ճամբայ մի ցոյց կու տայ մեզ. այսինքն է, անոր հաշուով Գիւտ կաթողիկոս ընտրուած է յամի Տեառն 465, և վախճանած է 474ին[1]։ Իսկ Մանդակունին ընտրուած է 480ին, և վախճանած յամին 486։ Նալբանդեանց՝ Ղ. Փաւստոս Բուզանդ, տպ. Պետերբուրգ. 1868, էջ 74, և Գ. Խալաթեանց՝ Ղ. Փաւստէ և իւր ժամանակին, տպ. Մոսկուա 1883, էջ 45, Մանդակունւոյ ընտրութիւնն 480ին և մահը՝ 487ին կը դնեն։ Այս երկու հեղինակաց առաջինը՝ պարզ Մ. Էմինին հետևած է. իսկ երկրորդը՝ Ղազարայ Թղթի գրութեան ժամանակին և ուրիշ մի հանգամանքի[2] վրայ հիմնուած, որ աւելի անտարակոյս է, քան թէ Մանդակունւոյ կաթողիկոսընտրութեան և մահուան թուականները։

Արդ՝ մենք ունենալով մեկ կողմէն իբրև հաստատուն յենակէտ՝ Գիւտի մահուան տարեթիւն՝ այսինքն է ամն 484–485, և միւս կողմէն Մանդակունւոյն՝ անմիջապէս, այսինքն է առանց Քրիստափորի, կամ մի այլ անձի անոր յաջորդելը, կ՚ընտրենք դնել աւելը հայրապետաց կաթողիկոսընտրութիւնը յամին 485, իսկ մահը 498–499։ Ապացուցանենք զայս դրական փաստերով։

1. Այս տարեթիւս բացարձակապէս անմիաբանելի է Ղազարայ կԴ. գլխուն և Սեբէոսի Բ. Դպրութեան մէջ յիշուած Յունաց Լևոն կայսեր առաջին ամի և Պերոզի 25 երորդ ամին հետ, զոր վերի ծանօթութեան մէջ նշանակեցինք, ըստ Նոլդեկէի։

2. Խալաթեանց համարելով,—չգիտեմ ինչ հաշուով,—որ Ղազարայ Թուղթը 487ին գրուած է, և որովհետև այդ Թղթի մէջ Ղազար իբրև Վախճանեալ կը յիշէ զՅովհան Էջմանձկ. ուրեմն, կը հետևցնէ նա, թէ Մանդակունւոյ մահը 487ին ըլլալու է։

Մենք ընդունելով հանդերձ, որ Փաւստեցւոյ Թուղթն առ Վահան գրած ժամանակ իրօք Մանդակունի մեռած էր, սակայն չենք կրնար համաձայնիլ Խալաթեանի այն կարծիքին, թէ այն Թուղթը 487ին գրուած ըլլայ. այլ մանաւանդ թէ 498էն իսկ վերջ։ Ղազարայ դէպ ի Եգեսիք նզովելէն և Բագկեդոնի ժողովն ընդունելէն ետևտարած Խալաթեանցի ամենազօրեղ փաստն իսկ՝ մեզ համար նշանակութենէ զուրկ է. վասն զի Ղազար նոյն իսկ Վաղարշապատու ժողովէն վերջ իւր Թուղթը գրելով, կարող էր նոյն բանն ընել՝ առանց նզովքի ենթարկուելու, ինչպէս ըրին անկէց վերջ ծագող մեր մատենագիրներէն և կաթողիկոսներէն ամենանշանաւորներն, որոնք ոչ միայն չի բանադրուեցան, այլ իբր սուրբ և ս. ծնունդն Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ։ Բ. Դիտելու է, որ Վաղարշապատու, կամ ըստ իս Դունայ ժողովը Բաբգէն գումարեց, Զենոն կայսեր Հենոթիկոնի խնդիրն քննելու համար, որ 491–518 ժամանակամիջոցին մեծ յուզումն պատճառել Արևելեայց և Արևմտեայց մէջ։

Ինչպէս Գիւտի՝ այպէս և Մանդակունւոյ կաթողիկոսական գահը բարձրանալուն և մահուան մասին Ղազար որոշ բան մի զուրցած չըլլալուն պատճառաւ, ոմանք կարևորութիւն չի տուին այսպիսի ճշմարտապատում և ծանրակչիռ հեղինակութեան մ՚անորոշ զուրցուածներուն իսկ. ոմանք այլ ընդհակառակն առանց խոր քննութեան և հարևանցի կերպով անցան անոնց վրայէն։ Սակայն Սեբէոսի օգնութեամբ կը գտնենք փաւստեցւոյ քով պատմական ակնարկութեանց այնպիսի կայծեր, որոնք օժանդակեալ մանաւանդ առաջնոյն լուսովը՝ միանգամ ընդ միշտ կը թուին փարատել վերոյիշեալ կրկին կէտերը պատող խաւարը։

Ա. Ղազար՝ կԵ. գլխուն մէջ, Գիւտի մահը պատմելէն անմիջապէս վերջ՝ կը յարէ, թէ Գադիչոյ մաղխազի ամբաստանելովը՝ կոչուեցաւ կրկին[1] անգամ Վահան առ Պերոզ, և ի տախտել հարկին՝ առ երեսս ուրացաւ զհաւատն Քրիստոսի և դարձաւ ի Հայս։ Եւ կՋ. գլխուն սկիզբը յետ ըսելոյ, թէ առթի մի կը ապատէր Վահան ապստամբելու յարքայէն, անմիջապէս կը յաւելու, թէ այս ժամանակ, այսինքն է «յամի [illegible] Պերոզի արքայի» ապստամբեցան Վիրք և Ռուշանք յարքայէն, որոնց հետ միաբանեցան և Հայք։ Սեբէոս յառաջ անցնելով կ՚ըսէ, թէ այս պատերազմիս մէջ մեռաւ և «Պերոզ արքայ»։ Իսկ արդ՝ Պերոզի վերջին տարին է ամն 484–485 ըստ Նոլդեկէի. որովհետև նա գահակալեց յամին 457–459, և թագաւորեց 30 տարի։ Ցուցնելու համար, թէ այս ժամանակ Մանդակունին դէպ ի Հայոց կաթողիկոս ճանչցուած էր, բաւական է դիտել նախ, որ Ղազարայ վկայութեան համաձայն, այս ժամանակամիջոցիս Պերոզի դէմ տուած կրկին պատերազմներ մղող Հայ իշխանները նա էր որ «նպարակեալ յուզարկեաց իւր ստոյգ և արդար ոգւոյն օրհնութեամբ». նա է որ նոյնպէս առաջին պատերազմի յաղթանակը կու տայ հնչեցնել աղմուկերգութեամբ յեկեղեցիս Հայոց։

Բ. Սեբէոս՝ Պերոզի մահը դեռ չի ծանուցած՝ կը յիշէ Վահանայ տարած փառաւոր յաղթութիւնն անոր դէմ, և կ՚ըսէ, թէ «Այս Վահան ժողովեաց (յետ պատերազմին) և զհարկս աշխարհին Հայոց և չինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից»։ Այ՛, այս եկեղեցիներէն մին, այն է Ս. Աբգիան Տեկորս, դեռ կանգուն կեցած է ի յիշատակ անմահ քաջերուն, և. դարու արձանա-

1. Վահանայ այս կրկնակի երթն և դարձը մեկ տարւոյ մէջ չկարեր լինել. ուստի առ նուազն 2–4 տարւոյ միջոց մի ենթադրելու է։

գրութեամբ[1]. և մենք հիացմամբ կը կարդանք Վահանայ և Սահակ Կամսարականի անուանց մէջ, նոյն իսկ իւր ոչխարն օրհնաբեր անանց յաղթութիւնը պահպղին և մեր սիրելի և սուրբ հայրապետին՝ Յովհ. Մանդակունւոյ անունը:

Իսկ գալով Մանդակունւոյ մահուան տարեթուին՝ դիտելու ենք Ա. որ Փարպեցին իւր պատմութիւնը գրած ժամանակ՝ նա դեռ կ'ապրէր: Ղազարայ պատմագրութեան վերջին դրուագը՝ ձօնուած է Վահանայ Մամիկոնեանի՝ Հայոց վրայ մարզպան կարգուելուն և փառաւք ի Հայս մտնելուն: Ղազարայ պերճախօսութիւնն՝ հօս տեղի կու տայ Մանդակունւոյն, որ իւր հիանալի առաքինաբանութեամբը կ'օրհնէ զՎահան, կ'աւետէ փառք և խաղաղութիւն մեր աշխարհին և կը փակէ Ղազարայ պատմութեան էջերը: Եթէ նա վախճանած ըլլար, կարելի բան չէ, որ այս տեղ չյիշէր Ղազար, հանգոյն Սիմէոն ծերունւոյն, անոր խաղաղութեամբ արձակուիլն առ Տէր, ինչպէս որ յիշած է Գիւտայ մահը. սակայն Փարպեցին իւր պատմութեան թելը խզած ժամանակ՝ Մանդակունւոյն կը թողու չարունակել իւր գործունեայ կենաց թելը: Յովհաննու նկատմամբ որոշիչ կէտ մի պիտի ըլլար Վահանայ մարզպանութեան տարեթիւն, եթէ Փարպեցին որոշակի ծանուցանէր մեզ: Արդ՝ Ղազարայ լուած կէտը՝ գարձեալ Սեբէոսով մենք կարող ենք իմանալ: Հաւատարիմ պատմագիրս՝ Պերոզի մահը յիշելէն անմիջապէս վերջ՝ կը յարէ, թէ « Եւ ապա յայնժամ թագաւորեաց Կաւադ[2] որդի նորա ի վերայ աշխարհին Պարսից... առնէ և ընդ Հայոց հաշտութիւն և կոչէ զՎահան ի դուռն, և մեծարէ զնա մեծաւ պատուով: Եւ տայ նմա զմարզպանութիւն աշխարհին և զՄամիկոնենից տէրութիւնն, և արձակէր բարեաւ յերկիր իւր »: Իսկ որովհետև Կաւատայ գահակալութիւնն՝ եղաւ 488–489ին, ըստ Նոլդեկի. ուրեմն Վահանայ մարզպանութիւնն ևս այս միջոցին հանդիպեցաւ, կամ հաստատուեցաւ:

Բ. Ղազարայ պատմագրութենէն անցնելով տարիներ վերջ առ Վահան գրուած թղթին, այս տեղ ևս մի նշանաւոր ակնարկ կը գտնենք Մանդակունւոյ մասին: Յէջ 595, ըստ 1891ի տպ. Վենետկոյ, կը յիշեցնէ նա Վահանայ՝ իւր Սուրբ Կաթուղիկէի վանից

1. Տես Հ. Գ. Ալիշան, Շիրակ, էջ 132:

2. Ղ. Փարպեցի՝ Վաղարշ ժամանակ հանդիպած կը պատմէ Վահանայ մարզպանութիւնը. սակայն այս քնաւ չհակառակիր Սեբէոսի աւանդածին. վասն զի Վաղարշ թագաւորութեան վերջին տարին հանդիպեցաւ այն, յորում և կաւատ յաջորդելով անոր՝ հաստատուեցաւ գայն:

վանահայրութիւնն ընդունելէն քիչ յառաջ հանդիպած հետևեալ դէպքը, այսինքն է վանահայրութիւնը կաշառօք ձեռք բերելու համար՝ աթոռոյ ոմանց խնդրուածքով Յովհ. Մանդակունւոյ առ Վահան տուած պատգամն, ի Սևկոյ դրախտին, և ի պատասխանի նորին՝ Վահանայ առ Մանդակունին յղած պատգամաւորութիւնն՝ իւր Վրդ եղբօր, Հայրենի և Ղազարայ ձեռքով: Թէ ճիշդ այս ժամանակ յանձն առաւ Ղազար՝ կաթուղիկէի վանայ վանահայրութիւնը, Վահանայ և Մանդակունւոյ յանձնելովը, ակն յայտնի կը տեսնուի անոր անմիջապէս ըրած խօսքէն, թէ « Ոչ զդացի ժամոյն գաւոյն (այսինքն է վերոյիշեալ անծանօթ աթոռոյ ոմանց այնքան անոր հետամուտ լինելուն). այլ պարտ էր փութով և երագ երագ անկանել յոտն արտասուօք և աղաչելով և ի բաց փախչել ի հոգեբաւն-ընէն սեղոյդ: Եւ ահա լինէի պղծեալ ի չարաթոյն ժանեաց գազանացն... որոց հետամտեալ այնուհետև խափանեցին զգնացս իմ, և հասեալ խոցոտեցին զիս ի մահ »:

Գ. Մի ուրիշ և վճռական փաստ կ'ընծայէ մեզ Մանդակունւոյ յաջորդ կաթողիկոսը Բարգէն, իւր առ Աստիս ուղղած կրկին թղթերով[1]: Արդ՝ Բարգէնի Ա. թուղթը գրուած է « ԺԲ. ամի

1. Հ. Յ. Գաթըրճեան, Հանդանաւ հնութեան, որով վրէն Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վիեննա 1891, էջ 20, կը խօսի Բարգէնի կրկին թղթոց վրայ, առանց յիշելու թէ ուր և ինչ ձեռագրի մէջ գտած է զանոնք: Լաւ կ'ըլլար, որ գէթ հրատարակողները հակիրճ տեղեկութիւն մի տային այս մասին: Վանայց ձեռագրատան մէջ ունինք թիւ 53 թղթոց փէր[ատ] մի, զոր յամին 1851 ընդօրինակած է մեր լուսահոգի Հ. Բասիլ Եպիսկոպոս ի Հռոմ՝ Անտոնեան Հարց մատենադարանի բոլորգիր մատենէն, նաքան Եպիսկոպոսն

Կաւատայ արքայից արքայի»· զի այսպէս կ'ըսուի ի սկզբան անդ թղթոյն: Կաւատայ 18 տարին կ'իջնայ ըստ Նոլդեկի, 504–505· իսկ որովհետև վերը մէջ բերուած ժամանակագրական ցուցակաց համաձայն՝ Բաբգէն 5–6 տարի կաթողիկոսութիւն վարած է· ուրեմն հանելով 5 թիւը 504 էն՝ կը հասնինք Մանդակունւոյ մահուան ճիշդ թուականին, զոր ի վեր անդր ծանուցինք, այսինքն է՝ 499: Անկէց կարելի է եզրակացնել, թէ Ղազար փարպեցին և այս միջոցիս, կամ քիչ վերջ գրած ըլլալու է իր թուղթն՝ յԱմթոյ քաղաքէն առ Վահան· վասն զի գոհութեամբ «զերանելին», այն է՝ վախճանած Ցովհանը յիշատակելէն վերջ գանգատանօք կը սկսի եպերել կենդանի յայնորդին Թոյլ և անարժան ընթացքը, որուն կանխաւ իսկ օգնութեան դիմած էր՝ հրեշտակօք, գուցէ թէ և գրաւոր միջոցներով:

Մանդակունւոյ մահուան թուականով կարելի էր որոշել նաև անոր ծննդեան տարեթիւն, եթէ Ս· Սահակայ տաճենապլրին՝ Մովս· Խորենացւոյ անուամբ մեզ հասած Օրհնութիւնքն յոյսի[1], այսինքն է եկեղեցական պաշտամանց կարգաւորութեան հարազատ ըլլալն ապացուցուէր[2]· վասն զի այս տեղ յանուանէ կը յիշուի նախ Ցովհ· Մանդակունին՝ իբր ինքնագիր կամ թարգմանածոյ կարգաւորութիւններով: Բ· Այդ կարգաւորութեան համար կ'ըսուի, թէ սկսաւ յամին 412 և աւարտեցաւ 426 ին: Յիշատակարանս Մովս· Խորենացւոյ, կամ մի այլ Մովսէսի ըլլալու կամ չըլլալու մասին՝ ուրիշ[3] տեղ արդէն իմ կարծիքս յայտնած եմ· այս տեղ զայս իսկ կը յաւելում, թէ առանց երկբայութեան է, գարուամ պէտք է, որ գրուած լինի· վասն զի յայնորդ գարուց մէջ և ուրիշ հայրապետաց ձեռքով եղած նոր աղօթք, կամ օրհնութիւն մի չի պարունակեր, որով իրաւամբ պիտի կարենայինք տարակուսիլ անոր հարազատութեան վրայ: Գ· Ծանօթ էր այդ յիշատակարանը նաև Ցովհան Իմաստասիրին[4], Վարդան պատմչին[5] և Կիրակոսի[6]: Վերջինս՝ Մանդակունւոյ վերաբերեալ գործոց թուարկութիւնը ճիշդ այդ յիշատակարանէն ընդօրինակած է: Այս դիտողութիւններէն վերջ, մենք կարող ենք եզրականցնել, թէ 426 ին կատարուած եկեղեցական կարգաւորութեան կարենալ մասնակցելու համար՝ Մանդակունին պէտք է որ ըլլար գէթ 30 ամեայ, և Շահապիվանի ժողովոյն մէջ մուտ գտնելու համար՝ 40–44 տարեկան: Ուրեմն եթէ այս վերջին թուականէս 44 տարի, և առաջին թուականէն այլ 30 յետ երթանք, կ'ունենանք մերձաւորապէս Մանդակունւոյ ծննդեան միջին տարեթիւն, այսինքն է՝ 396–400: Իսկ որովհետև կանխաբար ցուցինք, թէ նա 498–499 տարիներու մէջ վախճանած է, ուրեմն այդ ժամանակ նա կը կրէր իր պարթևական ուսոց վրայ 98[1] կլոր տարիներ, լի մեծամեծ արդեամբք:

Համառօտենք մեր ուսումնասիրութեանց արդիւնքը: Ցովհ· Մանդակունին 400 ին մօտ ծնած է· 448–450 քահանայ ձեռնադրուած· 454 ին խոստովանողական անուամբ Տիզբոնէն՝ ի Հայս վերադարձած և քիչ ժամանակէն Գիւտայ՝ իր հօրեղբօր ձեռքով եպիսկոպոս ձեռնադրուած· յամին 484–485 կաթողիկոսական գահուն վրայ Գիւտին յաջորդած, և հուսկ յամին 498 վախճանած է, 93–98 տարեկան հասակին մէջ:

Մանդակունւոյ կենաց այս գլխաւոր պարագաները մերձաւորապէս նշանակելէն վերջ, տեսնենք այսուհետև անոր կեանքն արգասաւորող գլխաւոր գործերը: Սակայն այս տեղ ևս մեծ դժուարութիւն մի կ'ելնէ առջևնիս, ե· բոլոր կամ մերձաւոր դարերէ անոր կենսագրութիւն մի ձեռքերնիս հասած չըլլալուն պատճառաւ: Այս ինչ կամ այն մատենագրի քով ցանուած և ցրուած ակնարկութեանց՝ մասնացուցին կամ ձև մի տալու համար, լաւագոյն միջոցն է, ըստ իս, նախ այն գարու ազգային ընդհանուր ոգին և վիճակն ի նկատի առնուլ:

Զարմանալի երևոյթ մի՝ որ առաւելապէս մեր եկեղեցական և քաղաքական պատմութեան մէջ զգալի եղած է, է՝ հոգևոր պետին, կամ կաթողիկոսի մի գերագոյն ազդեցութիւնն՝ ամբողջ ժողովրդեան վրայ՝ դէպ ի լաւ անդր, կամ ի վատթարն: Օրինակ իմն, Զաւէն

1· Կը գտնուի Վաթիկանի թիւ III· 8 մատենին և վանաց մատենադարանի կոնտակիներեն մէկն մէջ: Տպագրութեամբ ևս լոյս տեսած է· տես Հայկական Բոբֆռանսուա Նաթնաց, տպ· ի Վենետիկ, 1889, էջ 246:

2· Ինձ այսպէս կ'երևի, թէ Մանդակունւոյ կաթողիկոսութենէն, կամ անոր ձեռքով եղած եկեղեցական կարգաւորութենէն վերջ գրուած է:

3· Տես Ազաթանգեղոս և իր բաղմադարեան գաղտնիքը, տպ· ի Վենետիկ 1890, էջ 320–321:

4· Տես Մատենադրութիւն, տպ· Վենետիկոյ, 1833, էջ 28· կանոն ԻԱ:

5· Համառօտ պատմութիւն, Վենետիկ, 1862, էջ 55,

6· Համառօտ Պատմութիւն, Վենետիկ, 1875, էջ 20:

1· Այս թուէս 5 տարի պակսեցնել կարելի է, ըստ իս, եթէ Շահապիվանի ժողովը 446–448 ին եղած համարինք, որը չատ հաւանական է, և թէ միանգամայն Մանդակունւոյ և Բաբգէնի յաջորդութեան մէջ գէթ տարւոյ մի պարապութիւն ընդունինք· որով կ'ըլլար Մանդակունին 93 տարեկան ծերունի մի՝ նման իր հօրեղբօր Գիւտայի:

մի, կամ Բրքիչոյ, Սուրմակ մի, կամ Շմուէլ բաւական կ'ըլլան անհոգութեամբ մղել զնա դէպ ի յեղծումն և անկումն բարոյական, որուն զուգակից է և նիւթականը. ինչպէս, ընդհակառակն, Ներսէս մի և Սահակ՝ կարող եղած էին հանել մինչև ի գագաթնակէտ անդր ոսկեղինիկ գարերու։ Ի՞նչպէս կարելի է չհամոզուիլ այսպիսի եղեւլութեանց՝ յետ կարգալու Շահապիվանի և այլ նմանաւախճան ժողովոյ գործերը։ Ի՞նչպէս տարակուսինք, երբ կը տեսնենք, որ Ս. Սահակայ և Մեսրովբայ մահուանէն անմիջապէս, կամ քիչ վերջ բարոյապէս և մտաւորապէս զարգացած ժողովուրդն՝ իւր ոսկեդարով ի միասին՝ յանարգ ի թուխ կապար կը չլանայ. պատճառն յայտնի է։

Մի ուրիշ և աւելի զօրեղ ազդեցութիւն ունեցող տարր մեր ազգին վրայ՝ էր Մազդեղանց կրօնքն և սասանական հարստութիւնը, յորմէ հոգւով չափ չլանացին Ս. Սահակ և իւր նախորդ հայրապետք, հեռու կենալ և հեռի բռնել իրենց հաւատացեալ հօտը բովանդակ, զօրացնելով միշտ Հռոմոյ հետ ունեցած յարաբերութիւնները։ Բազմապիսի և չնաշխարհիկ ձիրքերով օժտուած մեծ տիպար մի կը ներկայացնեն մեզ պատմագիրք զերանելին Գիւտ. բայց նա բոլոր իւր ազամանդեայ պնդութեամբն և հելլենական ներքութեամբք հանդերձ հազիւ կարողացաւ արքայից արքային հետ բարեկամական յարաբերութիւն հաստատել, և այն իսկ գրեթէ կենաց վերջի տարիներուն մէջ։ Յաւելունք ասոր վրայ նաև իշխանաց և իշխանուհեաց գերեզմանքն և զանոնք կրօնական պատրաստութեամբք առ Աստուած յուղարկելը, զորս Ղազար Գիւտայ գործառնութեան և կաթողիկոսութեան իբրև ամենաչքեղ ակունքներ կը ներկայացնէ՝ շեշտելով[1]։ Արդ՝ 454–485, որ կը կազմեն Գիւտայ կաթողիկոսութեան ժամանակամիջոցը, անիշխանութեան և հարստահարութեան[2] տարիներ են։ Այս ժամանակիս խուժեցին ամենայն չարիք[3] և տագնապք

1. Պատմ. Հայոց, տպ. Վենետկոյ 1873, Գ. Դր. Գլ. ԿԱ. էջ 332–335։

2. Փարպեցին՝ իւր պատմութեան ԿԳ. գլխոյ մէջ խօսելով Բաբկենի և Անտակէ ուխտապահ մնացեալոց համար, կ'ըսէ. «Ի հինգերորդումն ամի էին նոքա ասպարիսն և յոտն կացեալ ամրապնդել ժամանակն էին նոցա՝ ի ծերպս վիմաց և կամ ի մացառուտս տեղիս մայրեաց զօրեալ թագչէին... լու. համարէին զնախատինս վասն Քրիստոսի, քան առ ժամանակ մի թաղթաւել ընդ անոսի փառս աշխարհի»։

3. Ղազար վերոյիշեալ տեղւոյ այսպէս կը նկարագրէ այդ չարիքը. «Որք իբրև զհաբելոնի հնոցին տեսանէին զամպարշտութեանն կիզումն, և ոչ էր որ զիջուցանէր։ Փողովեալք նստէին առ սուրբ քահանայապետին Հայոց Գիւտայ, որ ոչ երբէք լսէր արտասուելոյ զմխրաբերանցն զնոլորութիւնս, որ խնդրէր լուծեալն պաճարանս

արտաքուստ ի ներքս, և ներսէն եղան կրօնական և քաղաքական երկպառակութիւնք իշխանաց։ Քրիստոսի սուրբ խաչն եղաւ յայպն և ի նախատինս մախրապաշտից. և առ այս կը հրաւիրուի[1] անյաղթելին Դաւիթ, վերականգնելու անոր զօրութիւնն և փառքը։ Միով բանիւ Գիւտայ թափած ամէն կերպ ճիգերովն և բարեկարգութեամբք հանդերձ, մնացին մեծամեծ աղէտք՝ կարծես թէ ծանրանալու անոր յաջորդին վրայ։

Այո՛, դժուարին և ամենադառն ժամանակի մէջ հրաւիրուեցաւ Մանդակունի՝ ատանձնելու իւր հօրեղբօր բեռը, վասն զի այս ժամանակ ապստամբելով Վախթանգեանք և Վահանեանք ի Պերոզէ, դարձուցին արքայից արքայի բոլոր աւերութիւնն և զէնքերն՝ այն դրախտանման երկրին վրայ, որ անընդհատ պատերազմներու պատճառ՝ եղաւ աւերակ և քաջաց արիւնով ծածկուած դաշտ մի։

Այս դաշտին վրայ և բիւրապատիկ դժուարութեանց դէմ կը մնայր Մանդակունւոյն գործել, և կը գործէ նա անվեհեր։ Ոչ արքայից արքայէն կաթողիկոսական հաստատութեան հաւանութիւնը կերպապէս ընդունելու, և ոչ իսկ յերկիւղէ սպառնալեաց, կը յիշուի[2] երբէք, թէ Տիզբոն գնացած ըլլայ նա այնուհետև։ Ոչ կայսեր օգնութեան կը դիմէ և ոչ ալ ճարտասանութեամբ կը հրաւիրէ. այլ ինքն է մէն միայնակ, որ քրիստոնէութեան և եկեղեցւոյ համար կեանքը մէն միայնակ, որ քրիստոնէութեան և անօրինակ դնող խոստովանողի մի բոլոր քաջասրտութեամբն և անօրինակ ճարտասանութեամբը կը համախմբէ իւր զինուորեալ որդիքն՝ ի հոգևոր պատերազմին. ինքն է որ կ'օրհնէ անոնց զէնքերն և կ'ուղարկէ ի մարտ. ինքն է որ անոնց յաղթութիւնքը ձայնիւ երգոց յերկինս կը բարձրացնէ։ Խաչը՝ սրոյն և խաղաղութեան Աւետարանը՝ վրէժխնդրութեան հետ այնպէս միացած չէր Ղեւոնդեանց օրէնի ի վեր, ինչպէս Մանդակունւոյ ձեռքին մէջ։ Բանանք պերճաբան Ղա-

հայթայթանաց հանդերձ նոքաք. երբեմն փախչել յօտարութիւն, և երբեմն ի խնդիր լինել օգնականութեան և ապստամբել։ Առաքէր պղտո և պատգամաւորս միանգամ և երկից առ թագաւորն Յունաց Լևոն»։

1. Թոմ. Գէտցւոյ՝ առ Դոմէր. Վենետիկ 1833։

2. Կիրակոս միայն, — հակառակ Փարպեցւոյ, — կ'աւանդէ, թէ «Այլ և առաջի Պերոզի արքայի համարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս, և ոչ երկեաւ ի սպառնալեաց նորա, որ հրապուրէր ի բաց կալ ի Քրիստոսէ և ի հաւատոյ ձեռնադրութենէն Յունաց»։ Ինձ այնպէս կ'երևի, թէ Կիրակոս՝ կամ Գիւտայ հանդիպած դէպքը Մանդակունւոյ հետ չփոթած է, և կամ Կորեան աւանդած մէկ դէպքը կ'ակնարկէ՝ որ Յովհաննու կաթողիկոսութենէն շատ տարիներ յառաջ հանդիպեցաւ, Թորիկ խոստովանողի հետ։

զարայ ՀԱ· գլխու ոսկեգիր էջերը, և կը տեսնենք վերստին գԱբատայ՝ իբրև թատր մի այլ նորանշան գործոյ: Փոխանակ Ղևոնդի, կամ Եղիշէի առ Վարդան, կեցած է մովսիսափայլ և ահարկու դիմաք Յովհ· Մանդակունի, Վահան Մամիկոնեանի քով, կարծէք թէ 34 տարի յառաջ կատարուած պատուէրեան վրէժն հանելու մեծ վստահութեամբ: Փոխանակ Տղմուտի՝ Ներքեհապաց գիւղը կը ներկայանայ մեզ այժմ իբրև բանակեաղ և ապարէզ արիւեան գոռ չեփորայից: Ամենայն ինչ պատրաստ է, և ահա կը լսուի սուրբ կաթողիկոսի ազդու ձայնն՝ առ զօրականս: « Յուսացեալքն[1] յԱստուած՝ ոչ երբէք ամաչեցին... Զօրացարուք ի Տէր և ի զօրութիւն բազկի նորա »: Ահա կրակոտ ճառէն վերջ կը կենայ յաղօթս երկրորդս այս Ներսէս, ճշգրիտ տիպար առաջնոյն. և ահաւասիկ յաղթութիւնը կատարեալ է: Ուրիշ անգամ Խոսրովակերտի և Ջրվէժի մէջ Հազարաւուխտի դէմ մղուած ճակատամարտին մէջ գարձեալ կ'երևի Մանդակունի, և Դիմաքսենից և Սահառունեաց դիտապատ ինկող քաջերուն՝ Ոզոց և Քաջիկ հետ՝ ինքն ևս կիսամահ կ'իյնայ յերկիր, ուր գնացեր էր իւր անմահ շնչով զանոնք ոգևորելու համար, և ուխտապահաց բանակն անկաւ պահելու դիտմամբ: Վաւերական գրութիւն[2] մի Պերոզի մահն ևս Մանդակունեայ արժանընդունակ աղօթիւք եղած կը համարի, Հեփթաղին հետ կռուած ժամանակ: Թէ ո՛րքան պատմական հիմ ունի այս աւանդութիւնս և ուրիշ ինչ դէպք մի կ'ակնարկէ, դժուար եղև ստուգել. այսքան միայն որոշ գիտենք ի Ղազարայ, որ Մանդակունին գերմարդկային ազդեցութիւն ունէր Վահանեանց վրայ, և անոր հոգևոյն զօրութեամբ[3] անվեհեր կ'ընթանային եղեռնաւոր՝ ընդ դեմ երէց հալածոց Պարսից: Վահան ինքնին մեծ հաւատք ունէր անոր հրաշագործ[4] աղօթից վրայ, և առանց անոր

1· Փարպեցի Գ· Դր· Գլ· ՀԱ· էջ 392:

2· Այս է Յոհան պատմագիրն, որ կը գրէ այսպէս· « Եւ մինչդեռ Պերոզ զկոտաստ աշխարհս Հայոց հնարէր կատարել, յանկարծօրէն յաղօթից սրբոյ առն Աստուծոյ Յոհաննու աստակի ի Քուչանաց ինքն և առհասարակ զօրք իւր », տպ· Մոսկուայի 1853, էջ 36:

3· Ղազար ԶԳ· գլխոյն մէջ Պարսից զօրագլխին Շապհոյ բերանն հետևեալ խօսքը դրած է· « Զհեն տուր յիս կռուիլ (Գզիկոն) վասն զի էր անպարտած իմ նաբտիս ցոյացաւ· զի թէ արգարև զօրութիւնն իմ անեբասյն այլ է՝ սր օգնէ նոցա և մեզ վնաս »:

4· Զի այսպէս կը գրէ Ղազար· « Փութացաւ և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, առեալ ընդ իւր և զսուրբ հայրապետն Հայոց զտէր Յոհան, յոտոլով յաղօթս սուրն՝ ինչ ասէնայն ինչ ըստ նորա լմնելոյ ետարեբ յԱստուծոյ »:

խոհական խորհրդոյն՝ մեծ գործի ձեռք չէր զարներ: Վահանայ բոլոր մեծագործութեանց մէջ իսկ իրօք Մանդակունեայ ձեռնտուութիւնն ակներև կը տեսնուի. այս պատճառաւ իսկ ամբողջ ևս կոչուած են ի պատմագրաց, իսկ մենք կրնանք իրաւամբ երկու հիմնադիրներ ևս անուանել հայրենեաց և եկեղեցւոյ:

Հոգևոր գիտքը մարմնաւորին հետ միացուցած և այս կրկին ազատութիւնները ձեռք բերելէն յետոյ՝ Մանդակունեայ երկրորդ գործը կ'ըլլայ ժողովել ուրացողներն ի ծոց եկեղեցւոյ և կանգնել զաւերեալն ի Պարսից: Իրեն ալակից ունի մարզպանն Հայոց Վահան, որուն քաջութեան հաւասար մեծ էր և անսասան նաև հաւատքը: Առաջին կէտին ի հաստատութիւն ունինք երկու վաւերաւատքը: Առաջին կէտին ի հաստատութիւն ունինք երկու վաւերականս և հիանալի ատենախօսութիւններ. մին՝ զոր պահած է մեզ Ղազար, բրած է անմիջապէս յետ աւետաւորութեան՝ Մամիկոնէից տեառն. և ով կը յուսար լսել, այնպիսի ծերու մի բերնէն՝ այնքան կրակոտ և ազդու բանից հոսանք մի, որ ստուգիւ բաւական էր շիջուցանել զմոխրապաշտութիւնն և ուրացողները դարձի բերել: Յոյժ սրտաշարժ էր Դունայ եկեղեցւոյն մէջ կատարուած այս տեսարանս. ամենքը լացին, ոմանք ուրախութենէ և այլք յանհնարին ցաւոցն ի վերայ ուրացելոց: Իսկ միւսն է վանն Ջոնձլոյ Բաբեկաւանիքն ընդ Ընշոմիա Ասորեցոյ, զոր ես կարծեմ, թէ այդ վախճանաւ խօսած ըլլայ, բայց տմաւ յառաջ կամ վերջ· վասն զի պատմութիւնը կ'ըսէ, թէ յետ այնորիկ անձամբ կը շրջէր նա յամենայն գաւառս, — նման Լուսաւորչին, — կը քարոզէր, և ուր որ կրակատուներու կը հանդիպէր՝ կը կործանէր ի հիմանց: Իսկ եկեղեցեաց և վանորէից վերաբերեալ՝ կը կործանէր ի հիմանց: Իսկ եկեղեցեաց և վանորէից վերաբերեալ՝ կը կոչէ զանոնք

մէջ։ Սոբենոյ անապատը նշանաւոր էր, Սա· Աղուիկի վկայութեան համաձայն, որուն վերակացու կարգեցաւ նա ինքն հոգեկիրն Ղազար, ճարտասան և պատմագիր· և սակայ՝ ցորչափ կենդանի էր Մանդակունի։ Ս· Հայրապետաս անտարակոյս Ղազարայ գաղափարակից և յարդող էր յոյժ· այս պատճառաւ իսկ անոր կենդանութեան ժամանակ ոչ ոք յարեղայից համարձակեցաւ ապատամբութիւն հանել Ղազարայ դէմ։ Սորա առ Վահան գրած թղթի մէջ պատմուած տխուր երևոյթներն՝ ուրիշ տխրագին օրերու մէջ միայն կարող էին հանդիպիլ, և հանդիպեցան իրօք։

Զորրորդ գործն՝ որ մնաց անմահ մինչև ցայսօր, և միայն բաւական էր անմահացնել անոր յիշատակն, եղաւ կարգաւորութիւն աղօթից, օրհնութեանց, երգոց և ծխակատարութեանց եկեղեցւոյ։ Այս մեծ գործս մեծաւ դրուատիւք ի գիր արձանագրուցած են արդէն Ղ· դարէն և այսր գրող մեր նշանաւոր մատենագիրները[1]։ Յետոյ ուրեմն առանձինն պիտի խօսինք Մանդակունւոյ նաև այս գրաւոր երկոց մասին· այս տեղ երկու գրաւոր եղելութեանց վրայ միայն համառօտիւ խօսինք, որոնք հրատարակութեամբ դեռ ծանօթացած չեն, բայց արժանի են ամենայն ուշադրութեան։

Մեր՝ 1345 թուին գրուած Մաշտոցին վերջ գրուած Շարժրոնի Հայրապետաց Հայոց ընտիր գրութեան մէջ, — զոր յառաջագոյն առիթ ունեցանք յիշատակելու, — Յոհ· Մանդակունւոյ համար կ'ըսուի նաև, թէ «Սա՝ նախ քէր քոռ հայոսպանեայց ժամակարգութիւն»։

Յիշատակարանիս քէր բառով՝ երկու բան կը հասկցուի, Ա· ժամակարգութեան վերաբերեալ աղօթք, մաղթանք, քարոզք, երգք և այն ամենայն՝ որով կը կազմուի ժամերգութեան ամբողջական չէնքը կամ գիրքն, որ Մանդակունիէն յառաջ կամ գոյութիւն չունէր, կամ որ ինձ հասանագոյն կը թուի՝ միայն սաղմոսերգութեանց, ընթերցուածոց և Աւետարանի կարդացմանց մէջ կը կայանար։ Բ· Նշանագիր, կամ խազ երգոց և շարականաց, ըստ ուղիղ ձայնից։ Յայտնաւորք, ի 17 Սեպտեմբերի, Ս· Սահակայ ընծայած

1· Օրհնութիւնս բերէ յոյսին, որ անտարակոյս, — ինչպէս ըսուեցաւ, — Ե· դարուն գրուած է, մի առ մի կը յիշատակէ Մանդակունւոյ կարգաւորութիւնները։ — Տես Յովհ· Օձնեցի, կանոն ԻԱ։ Յովհ· Կիմզ· պատմ· ապ· Մոսկուայի էջ 56, կ'ըսէ· «Եւ կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զեկեղեցական աղօթիսն ժամակարգութիւն եկեղեցւոյ սրբոյ»։ Կիրակոս Պատմ· ապ· Վենետկոյ, էջ 20, յետ ըսելոյ, թէ «Սա բազում կարգաւորութիւնս եմոյծ յեկեղեցի», ապա կը յիշէ յանուանէ զանոնք։ Սա· Աղուիկ՝ Պատմ· Բ· Գլ· նոյնը կը վկայէ։

են այս գիւտս· բայց Ե· դարու մատենագրաց[1] քով բնաւ չի գըտնուիր յիշատակութիւն մի, թէ սուրբ հայրապետն պարթև այսպիսի մի գործ կատարած ըլլայ։ Օրհնութիւնբերէ յոյսին զուգմունքը՝ պարզապէս Մաշտոցի, կամ ծխատանին կը վերաբերին, որոյ նախկին կարգաւորողն եղաւ անտարակոյս Ս· Սահակ։ Երկրորդ՝ վերջին ժամանակի քննութիւնք[2] կը ցուցնեն, թէ Սահակէն յառաջ իսկ չորս ձայներ, այսինքն է Ա, Բ, Գ, Դ գտնուած էին յոյն երաժըշտաց ձեռքով, որոց անուանքն կը յիշուին Երանելոյն Բարսղի Տաղից Յայնից գրուածքին[3] մէջ, զոր թարգմանած է Սեբէոսնոս վիլիսոփայ։ Ս· Սահակ՝ մեծն Ներսիսէն արդէն ընդունուած այդ չորս ձայներու վերաբերեալ ձայնանիշերէն հատանօրէն հայկական խազերու վերածելով՝ ուղղի ևս կարգաւորեց և ընդարձակեց, իր և միւս թարգմանչաց մի քանի ինքնագիր նուագներով։ Սակայն և այնպէս յայնժամու ժամակարգութիւնը բաղդատմամբ դեռ չատ անկազմ և անկերպարան էր։ Մանդակունին եղաւ, որ մեր ժամակարգութեան բնորոշ կերպարանք տուաւ այսպէս։ Նախ յօրինեց խորին և եռանդուն աղօթքներ, քարոզներ, մաղթանքներ և օրհներգներ՝ իրենց նախնեաց աղօթքներ, քարոզներ, մաղթանքներ և օրհներգներ՝ իրենց յատուկ և քաղցր եղանակներով և խազերով· երկրորդ այն սաղմոսականներն, ընթերցուածներն, աւետարաններն, երգեր կամ նուագներ, որոնք Լուսաւորչի օրերէն մինչև այն ատեն ի գործածութեան էին՝ բայց անշուք և ցրուած կերպով, նա հիանալի վայելչութեամբ և հանճարեղ կերպով հիւսեց իրարու հետ, և սըրբազան ամբողջութիւն մի կազմեց։ Մեր մինչև ցայսօր առանց ընտրութեան հրատարակուած Շարականաց մէջ՝ մի միայն չարական, այն է, Աննկեղծ, տրուած է արդիւնաչատ հայրապետիս· սակայն

1· Յիրաւի, առ Ագաթանգեղ, — Գլ· ձԺԸ· — «սաղմոսք և օրհնութիւնք» միայն կը յիշուին, երգի բնաւ յիշատակութիւն չկայ։ Ս· Սահակ առ քորեպիսկոպոսս ուղղեալ Գ· կանոնին մէջ (տես Սոփ· Հայկ· Հա· Բ· էջ 81) «Պաշտօն սաղմոսերգութեան» միայն կը յիշէ։ Եղիշէ՝ (Ը· Եղան·) երանելի կապելոց համար կ'ըսէ· «Սաղմոսք» միայն կը յիշէ։ Եղիշէ՝ (Ը· Եղան·) երանելի կապելոց համար կ'ըսէ· «Սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերան նոցա»։ Այս վկայութիւններէն կը տեսնէ մեզ, թէ Դ· դարուն սաղմոսք և օրհնութիւնք երեց մանկանց կը կազմէին մեր տեսնուն

ակէ բնաւ չէ արժան կարծել, թէ ուրիշներ ալ յօրինած չէ. վասն զի ի թուին ՈՃԺԸ գրուած Շաբխնոյը[1], յորում ի ստորև իւրաքանչիւր շարականին՝ յօրինողի անունն ևս խնամքով նշանակուած է, Յովհ. Մանդակունւոյ կ'ընծայէ բոլոր այն շարականներն, որոնք ուրիշ Շարակնոցներու հրատարակողք Մ. Խորենացւոյն և Ան. Շիրակացւոյ ընծայած են: Առնցմէ իսկ կարելի է գուշակել, թէ սուրբ հայրապետաց ա՛րքան զարգացեալ Հայաստանեայց եկեղեցւոյ երգեցողութիւնն ևս, և ճիշդ այն արդիւնքն ունեցաւ մեր ժամակարգութեան և պատարագի[2] մէջ՝ ինչպէս Բարսեղ և Ոսկիբերան յունականին: Բայց խօսուն ապացոյց ունինք դիմացնիս ես. գրչէն վերջ ծաղկող մատենագիրներ, որոնք այլ ևս լոկ ապրուհետ և օրհնութեամբ չեն բաւականանար արտայայտել իրենց ժամանակը կատարուած եկեղեցւոյ պաշտօնը, այլ բոլոր վերոյիշեալ պարտաւորութեամբք ի միասին. վասն զի ամենայն ինչ այնպէս գտած էին, անշուշտ ևս առաւել զարգացած:

Գալով ծիսական բարեկարգութեան, Մանդակունւոյ գործերն արդէն վոքր ի չատէ կը տեսնուին Օրհնութենաբեր յոյսովէ և Մաշտոցի մէջ. սակայն ամենամեծ գործ մ'ալ Անանիա Շիրակացւոյ գէտ անտիպ գրուածոց միոյն[3] մէջ յիշատակուած կը գտնենք, որ թերևս չատերուն գէտ ծանօթ չըլլայ: Մեծանուն տումարագէտս՝ խօսելով Ծննդեան և Յայտնութեան տօներու միացեալ թէ անջատ տօներու մասին, այսպէս կը գրէ. «Հեթանոսք՝ Հարցն երանելոց՝ որ է Նիկիա և Ղերոց Վարդապետացն. *տանզի ոչ երիկ չեհաս (այսինքն առաւոտն ծննդեան տօնին) է նոսա, և վասն այնր չընկալան. այլ յառաջ *տան զբազում ժա-

1. Զոր կը յիշէ Հ. Գ. Ալիշանեան՝ իւր Բացատրութիւն Շարականի նախերգանքի մէջ, տարբեր ըլլալու է այն թուին և մագաղաթի վրայ գրուած բոլորվիր Շարխնոցին. վասն զի տող մէջ իւրաքանչիւր շարականի յօրինողին անուններ նշանակուած չկան, ինչպէս կը տեղեկագրէ Հ. Գաբրիէլ. և կամ ըսելու ենք, որ տպագրի նշանակած ՈՃԺԸ տարեթիւն մի ուրիշ թուականի տեղ գրուած ըլլալու է վրիպակաւ:

2. Պատարագամատոյցի կարգաւորութիւնը գէտ խորհրդական քօղի տակ ծածկուած կը կենայ մինչև ցայսօր. սակայն Շարդարութիւն Հայրապետաց Հայոց ծայրիս մասին կը բանայ այդ քօղը. վասն զի յետ յիշելոյ զկարգաւորութիւնն ժամակարգութեան ի ձեռն Յովհ. Մանդակունւոյ՝ անմիջապէս կը յարէ, «և զՏեր Ադրոյնէ զբնութենաց պատարագամատոյց»: Ուխտանէս յիշելով այս պատարագամատոյցը, կը յաւելու, թէ «զբ տան Աղխանոյ»: Ըստ իս Տեր Ադրոյնէ զբնութենաց կոչուած պատարագամատոյցն՝ Ս. Աթանասի պատարագին լոկ թարգմանութիւն մի չի կրնար ըլլալ, ինչպէս կարծեցին ոմանք. վասն զի բոլոր միւս յոյն պատարագներէն աւելի նմանութիւն ունի այժմու մեր գործածածին հետ:

3. Այսինքն ե. ի Յայտնութեան Տեառն և Փրկչին գերոյ ճառին մէջ:

նանակ և է գերս եկն յաչերս, և ընկալեալ եղէ՝ որպես յանդիպ եղելոյ ճշմարտութեան, և հաւատոյ ամ չնչել (ի 25 Դեկտ. տօնել զՄկնաւնդն) պնդէ ցերանելին Յոհան Կաթողիկոս, որ ազգաս Մանդակունի էր. և ապա նորա է խնդրէր եղեալ ճշմարտութեանն, և *տնեալ և հաւատ լեալ՝ ընդունել հրամայէ. յետ որոյ և զե հեթանոսոտ»:

Այս տեղ կ'իմացնէ մեզ Անանիա, — չգիտցուիր ինչ հնագոյն յիշատակարանի, կամ աւանդութեան վրայ հաստատուած, — թէ Մանդակունիէն չատ յառաջ ընդունած էին մեր հայրապետներ Ծննդեան տօնն առանձին տօնելու գործադրական տօնորութիւնը, և թէ Մանդակունին առաջինն եղաւ, որ դարձեալ ի միասին տօնել հրամայեց:

Իսկ թէ երբ և որո՞ւ ձեռքով ընդունուած էր այն, ուրիշ և ընտիր յիշատակարան մի, այսինքն է Շարդարութիւն Հայրապետաց Հայոց, այդ մթին կէտն ևս կը պարզէ մեզ բարեբաղդաբար, դնելով զայն յամին 437–438. այսինքն՝ ճիշդ այն ժամանակամիջոցին, երբ Ս. Սահակ քաշուած էր Աբրատազ կամ Աբրահազ երբև անկեալ յաթոռոյ, և Սուրմակ՝ ապօրինի կերպով և անարժանապէս անոր գահը յաթոռոյ, և Սուրմակ՝ ապօրինի կերպով և անարժանապէս անոր գահը գրուած էր: Ահաւասիկ յիշատակարանիս խօսքերը. «Իսկ յայսմ ժամանակի կոչին Աղիոյ զոր ոմանք սովորեալ տաւնէին զտաւն Ծննդեանն և զՊկրտութեանն ի միում աւուր ի վեցն Յունուարի, միաբանեալ ընդ միմեանս ամենայն տիեզերք, ըստ Հռոմ(ա)ց մեծ եկեղեցւոյն, սահմանեցին տաւնել զտաւն Ծննդեանն ի ԻԵ Դեկտեմբեր ամսոյ, և զտաւն Մկրտութեան ի ԶՆ յունուարի՝ ի ժամանակս Յովհաննու Ոսկեբերանի: Գրեն առ ամենայն եկեղեցիս, այսպէս և առ Ս. Սահակ՝ այսպէս կատարել և գալ ի համաձայնութիւն կաթուղիկէ եկեղեցւոյն. իսկ նա աքսորեալ գոլով Աբրատազ գաւառի՝ անկանայր զիրն»:

Ո՛րքան անճիշդ և անհասկանալի է այլուր Ան. Շիրակացւոյ հետ՝ նաև ուրիշ մերազգի մատենագրաց աւանդածը, իբր թէ Յով-

1. Թէ երբ Ոսկեբերանի ժամանակ եղաւ այսպիսի մի տիեզերական բարեփոխութիւն, կը վկայէ նոյն ինքն Ոսկեբերան՝ Յաղթ Ծննդեան ԼԱ. և ԻԱ. երկրորդ խօսքին մէջ. յորս կը ծանուցանէ առ Անտիոքացիս, թէ երկու գէտ տասն տարի ճառելու մէջ. յորս կը ծանուցանէ առ Անտիոքացիս, թէ երկու գէտ տասն տարի յառաջ չկար այն՝ առ արեւելեայս, ուրեմն պէտք է որ յԱբեւմտից սկսած ըլլար անոր գործադրական սովորութիւնն, և հաւանօրէն Իննովկինտիոս Պապի ժամանակ:

2. Այս յայտնի է, թէ Ոսկեբերանէն չատ տարիներ վերջ, կամ Պրոկղի ժամանակ ըլլալու էր այսպիսի հրաւէր մի առ Ս. Սահակ, և ոչ թէ Ոսկեբերանի, որ յամին 404 վախճանեցաւ. իսկ սրբոյն Սահակայ աքսորն՝ եղաւ յամին 437–438. ապա թէ ոչ՝ այս երկու դէպքերս իրարու հակառական կ'ըլլան:

պինեանոս կայսր և Իրեն առաջին անգամ փորձ փորձած ըլլան Քննդեան տօնը՝ Յայտնութենէն զատ տօնելու. մինչդեռ անոնցմէ գրեթէ եւ բեք զար յառաջ կատարուած իրողութիւն մ՚է, ոչ միայն յաչխարհիս մերում՝, այլ նոյն իսկ բոլոր Արեւելքի և արեւմտեայց ուղղափառ եկեղեցիներուն մէջ: Յայժ փափաքելի էր, որ Շիրակացին առանց խնայելու մագաղաթի և մելանի՝ քիչ մ՚ընդարձակաբար հաղորդէր մեզ, թէ Մանդակունին ո՞ր տումարագիտի ձեռքով կատարեց այն քննութիւնն, ինչ հիման վրայ և ինչպիսի հաշիւներով իմացաւ հնոյն ճշդութիւնն և նորի անճշդութիւնը: Շիրակացւոյ մէջ բերած փաստերն՝ աւելի աստղագիտութեան՝ քան թէ ուսումնական ճշդագոյն հիմանց վրայ հաստատուած են: Այսպէս և Մանդակունի, կարծեմ, թէ Նիկիոյ Ս. ժողովի սահմանադրութիւնն ունէր իբրեն իրրև միակ նեցուկ և նպատակ՝ այնպիսի մի վերանորոգութեան համար: Թէպէտև այդ ժամանակի եկեղեցական պարագայք՝ ուրիշ պատճառներ ևս կ՚ընծայէին անոր կրցածին չափ հեռանալու ցունացմէ: Սակայն այսպիսի պարագաներ, որոնք Բարգէնի, կամ Աբրահամ կաթողիկոսի մի համար եղան իրրև մի մի զօրեղ և ցնցիչ ուժանակներ՝ խզելու և վերիվայր տապալելու մեր դրացի ազգին հետ ունեցած այն քաղաքական և կրօնական յարաբերութիւնները, մազի չափ չի կարողացան դրդուեցնել զՄանդակունի, և նա չարունակեց իր քաղաքագիտական ընթացքը՝ մեր նախորդ սուրբ Հարց և Հօտաստեաց տուած ուղղութեամբ:

Մեկ կողմէն Զենոն կայսեր յամին 482 հանած Հենոթիկոնն և Ակակայ յարուցած խռովութիւնները, որոնք այս առեն սկսան վրդովեցնել Արեւելք և Արեւմուտք, միւս կողմէն ալ այն ատրճ Նեստորականները և անոնց չարամտութիւնները, զոր կը յիշեն Գիւտ և այլք իրենց թղթոց մէջ, բնաւ ազդեցութիւն[1] չունեցան Մանդակունւոյ վրայ, և ոչ իսկ կարող եղան յուզել մեր ծովածաւալ ազգն և կամ ալ՝ կածել արբազան աւանդութեամբք ակաղ-

1· Յիրաւի, թէ Ղազարայ և թէ մեր ուրիշ պատմագրաց քով երբեք յիշուած չէ, որ կամ Մանդակունին, կամ իւր ժամանակակիցներէն մին Քաղկեդոնի ժողովոյն՝ կամ Յունաց հակառակ քան մի խօսած, գործած կամ գրած ըլլայ: Յովհան Օձնեցին ամբաստանուած է ոմանցմէ իրրև հակաքաղկեդոնական, չիոթեակելով Յովհաննու Մանազկերտեցւոյ կամ Օվսէեցւոյն չետ. բայց Մանդակունւոյ համար ոչ ոք ցայսօր կարող եղած է քան մ՚ըսել: Մովսէսի, Դաւթի, Մամբրէի անուամբ յօրինուած հակաքաղկեդոնական վիճաբանութիւնք իսկ անաչառ քննադատութեան առջև ուրիշ քան չեն, քայց եթէ աղճատանք վերջին դարուց, որոնք ե· դարու հոգիէն զուրկ են ամենևին: Ես ալ կ՚ուզէ ճանչնալ զայն՝ թող յաւ ուսումնասիրէ ՊՂազար:

ձուն անոր եկեղեցւոյ նաւը, քանի որ սուրբ Հայրապետս իմաստութեամբ կը զեկավարէր զայն: Այն ամենամեծ սխալը, զոր անհեռատեսութեամբ գործեցին ապա անոր յաջորդները, բաժնելով իրենք զիրենք Բիւզանդական կայսրութեան հզօր դաշնակցութենէն և ենթարկելով Պարսից ազիտասէր բռնակալութեանը, կրկնակի վնասեց մեր ընդհանուր չահերուն: Այս բանս առանց երկբայութեան է. վասն զի մեր ազգային և եկեղեցական գարաւոր եղերերգութիւնքն իսկ՝ անոնց յերկուստեք հասուցած ազէտներով կազմուած կեցած են: Եւ զարմանալին այն է, որ յետ միանգամ թշնամանալու՝ գարձեալ Ներսէս Շինող, Յոհան պատմագիր և այլ կաթողիկոսունք՝ լալով ողբով կայսեր օգնութիւնը կը հայցեն կը պաղատին. բայց այդ օգնութիւնն ևս՝ յայնժամու յարաբերութեանց կամ խնդրոյց նման թոյլ դեղևկոտ և ապաժաման լինելով, չատ անգամ մեծ վնասուց և վրէժխնդրութեան աւիթ կ՚ընծայէին մեզ՝ Պարսից և Աբարացւոց կողմէն: Սակայն մենք ո՞րչափ չնորհապարտ ենք Յովհ· Մանդակունւոյն, որ իւր խորին քաղաքաւեսութեան, թէ առած դասախարակութեան համաձայն, նախատեսեց բոլոր ապագայ ծագելիք այդ չարիքն ու բարիքն, և հաստատուն պահել ջանաց, — ոգւով չափ, — իւր նախնի սուրբ Հօտաստեացմէ արդէն Հոռոմոց հետ հիմնուած և այնքան զգուշութեամբ զարգացուցած բարեկամական դաշնակցութիւնը: Վահան Մամիկոնեան ևս հաւատարապէս արդիւնաւոր եղաւ այսպիսի մի լուսաւոր և փրկաւէտ քաղաքագիտութեան մէջ. և այն պատճառաւ իսկ Յունաց կողմանէ աչնեղութիւն կամ ոտնձգութիւնք բնաւ չեղան, որով կարացնա բոլոր իւր քաղաքական այժերը Պարսից դէմ թափել և մեր հայրենեաց փրկութեան գործը յաջողութեամբ ի գլուխ հանել: Շնորհիւ այս երկու ուղղախոհ վարչապետաց, կարելի է գուշակել, թէ ինչպիսի բարեկարգութեամբք անդորրացան ազգն և եկեղեցին, և որպիսի չարիք եղան արմատախիլ յաչխարհէս: Ղազար՝ իւր պատմութեան ՀԲ· Ղ·. և այլ գլուխներուն մեծաւ դրուատեօք չեչտած է արդէն զայս ամենայն, որոնք Տրդատայ և Լուսաւորչի օրերը, կարծէք, թէ կը յիշեցնեն մեզ՝ նոյնանման ամոլակցաց ձեռքով. իսկ յետ ժամանակաց առ Վահան գրած թղթոյն մէջ երեմիական ողբեր ևս կը յաճախէ. վասն զի Մանդակունւոյ ազգի մահուամբն՝ այն գեղեցիկ վարչութեան կարևոր գեակն ևս ի վայր անկեալ էր, և անոր յաջորդը խոտորնակի և գայթ ի գայթի կը նկրտէր վարել զայն: Այս ցաւալի զարտուղութիւնս գեռ աւելի զգալի եղաւ, երբ

Վահանայ յաջորդեց Վարդ, և յունական ազդեցութեանը՝ պարսկայինն և քաղաքայինը[1]։ Հանդերձ այսու ամենայնիւ, ո՛րքան տարբեր պիտի լինէին նաև յետ այնորիկ մեր քաղաքական և եկեղեցական կացութիւնքն, եթէ գէթ Վրթանէս Քերթող և Աբրահամ ունեցած ՀՀայային այն տարօրինակ կուրութիւնը՝ չփոթելու Քաղկեդոնի ժողովոյն և Լևոնի վարդապետութիւնը՝ Նեստորի վարդապետութեան հետ, և Քաղկեդոնականները՝ Նեստորական անուանել։ Յունական խմաստութիւնը չկարենալով ըմբռնել տարբիներէն սերմանուած այսպիսի մի թանձր տգիտութիւն, որ յամառութեամբ աւելի ևս պըժդալի կը դառնայր, կը տախտուէր այնուհետև փոխանակ հաւերաշխութեան՝ մերթ ցաւ, մերթ ծիծաղ և մերթ դառնութիւն ցոյց տալ նոցա. իսկ ասկէց յառաջ եկած դարաւոր աղէտքն ալ անփոխարինելի են։ Սակայն այս կէտս մեր գրութեան նպատակէն դուրս է, և չենք ուզեր աւելի երկարել։

Տեսանք զՅովհ. Մանդակունի իբրև հայր հայբենեաց, իբրև պետ ճշմարիտ հովուի, որ իւր անձը կը դնէ ի վերայ ոչխարաց. իբրև քաջընդդիմիչ նկնդիցս և վնասակաց, իբրև կարգաւորող ժամակարգութեան, պատրաստամատոյց և ձիակից Հայաստանեայց եկեղեցւոյ. իբրև նմապատն փաղաքշելի ի վեհաւարութեան։ Իսկ ի հետևեալն պիտի տեսնենք զնա իբրև կիրի մոբենաբեր, անսուղոր պերճախօս և հուսկ իբրև՝ աշխարհահայեաց և ներկուռ քաղցրախօս։

1. Տես Հենրիկոս Գելզեր բազմաքան Ուսուցչի վերջերս հրատարակած ընտիր գրուածը. *Die Anfänge der arm. Kirche*, յորում քննութեամբ ապացուցած է զայս ամենայն, և փ. Բուզանդ։

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ՄԵՋ ՀԱՍԱՆ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՆ ԵՒ ԲԱԺԱՆՄՈՒՆԴԸ

Մեր ե. դարու կաթողիկոսաց մէջ, կրնայ ըսուիլ իրաւամբ, թէ Յովհ. Մանդակունին առաջինն է, որ իւր բազմավրդով կենաց և տագնապալից օրերուն մէջ գիտցաւ հաւասար այնքան նիւթական գործունէութեան՝ նաև գրիչ չարժել։ Սակայն մեզ համար շահագրգիռն այն է, որ սուրբ հայրապետս միւս թարգմանչաց պէս լոկ թարգմանութիւններ կամ յարատևութիւններ ընելու համար չի չարժեց իւր ոսկեղէն և անմահ գրիչը, վասն զի այս մեծ և կարևոր գործս՝ արդէն իսկ կատարած էին իրմէն երիցագոյն և յաւէտ յիշատակաց արժանի թարգմանիչները. այլ արտադրելու ուրոյն ընդոծ յատկութիւն ունեցող այնպիսի ինքնագիր գործեր, որոց անհրաժեշտ պէտք ունէր հայ ազգն և եկեղեցին։ Կանոնի գիշատիչ ժանիքներէն ազատած և մեզ հասած ծներն՝ այն բազմաթիւ գործերէն մնան մի միայն համարելի են, ըստ իս։ Բայց դոցանէ չատերն իսկ այնպիսի հանգամանքներով կը ներկայանան մեզ այսօր, որով իրաւամբ առանց երկբայութեան դիւրին չէ ընդունել զանոնք, կամ մերժել։ Ուստի մենք նախնական քննութենէ մի անցուցած ըլլալով արդէն, այս տեղ կը բաւականանանք նախ ընդհանուր կերպով թուարկել զանոնք, համաձայն հետևեալ երից բաժանմանց. այսինքն է, Ա. Վերաբական գրուածք. Բ. Երկբայական, և հուսկ ապա Անվերջ գրութիւնները։

Վաւերականք[1], որոնք հնոց վկայութեամբ ևս առաւել կը հաստատուին, են Մաշտոցին մէջ Ա. Հիմնարկութիւն սբոյ եկեղեցւոյ, — Բ. Կանոն նաւակատեաց եկեղեցւոյ, — Գ. Կանոն նաւակատեաց եկեղեցւոյ և

1. Այս գրուածոց վաւերական լինելու մասին քալ կը համաձայնին Օրինութիւնք ցուցակին՝ նաև ժ.րդ դարէն յառաջ գրուած մեր ամենահին Մաշտոցն, ուր Ա. Կանոնին վրայ Յովհ. Մանդակունւոյ անունը գրոշմուած է։ — Յովհ. Կթղ. պատմ. տպ. ի Մոսկուա 1853, էջ 36։ — Վարդան, պատմ. տպ. Վենետիկ 1862, էջ 55։ — Կիրակոս Պատմ. տպ. Վենետ. 1865, էջ 21։ Սակայն ինձ այնպէս կ'երևի, թէ յետ ժամանակաց յաւելուածներ ևս եղած ըլլան գէթ յիշեալ կանոնաց ոմանց մէջ. և այս պիներև կը տեսնուի ընդարձակ Մաշտոցի՞նոր կարգաւորութենէն՝ ԺԲ. դարուն։

սբբելոց պատճառի, — Գ. կանոն ժամահաց օրհնելոց, — Ե. կանոն սկիզ և հաղորդ օրհնելոց, — Զ. կանոն հանդիսից ընդունելոց և ապաս օրհնելոց, — Է. կանոն տաղաս օրհնելոց, — Ը. կանոն խաչ օրհնելոց, — Թ. կանոն ձեռնադրելոց, — Ժ. կանոն պսակ դնելոց, — ԺԱ. կանոն պսակ վերացուցանելոց, — ԺԲ. Գաբրիէլ[1] տաճառնորդաց: Այս ամենայն յանուանէ կը յիշատակուին Ե. դարու վարդապետական յիշատակարանի մի մէջ, զոր կանխաւ յիշեցինք, այսինքն է, Օրհնութիւնաբեր[2] ցուցակին կարգադրութեան Մաշտոցի և Թ. դարում գրուած երկաթագիր Ա. Մաշտոցի մէջ: Իսկ ժամագրոց մէջ, — որուն նախկին կարգադրութիւնն ինքնին ցուցնիք, թէ Յովհ. Մանդակունի ըրած է, — են ԺԳ. Գաբրիէլ և Աղբէտ դիւրապային ժամու. ըստ Յովհ. Օձնեցւոյ[3] «Գաբրիէլիան՝ Զաքարիացեալք, Աղբէտ՝ Զէն գոհանամ. և զհանգիստ նորին՝ Նայեա Տէր ողորմութիւնամբդ քո»: — ԺԴ. Գաբրիէլ և Աղբէտ ազատացեալ՝ ի ճաշաժամու, այսինքն են՝ Աբրիոն հաց և Զգեցո Մեզ Տէր, Միաբան ասենիցեան և Որ է հովիւական, Սուրբ սրտիւ և Տէր զօրութիւնդ:

ԺԵ. Աթենաթօռիկոսութիւնն[4] յաւուր մարգպանութեան վահանայ Մամիկոնեանի: — ԺԶ. Բան կանանական[5] յորում կը նզովէ այն եպիսկո-

1. Օրհնութիւնաբեր ցուցակի մէջ այսպէս գրուած է, որով կարելի հակցուիլ թէ Աղուանից մեծ քարոզներն և թէ Յաղթիա տաճառնորդական պահոց ճառեր, կամ քարոզներ: Մենք վերջին իմաստով գրինք ատոնք:

2. Այս հնաւանդ յիշատակարանս կը գտնուի Վատիկանի թիւ. III. 8 գրչագրին և մեր կանոնագրոց միոյն մէջ: Իսկ հրատարակութիւնը տես Հայր. Նոր Բիբլ. Նոյեանց օգտաշատ երկասիրութեան մէջ, էջ 246–247, տպ. ի Վենետիկ 1889: Զեռագրաց մէջ երևցած հետեւեալ տարբերութիւններէն զատ, օրի. աղագաւ, փոխանակ «Եդեմացւոց «վեցթևոցն», փոխանակ «Ղազարու» Ղազրէի, փոխանակ «առաջին ամի հայրապետութեան իւրոյ» չէր տան և ի ամի եպիսկոպոսութեան. փոխ. «Գաղաթաշաւիղ» յԱյբոբայ գաւառի է Վաղարշապատ տաղտէ, ուր հակառակ փաստեր չկան յիշատակարանիս վաւերականութեան դէմ:

3. ԻԱ. երորդ կանոնի մէջ խօսելով դիւրաժամու սպասուց մասին՝ կ'ըսէ. «Եւ նոցին զքարոզութիւնն և զաղօթսն զհետ բերել, զոր ի նոյն խորհուրդ արարեալ է երանելոյ Յովհաննու Մանդակունւոյ, Հայոց կաթողիկոսի: Գաբրիէլիան՝ Զարթուցեալքս, Աղօթք՝ Զքէն գոհանամք, և զհանգիստ նորին՝ Նայեա տէր ողորմութեամբդ քով»:

4. Այս չնայծարիկ ճառս՝ պահած է մեզ Փարպեցի ի վերջ պատմութեան, փոքր ինչ ազատաղեալ: Աւենաթօռութեանս մէջ երևցած «յորմանէ» և այլն, խորհրդութիւնները Ղազարայ ընծայելի են, որ իւր պատմութեան ուրիշ էջերում ևս նոյնպիսի քերականական ձևեր գործածած է:

5. Այս միակ կանոնս հրատարակուած է ի Վենետիկ, Մանդակունւոյ գործոց մէջ: Երուսաղէմի թիւ. Գ. 972 Անդրէնդէսյ ճառերը պարունակող գրչագրին մէջ ևս կայ Յաղթիա որ գանագրեան ոտ յեպիսկոպոսութիւն նոյն նման գրութիւն մի, որուն (թէ ընդ-

պոսներն, որք անչափահասներ, տգէտներ և անարժաններըը քահանայս կը ձեռնադրեն: — ԺԷ. Բանն Աթոռոյ Տրթմոցս և Տրթմոցս գեղեցկահիւս ճառի մի հատուած[1]:

Երկբայականքն[2] են Շարականոցի մէջ Անկիւնքն բանն Աթոռոյ, — Մեծացուսցէ, ըստ ումի ձայնից, — Տեառնընդառաջին, — Աղօթք, — Թափառողաց, — Աւետեաց (ԳԶ), — Գովեսք յինոյ — և կարճն յարութիւնն: Ի թուա. ՉԼԳ — 1285 գրուած իբ. երորդ ժամագրի մէջ նոյնպէս Յովհ. Մանդակունւոյ անուամբ մակագրուած են նաև Աթոռոյ ձայնք, Մարդարէից, Վարդապետաց և Մեղս յանձնայնք չարականները: Կիրակամ՝ Յովհ. Օձնեցւոյն կու տայ վերջին չարականս:

Ա. և Գ. բորդ կանոնագրոց մէջ կան կանոնք թուով եօթն. իսկ Բ. և Դ. բորդ կանոնագրքի մէջ ալ կանոնք[3] իննն՝ նոյնպէս և Կոլոմն պատշխարութիւնն չորս երես մի ուրիշ գրուածք Յովհ. Մանդակունւոյ մակագրուած: Խոսրով՝ ի Մեհն. Պատարագի և ուրիշ գրչագիր մ'ալ

հակառակն Անդրիանդեայ ճառերու համար, չէ յայտնի) կ'ըսուի, թէ «Թարգմանեալ են յաւուրս տեառն Գր. կաթողիկոսի և Ներս. Լամբրունեցւոյ»: Ըստ իս ուրիշ ըլլալու է վերջինս. վասն զի Մանդակունւոյ յիշեալ Բան կանոնային մէջ քահանայ ձեռնադրութեան վրայ է խօսքը, և ոչ թէ եպիսկոպոսութեան:

1. Այս պատառիկս, որ մի ընդարձակ գրութենէ առնուած է, կը գտնուի ի թուա. ՉԳ = 1233 գրուած մագաղաթեայ ձեռագրի մէջ՝ ի չարս ծագկաքաղ հատուածոց Ս. Սահակայ, Մեսրոպայ, Եղնկայ և Լուսաւորչի: Այս պարագային հետ լեզուն ևս յայտնի ապացոյց է անոր հարազատ լինելուն:

2. Այսպէս կոչեցինք այդ գրուածներն, ոչ եթէ քննութեամբ հակառակ գտնելով զանոնք առ հասարակ վաւերականաց, այլ պարզապէս այն պատճառաւ, որ զանազան գրչագրաց մէջ՝ զանազան հեղինակներու անուամբ մակագրած են ընդօրինակողք վերջին դարուց:

3. Կանոնացս յառաջաբանն այսպէս կը սկսի. «Զմեծ և զամբաւ զբարերար և զմարդասէր Տեառնէ»: Այս կանոններս քալ կը համաձայնին Մանդակունւոյ տպագրուած ճառերու մէջ աւանդածներուն, որով և վաւերական ըլլալ կ'երևին ատոնք: Նշանաւոր է կանոն Ի, ուր կ'աւանդուի թէ Յայտնութենէն յառաջ Ծնունդ կատարելու չէ, ինչպէս կ'ընեն ոմանք. և այս իսկ քալ կը պատշաճի Մանդակունւոյ, որ, ըստ Շար. Հայր. Հօրց, առաջին անգամ փորձեց զարձեալ այդ երկու ծոները միացնել: Դ. բորդ կանոնին մէջ խօսելով ձկան և ուրիշ պահոց կերակրեղինաց վրայ՝ բազմաթիւ Ս. Հարց հետ կը յիշուին նաև Զինովբ և Յովհաննէս: Զինովբս եթէ Գլակացին համարինք, և եթէ ասորի եպիսկոպոսն Սիլոնի, զոր իբրև վկայ կը յիշէ Եւսեբիոս, կերակրեղինաց մասին կանոններ աւանդած չունին: Իսկ Յովհաննէս՝ որ առանձինն կը յիշուի, բաց յԱկակեբանէ և առընթեր Ս. Սահակայ. եթէ չեզ Երուսաղէմացին, այլ Մանդակունի, այն ատեն իրաւամբ կրնանք տարակուսիլ, թէ կանոնացս հեղինակն ուրիշ մէկն եղած ըլլայ: Եւ մեր կարծիքով Յովհաննէս Մանազկերտացին ըլլալու է հեղինակ այս իննաթիւ կանոնացս: Նկերքին հանգամանք իսկ զայս կը հաստատեն, զորս ուրիշ տեղ կը յուսամ բարգաւաճել:

Մանդակունւոյ կու տան զՕգնունքին[1] ծքծքացն: Երուսաղեմի Մատենադարանի ԿԱ. Համար 77. նօտարագիր ձեռագրին մէջ կը գըտնուին՝ վան Յննեքեան Բրէպոսի[2], – վան Սրբոյն Բրէպոսի մահուն և խալէն երկու ճառեր: Վերջին ճառս ման համարելի է հաւանօրէն մեր ԻԲ. Ճառընտրի Բանն Ադոռաց մաքննացաւ և մաքրացաւ հատուածը, զոր կանխաւ յիշեցի: Երուսաղէմեան թիւ 1377 Ճառընտրի մէջ Յաղագս հաւատոյ երկու ճառեր, որոց մին կը սկսի. « Սկիզբն քրիստոնէութեան հաւատոյ՝ մկրտութիւնն է »: իսկ միւսին՝ « Նախ պարտ է իմանալ »: Ուրիշ ճառեր ևս դարձեալ Մանդակունւոյ տուեալ անունեամբ մակագրուած են այսպէս. վան Ոչրոպիենեան, – վան ոբովսինեանն, – վան շնորհեան, – վան պատանորհեան, – վան չէշոցնոցոյ, – վան ընդդէմ մարթոմէոսեան գիրոց, – վան պապիասոյ, – վան հնոց և նորոց հաստատութիւնն: Այս ճառերուս հարազատութիւնը չեմ կրնար հաստատել կամ մերժել. վասն զի նոցա անուանցը միայն հանդիպած եմ ձեռագրաց ցանկերու մէջ: Պատարագամատուցի մէջ այլ և այլ աղօթքներ ընծայուած են Մանդակունւոյ. բայց չենք սխալիր եթէ զպատարագն[3] Տէր Ադոռաց զբռնեանց իսկ բոլորովին

1. Այս բացատրութիւնս այլ և այլ նշանակութիւններ կու տայ մեզ. Ա. իբրև Օրհնութիւն կամ չրխունձրազարուցի, և կամ լաւ ևս՝ Տալենդն յիսիկոյին կիրակամտի: Բ. իբրև Կանոն Տեառնընդառաջի, կամ մանկանաց օրհնութիւն: Գ. Ճրագալուցս, կամ Ագապաց: Երրորդ խմաստով չէ կարելի այլ ևս Մանդակունւոյն ընծայել այդ կանոնը. վասն զի Ս. Սահակայ կանոններէն դիտենք, թէ Մանդակունեին յառաջ իսկ կը կատարուէր այդ հանդէսը: Երկրորդ կիսոի նկատմամբ, այսինքն է՝ մանկանաց օրհնութեան յառուկ կանոն չկայ մեր հին Մաշտոցի մէջ. վէնեակոյ տպագրին վերջ գրուածն իսկ յետոյ ուրեմն լատիներենէ թարգմանուած է: Ուրեմն՝ կը մնայ ընդունել իբրև առյդ առաջին ենթադրութեանս վերջին կէտը, զոր կը հաստատեն մեզ Յովհան Օձնեցին (Կանոն ԺԲ) և խոսրով Անձևացի: Սա իւր Մեկնութեան Ժամ. Հայոց. նկնդեցոյ չքնաղ գործին մէջ հանդիպելով Օրհնեալ ես Տէր որ բնակեալը ես ի բարձունս ազօթքին, կը դնէ իբրև մակագիր անոր վրայ Յաղագս Օրհնութեան ճրագացն. ապա կ'ըսէ, թէ այդ ազօթքը Յովհ. Մկրտչին չէ, ինչպէս ճրագացն ոմանք, այլ « Յովհաննու Մանդակունւոյ է, որպես և այլ ազօթքն և քառգքն »:

2. Երուսաղեմի թիւ 1377 Ճառընտրի մէջ, – ինչպէս հաճեցաւ տեղեկագրել ինձ Սրբազ. Սահակ եպիս. Խապայեան, – այս երկու ճառերն իրարու հետ միացեալ կը տեսնուին, հետևեալ մակագրութեամբ. Յաղագս Բրէպոսի Տրջնոյն Տահու և խոչէին և ջրոյն, որ եղև ի խաղն »: Սկիզբն է. Զխորհուրդ խաչին և զմահն Քրիստոսի մարմնոյն զմաւս ածելով՝ անհնարին ըմբռնել զիս աքանչելոյն հրաչք: Ոճն ևս կ'ըսուի, թէ բարձր է և գաղտնի:

3. Այս պատարագս, – ինչպէս յառաջագոյն ըսուեցաւ, – Շարադր. Հայր. Հայոց գրութեան մէջ Մանդակունւոյ ընծայուած է: Ուխտանէս՝ Ս. Աթանասի եղած կը

սուրբ Հայրապետիս վերնական հոգւոյն ծնունդ համարինք: Հուսկ ուրեմն յիշենք այն նշանաւոր ճառերն, որք իբրև հարազատ Մաշտոցիս ցոյզ. Մանդակունւոյ հրատարակուած են ի վենետիկ, և են թուով 27, յամին 1836 տպագրութեան համաձայն. իսկ ըստ 1860 ի տպագրութեան՝ են 30: Ստ. Ագոնիկ զկարգս Սրբոցն Քահանայիչ և Եպիսկոպոսի ձեռնադրութեանց ևս Մանդակունւոյ կու

թուի ցուցնել, ըսելով. Զոր ասէն Ադոնայ: Ագոնիկ երկու կարծեաց մէջ կը տատանի, երբ յիշելով նորա գրաւոր կարգաւորութիւնները՝ կը յարէ. « Գլխովին և ղեկտրութիւնն, զոր Աթանասի ասեն լինել »: Ասոր՝ դիտելով որ մինչև ցայսօր ոչ աթանասեան պատարագի յայն վամ լսուին քնագիր մեզ հասած է, և ոչ իսկ Ս. Բարսեղ, Գրիգոր և Յովհ. Ոսկեբերան յիշած են երբեք Աթանասի անուանեալ պատարագ մի: Բ. եթէ իրօք եղած ալ ըլլար, պէտք էր, որ նախ Աղեքսանդրիոյ եկեղեցւոյն մէջ գործածական լինէր. և սակայն անտարակուսելի է, որ այս եկեղեցւոյս գործածածը Ս. Մարկոսի, կամ լաւ ևս Կիւրղի պատարագն էր (տես P. Le Brun, Explicatio Missae. Venet. 1775, T. 1, p. 244-255). ուրեմն եթէ Մանդակունւոյ ընծայուած պատարագը թարգմանութիւն ևս ենթադրուի, պէտք է որ կամ Կիւրղի և կամ Ս. Յակոբայ պատարագներէն միոյն վրայէն եղած ըլլար: Երրորդ՝ Մանդակունւոյ պատարագի կարգաւորութիւնն և Հանգանակն իսկ՝ Աթանասեան Հանգանակէն չատ կը տարբերի, և Կ. Պոլսի Հանգանակին հետ ի մի ձուլուած է: Ուստի մեր կարծիքով Մանդակունին ինքնին յօրինած է յիշեալ պատարագն, ի հարկէ ե. դարուս Աղեքսիք մէջ գործածուած պատարագներու վրայէն: Իսկ աթանասեան կոչուելու միակ պատճառն այն է, որովհետև Տէր Ադոռաց զբռնեանց բառերով ազօթքն միայն ուղղակի Աթանասի անուամբ ծանօթ մէկ գործէն թարգմանուած է, և կամ այդ ազօթքով կը սկսեր աթանասեան պատարագն: Սուտիս այս կրկին ենթադրութեանցս ի հաստատութիւն կան կրկին փաստեր. Ա. Մեծն Խոսրով (Մեկն. ազօթից Պատարագի. տպ. ի Վենետիկ 1869, էջ. 16) յիշեալ ազօթքին հանդիպով իբրև մակագիր գրուցմած է անոր վրայ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ: Այս բանս ուրիշ մեկնութիւն չի վերցներ՝ բայ ի վերոյհանակալէն: Իսկ Նալբանեանցի (Մեկն. խորհ. Պատ. Վենետիկ 1847, էջ 347) դեռ աւելի կը պարզէ խնդիրը, գնելով Տէր Ադոռաց զբռնեանց ազօթքին վրայ « Մեկնութիւն ամենայն ազօթից պատարագին Աթանասի »: Ուրեմն այս յայտնի նշան է, թէ այս տեղէն կը սկսէր, թեև մեր աւարակը չգիտցուիր որոշակի: Այս պատարագս՝ միւս ամենէն աւելի գործածականն էր Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, մինչև ԺԱ. դար:

Նալբանեանցիէն յառաջ երկրորդ խմբագրութիւն մ'ալ եղաւ պատարագիս, մեծամեծ յաւելուածներով. այսինքն է՝ Ոսկեբերանի Պատարագէն զատ՝ ուրիշ ազօթքներ, քարոզներ և երգեր ևս մտան անդ: Յիրաւի՝ այսպիսի մի եղելութեան առաջին ներ, քարոզներ և երգեր ևս մտան անդ: Յիրաւի՝ այսպիսի մի եղելութեան առաջին ազդակը կը դանենք նախ Նալբանեանցւոյ յիշեալ գործի 192 էջումն, ուր կը ծանուցանէ, թէ իւր Պատարագի խորհրդածութիւնն ևս կ'ընէ, և ազօթքն իսկ Ոսկեբերանի՝ յանուանէ կը նշանակուին չոս: Բ. Համեմատելով Նալբանեանցւոյ մեկնած պատարագի քնագիրն, – որ կը գտնուի 193–226 էջերում, Օրհն. Արխանելոյ տպաս Եփեդոսոյ մակագրութեամբ, – կը տես նենք ակնհարև, որ կատարելապէս կը համաձայնի Մանդակունւոյ, կամ աթանասեան

տայ։ Վարդան և կը համաձայնի այսմ, ըսելով. «Որ բարիք յօրինեաց զկարգս ձեռնադրութեան»։

Անհարազատք են նախ ԻԳ. ճառընտրի մէջ յէջ 414, «Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ ի Մբլոսի Աթեսբանի Մենուինեն», որ կը սկսի. Աչքոտ կոյր բառերով։ Այս՝ կամ Յոհ. Երզնկացւոյ, և կամ մի ուրիչ Յովհաննէսի ըլլալու[1] է անպատճառ։ Բ. Յոպէս եր-կոց քնուինեանց մակագրեալ ճառն, որ կը գտնուի Երուսաղէմի վանացն թիւ 1377 ճառընտրի մէջ, այսպէս. «Սոցա հետևեալք խոստովանութեան և անաւրէնութեան», ևն։ Նոյն գրչագրի մէջ դարձեալ. Գ. Խբոպ՛ հոգեշահ՛ վան ազբիկ. «Զկարգեալ աղօթս հասարակաց»։ Գ. Խբոպ ճգնաւորք կրօնաւորաց և յանդիմանութիւն ծուլից։ Ե. Վան Նեմ և կոպոբածի աշխարհս։

Թարգմանութիւնք։ Ընտարակոյս մեծ հայրապետս յունարէն այլևայլ գրուածներ և ճառեր ևս թարգմանած է, որոնք միւս թարգմանչաց թարգմանութեանց պէս թարգմանողի անուամբ նշանակուած չեն. սակայն յոյժ չնորհակալ եմք Վարդանայ, որ նոյն իսկ Ս. Գրոց թարգմանութեան մէջ կը յիշատակէ Մանդակունւոյ գործակցութիւնն՝ ըսելով. «Եւ սա թարգմանեաց զերկրորդ կոընիացւոց նուիրն, չՅոհաննն, և այլ բազում օգուտս գործեաց ի կեանս իւր»։

Վարդանայ այս աւանդութիւնս՝ վերապահութեամբ միայն կա-

կարծեցեալ Պատարագի վերոյիշեալ խմբագրութեան, որ կը գտնուի Լէոնէան Խրհրդարէրէր կամ այդ քաղաքի Մատենադարանի թիւ Supp. 50 ձեռագրէն ընդ օրինակուած Պատարագին հետ. մինչդեռ Մեծին Խոսրովու Մեկնութեան քնագիրն՝ որ նոյնպէս Նարեկացի կը կոչուի, մեծապէս կը տարբերի, և աւելի համառօտ է։

Պատարագիս խմբագրութիւնն եղած ըլլալու է հաւանօրէն կամ Վկայասիրի և կամ Ն. Շնորհալւոյ օրերը։ Թէպէտև յետ այնորիկ ընդհանուր կերպով միակ գործածականն եղաւ. սակայն անհաւանական չէ կարծել, որ Հայոց այլևայլ վանքերուն յետոյ յատկութածներ և կամ յապաւումներ ևս կրած ըլլար։ Այսպէս ուրեմն Մանդակունւոյ Պատարագով փոքր ի շատէ, կարծեմ, թէ պարզած եղանք մեր եկեղեցիներու մէջ գործածուող արդի Պատարագամատոյցի զժուարակնճիռ հանգոյցը։ Գրութիւնս չէր ներեր ընդարձակաբար ուսումնասիրել Մանդակունւոյ Պատարագի նախկին ծագումն և անոր սկզբնական աղբիւրը. այս առանձին ուսումնասիրութեան անկ է։ Փափաքելի էր լսել, թէ այս մասին Հ. Յովսէփ Գաթերճեան ինչ եղրակացութեան յանգած է, որոյ գործն արդէն սկսած է տպուիլ։

1. Գործս անհարազատ ըլլալուն յայտնի նշանն է նախ, որ Ն. Շնորհալւոյ Հաւատով խոստովանիմն տեղի մի մէջ բերուած է. երկրորդ կը յիշուի ատ նաև անուն Յովհ. Սարկաւագ վարդապետի. երրորդ գրութեան ոճն և լեզուն իսկ օտար է Մանդակունւոյ յատուկ ոճէն և լեզուէն։

լելի է ընդունել, այնու մանաւանդ՝ որ առանց ո՛ր և է փաստի մէջ բերուած է, և կարծեք թէ նոյն իսկ Կորեան և Խորենացւոյ աւանդաժողովուն կը հակառակի. վասն զի առաջինը՝ նախկին Թարգմանչաց Ս. Գրոց թարգմանութիւնն յիշելէն յետոյ՝ կ'ըսէ. «Եւ յաւելագիմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն»։ Իսկ վերջինս կ'ըսէ Ս. Մեսրովբայ և անոր գործակցաց համար, թէ «Խորհրդաբար սկսանելով յԱռակաց՝ բովանդակ գքսան և երկու յայտնիս և զնոր կտակս յեղուել ի հայ բան»։ Ես չեմ ուզեր այս դասական պատմագրաց վկայութիւնն՝ առանձին առանձին բոլոր հին և նոր կտակարանի գործերուն վրայ տարածել. իրրու այն, թէ բոլոր Ս. Գիրքն այն ձևին մէջ՝ որով այսօր կը ներկայանայ մեզ, Ս. Մեսրովբայ ձեռքով թարգմանուած ըլլան. այլ կ'ախորժէի միայն վարդանայ գԵԹԷՐՐԴ ԿՈՐՆԹԱՑՈՑՆ ՀԵՐՐՈՐԴ[1] ընթեռնուլ, որ աւելի յար-

1. Այս թղթէս մի քանի տող հատուած կը գտնուի նաև Ագաթանգեղոսյ և Թէոդ. Ռշտենաւորի քով, այսպէս «Անաւրէն իշխանն՝ իբրև ատուածանալն կամեցաւ, ձեռն արկանէր և զամենայն մարդիկ մեղօք կապէր... Ածաքաց Աստուած զՀոգին սուրբ ի կոյս Մարիամ, և էառ Աստուածորդին մարմին ի կուսէն. որով կորոյս չարն, նովին մարմնովն պարտաւորեաց զմեզս աստուածախառն մարմնովն»։ Գերմանացի վարդ. վէտաէր՝ իւր վերջերս հրատարակած Der apokryphe dritter Korintherbrief մեծայարդ գործին մէջ այն կարծիքը կը յայտնէ, թէ Ս. Գրոց անգրանիկ թարգմանութեան հետ՝ Կորնթացւոց Գ. թուղթն ևս թարգմանուեցաւ։ Բ. Թէ որովհետև Ս. Մեսրովբ յունարէն չէր գիտեր (!!), հետևաբար աստրերէնէ թարգմանած ըլլալու էր զայն, այնպէս որ թէոդոսեան յոյն քնագրին վրայէն նորագտպէս վերջին թարգմանութիւնն ի գլուխ հանուելէն յառաջ, — այսինքն է 432 տարիէն յառաջ, — պէտք է որ Կորնթացւոց Գ. թուղթը Հայոց աշխարհի մէջ ծանօթ և եկեղեցւոյ մէջ ի գործածութեան եղած ըլլայ։

Մեր կարծիքով այս կէտերէն և ոչ մէն կարելի է ընդունել իբրև ստուգիւ կատարուած իրողութիւն։ Ու այս նախ դիտելու ենք, որ Գրիգորի վարդապետութեան մէջ բերուած տեղին, — եթէ ատոր և եթէ յոյն քնագրէ ուղղակի առնուած համարուի, — անոնի բաւական տարբերութիւններ կորնթ. Գ. Թղթէն. վասն զի ատ՝ «Իսկ որ անօրէնն իշխանն էր, ձեռն արկանէր է Նոսա» առաջին տեղւոյն մէջ, և յերկրորդումն՝ «Եդեալ արժանի յոյանալ և ձնանիլ ՀՏԵՐՆ ԹԵՐ ՅԻՍՈՍ ՔՐԻՍՏՈՍ, զի խրոխտական մարդասիրութիւնն՝ որով հղորդացեալ չարչի լիներ չարն, նովին մարմնովն կղօմբեալ չանգիմանէսցի»։ գծուած խօսքերը այլ ինչ կը ցուցնեն բոլորովին։ Հետևաբար Ագաթանգեղոսի խմբագրութիւնն՝ յիշեալ թղթի հայերէն թարգմանութենէն յառաջ կատարուած լինելով, չէր կարող ուղղակի անկէց փոխառութիւններ ընել։ Բ. Թղթոյս մէջ եղած այն յատկութածներն և յապաւումներն իսկ, զորս գերմանացի քննադատը բոլորովին հայ թարգմանչի անհասկացողութեան կու տայ, բան իսկ մասամբ Ս. Եփրեմի ուրեմն նեցուկ տարբեր մի այլ քնագրի, և մասամբ ալ գրչագրութեան արգիլանք իսկ կարեն համարուիլ։ Գ. Կորնթացւոց Գ. Թուղթն՝ Ե. դարու առաջին կիսում ոչ միայն Հայոց եկեղեցւոյն մէջ ի գործածութեան չէր, այլ և ոչ իսկ հայերէն թարգ-

մար է և դիւրահասկնալի. թէ և մատենադարանիս չորս ձեռագիրք՝ «վերկրորդ» կը գրեն բայց ես կը յուսամ, թէ ընտիր գրչագրաց տարբերութիւնք իսկ հակառակը պիտի հաստատեն, մտածելով որ կարելի բան չէ, որ առաջին թարգմանիչք՝ նախակաոն Կորնէլ. Բ. Թուղթը թարգմանած չըլլային կանխաւ: Իսկ Յոհան անուամբ՝

մանուած: Ես ասոր կրնան ապացոյց հատարուիլ նախ այն լեզուի և ոճոյ առանձնայատկութիւնքը, որք փոքր ի շատէ կը նչմարուին առաջին թարգմանչաց ձեռքով կատարուած Ս. Գրոց լեզուի և ոճոյ առանձնայատկութիւններէն: Բ. Թէոդ. Ռըոթենաուր (Ձառ. ընդդէմ Մայրագոմեցւոց, տպ. Վէնետկոյ, էջ 153) նախ խօսելով Պաւղոսի Թղթոց կանոնական ընթերցման մասին, յետ ըսելոյ, թէ Նիկիական ժողովոյն մէջ որոշեցին Ս. Հարք չորեքտասան Թուղթս միայն ընթեռնուլ, անդէն կը յարէ, թէ «Ես ի նորագտաւոյ գրուածոյ զնոյն չարագրութիւն վերառեալ է»: Իսկ յետոյ Լուսաւորչայ վարդապետութենէն վերոյիշեալ տեղին մէջ բերելէն յառաջ կը ծանուցանէ այսպէս. «Իսկ բարեզրուածոյն Գրիգոր զառ ի Հարց լռեալն և ոչ մակագրեալ ի նոր թարգմանութիւնս, վկայութեամբ ճարտարութեան»: Իսկ յետ այնորիկ կը յարէ անմիջապէս. «Ես այս ի հնագտաւոյն տուեալ վերատուեալ է, այլ ոչ ի նորագտաւոյ չարագրութենան»: Այլ՝ վէտերի չեմ եթէ մինք ևս ուղենք Քաղենաւորի առաջին տեղւոյն Նորագտոյ քրոնիկն բացատրութեամբ՝ նոր կատարեան նախկին հայերէն թարգմանութիւնն հասկնալ, և վերջին տեղւոյն՝ ի հնագտոյն քրոն բացատրութեամբ ալ վերջին կամ երկրորդ թարգմանութիւնը, սակայն և այնպէս միշտ անհասկնալի պիտի մնայ այս կէտս, թէ Նիկիոյ ժողովէն իբրև վաւերական չհաստատուած, կամ լաւ ևս՝ չընդունուած առ Կիւրեղեայ Գ. Թուղթն ինչ իրաւամբ իբրև վաւերական թարգմանել և գործածել կարացին Սահակ և Մեսրովբ:

Իսկ եթէ իրօք թարգմանած և գործածած էին, չատ դժուար էր, որ նոր թարգմանութեան մէջ չանցնէին զայն՝ պարզ այն պատճառաւ, որ իբր թէ Թէոդոսեան յոյն օրինակին մէջ չկար այն Թուղթը: Ես չեմ կարծեր, որ թարգմանիչք Նիկիոյ Ս. ժողովի հեղինակութենէն աւելի՝ այն ձեռագրին հեղինակութիւնն յարգէին: Ուստի դիտելով որ Քաղենաւոր՝ Կորնթացւոց Գ. Թղթին քնաւ յիշատակութիւն չընէր, այլ անոր խօսքն ուղղակի մէջ բերուած վկայութեան համար է, կրնանք ըսել, թէ Թէոդորոս՝ վերջին տեղւոյն հնագտոյ քրոն՝ ոչ թէ նախկին թարգմանութիւն Ս. Գրոց, այլ հաւանօրէն կամ հին կտակին մէջ եղայեայ մարգարէութեան ԺԳ. դլխոյն՝ 13 և 14 տուներէն կ'ակնարկէ, որուն համանման էր Գրիգորէն փոխառեալ տեղին, և կամ Կորնթացւոց Գ. Թղթոյն յոյն կամ ասորի բնագիրը, որ չկայր ի Նորագտոյ քրոնիկն, այսինքն է Նիկիոյ ժողովէն կանոնագրեալ կանոնաց գրոց ցուցակին մէջ, զոր ի վար արկանէին Հայք Յ. դարուն մէջ: Աստուածաբան վերջին տեղւոյ գծուած բառերուն տուած մեր մեկնութիւնն այնքան ուղիղ կ'երեւի մեզ, որքան որ նոյնիսկ ատ է այն՝ առաջին տեղւոյ վերջն Քրոնիկն բացատրութեան հետ, որ նոյնպէս կանոնական ցուցակէ խօսած ատուած է: Ուրեմն այս այսպէս ըլլալով, կարենք եզրակացնել, թէ Կորնթացւոց Գ. Թուղթը եւ. դարուն վերջին տարիներուն մէջ հաւաքուած թարգմանուած ըլլար, — հաւանօրէն Մանդակունւոյ միջոցաւ, — և մինչև Յ. դար իսկ դեռ անցուած չէր մեր եկեղեցիին ընդունուած կա-

նոնքը[1] *ի մատենադրաց Յովհաննու Յայտնութեան հասկցան ուղղակի, և այս ոչ առանց պատճառի. այսինքն է, նկատելով անշուշտ, որ խօսքը նոր կտակարանի բնագրի թարգմանութեան վրայ է անպատճառ: Բայց թէ վարդան ինքնին այսպէս կը հասկնայ արդեօք, այս առանց կռուանի է: Դիտելով մանաւանդ, որ Յայտնութեան ծանօթ թարգմանութիւնը՝ Ն. Լամբրունեցւոյ ձեռքով յետոյ ուրեմն եղած կ'աւանդուի, կարծէք թէ աւելի ևս կը զժուարանայ հնագոյն մի այլ թարգմանութեան գոյութիւնը: Երկրորդ «Յոհան անուամբ՝ կարելի էր նոյն իսկ Յովհան Ոսկեբերանի այնքան գրուածներէն մին ևս հասկնալ, այսինքն է Մեկն. Աւետարանին Յովհաննու, որուն այսօր ունինք ի ձեռին թերատ՝ բայց կրկին նախնեաց թարգմանութիւններ*[2]:

Դժուար է որոշել, թէ Մանդակունւոյ թարգմանածը ո՛րն էր ստուգիւ, Յայտնութեան էջ՞ը, թէ ընդ հակառակն Մեկնութեան Աւետարանին Յովհաննու: Ես կ'ուզեմ այս տեղ այսքանս միայն հաստատել, թէ Լամբրոնացիէն յառաջ պէտք է, որ Յայտնութեան մի հնագոյն թարգմանութիւն եղած ըլլար. որով հետև Աթանասէն սկսեալ բազմաթիւ յունական Հարք իսկ զայն գործածած են, և թէ Լամբրոնացին՝ այն հնագոյն թարգմանութեան խանգարմունքն աւելի ուղղած և ամբողջացուցած է, քան թէ ծայրէ ի ծայր բոլորովին

նանական գրոց մէջ. և այս պատճառաւ իսկ անկէց հազիւ ուրեք կամ երբեք կոչումն ըրած չեն Հարքն մեր, ի բաց առեալ Եղնկայ և Յճախոսպատումի Ի. ճառի մէջ եղած ակնարկութիւնքը: Սարկաւագ վարդապետի ժամանակ արդէն մտած էր Նոր կտակարանի գրոց ցանկին մէջ, ուստի զի որոշակի կը թուէ և զայն: Սխալ կաթողիկոսի ցանկով կարելի էր որոշել այս կէտս, եթէ Նոր Կտակարանի մասը չի պակսէր հօն:

1. Տես Հայ. Բարբառ-Բառից, Վէնետիկ 1889, էջ 221: — Հ. Գ. Վ. Ալիշան, Սիսուան, ի Դրուագ Լամբրունեցւոյ, և այլք ոմանք:

2. Թարգմանութեանցս մին եղած է Ե. դարուն, ինչպէս կը վկայէ և Կիրակոս ի յիշատակարանի անդ: Կիրակոսի ժամանակ ԼԳ. գլուխք միայն պակաս էին, և անոնք իսկ ընդօրինակողաց ձեռքով ազատագրած: Իսկ մեզ հասածներն են երեք ընդարձակ հատուածներ Ա. Բ. և ԿԳ. հատերէն, որոնք արդէն տպուած են ի Վենետիկ, Պօղոսի Թղթ. Մեկնութեան Բ. հատորին մէջ: Իսկ միւս թարգմանութիւնը, որ կիլիկեան կը կոչուի ձեռագրի մի մէջ, եղած է Գրիգորիս կաթողիկոսի հրամանաւ՝ ի Մխիթարեան: Թարգմանիչն է ասորի Եղեցի Անդրէաս, իսկ թարգմանութիւնն եղած կ'ուսանէ Կիրակոս, յուսալէն բնագրի վրայէն: Վերջին թարգմանութիւնս, որ տպուած է ի Կ. Պոլիս ամբողջական, աւելի վսեմ և գեղեցիկ կը տեսնուի քան միւսներն: Այս քանս զարմանք կ'ազդէ մեզ, և կարելի՞ է այլ՝ այն ժամանակի ասորւոյ մի համար, թէ և Կիրակոս ինքնին կոկած ըլլայ զայն, կամ, — ինչպէս ինձ կը թուի, — խանգարուած տեղերը միայն լրացուցած. չեմք այս գաղտնիք իմն:

մի նոր թարգմանութիւն կատարած։ Այս իսկ անուղղակի կերպով, այսինքն՝ Անդրէասեայ Կեսարացւոյ ձեռքով շարադրուած Յայտնութեան Մեկնութիւնը թարգմանելու պատեհաւ ըրած է, քան թէ Յովհ. Յայտնութեան բնագիրն ուղղակի թարգմանելու դիտաւորութեամբ։

Այս նկատմամբ նախ դիտելու ենք, որ Յայտնութիւն գիրքը Ն. Լամբրոնացւոյ ձեռքով թարգմանուած ըլլալու աւանդութեան հնադոյն, – գուցէ թէ և միակ, – աղբիւրն է նոյն իսկ Լամբրոնացւոյ մէկ յիշատակարանն[1] որ կը գտնուի մեր ունեցած Աստուածաշունչներէն ամենէն հնագունին, այն է՝ ի թուի. Հայ. ՉԿԸ=1319 մատաղաթի վրայ գրուած Ա. Աստուածաշնչի մէջ։ Սակայն այս յիշատակարանս, – յամին 1855 յերուսաղէմ տպուած, – Անդրէասեայ Կեսարացւոյ ձեռքով եղած Յովհաննու Յայտնութիւն Մեկնութիւնն սկիզբը զետեղուած՝ Կ. Պոլսոյ Թէոդոս[2] հայրապետի պաշտօնական յայտարա-

1. Այս յիշատակարանիս հանգուցումութիւնն արդէն հրատարակուած է Հ-յն. Թարգմանութեան Ընթերցց հրատարակութեան մէջ, ի վերնագիր. ուստի ես այն մասերը միայն կը գնեմ հոս, որոնք նամանաւանդ ունին Թէոդոսի թղթին հետ։

ՅԻՇ. Ն. ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

«Այս յայտնութիւն աստուածաբան աւետարանչին Յովհաննու, որպէս Հարցն մերոց վարդապետութեամբ պատուեալ ի պէտս վկայութեանց».

«Ձերծաւ ի գայթակղութեան կարծեաց ոմանց՝ որք այլանդակս խմացան գնմանէ»։

«Քանզի մեծն Դիոնեսիոս՝ յաստուածաբանական ճառն հիւսեալ զվկայութիւն սորա. և երկնիոս Մեգադու եպիսկոպոսն, Գրիգորիոս աստուածաբանն՝ ի հրաժարական ճառն, Գրիգոր Նիւսեայ՝ յեպիսկոպոսացն ժողովոյ, մեծն Կիւրեղ, Մեթոդիոս, և Հիւպոլիտոս, նաև ածէ՛ն իւրեանց»։

ԹՈՒՂԹ ԹԷՏԱԼԻՈՍԻ

«Գիրքս այս Յայտնութեան Յովհաննու պատուեցաւ ի մէնջ ընդ այլ գիրս առաքելականս և կամաք եղբարց իմոց և եպիսկոպոսակցաց սրբոց».

«Այլ և ոչ առա՛ւ է, որպէս ի չարաց ոմանց ի մարդկանէ համարիլ եղև. նա և առյդ Որոսանն որպէս Յովհաննու է»։

«Զի թէ հաւատամք Աթանասի... որ թարգմանեաց զնոսին և զնոր կաթուղիկոնս, ապա նմա եղև ընդունելի... Գրիգոր Նիւսացի՝ ի բանն՝ զոր խօսեցաւ յայսմ քաղաքի ի ժողով եպիսկոպոսացն. այլ և աստուածայինն Գրիգոր աստուածաբան՝ ի բանն որ յաղագս Որդւոյ և յԻւրն հրաժարական... Մեթոդիոս՝ ի բանն որ յաղագս յարութեան, և Կիւրեղ... և Հիպոլիտոս, այլ և Եբէ֊ոն֊ոս֊եանն Որոգինէս»։

2. Այս անուամբ եպիսկոպոս չկայ Կ. Պոլսոյ եպիսկոպոսաց ցուցակին մէջ. թերևս յամին 432 ապրող Կեսարիոյ եպիսկոպոսին Թէոդոսիոսի հետ նոյն ըլլայ։ Բ. Կ. Պոլսոյ Ա. ժողովոյն կանոնաց մէջ Ն. Կատակարանի կանոնական գրոց մասին

բութեան կամ թղթին վրայ յերիւրեալ է, որուն, – ինչպէս նաև յիշեալ Մեկնութեան, – հայ թարգմանութեան սրբագրողն և գրողն իսկ Լամբրոնացին է, թէպէտ և իբրև բուն թարգմանիչ կը յիշուի Յերապոլսի մետրապոլիտն Կոստանդ։ Իսկ որովհետև Թէոդոսիոսի այն թղթին և Յոհ. Յայտնութեան Մեկնութեան հայերէն թարգմանութիւնն եղած է ի թուի. Հայոց ՈՒԸ, – ի վերջ վերոյիշեալ տպագրութեան դրուած Ն. Լամբրոնացւոյ մի ուրիշ Յէյտպակրանի հատուածն. – իսկ Ա. Աստուածաշնչի յիշատակարանն, ընդհակառակն, ի թուին ՈԼԶ գրուած է, պատեհաւ թարգմանութեան Յովհաննու Յայտնութեան. ուրեմն իրաւամբ կարենք եզրակացնել, թէ Անդրէասեայ Մեկնութեան հայերէն թարգմանութիւնն ութ տարի յառաջ կատարուած էր արդէն՝ քան զկարծեցեալ թարգմանութիւն գրոցն Յայտնութեան. և թէ Թէոդոսիոսի յայտարարութեան վերայ չհնուած և Յայտնութեան վերջ գրուած Լամբրոնացւոյ յիշատակարանն, – ինչպէս նաև Յայտնութեան հայ. թարգմանութիւնը, – ՈԼԶ թուականէն շատ տարիներ վերջ հազիւ ուրեմն ընդօրինակուիլ սկսաւ Աստուածաշունչներու մէջ, փոխանակելով հին և կիսախանդար թարգմանութեան նախնեաց։ Եւ քանի որ ասկէց հնագոյն օրինակներ դեռ գտնուած չեն, մեր ունեցած Ա. Աստուածաշունչը կարելի է իբր առաջին ներկայացուցիչ համարել Յայտնութեան գրոց նորոգուած թարգմանութեան։ Իսկ եթէ ՈԼԶ թուականէն յառաջ գրուած օրինակ մի յայտնուի, հին թարգմանութիւնը պիտի ներկայացնէ մեզ, որ նոյն իսկ համեմատութեանց համար իբրև անգին գանձ մի պիտի յարգուի։

Արդ՝ Լամբրունացւոյ մէջ բերուած յիշատակարանով, – զոր ամենք եղծիչ կարծեցին, – ըստ իս աւելի կը հաստատուի՝ քան թէ կը մերժուի Յայտնութեան մի ուրիշ հնագոյն թարգմանութեան գոյութիւնը. վասն զի Ներսէսի այս խօսքերը, թէ «Եւ աստ՛ուածբան արբա՛, վերստին յերէ֊րեկ», ուրիշ բան չեն ցուցներ, բայց եթէ արդէն եղածը վերստին բաղդատել յոյն բնագրին հետ և ճշդել անոր խանգարուած տեղերը։ Երկրորդ Ներսէսի հետևեալ բացատրութենէն, «ի հելլենացւոցն՝ իմով նուաստ Ներսէսի թարգմանութեամբ, ընդ որ և քննութեամբ զՄեկնութիւն սորին ածի յեկեղեցիս Հայոց» այնպէս կ'երևի, ըստ ինքեան, թէ Անդրէի Մեկնութեան կամ թղթին վրայ յերիւրեալ է, որուն, – ինչպէս նաև յիշեալ Մեկնութեան, – հայ թարգմանութեան սրբագրողն և գրողն իսկ Լամբրոնացին է, թէպէտ և իբրև բուն թարգմանիչ կը յիշուի Յերապոլսի մետրապոլիտն Կոստանդ։ Իսկ որովհետև Թէոդոսիոսի այն թղթին և Յոհ. Յայտնութեան Մեկնութեան հայերէն թարգմանութիւնն եղած է ի թուի. Հայոց ՈՒԸ, – ի վերջ վերոյիշեալ տպագրութեան դրուած Ն. Լամբրոնացւոյ մի ուրիշ Յէյտպակրանի հատուածն. – իսկ Ա. Աստուածաշնչի յիշատակարանն, ընդհակառակն, ի թուին ՈԼԶ գրուած է, պատեհաւ թարգմանութեան Յովհաննու Յայտնութեան. ուրեմն իրաւամբ կարենք եզրակացնել, թէ Անդրէասեայ Մեկնութեան հայերէն թարգմանութիւնն ութ տարի յառաջ կատարուած էր արդէն՝ քան զկարծեցեալ թարգմանութիւն գրոցն Յայտնութեան. և թէ Թէոդոսիոսի յայտարարութեան վերայ չհնուած և Յայտնութեան վերջ գրուած Լամբրոնացւոյ յիշատակարանն, – ինչպէս նաև Յայտնութեան հայ. թարգմանութիւնը, – ՈԼԶ թուականէն շատ տարիներ վերջ հազիւ ուրեմն ընդօրինակուիլ սկսաւ Աստուածաշունչներու մէջ, փոխանակելով հին և կիսախանդար թարգմանութեան նախնեաց։ Եւ քանի որ ասկէց հնագոյն օրինակներ դեռ գտնուած չեն, մեր ունեցած Ա. Աստուածաշունչը կարելի է իբր առաջին ներկայացուցիչ համարել Յայտնութեան գրոց նորոգուած թարգմանութեան։ Իսկ եթէ ՈԼԶ թուականէն յառաջ գրուած օրինակ մի յայտնուի, հին թարգմանութիւնը պիտի ներկայացնէ մեզ, որ նոյն իսկ համեմատութեանց համար իբրև անգին գանձ մի պիտի յարգուի։

Արդ՝ Լամբրունացւոյ մէջ բերուած յիշատակարանով, – զոր ամենք եղծիչ կարծեցին, – ըստ իս աւելի կը հաստատուի՝ քան թէ կը մերժուի Յայտնութեան մի ուրիշ հնագոյն թարգմանութեան գոյութիւնը. վասն զի Ներսէսի այս խօսքերը, թէ «Եւ աստ՛ուածբան արբա՛, վերստին յերէ֊րեկ», ուրիշ բան չեն ցուցներ, բայց եթէ արդէն եղածը վերստին բաղդատել յոյն բնագրին հետ և ճշդել անոր խանգարուած տեղերը։ Երկրորդ Ներսէսի հետևեալ բացատրութենէն, «ի հելլենացւոցն՝ իմով նուաստ Ներսէսի թարգմանութեամբ, ընդ որ և քննութեամբ զՄեկնութիւն սորին ածի յեկեղեցիս Հայոց» այնպէս կ'երևի, ըստ ինքեան, թէ Անդրէի Մեկ-

բնաւ խօսք չկայ. կարծագրենայ ժողովին մէջ առաջին անգամ կը յիշուի Յոհաննու Յայտնութեան իբրև վաւերական ընդունուելը։ Գ. դիտելու ենք, որ այս տեղ Թէոդոսիոսի ընծայուած թուղթն՝ օտարք Անդրէի կրետացւոյ կու տան։

Նոր-Նախճ. բնագրի թարգմանութեամբ՝ միանգամայն թարգմանած եղաւ Ներսէս՝ Յովհաննու Ցայտնութեան ամբողջ գիրքը, զոր կը գործածենք այսօր: Սակայն իրօք այդպէս եղած չպիտի լինի. որովհետև, ինչպէս տեսանք, Մեկնութեան յիշատակարանի մէջ այն թարգմանութիւնը մետրապոլին Կոստանդեայ կ՚ընծայէ Լամբրոնացի. իսկ հօս ընդ հակառակն իրեն ուղղակի: Բ. Աստուածաշնչի մէջ եղած Յայտնութիւնն՝ ունի Մեկնութեան բնագրի թարգմանութենէն այնպիսի բառերու և բացատրութեանց տարբերութիւններ, կամ լաւ հա յաւելուածներ և յապաւումներ, որոնք ուղղակի հնագոյն թարգմանութեան վերագրելի են, զոր ունէին հաւանօրէն ի ձեռին Կոստանդ և Լամբրոնացի, և որուն վրայ ձևեցին Անդրէի Մեկնութեան բնագրի թարգմանութիւնը:

Ցուցնելու համար, թէ ստուգիւ Յայտնութեան գրոց նախկին թարգմանութիւն մի կար Լամբրոնացիէն յառաջ, բաւական է մէջ բերել հետևեալ փաստերը: Ա. Սարկաւագ վարդապետի երկասիրած կանոնական գրոց ցուցակին[1] մէջ յանուանէ կը յիշուի նաև Յոհաննու Ցայտնութիւնը. իսկ որովհետև Սարկաւագ վարդապետը Լամբրոնացիէն գրեթէ մէկ դար յառաջ կ՚ապրէր. ուրեմն հետևութիւնն յայտնի է: Բ. Ոսկերբերանի՝ Մեծն Ե. Գ. ԺԴ. էջ 412, հետևեալ տեղին. «Երանի՛ իջէ մեռելոց՝ որ վաղու իսկ լսեն մեռեալ քան զկենդանեացն»: Այս տեղիս՝ մէջ բերուած է Յայտնութեան ԺԴ. Գ. 13 տանէն, բայց թարգմանութիւնը տարբեր է: Գ. Ի Թուին Հայոց ՈՒՀ գրուած մի ուրիշ Աստուածաշունչ՝ որ կը գտնուի Երուսաղեմի Ս. Յակովբայ մատենադարանի մէջ, կը ներկայացնէ մեզ Յովհաննու Յայտնութեան մի այլ թարգմանութիւն, որ մեծապէս կը տարբերի մինչև այսօր հրատարակութեամբ ամենուն ծանօթ թարգմանութենէն: Մենք աւելորդ կը համարինք այս տեղ վերստին մէջ բերել այն 12 տող հատուածը, որ Հայկական Ընթցմանոցին Նախնեաց երկասիրութեան մէջ, – էջ 222, – արդէն իսկ տպուած է, և բաղդատողք իրաւացի պիտի գտնեն մեր ըսածը: Թարգմանութեանս հին ըլլալուն ակն յայտնի նշաններէն մին

1. Այս թուականիս մօտ, այն է՝ ի Թու. Հայ. ՈՅԱ. և ԶԺԲ գրուած ուրիշ երկու Աստուածաշունչներ ևս ցոյց տուաւ ինձ Սրբ. Սահակ եպիսկոպոս Խապայեան՝ Ս. Յակոբայ մատենադարանի մէջ, որոց թարգմանութեան և վիճակով յապաւորութեան մէջ զգալի տարբերութիւններ կան չարաբանութեան: Նշանաւոր են առաջնոյն մէջ Յովհ. Յայտնութեան (Գլ. ԺԲ. բորդ) բացատրութիւնքս՝ վէբէօ-ՐՒՔՈՒ, վէբէ՛ւ, վէբէ՛ւՔՈՅ, զորս վերջինն՝ ընդհակառակն՝ վէբօ՛ւՔՈՒ, վէբօ՛ւ և վէբօ՛ւՔՈՅ կը գրէ: Ըստ իս կարգալու է վ-բ-ր-ՔՈՒ, վ-բ-ր և վ-բ-ր-Ք-Ո-Յ:

ևս այն է, որ Կիւրղի Աղեքսանդրացւոյ Գանձոյ գրքին, Գր. Աստուածաբանի հրաժարական ճառին, և Նիւսացւոյ ի ժողովս եպիսկոպոսաց խօսած առենաբանութեան մէջ հայերէն թարգմանութեամբ մէջ բերուած Յայտնութեան տեղերն ևս աւելի ասոր՝ քան թէ Լամբրոնացւոյ յերիւրած թարգմանութեան հետ կը նոյնանան:

Յայտնութեան ծանօթ թարգմանութեան լեզուէն չենք կրնար բացարձակապէս դատել, թէ աւելի Յոհ. Մանդակունւոյ՝ քան թէ մի ուրիշի ձեռքով եղած ըլլայ այն. վասն զի Լամբրոնացւոյ ձեռքով ներմուծուած բառերն և բացատրութիւնք՝ որոց սահմանը դեռ անորոշ է, թոյլ չեն տար այսպիսի մի եզրակացութեան հասնիլ: Երուսաղեմի յիշեալ գրչագրին, կամ ՈԻԸ. թուականէն յառաջ գրուած մի այլ գրչագրի բաղդատութեամբ միայն այս բանս կարելի լինի յաղողիլ. սակայն այդպիսի մի գրչագիր դեռ յայտնուած չէ[1]:

Մանդակունւոյ անուամբ մեզ ծանօթ գրաւոր գործերն յիշելէն յետոյ կը մնայ ուշի ուշով ուսումնասիրել զանոնք: Բայց ես կարեւոր կը համարիմ ծանուցանել իմ յարգելի ընթերցողաց, թէ իմ գլխաւոր նպատակս է այս գրուածովս ուսումնասիրել ուղղակի յամին 1860 Վենետկոյ տպագրութեամբ ծանուցեալ 30 ճառերու հարազատութիւնը, կամ անոնց անհարազատ ըլլալը. իսկ միւս գործերը՝ զորս երէցեայկան կամ անճոռնի անուանեցինք, անուղղակի կերպով պիտի ուսումնասիրենք. այսինքն թէ՝ ո՛րքան և ինչ պարագայիւք կը համաձայնին առաջնոց, և կամ կը հակառակին: Սակայն յիշեալ ճառերու քննադատութեան դեռ չի ձեռնարկած՝ համառօտ տեղեկութիւն մի տանք անոնց աղբերաց, կամ լաւ ևս ըսելով՝ զանոնք ներկայացնող մեզ ծանօթ ձեռագրաց վրայ:

1. Էջմիածնի գրատան մէջ ի Թու. Հայ. Ո (1151) գրուած օրինակ մի կը յիշուի, – կարծեմ ցանկի մէջ, – բայց անհիշ ըլլալու է, վասն զի հօս յիշատակարանի մէջ յիշուած Հեթումի՝ այս թուականէս գրեթէ 100 տարի վերջ հաւու թագաւորեց:

ԳԼՈՒԽ Գ·

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ՁԱՌԵՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԳԼԽԱՒՈՐ ՁԵՌԱԳՐԱՑ ՎԵՐԱՑ

Յովհ· Մանդակունւոյ ձեռագրաց մէջ առաջինը, որ թէ հնութեամբ և թէ պարունակութեամբ ամենէն աւելի ուշադրութեան արժանի է, է մեր Մատենադարանի թիւ 994 ձեռագիրն: Մանր երկաթագիր է՝ դժուարընթեռնելի, բամբակեայ սեւ և թոյլ թղթի վրայ գրուած, բայց ընտիր գրչութիւն: Մեծութիւնն է 26×17· թուղթք 273: Միասիւն է, և տողք իւրաքանչիւր էջից են 25: Ժամանակ գրչութեան անյայտ է· վանդ դի յիշատակարանն՝ որ կը գտնուի էջ 556 պակասաւոր է· սակայն երկաթագրի ձևէն, մելանէն և թղթէն դատելով այնպէս կ՚երևի ինձ, թէ կամ ԺԱ· դարուն վերջերը, և կամ ԺԲ-ին մէջ գրուած ըլլալու է: Ձեռագրիս մակագրութիւնը յայժ սևացած և եղծուած ըլլալով, չի գիտցուիր անոր ինչ տեսակ գրութիւն ըլլալը· ըստ իս ոչ ձ-ընդէր է և ոչ իսկ Ո-կնճռիկ, այլ Հ-ատ-ած ԻՋ ճառից Յոհաննու Մանդակունւոյ, և կամ Թ-ղթ Յովհաննու Մանդակունւոյ պարզապէս յորդորելու: Եւ ասոր յայտնի ապացոյց է նոյն իսկ այն եզական երևոյթը՝ որ կը գտնուի միայն այս ձեռագրիս 1–14 էջերուն, այսինքն է՝ Նախադրութիւնն, յորում նշանակուած են թիւք և մակագրութիւնք և համառօտ տեսութիւնք յիշեալ 26 ճառից նոյն հեղինակին: Թէպէտև 385–555 էջերը կը պարունակեն ուրիշ ինն ճառեր ևս հին Հարցմէ, և վերջինն և նորագոյնն է Պատմութիւն Յովհ· կամաւոր ապքաստացելոյն, սակայն այս երևոյթս պատահական է, և ուրիշ հեղինակներու ամբողջ գրուածքէն վերջ ևս կը գտնենք նոյնպէս ուրիշ ձեռագրաց մէջ: Ձեռագրիս սկիզբը այն է 3 և 4 էջերն ինկած են· երեք թուղթ մէջտեղերը և մէկ էջ ալ վերջը գրուած յիշատակարանէն: Երկաթագիրս ընծայ է Տիրացու Գէորգայ Տէր Յովհաննէսեան՝ առ Հ· Մկրտիչ Վ· Զամչեան, որ և յամին 1810 բերած է ի վանս: Ձեռագրիս նմանը դեռ յայտնուած չէ մինչև ցայսօր,

որով միայն կարելի էր լմնանալ սորա մակագրութիւնն և ճառերու հեղինակն:

Օբինակն Տէրացու Գէորգեայ, թիւ 80, է նոսրագիր նոր, զոր արդիւնաչատ Դպիրս իւր ձեռքով ընդօրինակած է ի Կ· Պոլիս, լաւ և ընտիր օրինակ Մանդակունւոյ: Այս օրինակս կը պարունակէ 20 ճառեր միայն, առ հասարակ յանուն Յոհ· Մանդակունւոյ: Մեր երկաթագիր օրինակի նախադրութիւնը կը պակսի այս տեղ: Ճառերու կարգն ևս, զոր յետոյ պիտի ցուցնենք, կը տարբերի յառաջնոյ անտի: Այս գրչագրովս կը սրբագրուին նոյն իսկ երկաթագրի մէջ ընդօրինակողաց կամ հաւաքողի ձեռքով սպրդուած մի քանի անճիշդ ընթերցուածներ· այսպէս ալ առաջնոյն ձեռքով կ՚ուղղուին վերջնոյս մի քանի անճշդութիւնները: Գրչագրիս տարբերութիւնքը մեծ են և նշանաւոր, զոր յետոյ պիտի տեսնենք: Այս տարբերութեանցս մի մասը նշանակուած են արդէն Վենետկոյ յամին 1836 եղած Մանդակունւոյ հրատարակութեան մէջ՝ ի ստոր և իչեցն, սակայն առանց բացորոշ յիշատակութեան օրինակիս: Գրչագիրս՝ երկաթագրէն յառաջ մատենադարանիս ղրկուած ըլլալով, ցանկին մէջ ալ՝ Ա· Օրի· Մանդակունւոյ նշանակուած է: Սա այնու իսկ բաղդատաւոր է, դի ասոր մակագրութեամբը կարելի էր մեկնել նոյն իսկ հին երկաթագրի մակագիրն, որով դժուարութեանց և երկբայութեան մեծագոյն կնճիռն լուծուած կ՚ըլլար· սակայն Նախադրութիւնն պակաս և յիչեալ տարբերութիւնք կը դժուարացնեն զայն:

Ձաւընտիրն Դ· թիւ 985, է բոլորգիր մեծ և մաքուր, թղթի վրայ գրուած: Գրչագիրս կը պարունակէ միայն 17 ճառեր, յորոց ամանք յանուանէ և որոշակի, և ամանք ալ «Ընդհանուր» վերտառութեամբ Ս· Եփրեմի մակագրուած են: Գրութիւնը թէ և գեղեցիկ և հնաձև, բայց սխալագիր է և ոչ այնքան վստահելի· ուստի կամ անոր բնագիրն ևս այնպէս էր, և կամ անհմակացող գրչէ մի յառաջ եկած են այն սխալ տառագրութիւնքն և բառագրութիւնք: Մեծութիւն՝ 31×22· կրկնասիւն է· տողք իւրաքանչիւր էջին՝ 30+30· ընդ ամէնն՝ 245 թուղթ կամ թերթ: Հանգամանք՝ մեծ լան թղթոյն, կաշեկազմ հին· յառաջոյ և ի վերջոյ պակասաւոր: Ձիշատակարանն ևս կը պակսի, հետևաբար ժամանակ գրութեանն իսկ անյայտ: Ըստ իս ԺԴ· երորդ դարէն անդին անցնելու չէ, ո-րովհետև Յայտնութիւնքէն ևս քաղուածոյ նիւթեր կը պարունակէ: Գրիչն է Կիւրեղ ոմն, իսկ գրել տուողն՝ Պօղոս Երէց, որ կը յիշուի ի վերջ իւրաքանչիւր ճառին: Վերոյիշեալ 17 ճառերու կարգն

և մակագրութիւնք իսկ՝ բաւական կը տարբերին նախընթաց երկու օրինակներու ներկայացուցածէն։ Ձառընտիրս կը պարունակէ բաց ի յիշեալ 17 ճառերէն, – որոնք մէկ ընդ մէկ գրուած են, և ոչ եթէ յաջորդաբար, – նաև 67 ուրիշ պատմական գրութիւններ, վկայաբանութիւններ և հին անվաւերականներ, յորոց ամենք հայերէն թարգմանութեամբ միայն ծանօթ են և յայժ չհակագրգիռք։

Ձառընտիրն ԻԴ· թիւ 1447, կը պարունակէ տասնևեօթն ամբողջ ճառեր. ամէնքն ալ Յոհ· Մանդակունւոյ մակագրուած։ Ութերորդ ճառին կէսն Յովհ· Ոսկեբերանի ընծայուած է, կէսն ալ Մանդակունւոյ. «Աղէտ և օգտակար է» վասն պահոց ճառէն։ Ինն ներորդ ճառին վրայ ոչ միայն և ոչ ալ միւսին անունը կայ։ Այս խառնակութիւնս՝ կամ այն գրչագիրը կազմելու ժամանակ հանդիպած է, և կամ գրիչն ինքնին սխալմամբ երկու տարբեր ճառեր իրարու հետ ընդօրինակած։ Ձեռագիրս՝ է բոլորգիր մեծ թղթեայ։ Մեծութիւնն է 38×25։ Ընդ ամէն բաղկացած է 452 թերթերէ։ Երկսիւն է. և տողք իւրաքանչիւր սեան 37։ Յիշատակարանին վերջին մասը կը պակսի, յորում էր գրութեան թուականը. հասնօրէն ԺԵ· դարուն վերջերը գրուած ըլլալու է, կամ ի ԺԶ·դին, զի կ'ըսէ, «Յորժամ Խոնաքարն (սուլթան) ելաւ ի Կ· Պոլսոյ և գիմեց յերկիրն Ֆռանկաց»։ Տեղի գրութեան՝ է Վասպուրական նահանգի Ա–Լ–Ւ, կամ Ա–ռ–ա–կ վանքը. գրողն է Կարապետ եպիսկոպոս, իսկ գրել տուողն Յակոբ եպիսկոպոս։

Ոսկեփորիկն Ե· կը պարունակէ· Վասն ուբոյ և իջոյ, – Վասն պահոց և աղօթից, աղաչանաց և խոստովանութեան ճառերու համառօտութիւնը՝ «Երանելւոյն Յովհ· Ոսկեբերանի» մակագրելով։ Գրչագիրս է բոլորգիր, թղթեայ։ Մեծութիւն՝ 17×13· – Թուղթք 325։ Միասիւն է, տողք իւրաքանչիւր իջին 30։ Յիշատակարանը կը պակսի, վասն զի թերի է յառաջոյ և ի վերջոյ։ Գրչութիւնք՝ կրկին ձեռքով եղած են, որոնք իրարու գրեթէ ժամանակակից կ'երևին։ Թուականն և տեղի գրութեան անյայտ են, բայց ԺԴ· դարէն անդին չանցնիր։

Ձառընտիրն ԺԴ· ունի, յէջ 1, Վասն ապաշխարութեան, պակասաւոր ի սկզբան և առանց անուան հեղինակի. յէջ 68, գարձեալ «Տեառն Յովհ· Ոսկիբերանի՝ վասն ապաշխարութեան (տես Մանդ· տպ· ճառ Բ·), – Նորին վասն ինքնաքամ ջալոփեան Քրիստոսի· – «Երանելւոյն Եփրեմի Յաղագս խոստովանութեան և ապաշխարութեան (Մանդ· Ա) ·– գարձեալ յէջ 131, «Նորին Տեառն Եփրեմի Յաղագս խոստովանու-

թեան և ապաշխարութեան՝ որ պատճառ սա Աստուած խուզէ երբորդ», – յէջ 159 «Նորին Տեառն Եփրեմի Թուղէ երբորդ՝ վասն պահոց պնդութեան» (Մանդ· Գ·), – յէջ 185 Նորին Եփրեմի Թուղէ վասն աղօթից և անսպրմանութեան (Մանդ· Ե·), – յէջ 213 վասն պահոց և պատարագոց՝ պակասաւոր ի սկզբան, (Մանդ· Զ·), –·յէջ 258 վասն անփոյթ եկեղեցեաց աղտոտոց (Մանդ· Է· կամ Ը·)։

Գրութիւնն միջակագիր, այսինքն է՝ երկաթագրի մօտ բոլորգիր է ընտիր, որոյ նմանը չատ չի գտնուիր։ Մեծութիւն՝ 18×14· ընդ ամէն՝ 126 թերթ՝ միասիւն։ Իւրաքանչիւր երես կը պարունակէ 16–18 տողեր։ Յիշատակարան չունի, որով և գրութեան ժամանակն անյայտ է. հասնօրէն ԺԲ· դարուն գրուած ըլլալու է, գուցէ թէ յառաջ իսկ։ Այս բանս անոր մէջ բովանդակուած գրութիւններէն իսկ կը հաստատուի, որոց վերջինն է Գաղթնեաց իշխանին Խոսրովայ որդւոյ Ս· Վահանայ վկայաբանութիւնը, որոյ համար կ'ըսէ գրիչն, թէ նահատակուեցաւ ի թուս· Հայոց ՃՂՋ–737։ Այս ձեռագիրս անով իսկ հետաքրքրական է, զի մի և նոյն ճառերը, զորս ուրիշ ձեռագրեր մի միայն հեղինակի անուամբ կը մակագրեն, սա ընդ հակառակն այլ և այլ հեղինակներու վերագրած է գանոնք։ Ձեռագիրս առանձին խումբ մի կը կազմէ, աննման այլոց։

Ե· Օրինակն Յովհ· Կլիմաքեայ՝ է բոլորգիր, թղթեայ· մեծութիւն՝ 21×14·– թուղթք 180, միասիւն·– տողք 24 են մէն մի էջերուն։ Յիշատակարանը կը գտնուի 379 էջերուն· – ժամանակ գրութեանն է ի թուս· Հայոց Ռ=1551·– գրիչն է Յակոբ քահանայ, իսկ տեղի գրութեան՝ վանքն Ս· Աստուածածնի՝ ԱԳուլիս·– գրել տուողն է Խաչատուր վարդապետն և առաջնորդ այն վանքին։ Թուականն ՃԺԲ, որ կը գտնուի էջ 399, օտար գրչէ մի ներմուծուած կը տեսնուի յայտնապէս։ Ձեռագիրս կը պարունակէ Յովհ· Ոսկեբերանի մակագրութեամբ Խրատ վարուց ապաշխարութեան և Խոստովանութեան, որոյ սկիզբն է· Որք սուբը Հոգւոյն են ցանկացեալ, և, (Մանդ· Ա·), – Նորին վասն ապաշխարութեան· Աբմատք դեղոց բժըշկաց (Մանդ· Բ·), – Նորին վասն աղօթից· Մի ոք տղայաբար բարուք (Մանդ· Ե·), – Նորին վասն պահոց պնդութեան· Աղէտ է և օգտակար (Մանդ· Գ·), – Նորին վասն ընդունելի և անընդունելի աղօթից· Ամիսս ամսեայ զմիաս (Մանդ· Դ·)։

Երուսաղէմեան Ս· Յակոբայ վանաց հնագոյն օրինակն[1]· է

6· Ձեռագրիս մասին տուած տեղեկութիւնները պարտական եմ Սրբազ· Սահակ եպիսկոպոս Խապայեանին, որուն երախտագիտութեան հետ խորին չնորհակալու-

բոլորգիր մաքուր, անթուական։ Սկիզբն և վերջին թերթեր կը պակսին. բայց սկիզբն լնկած մէկ թերթ պակասին տեղ, — որ կարծէք թէ դիտմամբ՝ քան թէ պատահմամբ եղած է, — տան թերթ մի ուրիշ գրութիւն պարունակող ձեռագիր ներմուծուած է տարբեր դրչութեամբ և բոլորգրիս հետ կազմուած, իբրև յաւելուած։ Այս յաւելուածիս մէջ կան Յաղագս հանանայիցն և ամենայն մարդոց անանուն հեղինակի մի ճառ. — Ս. Սահակայ Ի ե. գլխէն առնուած կանոնական գրութեան մի մասն. — Յովհան Ոսկեբերանի ասաց եալ վասն վշաեցելոց և պոռոց ընդոց ճառը, որ փոքր ինչ տարբերութեամբ Մանգակունւոյ Զ. ճառին հետ նոյն է, — և Ս. Գրիգորի Լուսաւորչի ընծայուած Յաղագս ուրացողաց և չէզոքասրոց. «Որք սատանայական բանիւքն ապականեն զհոգի և զմարմին» ճառ մի։

Մանգակունւոյ Ա. ճառը՝ Խրատ վասն խոստովանութեան մեղաց՝ յաւելուածիս 19 բորդ էջէն կը սկսի, իսկ 21 բորդ իջում հին բոլորգիր բնագիրը դարձեալ կ'առնու յառաջ վարել զայն «ցանկամ հանապազ և ըղձալի աենջանօք հայցեմ» մասով, որ է շարունակութիւն պակաս մասին, և կը համապատասխանէ Յաւելուածի 19 իջի 23 տողին։ Բուն հին բոլորգիրն 20 տետրակներէ կը բաղկանայ, որոց իւրաքանչիւրը 12 թերթ է, ի բաց առեալ Ա. տետրակն՝ որ մէկ թերթ պակաս է, ԻԴ. բորդ տետրակն՝ որ 14 թերթ է, և ԻԷ. բորդն՝ 16 թերթ։ Այս ձեռագիրս կը պարունակէ Յոհ. Մանգակունւոյ 28 ճառերը, իրարու շարայարութեամբ։ Առաջինն չորս ճառերը միայն մեր հին երկաթագրի համաձայն կարգեալ են. իսկ միւսներն՝ տարբեր կարգաւ, կամ յետագայութեամբ գրուած են։ Այս բանէս կրնանք ուրեմն հետևցնել, որ թէպէտև այս ձեռագիրս ևս մեր երկաթագրի նման Մանգակունւոյ ճառերուն մի կը ներկայացնէր, գուցէ թէ Նախապրոբլէմէն հանդերձ, որ դժբաղդօրէն լնկած է. սակայն մի ուրիշ բնագրէ ընդօրինակուած ըլլալու է, որ հին երկաթագրէն մի քանի տարբերութիւններ ունէր, բայց քան զերբացու Գէորգին՝ պարսիկեան օրինակի հետ աւելի մերձաւորութիւն ունէր։

Ձեռագիրս կազմուած է 488 միասիւն էջերէ. — տողք միոյ իջի 20։ Մեծութիւն 18,8 × 13. — նիւթ՝ հին թուղթ յղկեալ, կշռակազմ հին։ Խորագիրք և սկզբնագիրք՝ կարմիր մելանով։ Գծագրին

թիւնս ևս պարտական եմ յայտնել հրապարակաւ թէ հօս և թէ ուր առիթ ունեցամ։ Ձեռագիրս անձամբ իսկ տեսայ, յամին 1895, Ս. Յակոբայ վանքին այցելած ժամանակ՝ Սրբոց Սահակ եպիսկոպոսի քով։

անունն է Մխիթար, որուն մէկ տող յիշատակարանը կայ Ը. բորդ ճառին վերջ ի տողամիջի։ Բոլորգրիս գրութեան ժամանակին ԻԳ. դարէն անդին չկարէ անցնել. վասն զի այս ժամանակիս յառաջ գործածուած թղթերը կակուղ և բրդղեալ են, մինչդեռ սորայս յղկեալ է և փայլուն։

Պարիսի Մատեն. Թիւ 57 ձեռագիրն, որոյ մակագրութիւնն է՝ Հաւատոյ ողղափառական գրոց, ուրիշ բազմաթիւ նախնեաց գործերուն հետ՝ կը պարունակէ նաև Մանգակունւոյ 27 ճառերը. սակայն այս ճառերէս 24ը միայն Ս. Եփրեմի մակագրուած են, իսկ միւս երեքն անանուն հեղինակի մի խրատաբանութիւններ են։ Ձեռագիրս այլ և այլ ժամանակաց և գրչաց ձեռքով գրուած է։ Հնագոյն մասն՝ որ է բոլորգիր միջակ՝ ԻԳ. բորդ դարուն գրուած ըլլալու է, զի կը յիշուին Վարդան և այլք. իսկ նորը տարբեր բոլորգիր է, և նորագոյնը տարբեր։ Նօտրագիր կամ նոր գրչութիւնը ԻԳ. դարուն վերջերը, և նոյն իսկ ԻԵ. դին մէջ գրուած ըլլալու է. որովհետև Եփրեմի անուամբ մակագրուած՝ «Խօսք և բանք ըղձալի և փափագանաց, որ զշահն յոգիս վերացուցանեն» ճառն, որ խառնախօսութիւն ինչ է պահոց և յիշոցաց վրայ և կը գտնուի նաև Յոակեփորիկս, Գրի. Տաթևացւոյն է։ Զայս կը հաստատեն բաց ի յաչխարհիկ ոճէն՝ նոյնպէս և այն նախատինքները, զորս կը տեղայ ձկնակերաց և ձիթակերաց դէմ։ Այս իսկ դիտելու ենք, որ նոյն իսկ «Եփրեմայ Սարկաւագին ասորւոյ» մակագրուած ճառերէն ոմանք պակասաւոր են, և երբեմն նոր բոլորգրով, երբեմն այլ նօտրագոյն նօտրագրով կարկատուած։ Արդ՝ դիտելով, որ զեղծ հին բոլորգրով գրուած ճառերը՝ Տիրացուի օրինակէն առնուած՝ երուսաղէմեան օրինակին մերձաւոր ընթերցմունքներ ունին՝ յընդհանուրն, կարելի է ըսել, թէ կամ սոցանէ մին՝ միւսէն ընդօրինակուած է, և կամ երկաքանչիւրն իսկ՝ մերձաւոր մի ուրիշ հնագոյն ձեռագրէ։ Առաջինն յենթադրութեանցս ըստ ինքեան դժուարընդունելի թերևս երևի, այնու մանաւանդ, որ այդ երեք ձեռագրաց մէջ իսկ ճառերն իրարմէ տարբեր կարգով գրուած են, զոր յետոյ պիտի ցուցակագրենք ի միասին, բայց դիտելու է, որ շատ անգամ հատաքողք կամ ընդօրինակողք այլ և այլ գործոցկամ ճառից, մէկ հեղինակի մի կամ. Ս. Հօր բոլոր ճառերն յաջորդաբար չէին ընդօրինակեր, այլ ընդ հակառակն կ'ընդհատեն զանոնք ուրիշ Հարց ճառերով, և դարձեալ կը սկսին իրենց ուզած ճառովը շարունակել միանգամ և երկիցս ընդհատուածները։ Այս

բանիս ակն յայտնի օրինակ կեցած է ահա մեր մատենադարանի Դ. ձառընտիրն, որուն գրիչն երեք անգամ ուրիշ միջանկեալ գործերու ընդհատմամբ և վերսկսմամբ գրած է Մանդակունւոյ 17 ճառերը միայն. այն ատեն դժուարութիւնը կը վերնայ: Իսկ թէ երբ այս պ՛ւս եղած է պարխեան գրչագիրը կամ ոչ՝ այս բանս ցայս վայր յիշատակուած չորս ձեռագրաց համեմատական տարբերութիւններով իսկ ակներև պիտի տեսնեն ընթերցողք ուրիշ տեղ:

Յիշենք նաև Լ֊Ջմիածնի մատենադարանի գլխաւոր ձառընտիրներն[1], որոնք համեմատութեամբ թէպէտև ոչ այնքան հին, բայց և այնպէս ունին մեծ կարևորութիւն Մանդակունւոյ ճառերու ուսումնասիրութեան համար, մանաւանդ եթէ հնագոյն և լաւ օրինակներու վրայէն ընդօրինակուած են:

ձառընտիրն թիւ 923, – մեծագիր, բոլորգիր, – գրուած է բամբակեայ թղթի վրայ: Գրիչն է Դանիէլ, կը գրէ Յովհաննէ սանուանով մէկու մի խնդրանօք: Թուական գրչութեանն յայտնի չէ, և ոչ իսկ տեղին. վասն զի Յիշատակարանի այն մասն լնկած է: Սակայն և այնպէս կրնանք ըսել, առանց վախելու, թէ փրկչական թուականին 1488 ամէն վերջ գրուած է. որովհետև գրչագրիս Հէ. գլխահամարին մէջ հետևեալ դէպքն ևս ի գրի անցուած է, որ ճիշդ այդ թուականին կը հանդիպի, և է՝ « Աքանչելիք ի ժամանակս Տաճկաց ի ՋԼԷ. թուին Հայոց՝ ի գիւղն Աղաբէտ ի գաւառին Երնջոյ »:

ձառընտիրս կը պարունակէ Յովհաննու Մանդակունւոյ մնացորդրութեամբ հետևեալ 10 ճառերը.

« Տեառն Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ՝ վասն ինդիրոյ և խաղոց կանանց. – Յաղթս պետրոնեան տոհմայիդ ի վերոյ ժողովրդեան Աստուծոյ. Որպէս հովիւ զհօտ ոչխարաց. – վասն չբամբասելոյ զտհանայս և շվարդապետս. – վասն ինքնաբուխնեան աղտոցոյ. – վասն բուռ կացողաց և վասն կռռողաց. – վասն նախանձոյ և էնոռ. – վասն անառակ աբեղայոցդ. – վասն ապաշխարութեան և պահոց, – վասն հարցուածոց և պատուհասից. – վասն զգուշութեամբ և երկիւղիւ ծերչենալոյ ի մարմին և յարիւն սրբոյն Աստուծոյ »:

Թիւ 893 ձառընտիրը՝ կը պարունակէ Մանդակունւոյ 13 ճառերը, առհասարակ անոր անուամբ մակագրուած, և սոսկ են. « Թուղթ Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ վասն արուածքիցոյ և անառնատպծոց. Զինչ ասեմ անասնամոլաց, – Նորին Մանդակունւոյ

1. Ձեռագրաց կոչումները յամին 1863 ի Տփղիս տպուած Յհ. կարինեանի ցանկին համեմատ կ'ըլլուին. վասն զի անկէ միայն կը ճանչնանք:

Հայոց կաթողիկոսի վասն երջանից սովորութեան. Յոյժ չար են, – Նորին Մանդակունւոյ վասն ինդիրոյ և խաղոց կանանց. Ո՞ր երթեալ դադարեցից. – Յովհաննու Մանդակունւոյ Յաղթս պետրոնեան ի վերոյ ժողովրդոյ տոհմայիդ. Աւդ ես լի ամենայն յանցանօք. – Նորին Մանդակունւոյ ճառ վասն չբամբասելոյ զտհանայս և շվարդապետս. Մթերք սգոյ և աղխամղլին. – Նորին Մանդակունւոյ վասն սղբոնութեան և ապտարութեան. Մի ոք տղայական բարուք. – Նորին Մանդակունւոյ վասն ինքնաբուխնեան աղտոցոյ. Զինչ ասացից առ այս, կամ զինչ խօսեցայց. – Յովհաննու Մանդակունւոյ վասն բաբիացողաց և կռռողաց. Ամենայն բնութիւնք մեզաց. – Նորուն Մանդակունւոյ վասն նախանձու և էնոռ. Ոչինչ պիտոյ են յաղագս սիրոյ. – Նորին Մանդակունւոյ վասն անառակ աբեղայոցդ. Մեծաւ սգով և ցաւագին արտասուօք. – Սրբոյն Յովհաննու Մանդակունւոյ վասն ապաշխարութեան և պահոց. Աւմաստ դեղոց բժշկաց. – Նորին Մանդակունւոյ վասն հարցուածոց պատուհասից. – Յովհաննու Մանդակունւոյ վասն զգուշութեամբ և երկիւղիւ ծերչենալոյ առ մարմին և արիւն սրբոյն Աստուծոյ. Սոսկան ոսկերք իմ »:

Ձեռագիրս ժողովածու է մեծագիր, բոլորգիր, թղթեայ: Գրուած է ի թուս. Հայոց ՌՃՀ = 1721, խորհէն գաւառում, – ունի յիշատակարան ի վերջ մատենին՝ ի Մելգոն երիցէ: Ուրիշ հանգամանք նշանակուած չեն ցանկին մէջ, բաց ի անոր պարունակած նիւթերէն, որք են թուով 129: Դիտելով, որ այս տեղ Մանդակունւոյ մակագրուած ճառերու վերնագիրներն և կարգը կը համաձայնին անմիջապէս յառաջ յիշուած թիւ 928 ձառընտրին, ուստի անոր խմբին կը վերաբերի, և կրնանք եզրակացնել, թէ կամ անկէ ընդօրինակուած են և կամ հասաքարղն ըստ քմաց ինչ ինչ աննշան փոփոխութիւններ իր քովէն ներմուծած է:

Թիւ 894_3 ձառընտրի մէջ, – որ կը բովանդակէ 182 զանազան հեղինակաց ճառեր և այլ գրութիւններ, – կը գտնուին հետևեալ 12 ճառերն, առհասարակ Յհ. Մանդակունւոյ անուամբ մակագրուած. « Երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ վասն ընդոծնելի և անընդոծնելի աղբմնութեան. Բազում գաղտնաձիգ նեփուք. – Նորին Մանդակունւոյ վասն երջանից սովորութեան որ չար են. Յոյժ չար են ամենայն սով. – Նորին վասն ինդիրոյ և գոռաձոյ. Ո՞ր երթեալ դադարեցից և լացից. – Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ Յաղթս պետրոնեան տոհմայիդ. Աւդ ես լի ամենայն յանցանօք. – Նորին վասն չբամբասելոյ զտհանայս և շվարդապետս. Մթերք սգոյ և աղ-

*չամուղջ տրամաբեան. — Նորին Մանդակունւոյ վան՝ պղծութիւնեան և պղտոփղծութիւնեան. Մի՛ ոք տղայական բարուք. — Նորին՝ վան՝ ծիլիւթիւնեան պղտոփոյ. Ջինչ ասացիս, կամ ղինչ խօսեցայց. — Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ՝ վան հաբուածոյ և պատուհասիչ. Բազում են կերպարանք պատուհասից. — Սրբոյն Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ՝ վան անառակ արբեցողաց. Մեծաւ սգով և ցաւս. — Յովհաննու Մանդակունւոյ՝ վան պղշխարութիւնեան. Արմատք դեղոց բժշկաց. — Նորին (վան) պահոց պնդութիւնեան. Աղգոյ և օգտակար և կարևոր են. — Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ՝ վան ղիւղղիւթիւնեամբ և երկիւղիւ ծերչենալոց է մարդին և յաբեան արդասն Աստուածոյ. Ասկան ասկերք իմ» : Ձաւրընտիրս ժողովածոյ է մեծագիր, նօտարագիր, թղթեայ : Գրիչն է Մաղաքիա. — ամ գրութեան ի թուս. Հայոց ՌՃ = 1651. — տեղի գրութեան Եգեսիա : Ձեռագրիս ընծայած ճառերու մակագրութիւններն՝ անմիջապէս քիչ յառաջ Ճաւրընտրի ներկայացուցածներուն հետ միայն նմանութիւն ունին. իսկ որովհետև այս՝ 70 տարի աւելի հին է քան զայն, ուրեմն պէտք է որ առաջինն ասոր վրայէն ընդօրինակուած ըլլայ :

Թիւ 918_5 Ճաւրընտիրն, — որ կը բովանդակէ 196 տեսակ ճառեր՝ ըստ պատշաճի աւուրց ընթերցուածոց, սկսեալ «ի մեծի աւուր ծրագալուցի Աստուածայայտնութեան», — է մեծագիր ստուար : Գրուածքիւնն՝ է բոլորգիր. — նիւթն՝ թուղթ բամբակեայ : Առաջին մասը գրուած է Լէնկթիմուրի արշաւանաց ժամանակ, այսինքն է՝ յամին 1387–1390 ի վասպուրական, և գրողքն են Հայբաղեց անուն ումն կրօնաւոր և իւր եղբայրն Յովհաննէս, որ կը յիշուի նախ իբրև քահանայ և ապա կրօնաւոր : Իսկ երկրորդ մասը գրուած է ի թուին Հայոց ՊԾԱ = 1402, Սարգսաւոր Աւետիսէ ձեռքով :

Ձեռագիրս կը պարունակէ Յոհ. Մանդակունւոյ ճառերէն 17 հատը, ամէնքն ալ անոր անունով մակագրուած : Համառօտութեան համար մենք զանոց կ'ընենք ամէն անգամ կրկնելու Մանդակունւոյ անունը, այլ ճառերու վերնագրերը միայն մէջ կը բերենք, զանոնք ձեռագրաց այս ինչ կամ այն խմբի մէջ դասաւորելու համար : «Երկրորդ երեքշաբաթի (պահոց) Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ՝ վան ընդունելի և անընդունելի պղծութիւնեան և պատրաստից, — վան երջանից սովորութիւնեան, — վան նաթելոյ և գուսանաց, — վան ծիլիւթիւնեան վախճանելոց, — վան խանդապիղծ պեսպութիւնեան ի վերայ ժողովրդեանն, — (վասն) չեմչեամելոյ և զրպարտելոյ զվարդապետիցն, — վան պղծութիւնեան և պղտոփղծութիւնեան, — վան ծիլիւթիւնեան պղտոփոյ, — վան*

չանելոյ սէր և ծաքանութիւնն ընդ ատելիս Աստուծոյ, — վան խոտովանութիւնեան, — վան պահելոյ և չինանաց, — վան բարկացողաց, — վան մախանաց և նախանձու, — վան հարբուածոյ և պատուհասիչ, — վան վշխիչ և փոխուիչ, — վան արբեցողաց, — վան ապաշխարութիւնեան, — վան պահոց պնդութիւնեան, — վան չանգանաց, — վան զիւղղութիւնեամբ և երկիւղածելոյն է մարդին և յաբեան արդասն» :

Արդ՝ ձեռագրիս ներկայացուցած ճառերու մակագրութիւնքը կը համաձայնին ամենէն աւելի Տիրացու Գէորգայ օրինակին, և անմիջապէս յիշուած թիւ 894 Ճաւրընտրի ներկայացուցածներուն. իսկ որովհետև սա երկուքէն ալ հին է, ուրեմն կը հետևի, որ երկուքն ալ ասկէ ընդօրինակուած ըլլան. և կամ ասոր հնագոյն բնագրէ մի : Սակայն այս ձեռագիրս ուրիչ կէտով մ'ևս աւելի նշանաւոր է, նկատմամբ Մանդակունւոյ ճառերուն և անոնց վերաբերեալ կնճռոտ խնդրոյն : Արդ այս Ճաւրընտրիս մէջ Յայտաւուրքներու նման, — ինչպէս լսուեցաւ, — ըստ աւուրց պատշաճի յարմարցուցած են ամենայն ճառք և նիւթք. իսկ որովհետև յաւուրս մեծ պահոց՝ ապաշխարութեան կանոնք միայն կը կատարուին, այդ պատճառաւ իսկ յօրինողն Ճաւրընտրիս իւրաքանչիւր օրերուն մի մի քարոզ կամ խրատ կարգեր է ի սրբոյ Հարց : Առաջին եօթնեկի համար փոխանակ դրած է Եփրեմի, չնորհալեան Սարգսի և Ոսկեբերանի ճառերն և խրատները. իսկ երկրորդ եօթնեկի երեքշաբաթի օրէն սկսեալ՝ մինչև վեցերորդ եօթնեկի ուրբաթ օրը՝ մէկ մը Յովհան Մանդակունւոյ քարոզը մէկ մ'ալ Սարգսի խրատն իրարև ընթերցուած կարգեր է : Ա. այժմ կը բաւականանանք հրաւիրել ընթերցողաց ուշադրութիւնն այս եղելութեանս վրայ. հետաքննութիւնն յաջորդ գլխոց մէջ պիտի պարզենք :

Ճաւրընտիրն թիւ 920_7, կը բովանդակէ 414 զանազան ճառեր, որոց 19 են Մանդակունւոյ ծանօթ ճառերն և առհասարակ անոր անուամբ մակագրուած : Դարձեալ միոյն վերնագիրը միայն անուամբ մէջ կը բերենք. իսկ միացածներուն ճառի լոկ մասդերձ անուամբ մէջ կը բերենք. իսկ միացածներուն ճառի լոկ մակագրութիւնը : «Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ՝ վան ընդունելի և անընդունելի պղծութիւնեանց և պատրաստից. Բազում գազանայիւ նեխուի, — վան ծիլիւթիւնեան վախճանելոցն. Հայեաց դու ի յոյն վերին. — վան պղծութիւնեան և պղտոփղծութիւնեան. Մի՛ ոք տղայական բարուք. — վան նաթելոյ և գուսանաց. Ո՞ր երթեալ դադարեցիր. — վան խանդապիղծ պեսպութիւնեան ի վերայ ժողովրդեան. Եօթնիցս ամենայն յանցանօք. — (վասն) չեմչեամելոյ և զրպարտելոյ զվարդապետիցն. Մթերք սգոյ և տղայմուղջ*

արամութեան, – վան ծիլիթուրենան աչփոփաց. Չինչ ասացից կամ խօսեցայց, – երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց վարդապետի՝ վան պահոց. Սրբոյ անզուգական և միանական երրորդութեան. – վան ոխակալաց և չինահանաց. Աչեզ անօրէնութիւն, – վան բարկացուցաց. Աչինայն բնութիւնք մեզաց, – վան հախանաց և նախանձու. Ոչինչ պիտոյ են յաղագս սիրոյ, – վան հաբուռաձոյ և պարտուհախց. Բազում են կերպարանք, – վան վշխէց և տկուսեաց, – վան ապէնցուցաց. Մեծաւ ագով և ցաւագին արտասուօք, – վան ապաշխարութենան. Աբնատաք զեղոյ բժշկաց, – վան պահոյ պնդութենան. Աչզոյ և օգտակար, – վան չանցանացն. Աբար Աստուած զմարդն, – վան զգուշութենամբ և երկիւղիւ ծերչնուլոյ է մարմին և չարչան արդարոյն Աստուծոյ. Սոսկան ոսկերք իմ »:

Չեռագիրս կը կոչուի Հրաշափառ պճնական, մեծագիր: Գրութիւնն՝ բոլորգիր. – նիւթ՝ թուղթ բամբակեայ: Ունի ընդարձակ յիշատակարան գրչութեան ի վերջոյ. ամ գրութեանն՝ է ի թուս. Հայոց ՉԵ=1456: Գրուած է ի վերին Նորավանս, և գրողն է Մարկոս քահանայ: Դիտելով որ այստեղ նշանակուած Մանդակունւոյ ճառերը թէ կարգով թէ թուով թէ մակագրութեամբք և թէ միանգամայն վերոյիշեալ հանգամանքով քսի կը համաձայնին նախընթաց ճառընտրին, և սա՝ ժամանակաւ կրտսեր է քան զնա, ուրեմն վստահութեամբ կարող եմք հետևցնել, թէ անոր վրայէն ընդօրինակուած է, և հետևաբար՝ միևնոյն խմբին կը վերաբերի:

Աւետիք Մկր. Էնթիլեհանցի ձեռագիրներէն մին, այն է Ոսկեփորիկն ծօնական, բոլորգիր մեծագիր, որ գրուած է ի թուս. Հայոց ՉԺԴ (1465), ի քաղաքն Աբծկէ՝ խնդրանօք տանուտեառն Վեհինի, կը պարունակէ Յովհան Մանդակունւոյ մակագրութեամբ հետևեալ 12 ճառերը. « Վան ընդոծնելի և անընդոծնելի աղբմնութեան Յովհաննու Մանդակունւոյ. – Ներբին վան խոսելոյս և քոռասնոց, – Յաղագս պետրոնեան փանոսչից է վերայ յոդովրդեան Աստուծոյ. – Վան բամբասելոյ զփանայս և զվարդապետեան. – Վան աղբմնութեան և ապէսպասելոյ. – Վան աղբմնութեան ապէսպաց. – Վան հաբուռաձոյ և պարտուհասիկ. – Վան անառակ ապէնցուցաց. – Վան ապաշխարութենան. – Վան պնդութենան պահոց. – Վան զգուշութենան և երկիւղիւ ծերչնուլոյ է մարմին և չարչան արդարոյն Աստուծոյ »:

Թիւ 972 Գրչագիրն Երուսաղեմի, է նոտրագիր ընտիր՝ երկիլեան. գրուած է հասարակ թղթի վրայ՝ միլակ թանձրութեամբ: Գրչագիրս՝ թէպէտ և Ոսկեբերանի Անգրիանդեայ ճառերուն հետ կապ-

մուած ըլլալով՝ ճառ Յովհաննու Ոսկեբերանի Անդրէանդեայ կոչուած է, սակայն ըստ իս անոր մակագիրն ըլլալու է՝ Գիր ժողովոյ կամ ժողովածոյ: Երկու հատորի կը բազկանայ. առաջնոյն մէջ կը պարունակին Յովհ. Ոսկեբերանի 31 ճառերն. իսկ երկրորդին մէջ 81 ճառեր: Արդ՝ այս ճառերէս հետևեալ 16 հատը, այսինքն է, Յաղթս աղօթելոյ, – Յաղթս չար նախանձու, – Յաղթս որբմնութենան, – Յաղթս ոչ արհամարհելոյ փոյր չյանցանս, – Յաղթս արքանաւորութենամբ վերչնելոյ է առաքն խորհուրդն, և ոչ ժամանակաւ, – Յաղթս առիս գողութենան և յափշտակութենան, – Յաղթս ոչ ղբաղոյ զբեռելոյ, – Յաղթս պաշխարութենան, – Ողբ յաղթս ծեղուցելոցն և ոչ ապաշխարել, – Յաղթս ոչ հաւատալ հմայից և հայրընկերաց, ե՞ որ ինչ ասին նման են, – Յաղթս ամենայն առաքինութենան կրնութենաց, – Յաղթս որ զանարժան ի յեպէսկոպոսութենան կոչէ, – Յաղթս վշխէց, – Յաղթս պահոց ե՞ աղբիկ, – Յաղթս ոչ բարբառել (ոյ) չխոհանայս, – Յաղթս ամենեին ոչ երբեմն, – գէթ ըստ մակագրութեան նման են Յովհ. Մանդակունւոյ Գ. բորդ, ԺԱ. ԺԶ. ԺԹ. ԻԲ. ԻԳ. Ա. ԻԴ. ԻԸ. ԻԹ. Ժ, և Գ. ճառերուն, Վենետկոյ 1860 ի տպագրութեան համաձայն:

Այս ձեռագիրս, – ինչպէս կը տեսնուի, – ընդօրինակուած է ի թուս. Հայոց ՌՃԿԳ=1714, ի Կ. Պոլիս՝ մի հնագոյն բնագրէ, որ գրուած էր ի թուս. Հայոց ՈԾ=1201 փրկչական թուականին, ի Սիս քաղաքի Կիւլիկեցւոց: Այս գրչագրի յիշատակարանին մէջ նշանակուած է նոյնպէս Ոսկեբերանի Անգրիական ճառերու թարգմանութեան տարեթիւն ի թուս. Հայոց ՈՂԸ=1198:

Այս 16 ճառերու խորագրերը թէպէտև մինչև հիմակ մէջ բերուած ձեռագրերէն ոչ մէկին ըստ ամենայնի համաձայն չեն, և ինքնուրոյն խումբ մի կը կազմեն, բայց այնու ամենայնիւ մեծ նշանակութիւն կարող են ունենալ, եթէ իրօք 1201 ին գրուած բնագրին մէջ և այ կը գտնուէին Ոսկեբերանի անուամբ: Այս կէտս վերջէն պիտի քննենք:

Մանդակունւոյ գլխաւոր գրչագրաց վրայ տուաց մեր այս տեղեկութիւններէն փոքր ի շատէ տեսնուեցաւ, թէ անոնք իրարու հետ ինչ սերտս ունին, և թէ միանգամայն ինչ կէտերով կը զանազանին իրարմէ: Թէպէտ և նոքա երեքէն աւելի տարբեր գոյներով կը ներկայանան մեզ, սակայն մենք չենք սխալիր՝ եթէ զանոնք երեք ընդհանուր խմբի կամ աղբիւրներու վերածենք և անուանենք Ճանաչոնեան, ոսկեբերանեան և եփբեմեան: Թիւ 80 Տիրացու Գէորգայ օրինակն, թիւ 1447 ճառընտիրն, թիւ 923 ճառընտիրն էջմիածնի,

*ինչպէս նաև թիւ 893 ձառընտիրն, թիւ 894 ձառընտիրն, թիւ 918 ձառընտիրն, թիւ 920 ձառընտիրն և երուսաղեմայ հին բոլորգիրն և Էնթիւէհանցի օրինակն՝ առաջին աղբերէն կը յառաջագային. իսկ երկրորդ աղբեր կը վերաբերին՝ Ոսկեփորիկն Ե. րորդ երուսաղէմեան թիւ 972 գրչագիրն և Ե. օրինակն Կլիմաքեայ. և երրորդին՝ ձառընտիրն ԺԴ. թիւ 985, և պարիսեան թիւ 57 գրչագիրն: Մեր ձառընտիրն ԺԴ. առանձին գոյն մի չունի, այլ տարօրինակ խառնուրդ մ'է երեքին միանգամայն: Իսկ հնագոյն Էջմիածնեցի՝ թէպէտև տակաւին հնութեան քօղի ներքև ծածկուած՝ բացորոշ նշան մի չի տար միայն աւելի քան թէ միւսոյն վերաբերելու, սակայն և այնպէս ես կ'ախորժիմ այդ եղծեալ բնագիրն ոչ միայն մանդակունեան խմբին, այլ բոլոր միւսներուն՝ իբրև նախկին աղբիւր անուանել, բայց ի հարկէ ոչ անմիջապէս, այլ միջնորդաբար: Այս բանս իւյաղորդն կը յուսանք ապացուցանել: Այս գրչագիրներէն զատ՝ կան նաև ուրիշ չատեր, – որոց ոմանք մեզ ծանօթ են և ոմանց անուանքը միայն գիտենք, – որոնք նոյնպէս Մանդակունեայ այս ինչ կամ այն ճառը կը պարունակեն, երբեմն անոր՝ և երբեմն ալ բոլորովին մի տարբեր հեղինակի անուամբ: Այս հետաքրքրական երևոյթս՝ այնու մանաւանդ աւելի կը ստիպէ զմեզ կարևորութիւն տալ, զի ԺԲ. դարու ձեռագրի մէջ իսկ կ'երևի: Ա՛ւ այս հարկ կը համարինք յաղորդ գլխուս առանձին մէջ բերել յամին 1860 ի Վենետիկ հրատարակուած ճառերն ըստ ամենայն օրինակաց, որոնք մեզի այսպէս կամ այնպէս ծանօթ են: Այս աշխատութեամբս կ'ուզենք յոգնել և յոգնեցնել, որպէս զի զանոնք ի հիմանց և իրենց վերաբերեալ ընդարձակ պարագայիւք ուսումնասիրած ըլլանք:

ԳԼՈՒԽ Դ.

ԽՈՐԱԳԻՐՔ ԱՌԱՆՁԻՆ ՃԱՌԻՑ

ԵՐԿԱԹԱԳԻՐ ԲՆԱԳԻՐՆ՝ ԲԱՂԴԱՏՈՒԹԵԱՄԲ ՈՒՐԻՇ ՁԵՌԱԳՐԱՑ, ԵՒ ԸՆԴԱՅՈՒԹԻՒՆՔ ԱՅՏ, ԵՒ ԱՅԼ, ՀԵՂԻՆԱԿԱՑ:

Ա. Թուղթ վասն խոստովանութեան[1] վարդոյ յանդամոյ. Որք սուրբ Հոգւոյն են ցանկացեալ, և այլն, Յովհ. Մանդակունեայ մակագրուած է յօրինակին Տիր. Գէորգայ, Երուսաղեմի յիշեալ երկու ձեռագրաց, Ս. Ղազարու ԻԴ. ձառընտրի, և. Ոսկեփորիկի, Էջմիածնի թիւ 5, թիւ 918 և թիւ 920 ձառընտրաց մէջ. Կլիմաքեայ է. օրինակին մէջ, ընդ հակառակն՝ Յովհ. Ոսկեբերանի մակագրուած է: Պարբիսու յիշեալ գրչագիրն թիւ 57, մեր ԺԴ. ձառընտիրն և Երուսաղեմի չորս գրչագիրք Ս. Եփրեմի կը մակագրեն. մի միայն օրինակ յանուն Յովհ. Պլուզի:

Բ. Թուղթ – վասն ապաշխարութեան[2]. Ամմասք դեղոց, յանուն Յովհ. Մանդակունեայ մակագրուած է Գէորգայ օրինակին, Երուսաղեմի եօթն գրչագրաց, Էջմիածնի թիւ 893, – 894, – 918, – 920 և թիւ 923 ձառընտիրներու Էնթիւէհանցի օրինակին, այսպէս նաև մեր ԻԴ. ձառընտրի մէջ: Կլիմաքոսի Ե. օրինակն Ոսկեբերանին կը մակագրէ. մեր ԺԴ. ձառընտիրն՝ պակասաւոր է սկիզբէն, ուստի և առանց անուան հեղինակի մակագրէ. իսկ Պարիսու

1. Յօր. Գէորգայ և մեր ԻԴ. ձառընտրի մէջ գրուած է միայն՝ վասն յանցանաց. Աւար Աստուած զմարդն, և այլն: Երուսաղեմի հին բոլորգիրն ունի՝ Խրատ վասն խոստովանութեան ճղոց. իսկ Կլիմաքեայ օրինակն՝ Խրատ վարդոյ աստիճանաց՝ վասն խոստովանութեան. Որք սուրբ Հոգւոյն, և այլն: ԺԴ. ձառընտիրն՝ Յանուն Ե Նորա խոստովանութեան. Որք սուրբ Հոգւոյն, և այլն: Ե. Ոսկեփորիկն ունի՝ վասն ապրմանութեան և զղջման ունի: Ե. Ոսկեբերանին՝ վասն խոստովանութեան. Թիւ 920 ձառընտիրն՝ վասն յանցանաց. Աւար Աստուած զմարդն: Առաջին երկու օրինակներն և վերջինս իրարմէ ընդօրինակած են, ըստ իս. Էջմիածնի ձառընտիրն աւելի հին ըլլալու է քան Գէորգայ օրինակի նոյն իսկ բնագիրը:

2. Էջմիածնի թիւ 893 ձառընտրի մէջ կայ և յաւելուածս՝ «Պահոց»: Այս նշան է, թէ կամ երկու ճառեր իմիասին համառօտուած են, և կամ այդ մակագրի ներքև եղած ճառը բոլորովին տարբեր էր ապագրեալէն:

օրինակին և Երուսաղեմի մէկ գրչագրի մէջ երանելւոյն Եփրեմի մակագրուած է։

Գ· Թուղթ – Վասն պահոց[1] պնդութեան· Ազգով և օգտակար են, և այլն, Երուսաղեմի հինգ գրչագրաց, Գէորգայ օրինակին, մեր ԻԳ· Ճառընտրի և Լմնիածնի յիշեալ Ճառընտիրներու և Նոխիկ ճեռնոյ օրինակին մէջ Մանդակունւոյ մակագրուած է։ Մշոյ՝ Յովհաննու վանքի բոլորգիր Ճառընտիրն[2], Կլիմաքոսի օր·, Ե· Ոսկեփորիկն՝ Ոսկեբերանի կը վերագրեն· իսկ Երուսաղէմեան ուրիշ երկու օրինակներ, մեր Գ· Ճառընտիրն, պարխեան օրինակն և ԺԳ· Ճառընտիրն և հին Ճառընտիրն ԺԳ· Եփրեմի անուամբ կը մակագրեն զայն։

Դ· Վասն ընդոծնելի և անընդոծնելի աղօթից[3]· Աւետիսեալ զմիտս իմ և այլն, վանայս ԻԳ· Ճառընտրի, Գէորգայ օրինակին, Երուսաղեմի երեք օրինակներու, Լմնիածնի թիւ 894 – 918 – և թիւ 920 Ճառընտիրներու և Նոխիկ ճեռնոյ օրինակի մէջ Մանդակունւոյ մա-

1· Հին բոլորգիր Ճ–ընտրէն ԺԳ· ունի միայն՝ Վասն պահոց։ Մեր ԻԳ· Ճառընտիրն մինչև «ի մարմինս նոցա» համաձայն է տպագրին· իսկ անկէց վերջ բոլորովին անմանն է· այսինքն է կը խօսուի անանձնապատութեան և արուագիտութեան վրայ։ Ասոր յայտնի նշան է, թէ ճառս կամ ըստ դիպաց և կամ դիտմամբ միացուած է ԺԹ· բորդ ճառին հետ· և կամ վերջին մասը մի ուրիշ հեղինակէ առնելով հաւաքողը՝ ձուլել ուզած է այս նիւթիս հետ։ Նոխիկ ճեռնոյ օրի· ունի՝ Վասն պնդութեան պահոց։

2· Գրչագրիս մակագրութիւնը մեծապէս կը տարբերի տպագրեալէն, և է՝ Վասն պահոց և վերջաց ա–ա–ր–ե–ա–կ–ա–ն օրինակաց է սրբոյն։ Այս յատկութեան ըստ քանց հաւաքողին յետոյ ուրեմն ներմուծուած է, Հրամանց վերի հետեւողութեամբ, ուր կը գտնուի Մանդակունւոյ Գ· ճառի, էջ 32–33, նախնի տարանց վերաբերեալ մասը՝ նման վերնագրով։ Բ· Յիշեալ գրչագրի մէջ հաւաքողն ըստ կարի համառօտած է պահոց ճառը, փոխանակելով իր ուզածին պէս· լեզուն և ոճն ալ զայս կը ցուցնեն։ «Պահքն ի սուրբ սրտէ և յանկեղծ հաւատոց պահեալ» բառերով կը սկսի, իբր համաձայն տպագրեալի 31 էջին· ուր ընդհակառակն «քանզի աշխարհակ հզօր է» գրուած է։

3· Գէորգայ օրինակն և Լմնիածնի թիւ 894, 918 և թիւ 920 Ճառընտիրներն ունին վոխանակ աղօթից՝ աղերս–ութեան և պատրաստից, և կը սկսին ընդհակառակն՝ «Բազում գաղանաճիզ նեաւթիւ վիրաւորէ» բառերով, որոնք կը կազմեն ընդհակառակն Զ· բորդ ճառի սկիզբն, ըստ տպ· էջ 37։ Աբդ՝ այս երեւոյթս կը ցուցնէ նախ, թէ այդ երեք ձեռագիրներն իսկ՝ մի և նոյն քնագրէ յառաջ եկած են, կամ իրարմէ ընդօրինակուած, ինչպէս ըսուեցաւ։ Բ· Թէ կամ այդ նախկին քնագրի գրիչն և հաւաքողն՝ ըստ կարս երկու իրարմէ տարբեր ճառերն ի մի խմբագրած է՝ իւր յատուկ ոճովն և գուռնով, և այն պատճառաւ իսկ այդ խորագրի ներքև ուզած է ամփոփել· և կամ Գէորգայ օրինակին և յիշեալ Ճառընտիրներու մէջ Գ· ճառը կը պակսէր, և թէ սխալմամբ գրչագրաց՝ անոր վերնագիրը Զ· ճառին վրայ դրուած է։ Նոխիկ ճեռնոյ Ոսկեփորիկն ունի խորագիր՝ Վասն ընդոծնելի և անընդոծնելի աղերսութեան միայն· մերձաւորու-թիւնն յայտնի է· Վերջինս կարելի է, որ թիւ 918 Ճառընտրէն ընդօրինակուած ըլլայ։

կագրուած կը գտնենք։ Կլիմաքսայ Ե· օրինակն՝ Յովհ· Ոսկերբերանի կը մակագրէ· իսկ վանայս Գ· Ճառընտիրն, Պարխաւ օրինակն և Երուսաղեմի չորս գրչագիրները Ս· Եփրեմի մակագրած են։

Ե· Թուղթ – Վասն աղերսութեան[1] պնդութեան· Մի ոք տղայաբար բառաչ, և այլն, Յովհ· Մանդակունւոյ կը մակագրեն մեր ԻԳ· Ճառընտիրն, Գէորգայ օրինակն, Երուսաղեմի երեք գրչագրեր, Լմնիածնի թիւ 893, 918 և թիւ 920 Ճառընտիրներն։ Կլիմաքսայ Ե· օրինակին, և Ե· Ոսկեփորիկի մէջ ընդհակառակն Ոսկիբերանի անուամբ մակագրուած են· իսկ վանայս Գ· Ճառընտիրն և ԺԳ· Ճառընտիրն, այսպէս նաև Երուսաղեմի երեք գրչագիրք և Պարխաւ թիւ 57 բոլորգիրն՝ Եփրեմի անունով մակագրած են· Երուսաղէմեան մէկ ուրիշ գրչագրի մէջ ալ յանուն Բարսղի մակագրուած է ճառս։

Զ· Վասն պղծոյ և պատրաստից և աղերսութեան· Բազում գաղտնաճիգ նեաւթիւք, և այլն, մեր ԻԳ· Ճառընտրի, Լմնիածնի թիւ 918 և 92 Ճառընտիրներու, Գէորգայ օրինակին և Երուսաղեմի վեց օրինակաց մէջ Յովհ· Մանդակունւոյ մակագրուած է։ Գ· Ճառընտրի մէջ առանց անուան է։ ԺԳ· Ճառընտիրը նոյնպէս, վասն զի սկիզբն պակասաւոր է մէկ երես· իսկ Պարխաւ թիւ 57 բոլորգիրն և Երուսաղեմի ուրիշ երկու գրչագիրք Եփրեմի անուամբ մակագրած են։

Է· Վասն փղոյ և վշտից[3]· Յայժ չար են ախտք ընչասիրութեան,

1· Գէորգայ օրինակին, Պարխաւ թիւ 57 բոլորգրի, մեր Գ· Ճառընտրի և Լմնիածնի թիւ 894 և 918 Ճառընտրաց մէջ մակագրուած է ընդհակառակն Վասն աղերս–ութեան և աղաչ–ութեան։ Մեր ԺԳ· Ճառընտիրն ունի Վասն աղերս–ութեան և աղաչ–ութեան։ Նոխիկ ճեռնոյ և Երուսաղեմի բոլորգիրն՝ Վասն աղերս–ութեան և անընդերս–ութեան։ Կլիմաքսայ Ե· օրինակն և Երուսաղեմի բոլորգիրն՝ Վասն աղերս–ութեան միայն ունին· իսկ Լմնիածնի թիւ 893 Ճառընտիրն ունի Վասն աղերս–ութեան և աղաչ–ութեան։ Սկիզբը՝ նոյն է գրեթէ ամէն օրինակաց մէջ, այսինքն ոմանք կը սկսին՝ Մէ ո– պղտչան վրո–, և ոմանք ալ պղտչ–բար բ–ր–ո– բառերով։ Ուրեմն խորագրոց զանազանութիւնն յառաջ եկած է կամ ճառերս խմբագրողաց և կամ պանդք յետոյ ուրեմն ընդօրինակողաց քմահաճոյքէն և կամ ազիտութենէն։ ԻԳ· Ճառընտիրն ունի՝ Վասն աղաչ–ութեան· սկիզբը նոյն է։ Նոխիկ ճեռնոյ օրինակը կը գրէ՝ Վասն աղերս–ութեան աղ–ոց։

2· Այս ճառիս խորագիրն՝ ամէն օրինակաց մէջ մի և նոյն է, – բաց է Գ· բորդ ծանօթութեան մէջ յիշուած 4 օրինակաց չփոթութենէն։ Ամէնքն ալ բ–վ–ո–ք–ա–պ–ն–ջ–ի–ն–ե–ր–ո–ւ–թ բառերով կը սկսին· մէկ օրինակ միայն ունի ընդհակառակն բ–ո–ղ–ո–ք–ա–պ–ն–ջ–ի–ն–ե–ր–ո–ւ–թ։ ԻԳ· Ճառընտրի մէջ խորագիրն եղծեալ է· իսկ ԺԳ· Ճառընտիրն՝ տպագրեալի 58 երեսէն հավիւ ուրեմն կը սկսի, առանց մակագրի և անուան հեղինակի· և մանաւանդ թէ կը գրէ զայն իբրև չարայարութիւն է· ճառին, որ մակագրուած է Եփրեմի անուամբ։ Բայց թէ դիպուածո՞վ արդեօք, թէ դիտմամբ, դժուար է ճշդիւ որոշել։ Նոխիկ· օր· ունի՝ Վասն աղերս–ութեան և աղաչ–ութեան։

3· Տիր· Գէորգայ օրինակն ունի վոխանակ փոխոց՝ Վշտից և փոխ–ից·

և այլն, Մանդակունւոյ անուամբ կը մակագրեն Գէորգայ օրինակն, Երուսաղեմի վեց գրչագիրք և Էջմիածնի թիւ 918, և 920 ձառընտիրներն. իսկ վանացս Դ. ձառընտրի, Պարիսու թիւ 57 բոլորգրին և Երուսաղեմի ուրիշ երկու օրինակաց մէջ Եփրեմի մակագրուած է:

Ը. Վասն ինքնաբուխեան ապտակի[1]. Չինչ ասացից, և կամ զին պատմեցից, և այլն, Յովհ. Մանդակունւոյ մակագրուած է մեր մատենադարանի Ութբանասնից, Գէորգայ օրինակին, Էջմիածնի թիւ 893, 894, 923, 918, 920 ձառընտիրներու, Երուսաղեմի երեք օրինակաց և մեր ԺԴ. ձառընտրի մէջ: Իսկ մեր Դ. ձառընտիրն, Պարիսու թիւ 57 բոլորգիրն, և Երուսաղէմեան ուրիշ երկու գրչագիրք յանուն Եփրեմի կը մակագրեն զայս:

Թ. Թոռըն վասն ի տհանայից պետրոսեան ի վերայ ժողովրդեան[2]. Ես լի անթիւ յանցանօք, և այլն, Յովհ. Մանդակունւոյ անուամբ մակագրուած է մեր մատենադարանի ԻԴ. ձառընտրի, Գէորգայ օրինակին, Էջմիածնի թիւ 893, 894, 918, 920 և թիւ 923 ձառընտիրներու, Էնթիլեհանցի օրինակին, և Երուսաղեմի երեք օրինակաց մէջ. իսկ Պարիսու թիւ 57 բոլորգիրն, մեր Դ. ձառընտիրն և Երուսաղէմեան մի այլ օրինակ՝ Եփրեմի կը մակագրեն զայն:

կը սկսի. «Յոյժ չար է ընչասիրութիւն»: Այսպէս ունին նաև Էջմիածնի 918 և 920 ձառընտիրներն: Յայտնի նշան իրարմէ ընդօրինակուած ըլլալու: Երուսաղեմի բոլորգիրն ունի՝ Վասն ի տհաս և վնասուց: Նշան է յոռի գրչութեան: Սկիզբն ալ նոյն է առաջնոյ հետ: Պարիսեան բոլորգիրն ունի՝ Վասն վնասից և տհասաց. սկիզբն. «Յոյժ չար է անտ արծաթասիրութեան»: Երուսաղեմի նոտրագիր օրինակն՝ ունի միայն Յոչ ղէտ վնասից: Մեր Դ. ձառընտրի մէջ կը գրուի՝ Վասն վնասից սոնելոց. Յոյժ չար է անտ ընչասիրութեան, և այլն:

1. Խորագիրս նոյն է գրեթէ ամէն օրինակաց մէջ, ի բաց առեալ ԺԴ. ձառընտրին, որ ունի՝ Վասն անվտ փքիրոսբնեան ապտակի, և Դ. ձառընտրին, որուն խորագիրն է, Վասն փքիրոսբնեան ապտակոյ յաղագս. վերջին բառս ոգետ գրչէ ներմուծուած յաւելուած մի է, ստոյգ լրացնելու համար: Իսկ սկիզբն ճառիս Դ. ձառընտրի և ԺԴ. ձառընտրի մէջ միայն է համաձայն երկաթագրին: Գէորգայ օրինակն, Ութբանասիրքը, Էջմիածնի թիւ 923, 920, 918, 894 և թիւ 893 ձառընտիրք ունին մերթ. Չինչ ասացից, կամ զինչ խօսեցայց, և մերթ ալ՝ Չինչ ասացից ես այս՝ զինչ խօսեցայց:

2. Դ. ձառընտիրն ունի միայն՝ Վասն տհանայից պետրոսեան: Էնթիլեհանցի օր. ունի յաւելուածս՝ Ապտակոյ: ԺԴ. ձառընտիրն թէև անընթեռնուի, բայց մէջտեղ նեղութենէն կը տեսնուի, թէ չունէր ի վերայ ժողովրդեան մասը՝ թիւ 923 ձառընտիրն ունի՝ Յաղագս պետրոսեան ի վերայ ժողովրդոյ տհանայից: Սկիզբն է՝ «Արդ ես լի»: Իսկ թիւ 920 ձառընտրի մէջ կը սկսի՝ «Եօթնիցս ամենայն յանցանօք»: Թիւ 923 ձառընտիրն ունի՝ «Որպէս հովիւ ոչօտ ոչխարաց», որ նշան է կամ յաւելուածոյ, և կամ տպագրեալէն տարբեր բովանդակութիւն ունեցող ճառի մի:

Ժ. Յաղագս բռնաւորաց և պատուելոյ զվարդապետան[1]. Մթերք սգոյ և աղաւաղք տրամաբանեան, և այլն, Յովհ. Մանդակունւոյ կը մակագրեն՝ Գէորգայ օրինակն, մեր ԻԴ. ձառընտիրն, Երուսաղեմի 15 գրչագիրք, Էնթիլեհանի օրինակն, և Էջմիածնի թիւ 893, 894, 918, 920 և թիւ 923 ձառընտիրք: Եփրեմի մակագրուած է ընդհակառակն Պարիսու թիւ 57 բոլորգրի և Երուսաղեմի երկու օրինակաց մէջ: Երուսաղէմեան մի ուրիշ օրինակ ալ՝ Յովհ. Երզնկացւոյ կը մակագրէ. իսկ մեր Դ. ձառընտրի մէջ առանց հեղինակի անուան է խորագրուած:

ԺԱ. Վասն սէրոյ և ատելոյ և նախանձու[2]. Ոչինչ պիտոյ է որ յաղագս սրբոյ, և այլն, Յովհ. Մանդակունւոյ ասացեալ կը մակագրեն՝ Էջմիածնի թիւ 893, 918, 920 և թիւ 923 ձառընտիրները, Գէորգայ օրինակն, մեր ԻԴ. ձառընտիրն և Երուսաղեմի երեք օրինակներ: Պարիսու թիւ 57 բոլորգիրն և Երուսաղէմեան ուրիշ երկու օրինակներ միայն Եփրեմի մակագրած են: Դ. ձառընտրի մէջ կը պակսի: Մատենադարանիս Բ. Կանոնագիրն՝ առանց անուան հեղինակի ընդօրինակած է ճառս, համաձայն տպագրեալին, բայց յաղագս ևս ասոր հետ միացնելով:

ԺԲ. Վասն բարկացողաց բարոյ[3]. Ամենայն բնութիւնք մեզաց

1. Գէորգայ օրինակի խորագիրն է, Վասն չբարբառելոյ և պատուելոյ զվարդապետան և զտհանայսն: Սկիզբը նոյն է: Պարիսեան թիւ 57 բոլորգիրն ևս ունի զվարդապետան և զտհանայսն. Սկիզբը նոյն է: Պարիսեան թիւ 57 բոլորգիրն ևս ունի զվարդապետան և զտհանայսն. Սկիզբը՝ հին բնագրին համաձայն են, ի բաց դապետան, իսկ մեացած խորագիրն և սկիզբը՝ հին բնագրին համաձայն են, ի բաց առեալ բառս՝ Վասն՝ փոխանակ յաղագսի: Այսպէս է նաև Երուսաղեմի բոլորգիրը: Նշան երկու գրչագրաց մի և նոյն խմբի վերաբերելոյն: Էջմիածնի թիւ 923, 920, 918, 894 և թիւ 893 ձառընտիրներն ունին իրարու կատարեալ համաձայնութեամբ՝ Վասն չբարբառելոյ և պատուելոյ զտհանայսն և զվարդապետս. սկիզբը՝ նոյն է: ԻԴ. ձառընտրի մէջ, Վասն չբարբառելոյ զտհանայսն կայ միայն. սկիզբը՝ նոյն: Մեր Դ. ձառընտրի մէջ, Վասն չբարբառելոյ և պատուելոյ զվարդապետան ժողովրդոյ: Սկիզբը գաթնեալ նոյն է: Էնթիլ. օր. Վասն բարբառելոյ զտհանայսն և զվարդապետան:

2. Գէորգայ օրինակի խորագիրն մէջ սէրոյ չկայ. սկիզբը նոյն է: Ասոր կատարելագոյն կը համաձայնին Էջմիածնի թիւ 920 և թիւ 918 ձառընտիրք: Նշան մերձաւորութեան: Ոսկեփորիկն ե. ունի՝ Վասն սէրոյ և խրատոց. նշան տարբեր ճառի մի սկզբնաւորութեան և բովանդակութեան: Էջմիածնի թիւ 923 և 893 ձառընտիրք ունին՝ Վասն նախանձու և սիրոյ. վերջինս՝ յաւելչեան ընդօրինակուած է: Մեր ԻԴ. ձառընտիրն բոլորգիր ունի՝ Վասն սէրոյ և նախանձու և հրամայելոյ: Սկիզբը նոյն: Ասոր նման է նաև Բ. Կանոնագրքի մէջ եղած ճառը, յետ քանից Ներսէսի Հայոց կաթողիկոսի: Երուսաղեմի և Պարիսու օրինակներու թէ խորագիրն և թէ սկիզբը՝ հին բնագրին համաձայն են: Բաց ի ե. Ոսկեփորիկէն՝ ամէն գրչագրաց մէջ սկիզբն ճառիս նոյն է:

3. Հին երկաթագրին մէջ խորագիրս անկատար է: Մեր ԻԴ. ձառընտիրն, Երու-

և պիղծ ախտից, և այլն, Յովհ. Մանդակունւոյ անուամբ մակագրուած է Գէորգայ օրինակին, Էջմիածնի թիւ 893, 918, 920 և թիւ 923 ձառընտիրներուս, մեր ԻԳ. ձառընտրին, և Երուսաղեմայ բոլորգիր օրինակին մէջ։ Պարխեան թիւ 57 բոլորգիրն, մեր Դ. ձառընտիրն, ընդհակառակն, Եփրեմի կը մակագրեն։

ԻԳ. Վասն պատասխանոյ և ընդհանուց[1]. Ահեղ անօրէնութիւն, և այլն, Յովհ. Մանդակունւոյ մակագրուած է Գէորգայ օրինակին, մատենադարանիս ԻԳ. ձառընտրին, Երուսաղեմի երկու օրինակաց և Էջմիածնի թիւ 893 և 918 ձառընտիրներուս մէջ։ Իսկ պարիսեան թիւ 57 գրչագիրն և մեր Դ. ձառընտիրն՝ յանուն Եփրեմի մակագրած են զայն։

ԻԴ. Վասն սակաւ գողութեան ոչ ոչ ապաշխարէն[2]. Յանկարծակի

սաղմի բոլորգիրն և ձառընտիրն Դ. ունին մի և նոյն խորագիրն և սկիզբը։ Էջմիածնի թիւ 923 և 893 ձառ. ունին Վասն բարեացուցանելոյ և վասն ապականելոյ. սկզբնաւորութիւնն՝ յայտնի չէ ինձ, թէ իցէ նոյն կամ տարբեր. սակայն խորագրիս փոփոխութիւնն իսկ կը ցուցնէ, թէ անոր նկերքև եղած ճառն ևս զգալի փոփոխութիւններ կրած է, յաւելմամբ կամ յապաւումներով. և կամ երկու նոյնանիւթ ճառեր ի մի համառօտուած ըլլալու են։ Պարխաս թիւ 57 բոլորգիրն ունի՝ Վասն բարեացուցանելոյ և որ ընդ եղբօրն չդատիլ. սկիզբը՝ նոյն է։ Էջմիածնի թիւ 920 և 918 ձառընտիրներուն և Գէորգայ օրինակի խորագիրն է՝ Վասն բարեացուցանելոյ։ Սկիզբը նոյն է ամէն օրինակաց մէջ։ Վերջին երեք գրչագրերն իրարմէ ընդօրինակուած են, և կամ վերջինս քնագիրն եղած է իւրեւ նախկին աղբիւր երեքին ալ, ուղղակի կամ անուղղակի։

1. Գէորգայ օրինակն ունի՝ Վասն պատուհասոյ, ընդհանուց և նախանձոտից. սկիզբն ալ նոյն է։ Երուսաղեմի բոլորգիր օրինակի խորագիրն և սկզբնաւորութիւնը բոլորովին կը համաձայնին հին քնագրին։ Մեր Դ. ձառընտիրն ունի՝ Վասն պատուհասոյ և ընդհանրոցն՝ յայտնելով զԵրկրորդ. սկիզբը նոյն է տարբերութեամբ մը։ Վերջին երկու բառերն ըստ քանց հաւաքողին յաւելուած են անշուշտ։ Էջմիածնի թիւ 920 և 918 ձառընտիրները կը համաձայնին Գէորգայ օրինակին ըստ ամենայնի, բաց ի և նախանձոտից յաւելուածէն, զոր չունին. այսպէս նաև պարխեան թիւ 57 բոլորգիրն՝ կատարելապէս կը համաձայնի այս երկու ձառընտիրներուս։ Թիւ 923 և 893 ձառընտիրներուս մէջ կ'երևի, թէ այս ճառս միացուցած են վասն տախանաց և նախանձոտ ճառին հետ, և հաւանօրէն այս պատճառաւ յաւելոյ եղած է խորագիրն «Վասն նախանձու և ընդ»։

2. Պարխաս և Երուսաղեմի օրինակներուն մէջ ևս ճառիս խորագիրը նոյն կը մնայնուի, խուն ինչ տարբերութեամբ. այսինքն է՝ «Վասն սակաւ ինչ գողութեան զոր ոչն ապաշխարին»։ բայց սկիզբը տարբեր բառով կը սկսի վերջնոյն մէջ, այն է՝ Ահաւթ գողանայ»։ Մեր ԻԳ. ձառընտիրն ունի միայն՝ Վասն գողութեան. սկիզբն է՝ «Յանկարծ գողանայ»։ Դ. ձառընտրի խորագիրն է՝ Վասն սակաւիկ գողութեան ընդ ոչ ապաշխարին գրչագրողն. սկիզբն՝ Երուսաղեմի օրինակին համաձայն է։ Երուսաղեմի նօտրագիր օրինակ մի ունի՝ Յաղագս ոչ սրհամարհելոյ փոքր գործոց. սկիզբը

գողանայ, և այլն, Յովհ. Մանդակունւոյ անուամբ կը մակագրեն մեր ԻԴ. ձառընտիրն և Երուսաղեմի վեց օրինակներ։ Պարիսեան թիւ 57 գրչագիրն՝ ընդհակառակն՝ Եփրեմի կը մակագրէ. մեր Դ. ձառընտրի մէջ առանց հեղինակի անուան է. իսկ միւս գրչագրաց մէջ բոլորովին կը պակսի։

ԻԵ. Վասն չար սովորութեան[1] երդմանն. Ցոյժ չար են սովորութիւնք չարին, և այլն, Մանդակունւոյ մակագրուած է ճառս Գէորգայ օրինակին, վանայս ԻԴ. ձառընտրի, Երուսաղեմի երկու գրչագրաց և Էջմիածնի թիւ 920, 893 և թիւ 894 ձառընտիրներուս մէջ։ Վանայս Դ. ձառընտրին և Պարիսու թիւ 57 գրչագիրն՝ և Երուսաղէմեան մի այլ օրինակ՝ Ս. Եփրեմի կը մակագրեն։

ԻԶ. Վասն աբբեցողաց անօրինութեան[2]. Մեծ սգով և ցաւագին

նշանակուած չէ տեղեկագրին մէջ. ուստի եթէ մի և նոյն ճառն ևս համարինք, մեծ փոփոխութիւններ կրած ըլլալու է։

1. Գէորգայ օրինակն ունի՝ Վասն երդմանց սովորութեան որ չ է լաւն. սկիզբը նոյն է փոքր տարբերութեամբ ամենայն բառին։ Այս խորագրիս նման է և Էջմիածնի թիւ 894 ձառընտրին Վասն երդմանց սովորութեան որ չար է. սկիզբն ևս ճիշդ անմիջապէս իւր նախորդին պէս է։ Այս երկու օրինակաց խորագրի վերջին մասը՝ կամ իբրև յաւելուած յետոյ ուրեմն ներմուծուած է, և կամ ընդօրինակողաց կողմէն չփոթուած սկզբնաւորութեան առաջին բառերու հետ։ Երուսաղեմի բոլորգիր օրինակը, մեր Դ. ձառընտիրն և ԻԴ. ձառընտիրն, Էջմիածնի թիւ 893 և 918 ձառընտիրներն ունին միայն Վասն երդմանց, կամ երդմանց սովորութեան։ Պարխաեան թիւ 57 գրչագիրն ունի՝ Վասն երդման՝ որ է լաւ ինչ պղծութեան դէղ։ Այս խորագրիս վերջին մասն ևս ուշ առեն եղած յաւելուած մ'է, ինչպէս որ ըսուեցաւ առաջին երկու գրչագրաց համար։ Երուսաղեմի նօտրագիր օրինակ մ'ունի՝ Յաղագս ոչ երդնուլ։ Ճառիս սկզբնաւորութիւնն ամէն օրինակաց մէջ մի և նոյն բառերով է, ի բաց առեալ հին երկաթագրէն, ուր ոչ-ին բառը կը պակսի։

2. Գէորգայ օրինակին մէջ խորագրիս վերջին բառը չկայ. սկիզբը «Մեծաւ սգով»։ Սորա կը համաձայնին վանայս ԻԴ. ձառընտիրն, Էջմիածնի թիւ 918, և 920 ձառընտիրներն ևս։ Երուսաղեմի բոլորգիր օրինակն ունի խորագիր և սկիզբն չար և նման հին քնագրին կամ մեր երկաթագրին։ Մեր Դ. ձառընտիրն ունի՝ Վասն աբբեցողաց անէրաւութեան և անաւրինութեան. սկիզբը նոյն է ընդ քնագրին։ Պարխաեան օրինակն ունի՝ Վասն աբբեցողաց և արիւրմոլեցն անօրինութեան. սկիզբը նոյն է։ Երուսաղեմի նօտրագիր օրինակ մի կը խորագրէ՝ Յաղագս արիւրմոլութեան։ Այս խորագրիս նկերքև եղած ճառը ծանօթ ըլլալու էր նաև Պարխաս օրինակի հաւաքողին, և հաւանօրէն և արիւրմոլոց յաւելուածին հետ՝ ուրիշ բաներ ալ անկէ ներմուծած է ի վերջ կամ վասն աբբեցողաց ճառին։ Էջմիածնի թիւ 894, 893 և թիւ 920 ձառընտիրներն ունին՝ Վասն անաւրէն աբբեցողաց. սկիզբն է «Մեծաւ սգով»։ Գրչագրաց առաջին երկուքն՝ վերջինէն ընդօրինակուած են անտարակոյս. վասն զի այս՝ միւս երկուքն աւելի հին է։ Էնֆիէճ. օրի. է համաձայն վերջին երեք ձառընտիրներուն։

արտասուօք, և այլն, ՅՈՎՀ. Մանդակունւոյ կը մակագրեն՝ Գէորգայ օրինակն, մեր ԻԴ. ձառընտիրն, Ընձիւեճեանցի օրինակն, և Էջմիածնի թիւ 923, 920, 918, 894 նաեւ թիւ 893 ձառընտիրներն և Երուսաղեմի երկու օրինակք: Պարիսու թիւ 57 օրինակն, վանացս Դ. ձառընտիրն և Երուսաղէմեան ուրիշ երկու գրչագիրք՝ Եփրեմի մակագրած են:

ԺԷ. Վասն անօրէն Ծոթէզ պէտականոց[1]. *Ո՛ր երթեալ դադարեցից և լացից, և այլն, ճառս ՅՈՎՀ. Մանդակունւոյ մակագրած են՝ Գէորգայ օրինակն, վանացս ԻԴ. ձառընտիրն, և Էջմիածնի թիւ 923, 920, 918, 894 և թիւ 893 ձառընտիրներն և Երուսաղեմի երկու օրինակներ և Ընձիւեճեանցի Ոսկեփորիկն: Իսկ Պարիսու թիւ 57 օրինակն՝ և Երուսաղեմի ուրիշ օրինակ մի Եփրեմի կը մակագրեն: Վանացս Դ. ձառընտիրն՝ առանց անուան հեղինակի կը մակագրէ:*

ԺԸ. Թուղն վասն Ծոմոյդ. Տէր մեր Յիսուս Քրիստոս, և այլն, *ՅՈՎՀ. Մանդակունւոյ մակագրուած է Երուսաղեմի բոլորգիր օրինակին մէջ, որուն խորագիրն և սկզբնաւորութիւնը մի և նոյն են ընդ հին երկաթագրիս, սակայն ճառն մեծապէս կը տարբերի տպագրեալէն, մանաւանդ ի վերջաւորութեան, ըստ վկայութեան Սահ. եպիսկոպոս Խապայեանի: Պարիսեան թիւ 57 գրչագրի մէջ ևս խորագիրն և սկզբնաւորութիւնը մի և նոյն է, բայց Եփրեմի անուամբ մակագրուած է: Միւս օրինակաց մէջ կը պակսի այս ճառս, ի բաց առեալ հին բնագիրը կամ երկաթագիրն, զոր արդ յիշեցի:*

ԺԹ. Վասն անառնոմոլաց և ընծայելոյ և սրօսոփիոյ[2]. *Ողբալով յիս*

1. *Գէորգայ օրինակն, վանացս ԻԴ. ձառընտիրն, Էջմիածնի թիւ 894, 918 և 920 ձառընտիրներն և Ընձիւ. օրինակն ունին կատարեալ համաձայնութեամբ՝* **Վասն ծոթէզոյ և փսուռնոյ.** *սկիզբը՝ նոյն: Սոցա հասարակաց և հնագոյն ազբիւրը թիւ 918 ձառընտիրն համարելի է. և կամ Գէորգայ օրինակի հին բնագիրն, եթէ 1402 թուականէն յառաջ գրուած էր այն: Էջմիածնի թիւ 923, և 893 ձառընտիրներն ունին՝* **Վասն ծոթէզոյ և խալաղ յանանց:** *Վերջին գրչագիրս անմիջապէս իւր նախորդէն ընդօրինակած է այդ խորագիրն, որուն վերջին երկու բառերն իբրև յաւելուած յետոյ ուրեմն ներմուծուած են՝ տպագրեալի 131 իւր մէկ բացատրութենէն ուղղակի փոխ առեալ: Վանացս Դ. ձառընտրի խորագիրը՝ նոյն է բնագրին հետ, բայց սկիզբն այսպէս. Ո՛ր անդեալ դադարէիցէ: Երուսաղեմի բոլորգիրն ունի՝* **Վասն անօրէն ծոթէզոյ նախանց.** *նշան վատ գրչութեան կամ խանգարման: Իսկ Պարիսեան թիւ 57 բոլորգրի խորագիրն է՝* **Վասն անօրէնութեանց ծոթէզոյ պէտականոց.** *մօտ թուի լինել հին երկաթագրին, զուցե թէ անկէց ընդօրինակեալ, բայց անտարակոյս սխալագիր գրչութեամբ:*

2. *Վանացս Դ. ձառընտիրն, Պարիսու թիւ 57 օրինակն և Երուսաղեմի բո-*

հոգի իմ, և այլն, ՅՈՎՀ. Մանդակունւոյ մակագրուած է Երուսաղեմի երկու օրինակաց և Էջմիածնի թիւ 893 ձառընտրի մէջ: Գէորգայ օրինակն՝ սկիզբէն պակասուր ըլլալով հանդերձ՝ կրնանք ըսել, թէ նոյնպէս Մանդակունւոյ անուամբ մակագրած էր, այնու մանաւանդ զի այս ձեռագրիս բոլոր միւս ճառերն իսկ մի և նոյն հեղինակի անունը կը կրեն: Վանացս Դ. ձառընտիրն՝ առանց հեղինակի անուան կը խորագրէ այս ճառը: Պարիսու թիւ 57 օրինակն միայն Եփրեմի կը մակագրէ: Միւս օրինակաց մէջ կը պակսի ճառս:

Ի. Վասն չառնելոյ սէր բարեկամութեան ընդ ընչասիրս Աստուծոյ[1]. *Հանապազ զմտաւ ածեալ զարհուրիմ, և այլն, ՅՈՎՀ. Մանդակունւոյ մակագրած են Գէորգայ օրինակն և վանացս ԻԴ. ձառընտիրն. Էջմիածնի թիւ 918 և 893 ձառընտիրներուն և Երուսաղեմի օրինակին մէջ ևս: Մեր Դ. ձառընտիրն առանց հեղինակի անուան մէջ կը բերէ: Պարիսեան թիւ 57 օրինակին մէջ միայն՝ Եփրեմի մակագրուած է:*

ԻԱ. Վասն ահեղ հարուածոյ կրկիռ[2]. *Բազում կերպարանք են պա-*

լորգիր օրինակն իսկ մի և նոյն խորագիրն և սկզբնաւորութիւնն ունին, անտարակոյս իրարմէ ընդօրինակած են, հետևաբար մի և նոյն բնագրէ ծագումն առած են: Գէորգայ օրինակն և մեր ԻԴ. ձառընտիրն տարբեր հանգամանքով մէջ բերած են զայն. այսինքն է՝ յետ ընդօրինակելոյ Դ. ճառը վասն պահոց պնդութեան, մինչև «խնայեաց Աստուած յոգի և ի մարմինս նոցա», անդէն կը յարեն գլխաւորաբար՝ **Ծոթէզ ասէ վասն անառնոմոլաց, սրօսոփիոյ և ընծայելոյ, սկիզբն ևս նոյն է:** *Այս երկու գրչագիրներէն առաջինն՝ հաւանօրէն կամ վերջինէն, — որ է բոլորգիր, — ընդօրինակուած է, և կամ անոր հին բնագրէն: Էջմիածնի թիւ 893 ձառընտրին ունի՝* **Վասն սրօսոփիոյ և անառնոպղծոյ:** *Սկիզբն է. «Ջինչ ասեմ անառներն ունի՝* **Վասն սրօսոփիոյ և անառնոպղծոյ:** *Սկիզբն է. «Ջինչ ասեմ անառներն ունի՝ Վասն սրօսոփիոյ և անառնոպղծոյ:

տուհատից, և այլն, ՅՈՎՀ. Մանդակունւոյ կը մակագրուի Գէորգայ օրինակին, մեր ԻԴ. ձառընտրի, Երուսաղեմի չորս օրինակաց, Էնճիւեճեանի օրինակին, և Էջմիածնի թիւ 923, 918, 920, 894 և թիւ 893 ձառընտիրներու մէջ: Վանայս Դ. ձառընտիրն և պարխեան օրինակը միայն յանուն Եփրեմի կը մակագրեն զայն:

ԻԲ. Վան պըռշոռնիաբ և երկիւղիւ է սուրբ խորհուրդն Տեյնէոլոյ[1]. Սոսկան ոսկերք իմ դողուլթեամբ, և այլն, ՅՈՎՀ. Մանդակունւոյ մակագրուած է Գէորգայ օրինակի, Երուսաղեմի 11 օրինակաց և Էջմիածնի թիւ 893, 894, 918, 920 և թիւ 923 ձառընտիրներու և Էնճիւճեանի օրինակին մէջ: Վանայս Դ. ձառընտրի մէջ առանց անուան հեղինակի է: Պարխեան 57 գրչագիրն և Երուսաղէմեան օրինակ մի՝ Եփրեմի կը մակագրեն. Երուսաղէմի ուրիշ օրինակ մ՚ալ ՅՈՎՀ. Ոսկիբերանի կը մակագրէ զայն:

ԻԳ. Թուաղն Պիլիպոսինեան վախճանելոյ յաշխարհս[2]. Հայեա դու ի

իրարու ունին՝ վան հրուանդան պատահումէ. սկիզբը քնագրին պէս է: Նման նոյնութեան աղբեր կամ մի և նոյն խմբէ ըլլալուն: Պարխեան թիւ 57 օրինակն և Երուսաղեմի բոլորգիրն ունին քնագրի հինգ խորագիրն և սկիզբը, միայն թէ վերջինս յարեր է և յաւելուածա՝ Որ է սուրբ հայրն Երդ, և յապաւեր է բառս սկիզբ: Սկիզբը նոյն է: Անտարակոյս երկուքն ալ կը ճանչնան հին երկաթագիրը: Մեր ԻԴ. ձառընտիրն այսքանս միայն ունի «ՅՈՎՀԱՆՆՈՍ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՅ ասացեալ է. Բազում կերպարանք պատահմանէ», և այլն: ձառընտիրն Դ. ունի խորագիր և սկիզբն յար և նման հին երկաթագրին կամ քնագրի:

1. Մատենադարանիս ԻԴ. ձառընտիրն, և ձառընտիրն Դ, Երուսաղեմի բոլորգիրն և պարխեան թիւ 57 օրինակն ունին մի և նոյն խորագիրն և սկիզբը՝ համաձայն երկաթագիր քնագրին: Անտարակոյս ամենքն ալ վերջինս ճանչցած են: Էջմիածնի թիւ 918, 920, 894, և թիւ 923, այսպէս նաև Գէորգայ օրինակն և Էնճիւճեանի Ոսկեբերիկն ունին՝ վան պըռշոռնիաբ և երկիւղիւ Տեյնէոլոյ է Տրփն և յորեան Որդւոյն Աստուծոյ. սկիզբն ևս նոյն է քնագրին հետ: Այս հինգ օրինակներս հաւանօրէն իրարմէ ընդօրինակուած են, թէպէտև թիւ 918 օրինակին մէջ փրէսթոսէ գրուած է, փոխանակ Որդւոյն Աստուծոյ: Թիւ 918 ձառընտիրն ամենէն հինն է: Երուսաղեմի նօտրագիր օրինակ մ՚ունի՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԱՆԱՍՏՈՒՐՈՒԹԻՒՆ Տեյնէոլոյ է սուրբ խորհուրդն, և սկիզբ Յամանակս: Խորագիրս բոլորովին աննման է միւսներուն. ճառն ևս ուրիշ կերպ տարբերիլ անկէց:

2. Գէորգայ օրինակը, պարխեան թիւ 57 ձեռագիրն և Էջմիածնի թիւ 920 և 918 ձառընտիրներն ունին միայն՝ վան պիլիպոսինեան վախճանելոյ. սկիզբը նոյն է ընդ քնագրին: ԻԴ. ձառընտիրն՝ ունի վան պիլիպոսելոյ պէսքոճանելոյն. սկիզբն նոյն: Օրինակիս քնագրին հաւանօրէն նախընթաց ձեռագիրներէն մին եղած է, բայց ոգէտ գրչի ձեռքով խանգարուած է: Դ. ձառընտիրն ունի՝ վան պիլիպոսինեան վախճանելոյ պէսքոճին սուրբ Տէրն. սկիզբն նոյն է: Իսկ Երուսաղեմի բոլորգրի խորագիրն է՝ Թուաղն պիլիպոսինեան վան վախճանելոյ պէսքոճին, և սկիզբն՝ Որ է սուրբ հայրն Երդ: Հաւանօրէն այս երկու օրինակներս՝ կամ հին երկաթագրին, և կամ անոր խմբին վերաբերեալ ձեռագրէ

յոյն վերին, և այլն, ՅՈՎՀ. Մանդակունւոյ մակագրուած է Գէորգայ օրինակին, մեր ԻԴ. ձառընտրին, Երուսաղեմի հինգ օրինակաց և Էջմիածնի թիւ 920 և 918 ձառընտիրներու մէջ: Պարխեան թիւ 57 բոլորգրի և Երուսաղէմեան նօտրագիր օրինակի մի մէջ միայն Եփրեմի մակագրուած գտայ: Մեր Դ. ձառընտիրն առանց անուան հեղինակի կը խորագրէ:

ԻԴ. Ողբ+[1]. Խոստովանողք փութացարուք, և այլն, ՅՈՎՀ. Մանդակունւոյ մակագրութեամբ կը գտնուի նաև Երուսաղեմի ցայժմ յիշուած բոլորգրին, թիւ Դ. 972 նօտրագիր օրինակի և մեր Բ. ձառընտրի մի մէջ, անթերի խակղբանէ. բոլոր միւս օրինակաց մէջ կը պակսի ճառս չափական:

Աղաւ+ նոքի[2]. Ով որ անեղդ ես և անստեղծ, և այլն, ՅՈՎՀ. Մանդակունւոյ կը մակագրեն Երուսաղեմի բոլորգիր օրինակն և թիւ 972 նօտրագիրն: Մատենադարանիս չորս Աղօթագիրք՝ Ս. Մես-

մի ընդօրինակուած են: Առաջնոյն սա պէքն բառերն յաւելուած են. իսկ վերջինին վան՝ կարծեմ թէ ոչ. այսու քնագիրն ևս կը սրբագրուի:

1. Երուսաղեմի յիշեալ օրինակաց առաջնոյն մէջ խորագիրն է՝ Ողբ+ է վերջ անապատիս ծեսուրց: Իսկ վերջնոյն մէջ՝ Ողբ+ յաղթ+ ծեսս ես ապաչխարեցաւ և ոչ ապաչխարէր (ոց): Ի թուին Հայոց ՊՆԳ=1404 ի կաուց գրուած Բ. ձառընտիրն՝ ունի համաձայն Երուսաղեմի բոլորգիր օրինակին: Այս երկուքը կամ իրարմէ ընդօրինակած են, և կամ աւելի հնագոյնէ մի, որմէն է երկաթագիրն: Դիտելով, որ մեր հին երկաթագրին մէջ պահուած յիշեալ Ողբին միացեալ տողերն՝ առանց ինչ տարբերութեան նոյն են երուսաղէմեան բոլորգրի պարունակածին հետ, կրնանք ըսել, որ ինչպես այս՝ մեր երկաթագրէն, այսպէս ալ թիւ 972 նօտրագիր օրինակն՝ մեր թիւ 215 բոլորգրէն ընդօրինակուած է, ուր նոյնպէս Ողբ+ ՅՈՎՀ. ծեսս ես ապաչխարեցաւ և ոչ ապաչխարէր խորագրուած է: Բայց որովհետև թիւ 215 բոլորգիրն, ինչպէս ըսինք, Մանդակունւոյն հետ բնաւ վերաբերութիւն չունի, այլ է Հաւատոմն յորդորակաց ՅՈՎՀ. Ոսկեբերանի, և Ողբ+ յաղթ+ ծեսս ես, և այլն, խորագրի նեղբև եղածն յորդորակ մ՚է արձակ և բոլորովին տարբեր. ուրեմն երկաթագրի հնագոյն և անկեալ խորագիրն ևս երուսաղեմի բոլորգիր օրինակին յար և նմանն ըլլալու էր անտարակոյս:

2. Երուսաղեմի բոլորգրի խորագիրն մի և նոյն է քնագրին հետ. միայն թէ նոքին բառէն անմիջապէս վերջ գրուած է ԺԲ: Այս երկոյթս նշան է, թէ կամ նոքին բառէն անմիջապէս վերջ գրուած է ԺԲ: Այս երկոյթս նշան է, թէ կամ այս Աղօթքս ԺԲ. րորդն է, որով կարելի է հետևցնել անոնց ամբողջ Աղօթագրքի մի դասակարգութիւնը: Սկիզբն ևս՝ Ով որ անեղդ ես բառերով կը սկսի: Իսկ թիւ 972 նօտրագրի խորագիրն է՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂՕԹԻՑ, որ աւելի Դ. ճառին կը պատչաճի քան թէ ասոր: Ընդօրինակութիւնը չունէի ի ձեռին իմ ասուգելու համար, սակայն ինձ այնպէս կ՚երևի, թէ այդ՝ Մանդակունւոյ աղօթքէն բոլորովին տարբեր ճառ մ՚ըլլալու է: Հաւանդ վրդէ մէջ եղածը՝ մասն մի միայն է ի սկզբանէ աղօթից: Իսկ Մեսրոպեան ընծայուածը՝ կիսով չափ հավիս թէ նմանութիւն ունի երկաթագրի մէջ եղածին, և այն իսկ զգալի տարբերութիւններով. իսկ միացածը բոլորովին աննման:

բովրայ մակագրած են. իսկ ի վաթ Հաբանոյ, ընդհակառակն, Եփրեմի կը մակագրուի:

Իե. Յաղագս պետից տաճինորենան իրապա[1]. Յառաջ քան զամենայն առաքինութիւնս, և այլն, Յովհ. Մանդակունւոյ մակագրուած է Երուսաղեմի բոլորգիր օրինակին մէջ: Պարիսեան թիւ 57 օրինակը՝ Եփրեմին կը մակագրէ. Հաբանոյ Վաթը՝ Մովսէսի միայնակեցի անուամբ մէջ կը բերէ: Կլիմաքեայ ե. օրինակը Յովհ. Ոսկեբերանի կը մակագրէ:

Յաղագս պետից պեթիչ[2]. Աբար Աստուած զմարդն, և այլն, Յովհ. Մանդակունւոյ մակագրած են Գէորգեայ օրինակն, Երուսաղեմի բոլորգիրն և Էջմիածնի թիւ 918 և 920 ձառընտիրներուն: Պարիսեան օրինակին մէջ՝ Եփրեմի կը մակագրուի. իսկ Հաբանոյ Վաթոյ գրեթէ ամէն օրինակք՝ երանելւոյն Մակարայ գիտնաւորի կը մակագրեն:

Իզ. Թուղի վան հմայիչ պէտրոսականաց և անաբէն յոհաննուայ[3]. Աս-

1. Երուսաղեմի բոլորգիր օրինակի խորագիրն է՝ Յաղագս պետից տաճինորենան իրապա՝ Խրտ Հարց: Սկիզբը նոյն է ընդ երկաթագրին. վերջին երկու բառերն իբրև յաւելուած յետոյ ուրեմն ներմուծուած են, որով կարելի է ըսել, թէ այն ճառն իսկ Հաբանոյ Վաթինն՝ քան թէ հին երկաթագրէն ընդօրինակուած ըլլալու է: Ձիչդ այդ խորագիրն և սկզբնաւորութիւնն ունի նաև պարիսեան օրինակը. հաւանօրէն ընդօրինակուած է վերջինս՝ յառաջնոյ անտի, և կամ անոր բնագրէն: Կլիմաքեայ ե. օրինակն ունի ընդհակառակն՝ Խրտ Վաթոյ տաճինորենան, և այլն. սակայն այս վերնագիրս կը յարմարի աւելի Մանդ. Ա. ճառին, և իրօք ալ «Ոչք սուրբ Հոգւոյն են ցանկացեալ» բառերով կը սկսի: Հարանոյ վարքն ունի՝ Որ տաճինորենան Խրտ. «Երկիւղն Աստուծոյ մեծ է», և այլն: Վարք Հարանոյ՝ օրինակած է յերկաթագրէն:

2. Գէորգեայ օրինակն և Էջմիածնի թիւ 918 և 920 ձառընտիրներուն ունին ընդհակառակն՝ Վան յանցանաց. սկիզբը մի և նոյն է երկաթագիր բնագրին հետ: Այս երեք օրինակներէ՝ առաջինն և վերջինը՝ թիւ 918 օրինակէն ընդօրինակած են զայն և կամ հասարակաց բնագրէ մի: Պարիսեան օրինակն ունի՝ Վան սրտղղութեան Խրհրդոյ տա սրս կոչին տպրել յայնժամ, յաղագս տիպից: Երուսաղեմի բոլորգրի մէջ ևս խորագրուած է. Վան սրտ տ ղղութեան Խրհրդոյ՝ տա սրս կոչին տպաթել յայնժամհե, յաղագս տիպից: Սկիզբն երկաքանչիւրին նոյն է հին երկաթագրին հետ: Գրչագրացս վերջինը՝ հաւանօրէն յառաջինէն ընդօրինակած է, բայց անվարժ գրչութեամբ և խանգարելով զայն: Իսկ Հարանոյ վարքն ունի Հարցաստ վան սրտղղութեան Խրհրդոյ: Սկիզբը նոյն է ընդ երկաթագրին, և վերջինս մէկ ու կէս երես նուազ է ի վերջկոյս՝ քան Հարանոյ վարուց մեզ ընծայածը: Ուստի կրնանք ըսել, թէ երկաթագիրը՝ Հարանոյ վարքի հնագոյն օրինակէ մ՝ ընդօրինակած է, և երկու գրչագիրներս իրարմէ անկախ են:

3. Երուսաղեմի բոլորգիր օրինակին մէջ ճառիս թէ խորագիրն և թէ սկիզբը նոյն է. առաջին բառս՝ Թուղի՝ միայն կը պակսի: Այսպէս ունի նաև պարիսեան

նոյր առնէր ոչ գգլուխ իմ, և այլն, Յովհ. Մանդակունւոյ մակագրած են Երուսաղեմի բոլորգիրն և թիւ 972 նօտրագիր օրինակը: Պարիսեան թիւ 57 օրինակն՝ Եփրեմի կը մակագրէ:

Կանոն[1]. Աբդ ես զայս իմռամս գիտելոյ ասեմ, և այլն, Յովհաննու Մանդակունւոյ մակագրուած է մեր թիւ 1177, այն է՝ Բ. Կանոնագրին և Արշամունեաց բոլորգիր կանոնագրոց մէջ:

Յաղագս տաճառնորդական պահոցն, և քաղքաքոնիկոն նոքա ընդ զատկականին[2]. Աբդ վան զի պահոց քառասնորդ կոչի, և այլն, Յովհ. Մանդակունւոյ կը մակագրեն ի թուին Հայոց ՉԼԹ գրուած Տօնապատճառն, Երուսաղեմի թիւ 76 օրինակն, մատենադարանիս Սկրատայ Ա. օրինակն, Վատիկանի (Cod. Arm. VII) ԺԴ. դարուն գրուած ձեռագիր[3] մի, որոյ անունն է Հաւաքածոյ կրօնական խնդրոց, և ի թուին Հայ. ՉԽՐ=1299, գրուած Թէղնոյ Եղբօն:

Ի սուբբ Երբորդութենէն և ի Ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ[4].

թիւ 57 բոլորգիրն: Անտարակոյս երկուքն ալ մի և նոյն հնագոյն բնագրէն ընդօրինակած են: Իսկ երուսաղեմեան թիւ 972 նօտրագիրն ունի՝ Յաղագս ու հաւատալ (ոյ) հմայիչ հաւընկերոյս և որ ինչ նման են: Այս խորագիրս՝ կամ հաւաքոյի ձեռքով փոխուած է, և կամ նոյնանիւթ՝ բայց ուրիշ ճառի մի կը վերաբերի, կարծեմ:

1. Այս և յայսորդ ճառերը՝ կը պակսին հին երկաթագրի կամ բնագրին մէջ. ուստի խորագիրներն ալ 1860 ի տպագրութենէն մէջ կը բերուին: Բ. Կանոնիցն՝ մեր ԻԴ. գրեալ ի թուս. հայ. ՌՃԺԼ=1668, ունի՝ Բան կանոնաւոն. սկիզբը նոյն է: Տպագիրն՝ ուրիշ օրինակի մի վրայէն եղած ըլլալու է, և կամ տպագրողք հմտաւորեցան

Սրբոյ և անզուգական երրորդութեան, և այլն, Յովհ. Մանդակունւոյ մակագրուած է մեր ԺԳ. մեծադիր հին բոլորգիր ճաւընտրէն, Երուսաղէմի թիւ 972 նօտրագիր օրինակին և Էջմիածնի թիւ 920 ձառընտրի մէջ։

Վան պէրդ. Աստուած սէր է, և այլն, Յովհ. Մանդակունւոյ[1] մակագրուած է մատենադարանիս Մաշտոցներէն միոյն և Վարդանայ Մարաթացւոյ Բ. Աղօթագրքին մէջ։

Բան խրատու ա՛ս ճգնաւորս[2]. Գանգի գրեալ է և պատուիրեալ, և այլն, Յովհ. Մանդակունւոյ անուամբ մակագրուած է Աղօթամատեանի մի մէջ, որ գրուած է ի թուի. ՊԺԳ. և յամին 1852 կը գտնուէր յարդ. Մատ. Վիեննայի, Էնճիլէճեանի հաւաքման թիւ 26 ձեռագրին և Երուսաղէմի գրչագիրներէն միոյն մէջ։

Խորագիրը քոլորովին տարբեր է, այսինքն է՝ Վան պահոց և աղօթից. իսկ Էջմիածնի թիւ 920 ձառընտիրն ունի միայն Վան պահոց, և տպագրեալին հետ նոյն է։ Այս անյարմար խորագիրս չդիտեմ, թէ ինչ պատեհաւ դրուած է ձառից վրայ. ինձ այնպէս կ'երեւի, իբր թէ ըսէր *տրուղ կամ ընդերցուածք վան պահոց*։

1. Յիշեալ Մաշտոցի մակագրութիւնն և սկիզբը նոյն են տպագրեալին հետ, բայց խառնակութիւն մի կը տեսնուի Մանդակունւոյ և Պլուզ անունից մէջ։ Աճապարիկ մակագրութիւնը. Երանելոյն որ Մանդակունւոյ Պլուզ ասէ, ասացեալ վան պէրդոյ. Աստուած սէր է, և այլն։ Խնդարուած է հօս հին ընագիրն, և որ դէմանունը Պլուզի քով փոխագրելի է։

2. Երուսաղէմայ օրինակն ունի այսպէս. Խրատ ճգնաւոր երջանկասրոյ և յանդիմանութեան ձայնէ և արհամարհողաց զղջութեան թուրան։ «Եւ» էն վերջ եկող խօսքերն յաւելուած կ'երեւին, և անյարմար սոյն ճառի պարունակութեան։ Էնճիճեանի ձեռագիրն ունի՝ Յովհաննու Մանդակունւոյ՝ խրատ առ ճգնաւորն։

ԳԼՈՒԽ Ե.

ԱՐԴԻՒՆՔ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ՄԱԿԱԳՐՈՑ ՁԱՒԻՑՆ

Արդ՝ համեմատական դիտողութեանցս արդիւնքն ամփոփելով՝ կը տեսնենք, նախ, որ Ա, Բ, Գ, Դ, Ե, և ԻԲ ճառերն ընծայուած են, — այլևայլ օրինակաց մէջ, — թէ Յովհ. Մանդակունւոյ, թէ Յովհ. Ոսկեբերանի, թէ Եփրեմի։ Երկրորդ՝ Է, Ը, Թ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, Ի, ԻԱ, ԻԲ, և ԻԳ. բորդ ճառերն ընծայուած են ձեռագրաց մեծագոյն մասին մէջ Մանդակունւոյ, և ոմանց մէջ ալ Եփրեմի։ Երրորդ՝ Զ, ԺԱ, ԺԸ, ԺԹ, ԻԷ, ԻԸ, ԻԹ, և Լ. բորդ ճառերն գրեթէ առհասարակ ամէն ձանօթ օրինակաց մէջ բացառութեամբ Յովհ. Մանդակունւոյ անուամբ միայն մակագրուած են։ Ժ. բորդը մակագրուած է, — օրինակներէն ոմանց մէջ, — Յովհ. Մանդակունւոյ, ոմանց՝ Յովհ. Եզընկացւոյ, և ոմանց մէջ ալ Եփրեմի։ Ե. բորդ ճառը՝ բաց ի Յովհ. Մանդակունւոյ, Յովհ. Ոսկեբերանէն և Եփրեմէն, Երուսաղէմայ գրչագրի մի մէջ Բարսղի ևս մակագրուած է։ Չորրորդ՝ այն հնագոյն և ընտրելագոյն օրինակները, — զորս բուն ներկայացուցիչ կրնանք անուանել ճառերուս, ինչպէս տեսանք նախընթաց երկու գլուխներուն մէջ, — 20–26 ճառերն առհասարակ միայն Յովհ. Մանդակունւոյ ասացեալ կը մակագրեն, առանց ուրիշ հեղինակ ճանաչելու. և այս կէտս ամենէն աւելի ուշագրաւն է ըստ իս։ Այս կէտս յառաջ եկած ընդարձակ դիտերու բնակեդրոնն, ինչպէս նաև ապակեդրոնացման բուն պատճառն ձառներն յետոյ ուրեմն կը յուսանք մատնանիշ ընել։ Հինգերորդ՝ այն գրչագրերն իսկ՝ որոնք ընդհանրապէս կամ Եփրեմի մակագրել ուզած են, — ինչպէս օրինակ ի մեր Դ. ձառընտիրն, — և կամ Յովհ. Ոսկիբերանին մակագրած են, — ինչպիսիք են մեր Ե. Ոսկեփորիկն, ԺԴ. ձառընտիրն և Երուսաղէմի թիւ 972 նօտրագիրն, — մասնական բացառութիւններ ևս կը ներկայացնեն հետախուզին առջև. այս ինքն է, մի և նոյն գրչագիրք՝ երբեմն մէջ բերած ձառերէն զոմանս առանց անուան հեղինակի կը մակագրեն, եր-

բեմն այս ինչ ճառն՝ Եփրեմի և այն ինչ ճառն Յովհ. Ոսկեբերանի, հուսկ երբեմն ալ Յոհ. Մանդակունւոյ:

Այս ակնյայտնի և չօշափելի կէտերս նկատողութեան առնելով, այժմ հետեւեալ հարցը կ'ելնէ մեզ ընդառաջ. կարելի՞ է արդեօք, մի և նոյն ճառերն՝ իրօք իրարմէ բոլորովին տարբեր 3–5 հեղինակաց միանգամայն արտադրութիւն եղած ընդունել:

Դէթ վերոյիշեալ պարագային և հանգամանաց մէջ, զորս ընծայեցուցին մեզ դեռ քիչ յառաջ յիշուած գրչագիրք, կը պատասխանեմք, թէ ո՛չ բնաւ: Այս բացատական պատասխանս՝ այնու մանաւանդ աւելի բանաւոր և հիմնաւոր կ'երեւի ինձ, երբ աւագ աչօք դիտենք մատենադարանիս հնագոյն երկաթագիրը, զոր ես կ'ախորժիմ նոյն իսկ բնագիր անուանել յետագայ օրինակաց. վասն զի առ մէջ վերոյիշեալ 26 ճառերու բոլոր խորագիրներն՝ առանց յիշեալ Հայերէն միայն կամ միւսին անուամբ մակագրուած են: Բոլոր ճառերուս հեղինակը մի միայն համարուած է, և այդ հեղինակի անունն անտարակոյս գրուխմուած էր երկաթագրիս ճակատին, կամ լաւ ևս Նախագրութեան վրայ, զոր յետոյ կը յաւամ պարզել: Ասոր իւր տեսակին մէջ այս միակ և հնագոյն օրինակը դնելով իրրև հիմն այլոց ամենեցուն, բոլոր խնդիրն իսկ իւր բազմապատիկ կնճիռներով կը ծանրանայ անոր վրայ: Իսկ այդ կնճռոտ խնդիրը լուծելու համար՝ երեք ենթադրութիւններ կարող են լինել. Ա. կամ ի նախնեաց անտի կայր հայերէն թարգմանութեան ծաղկաքաղ Հաւաքոյ բանից կամ ճառից նախնեաց՝ անանուն, յորմէ ապա դաղափարեցան հին երկաթագիրն մեր և ուրիշ օրինակներ: Բ. կամ Յովհ. Ոսկեբերանը կամ Եփրեմ եղած է առանձին հեղինակ յիշեալ ճառերուն, որոնք մինչև ԺԱ. դարու վերջերը դեռ ի մի հաւաքուած չէին, բայց ցիր և ցան կը գտնուէին Տօնապատճառներու և Ճառընտիրներու մէջ. և թէ ԺԲ. դարու սկիզբներն առաջին անգամ խմբագրուեցան ի մի. և թէ այդ խմբագրութեան առաջին և կատարեալ ներկայացուցիչն եղած ըլլայ մեր յիշեալ երկաթագիր օրինակն: Գ. Եւ կամ ըսել, թէ նա ինքն Յովհ. Մանդակունի գրած և խօսած էր այդ քարոզները կամ յորդորակները, որոնք իւր մահուանէն վերջ հաւաքուեցան և կազմեցին ամբողջ գրուածք մի:

Առաջին ենթադրութեամբ՝ վերոյիշեալ ձեռագրաց, և ի մասնաւորի հին երկաթագրի ընծայած հանգոյցներն աներևոյթ անլուծանելի կը մնան, և մենք ստիպուած ենք առարկելու այսպէս. Եթէ ատուգիս եղած ըլլար այնպիսի Հաւաքոյ ճառից սրբոց Հարց՝ ան-

անուն, ինչպէս կարացին ուրեմն յիշեալ ճառերու հաւաքողք՝ անոնց վրայ Եփրեմի, Ոսկեբերանի և այլոց անուանքը մակագրել. իսկ եթէ այլևայլ Հարց անուամբ մակագրուած էր մէն մի ճառ, ինչպէս կ'ըլլայ՝ որ յիշեալ ձեռագիրներէն ամենէն հնագոյնն՝ այն է երկաթագիրն, առանց անուան ուրուք ընդօրինակեց զանոնք առ հասարակ: Երկրորդ՝ հին երկաթագրի նախագրութեան հեղինակն իսկ՝ զոր խօսեցնել պիտի տանք, որոշակի մի միայն հեղինակ կը ճանչնայ վերոյիշեալ 26 ճառերուն: Ուրեմն այս ենթադրութիւնս ոչ միայն հաստատուն կառուան մի չունի իրեն ի նպաստ, այլ նոյն իսկ իրրև հակառական՝ վերոյիշեալ ձեռագրաց աւանդածին՝ մերժելի է:

Երկրորդ ենթադրութեան նկատմամբ՝ դիտելու ենք նախ, որ իրաւցնէ Եփրեմի և Ոսկեբերանի անուամբ մեզ հասած հարազատ և անհարազատ ճառերու մէջ, զորս կ'ընծայեն մեզ նոցա գործոց յոյն և լատին հրատարակութիւնք, և փոա ինքնին՝ իւր Մատենադարանին մէջ, կան նոյնանիւթ և մի և նոյն խորագրութիւններ կրող մի քանի ճառեր, բայց բաղդատելով դոցա բնագիրը՝ խնդրոյ նիւթ եղող 26 հայերէն ճառերուն հետ, անոնցմէ և ոչ մին գտայ նոյն վերջնոցս հետ, ոչ ըստ սկզբնաւորութեան ոչ ըստ վերջաւորութեան և ոչ իսկ ըստ ամբողջական բովանդակութեան: Այս ինչ կամ այն տեղւոյն մէջ կը նկատուին, այո՛, երկուստեք ինչ ինչ նմանութիւնք գաղափարաց և առութեանց, բայց այսպիսի մանանկան և սովորական երևոյթներ՝ ընդհանուր և անսովոր հետեւութիւն մի յառաջ բերելու անբաւական են: Մի և նոյն գործոզութիւնը կատարեցի նաև Ոսկեբերանի և Եփրեմի հայերէն թարգմանուած ճառերու վրայ, բայց նախընթացէն աւելի նոր արդիւնք մի չի տեսայ: Երկրորդ՝ դիտելու ենք, որ Մանդակունւոյ անուամբ հրատարակուած ճառերէ՝ Եփրեմի մակագրող գրչագիրք, այսինքն է մեր թիւ 985 Դ. Ճաւընտիրն բոլորգիր և պարխեան թիւ 57 օրինակն՝ ԺԴ. դարէն յառաջ գրուած չեն կրնար ըլլալ: Արդ եթէ կար իրօք Եփրեմի անունը կրող հնագոյն բնագիր, ուակից այդ երկու գրչագիրք օրինակութեան, ինչպէս կարէին ուրեմն Կլիմաքոսի ե. օրինակն, մեր ե. Ոսկեփորիկն և Երուսաղեմի թիւ 972 նօտրագիրը՝ փոխել Եփրեմի անունն, և անոր տեղ Ոսկեբերանինը մակագրել: Այս և ուրիշ պատճառաց վրայ հաստատուած՝ եզրնակացուցոյ և Բարսղի հետ՝ Եփրեմն ևս ուրեմն դուրս հանելու է, ըստ իս. կը մնան Յովհ. Ոսկեբերան և Յովհ. Մանդակունի. և ասոնցմէ

մին կամ միւսը պէտք է, որ եղած ըլլայ հեղինակ յիշեալ ձառերուն:

Ոսկեբերանի մակագրութեամբ 5–16 ձառեր ներկայացնող այս երկք ձեռագրերս իսկ համեմատութեամբ միւսներուն չատ նոր են. ուստի լինչ որ Եփրեմի մակագրող գրչագրաց համար ըսուեցաւ, նոյնը կը հետևի նաև ասոնց հեղինակութեան մասին: Սակայն Երուսաղեմի թիւ 972 նօտարագրի գէթ բնագիրն, ուսկից ընդօրինակուած է, և մատենադարանիս հին երկաթագիրը՝ բաւական զօրեղ կռուաններ կը մատուցանեն, իրենց մէջ պարունակուած ձառերն Ոսկեբերանին ըլլալու. որոնք եթէ աւելի զօրեղ և չշփոթելի փաստերով չի մերժուին, հետևութիւնն այլ ևս անհերքելի պիտի մնայ: Յառաջ բերենք նախ այդ կռուանները:

Աբդ՝ այս երկու ձեռագիրներէս առաջինն, – լինչպէս ըսուեցաւ, – կ'աւանդուի, թէ ընդօրինակուած է ի թուս. Հայոց ՉՃԾ=1201, ի Սիս գրուած հնագոյն օրինակէն, որ կը կոչուի, – ըստ յիշատակարանին[1], – Անդրէանդեայ ճառ (21) և Ներքողեան (81) որքան ցովհաննու ասացեալ, և ընդմանեալ ի թուս. Հայոց ՉՃԻԷ: Իսկ այս բնագրէս յամին 1714 ընդօրինակուած յիշեալ նօտարագրի 16 ձառերու գրեթ խորագրերը զոր մէջ բերինք, փոքր լինչ տարբերութեամբ նման են ցովհ. Մանդակունւոյ Դ, ԺԱ, ԺՉ, ԺԴ, ԻԱ, ԻԴ, Ա, ԻԴ, ԻԸ, ԻԹ, Ժ, և Գ. բորգ ձառերուն. ուրեմն հետևութիւնն յայտնի է:

Սակայն անաչառ քննադատութեան բովէն անցնելով նոյն իսկ Երուսաղեմի թիւ 972 նօտարագրի ի թուս. Հայոց ՉՃԾ բնագիրը, կը տեսնենք, որ այդ տարեթուին ի մի խմբագրուած Ոսկեբերանի թէ Անդրէանդեայ կոչուած 21 ձառերն և թէ միացեալ 81 ձառերն ի թուս. Հայ. ՉՃԻԷ նոր թարգմանուած չեն Գրիգորիս կաթողիկոսի և Լևոն թագաւորի ժամանակ, այնու մանաւանդ որ հին թարգմանութիւնք առձեռն պատրաստ կային արդէն. այլ միայն գաղափարուած կամ ընդօրինակուած են: Ուստի յիշատակարանի ընդմանեալ բացատրութիւնն իսկ այս նշանակութեամբ միայն հասկնալու է: Եւ իրօք այս բանիս ունինք կրկին և չշփոթելի փաստեր: Ա. Էջմիածնի մատենադարանին մէջ կան Անդրէանդեայ ճառերը պարունակող երկու օրինակներ, որոնք յիշեալ թուականէն չատ աւելի յառաջ գրուած են, ըստ ծանօթ յիշատակարանաց[2], այսինքն

1. Հայ. թուբգմանութիւն Նախնեաց, Վենետիկ 1889:

2. Տես այդ յիշատակարանները, Հայ. ընդմանութիւն Նախնեաց, ապ. ի Վենետիկ 1889, էջ 604–606:

է՝ մէկը գրուած է ի թուս. Հայ. ՆՂԼ=1048, իսկ միւսն ՈՒ թուին=1191: Բ. Մեր մատենադարանի թիւ 215 հին բոլորգիր ձեռագիրն[1] ևս՝ որ կը պարունակէ ցովհ. Ոսկեբերանի 81 ձառերը. նոյնը բոլորովին կը պարզէ ոչ միայն Երուսաղեմի թիւ 972 գրչագրին և անոր բնագրին, այլ նոյն իսկ Ոսկեբերանի ձառերու դասակարգը: Աբդ մեր ձեռագրի այս 81 ձառերու խորագրերը բաղդատելով Երուսաղեմի նօտարագրի պարունակած 81 ձառերու խորագրոց[2] հետ, ըստ ամենայնի համաձայն գտանք իրարու: Իսկ որովհետև մեր ձեռագիրն հաւաքումն է միայն Ոսկեբերանի յիշեալ 81 ձառերուն՝ առանց Անդրէանդեայ, ուրեմն այսպէս ըլլալու էր նաև ի թուս. Հայոց ՉՃԾ ի Սիս ընդօրինակուած բնագիրն ևս, յորմէ երուսաղէմեան գրչագիրն ընդօրինակուած է, և պատահաբար միայն միացած է Անդրէանդեայ ճառերուն հետ, պահելով հաւատարիմ նօրէն իւր յատուկ յորջորջումը՝ Գէթ կամ ժողովածոյ ճառից: Թէ ատուգիւ այս էր տիտղոս հին բնագրին, բաւական է յիշել, որ ճառընտիրներէ ոմանք Ոսկեբերանի յիշեալ ճառերէն զոմանս ընդօրինակելով կը յարեն անմիջապէս խորագրին՝ նաև յաւելուածս՝ է ջրոց ժողովոյ: Միով բանիւ Երուսաղեմի թիւ 972 նօտարագիրն կամ ընդօրինակուած է մեր թիւ 215 հին բոլորգրէն, և կամ լինչպէս ես կը կարծեմ, եղած է երկուքին հասարակ դեռ մի այլ հնագոյն[3] բնագիր: Ուրեմն մեր թիւ 215 ձեռագրով, – որ յիշուած չէ բնաւ Հայկական ընդմանութեան Նախնեաց հրատարակութեան մէջ, և որուն հետ այս էջս գրած ժամանակ ծանօթացայ, – վերջնականապէս կ'որոշուին հետևեալ կէտերն, որոնք մեզ համար աւելի կարևորութիւն ունին. Ա. թէ այս 81 ձառերը (յայտ է թէ այն 16 ձառերով ի միասին,

1. Այս պատուական ձեռագիրս, – յէջ 180 և 387 համառօտ յիշատակարանութեան համաձայն, – գրուած է ցովհ Ա. Կլայեցի կաթողիկոսի հրամանով, այսինքն է՝ 1270–1289 ամաց միջոցին: Մեծ. 24×17: Գրչ. բոլորգիր ընտիր: Նիւթ՝ թուղթ զեղնագոյն մոյգ, և թանաք՝ թուխ գղձորային: Քանակ. 786 երես, միասին: Տողք 21: Կազմ՝ կաշեայ թանձր, զարդարուն: Հանգամանք՝ լաւ պահուած է և գրեթէ թէ կրնանք ըսել ամբողջ. միայն սկիզբէն ձառերու ցանկը և առաջին ձառին կէսը լինկած են, որ և յետին գրչութեամբ և ապիտակ թղթի վրայ պէտք եղած է նորոգած են, որ և յետին գրչութեամբ և ապիտակ թղթի վրայ պէտք եղած է նորոգել: Այսպէս է նաև վերջին թերթը: Էջ 1–4 է վերջին հատուած Գ. ճառին Ոսկեբերանի. Այսպէս է նաև վերջին թերթը: Էջ 5–7 էջերը կը պարունակեն վերի մասն Զ. բորգ քերանի ընդդէմ Անոմեանց. իսկ 5–7 էջերը կը պարունակեն վերի մասն Զ. բորգ ճառի նորին՝ ընդդէմ Անոմեանց: Ձեռագիրս յիշատակ է էչմիածնի Կնիքով Տէր կոզպոսի երկայնաբազուկ Աբդուլեանց՝ գրուած վանայս, յամին 1829:

2. Տես Հայ. Ընդմ. Նախնեաց, Վենետիկ, էջ 608–611:

3. Օրինակ մ'ալ, թիւ 58 Պարիսու ազգային մատենադարանին մէջ կայ, բայց ժէ. բորգ գարուն գրուած է, հետևաբար երկուքէն ալ նոր:

զոր ի վեր անդր ցանկեցինք) որոնց պարզ խորագրերը մէջ բերած է յիշեալ երկասիրութեան հեղինակին՝ ուսումնասիրաց համար իբր շահագրգիռ նորութիւններ, ուրիշ բան չեն՝ բայց եթէ Յոկեբերանի Պօղոսէ Ընդոց և Մարդկէ Ծնողութեան, և այլն, Յորդորներ, որունք ԺԲ. բորդ դարէն վերջ հաւաքուեցան ի մի, անծանօթի մի ձեռքով, կրելով հաւանօրէն յիշեալ խորագրերն և ինչ ինչ փոփոխութիւններ կամ յաւելուածներ. այս կէտով աւելի հետաքրքրական են: Բ. Այդ ճառերն գրեթէ ամբողջովին նախնեաց թարգմանութիւնք են, և ոչ թէ Գրիգորիս կաթողիկոսի ժամանակ: Գ. Այս ճառերս 12–16ը, զոր իբր նոյն և նման Մանդակունւոյ 1860ի հրատարակութեան նոյնաթիւ և նոյնանիւթ ճառերուն՝ երկբայութեամբ միայն մէջ բերինք, այժմ կարեմք վստահացնել, թէ սկիզբէն մինչև ցվերջ բոլորովին տարբեր են անոնք՝ վերջիններէս, նմանութիւններ միայն երբեմն երբեմն կը նկատուին երկուսանք: Դ. Թէ այն ձառընտիրք և գրչագիրներ, որունք յիշեալ խմբագրութենէն վերջ գրուած են և կը պարունակեն աւելի կամ պակաս Յոկեբերանի մի և նոյն խորագրերով ճառեր, մեծաւ մասամբ անկէ ընդօրինակուած են, և գուցէ թէ նոյն իսկ ընդարձակուած: Այսպէս է օրինակի ազագաւ մեր ե. Յոկեփորիկի ընծայածը, զոր կարեմք դուրս թողուլ: Այսպէս ուրեմն կը մնան Յոկեբերանի մակագրող երկու նորագոյն ձեռագրեր միայն, այս ինքն են՝ Կլիմաքսի ե. օրինակն և մեր ԺԴ. ձառընտիրն, և այն իսկ՝ 4–5 ճառեր միայն: Եւ այս ալ ըսենք, որ Կլիմաքսի ե. օրինակը՝ ԺԴ. ձառընտիրն ընդօրինակած է այն ճառերը:

Իսկ գալով մեր հին երկաթագրին, դիտելու ենք, որ ձեռագիրս յաջորդաբար և մի առ մի, — առանց ուրիշ գրութիւններով ընդմիջելու, — կ'ընդօրինակէ ՅՁ. Մանդակունւոյ ԻՉ ճառերը. բայց ԻՉ. բորդ ճառն աւարտելէն վերջ, յէջ 385, անոր յաջորդ ճառն այսպէս կը մակագրէ, — մի և նոյն երեսին վրայ. — Ներսին Յոհաննու Յոկեբերանի սասցեալ յաղագս Ներսիսի. Աղաւթեացուք հանապազ, և այլն: Արդ՝ ասկէ պիտի հետևէր ըստ ինքեան, որ բոլոր նախընթաց ճառերն ևս ՅՁ. Յոկեբերանի եղած ըլլան, ապա թէ ոչ Ներսէն, այսինքն է՝ դարձեալ՝ բացատրութիւնը նշանակութիւն չէր ունենար. սակայն իրն ինքնին այսպէս չէ, նկատելով անկէց աւելի զօրեղ պարագաները:

Արդ՝ այսպիսի մակագրութիւն մ'ալ կը գտնենք Գէորգայ օրինակի 29 ճառերու վրայ՝ այսպէս. Ներսէն տէրն Յովհաննու Մանդա-

կունեայ ասացեալ: Սակայն որքան բանաւոր է և դիւրահասկանալի բառս Ներսէն վերջնոյն մէջ, այնքան ևս անյարմար է առաջինին մէջ. վասն զի Գէորգայ օրինակի Ա. ճառէն վերայ նախ քան զամենայն մակագրուած է հեղինակի անունն, Սբբոյն Յովհաննու Հայոց Պետոց հայրապետի Մանդակունւոյ ասացեալ. իսկ երկաթագրին մէջ, ընդհակառակն, Ա. ճառէն սկսեալ՝ մինչև վերջինը՝ և ոչ միոյն վրայ հեղինակի անուն կայ, այլ լոկ նիւթին խորագիրը: Ըստ իս ուրեմն այդ խորագրէն ընդհակառակն կը հետևի, թէ նախընթաց 26 ճառերէն և ոչ իսկ մին կարէր Յովհ. Յոկեբերանին ըլլալ: Չէ կարելի այսպիսի մի եզական դժուարութենէն խուսափել, ենթադրելով, որ Գէորգայ օրինակի Ա. ճառէ պէս՝ մի ուրիշ մակագրութիւն ալ յանուն Յոկեբերանի կը գտնուէր ի հարկէ երկաթագրի գէթ Նախերբնան վրայ կամ 2–5 էջերու միջոցաւ, որ ինկած է. վասն զի այն ժամանակ վերոյիշեալ ճառի Ներսէն Յովհ. Ոսկ. և այլն, մակագրութիւնն իսկ աւելորդ կ'ըլլայ, և կամ Ա. ճառէն սկսեալ իւրաքանչիւրին վրայ ևս պէտք էր գրել զայն, այն ճառերէն մին կամ լաւ ևս ամէնքն ի միասին ուրիշ հեղինակի ըլլալու կասկած չտալու համար: Ուրեմն այս դիտողութենէս վերջ՝ պէտք է եզրակացնել, թէ «Ներսին Յովհ. Յոկեբերանի յաղագս Նեռին» մակագրուած ճառը՝ նախընթաց ճառերուն հետ, — որունք ամբողջ մարմին մի կը կազմեն, — բնաւ վերաբերութիւն չունի, այլ մի ուրիշ գրչագրէ ընդօրինակուած է: Ներսին Յովհ. Յոկեբերանի մակագրութեան բուն պատճառն այն է, — զոր և ուրիշ գրչագիրներէ գիտենք, — որ այդ ճառէն յառաջ Յոկեբերանի ընծայուած ուրիշ ճառ մ'ալ կար Յոաննէս Ոսկեբերան քաղաքին Կիլիկիոյ, և կոպտաբար աչքառնին. ուստի Մանդակունւոյ ճառերու հաւաքողն, կամ ընդօրինակողը՝ վերջինը միայն ընդօրինակելով՝ նիւթապէս անոր մակագրի՝ Ներսէն՝ բառն ևս պահած է: Բ. Դիտելու ենք, որ Յոկեբերանի ընծայուած այս երկու ճառերս իսկ երկբայականք են. ուստի նախընթացներն իրօք ևս եթէ Յոկեբերանի եղած ըլլային, սակայն զարձեալ անտեղի էր զանոնք իրարու չարայարել՝ իրրև մի և նոյն հեղինակի գործ: Այսպէս ուրեմն հին երկաթագրէն իսկ՝ գէթ արտաքին ձևով Յովհ. Յոկեբերանին աւելի՝ քան Յովհան. Մանդակունւոյ նպաստաւոր բան մի չընծայեր:

Այսուհետև դառնանք ուսումնասիրել հետևեալ նոր հարցը. Ո՞րն է արդեօք ճշգրիտ բնագիր Մանդակունւոյ ընծայուած ճառերուն, և թէ ինչ առընչութիւններ ունի միւս օրինակներուն հետ: Բ. Թէ

ուսոյի յառաջ եկած են նախընթաց ձեռագրաց մէջ եղած անհամաձայնութիւնքը, որով ամանք Եփրեմի, և ամանք Ոսկեբերանի, և այլն, մակագրած են։

ԳԼՈՒԽ Զ.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ՁԱՌԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՁՈՐՍ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԵՒ ԱՆՈՆՑ ԻՐԱՐՄԷ ՈՒՆԵՑԱԾ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Նախընթաց երկու գլուխներուն մէջ ընդհանուր կերպով տեսանք բոլոր մեզ ծանօթ գրչագրաց որպիսութիւնքն և անոնց ներկայացուցած ճառերու խորագրոց առանձնայատկութիւնները. իսկ այս գլխուս պիտի ցուցնենք ի մասնաւորի նախ այն ճառերու յաջորդութեան կարգը, չորս գլխաւոր օրինակաց՝ այսինքն է մեր հին երկաթագրին, Երուսաղեմի հին բոլորգրին, Պարիսու թիւ 57 բոլորգրին և Գէորգայ օրինակի մէջ, և անոնց իրարմէ ունեցած ընդհանուր տարբերութիւնքը, իրենց մերձաւորութիւններով և հեռագոյն խոտորումներով հանդերձ. որպէս զի միանգամ ընդ միշտ Մանդակունեայ ճառերու վաւերականութիւնը կամ անվաւերութիւնն՝ ընդարձակագոյն և հաստատուն հիման վրայ բարձրացուցած ըլլանք։

ՅՈՒՑԱԿ ԳԼԽԱՒՈՐԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ

Հին երկաթագիրն		Երուսաղ. օրէն.	Պարսկաստ. թիւ 57 օր.	Օր. Գէորգայ
Ա.	=	Ա.	Ա.	—
Բ.	=	Բ.	Բ.	ԺԸ.
Գ.	=	Գ.	Գ.	ԺԹ.
Դ.	=	Դ.	ԺԵ.	—
Ե.	=	Ե.	Ժ.	Ը.
Զ.	=	ԻԲ.	Թ.	Զ.
Է.	=	Զ.	ԺԱ.	ԺԶ.
Ը.	=	ԺԵ.	ԺԴ.	Դ.

Հին երկաթագիրն		Երուսաղ. օրէն.	Պարսկաստ. թիւ 57 օր.	Օր. Գէորգայ
Թ.	=	Ը.	Ի.	Գ.
Ժ.	=	ԺԱ.	ԻԱ.	Ժ.
ԺԱ.	=	Է.	ԺԶ.	ԺԴ.
ԺԲ.	=	ԻԴ.	Է.	ԺԳ.
ԺԳ.	=	ԻԴ.	Զ.	ԺԲ.
ԺԴ.	=	ԻԵ.	Ը.	—
ԺԵ.	=	ԻԶ.	ԺԲ.	Բ.
ԺԶ.	=	ԻԷ.	ԺԳ.	ԺԷ.
ԺԷ.	=	ԺԲ.	ԺԹ.	Թ.
ԺԸ.	=	ԻԸ.	ԻԶ.	—
ԺԹ.	=	Թ.	ԻԲ.	(ԺԹ).
Ի.	=	Ժ.	Ե.	Ե.
ԻԱ.	=	ԺԳ.	ԺԸ.	ԺԵ.
ԻԲ.	=	ԺԴ.	Գ.	Ա.
ԻԳ.	=	ԺԶ.	ԺԷ.	Է.
ԻԴ.	=	ԺԷ. (և ԺԸ.)	ԻԷ.	—
ԻԵ.	=	ԺԹ.	ԻԳ.	—
(ԻԶ).	=	Ի.	ԻԵ.	Ի.
(ԻԷ). ԻԶ.	=	ԻԱ.	ԻԳ.	—
—		—	—	ԺԱ.

Առաջին սիւնակի մասին դիտելու ենք, որ վառն պողոց և պարաքեաց ճառը՝ երկաթագրի մէջ, յԼ 90, Է. բորդ գրուած է փոխանակ Զ. բորդի, և վառն փոխոց եւ վաչխոց ճառն, ընդհակառակն Զ. բորդ նշանակուած է՝ փոխանակ Է. դի։ Այս յեռեւտաղութիւնս անտարակոյս ընդօրինակողի անուշադրութենէն յառաջ եկած է, քան թէ անոր նախկին բնագրէն։ Աւտր յայտնի ապացոյցը կը դանենք նոյն իսկ երկաթագրիս Նախաբրոնքան մէջ, — ուր իւրաքանչիւր ճառ իրեն յատուկ գլխակարգութեամբ մէջ բերուած է և համաձայնած, — որ վառն պողոց, և այլն, ճառը կարգաւ Զ. բորդ նշանակուած է իրօք. իսկ վառն փոխոց, և այլն, Է. բորդ։ Երկրորդ՝ վառն բաբիացողաց բարոց, և այլն, ճառն՝ որոյ խորագիրը Նախագրութեան մէջ ԺԲ. բորդ գլխով նշանակուած է, ձեռագրի մէջ իւր յատուկ տեղեամ կը պակսի։ Այս պակասս ընդօրինակողին վերագրելի չէ, այլ դիշատիչ կառնասին։ Եւ աստուկս երկաթագրիս թերթ առ

թերթ աչքէ անցնելով՝ տեսանք, որ թուղթ մի 2–5 երեսներուն մէջ ինկած է, ուրիշ մ՚ալ 182–185 էջերում, երրորդ մի՝ 332–335 էջերում, չորրորդ թուղթ մի կամ ալ ևս չկայ՝ ի վերջն ինկած է: Առաջին պակասով անհետացած է Նախագրութեան առաջին մասն, ուր կին տեղեկութիւնք գինչութեան մասենից և Ա–Ե· բորդ ճառերու խորագիրներն և հակիրճ բովանդակութիւնքը կամ հատուածս տեղեկութիւնք: Երկրորդով՝ վասն Բարկոպոլոյ ճառի խորագիրն՝ և առաջին տասն տողերը: Երրորդով՝ Ողբ առաջին 19 տողերն՝ հանդերձ խորագրով: Հուակ չորրորդով՝ Ս· Ալեքսիանոսի պատմութեան վերջին մասը: Երրորդ՝ դիտելու ենք, որ Աղօթքն և Ողբ վրայ միւս ճառերու պէս առանձին թուահամարներ դրուած չեն հօս, այս պատճառաւ մենք ալ փակագծի մէջ դրինք այն գլուխները:

Երկրորդ սիւնակին մէջ Աղօթքն և Ողբ+ առանձին թուահամարներով նշանակուած են. անոր համար մենք ևս առանձինն դրինք առընթեր ԻՀ· բորդ գլխուն՝ նոյնպէս ԻԸ· դը: Երրորդ՝ սիւնակին մէջ Աղօթքն և Ողբ+ նոյնպէս մի միայն գլխահամարով նշանակուած են. հետևեալ խորագրի ներքև. Խօտ ե– բան+ ըղյալէ ե– փափաքանաց ու ղշմն յոթն վերացուցանէն. և այս պատճառաւ իսկ ԻՀ· բորդ գլխաւորգութիւնը կազմուած է: Իսկ չորրորդ սիւնակին, այսինքն է գէորգայ օրինակի մէջ, եւկնաբերէ Ա· Գ· ԺԳ· ԺԸ· ԻԳ· ԻԵ և ԻՉ· բորդ ճառերու համապատասխանող ճառերը կը պակսին· ԺԹ· բորդ ճառն ալ միացուած է Գ· դին հետ: Իսկ ԺԱ· բորդ ճառն, այսինքն է՝ ըստ ապագրեալին՝ ի ա–բբ Եբբորդ–նէ–ն, որ միւս երեք սիւներու կամ լաւ ևս օրինակաց մէջ կը պակսի, այս տեղ Յաղթօ պահոց խորագրի ներքև կը գտնուի. ուստի մենք ալ դրինք ի վերջ սիւնակիս:

Իսկ մասնականէն՝ ընդհանուր ցուցակին անցնելով կը տեսնենք, որ նախ Ա–Ե· բորդ ճառերը միայն նոյն յառաջաբանաց կարգով մէջ բերուած են հին երկաթագրին և երուսաղէմեան օրինակին մէջ· իսկ պարբեռանն՝ առաջին երեք ճառերու գլխակարգութեամբ միայն կը համաձայնի նախընթացներուն: Երուսաղէմի օրինակն և պարբեռանն՝ Ե· Է· և Ի· Ի· ճառերու գլխակարգութեանց մէջ իրարու կը համաձայնին. իսկ միւսաց ճառերու գլխակարգութիւնները չորս օրինակաց մէջ ևս իրարմէ բոլորովին կը տարբերին:

Սակայն գլխակարգութեանց համեմատական ցուցակէն հանելիք հետևութիւնն յապաղելով՝ մանուածոիւ մենք այս տեղ համառօտիւ վերոյիշեալ ճառերու խորագրոց արդիւնքն ևս, զորս երկասիրութեանս

Դ· գլխու ծանօթութեանց մէջ նշանակեցինք: Ա· Դիտելու ենք, որ Երուսաղէմի Բ, Գ, Դ, Զ, ԺԵ, Ը, Է, ԻԳ, ԻԴ, ԻԵ, ԻԷ, ԺԲ, ԻԸ, Ժ, ԺԳ, ԺԴ, ԺԶ, ԺԷ և ԺԸ· բորդ, այսինքն է 19 ճառերու խորագրերը՝ յար և նման են իրենց հետ համեմատուած հին երկաթագրի ճառերու խորագրոց: Երուսաղէմեան օրինակէն վերջ կու գայ պարբեռանն, որուն 14 ճառերու, այսինքն են Ա, Բ, Գ, Դ, Թ, ԺԳ, Ի, ԺԶ, Ը, ԻԶ, ԺԸ, ԺԹ և ԻԳ· բորդի խորագիրքը նոյն և նման են երկաթագրի սիւնակին մէջ իրենց համապատասխանող ճառերու խորագրոց: Իսկ Գէորգայ օրինակին մէջ ամենաքիչ, այսինքն են ԺԸ, Դ, Գ· բորդ ճառերուն միայն: Ը, ԺԹ· և Է· բորդն՝ համաձայն են Պարբեռու օրինակի Ժ·րդ, ԺԷ· և ԻԲ· բորդ ճառերու խորագրոց: Երուսաղէմեան ԻԹ· բորդ և պարբեռան օրինակի ԻԳ· ճառերու խորագրոց վերջին յաւելուածը՝ Խօտ Հաբշ[1], յառաջ եկած է երկաթագրի Նախադրութեան ընդարձակաբար մէջ բերուած ԻԵ· բորդ ճառի խորագրէն: Երուսաղէմեան օրինակի Ի· բորդ և պարբեռան ԻԵ· բորդ ճառերը մի և նոյն խոբագիրն ունին, որուն վերջի բառերը միայն, Յաղթօ պահոյ, երկաթագրին կը համաձայնին:

Արդ՝ այժմ աչաց առջև ունինք կրկնակի համեմատութիւններէ յառաջ եկած կրկին արդիւնք: Առաջինն, – այսինքն է գլխակարգուԹեանց նմանութիւնը, – գրեթէ ոչ ինչ է. վասն զի 3–5 ճառերու յառաջաբերութեանց մէջ միայն կը տեսնուին, որով հազիւ թէ սկզբնական առընչութիւն մի ցոյց կու տան իրարու հետ, վերոյիշեալ չորս օրինակներն, ուրիշ ո՛չ ինչ: Իսկ խորագրոց նոյնութիւնը, – գէթ առաջին երեք օրինակաց մէջ, – այնքան զգալի է, զոր ուրանալ անկարելի է: Այս երկու հակակշիռ փաստերու չօշափելի արդեանց որոշհետև անկարելի է, որ միևնոյն գրչագրերն իսկապէս իրենք իրենց հակառակ արդիւնքներ յառաջ բերեն, կամ լաւ ևս՝ հակառակն, ուստի կարեմք եզրակացնել, մանաւանդ թէ ապացուցանել, թէ այդ աբտօփոյրտր գիտուրիւնամբ հանդերձ՝ վերոյիշեալ ցուցակի մէջ նշանակուած օրինակաց երկուքն, այսինքն է երուսաղէմին և պարբեռան՝ ի և նոյն քնութիւնն ընդօրինակուած են. առաջինն՝ ուղղակի կերպով, իսկ վերջինս

1· Արդ՝ այս և անմիջապէս վերջը յիշուած Ի·բորդ և ԻԵ·բորդ ճառերու մակագրութեան վերջին մասը, յաղթօ պահոյ, եթէ Հարսնց վրէժ միջոցով նոր մուծուած չեն, այլ ուղղակի յերկաթագրէն առնուած, կը ցուցնեն, թէ երուսաղէմեան և պարբեռան օրինակները՝ կը ճանչնային իրաք հին երկաթագիրը:

ՀԼՆուբքաա աաաՂնոյն: Իսկ այք ԲնաՓքէքն ըււաւլաա էք կամ Ֆաթենադաբանիա ՌԻ-
994 հին երկաԼաՓքէքն, և կամ լաա և՝ անոք հեպ սէբա վէբաԲէբուԼէն ահնե-
ցող՝ Բայց Ռէզ անձանօղ և երկաԼաՓքէքն աաԼէլ հին երկաԼաՓքէք Ռ:

Երուսաղեմեան հին բոլորգիր օրինակին և մեր երկաթագրի մերձաւորութեան յայտնի նշաններէն՝ երկուքն արդէն ցոյց տրուեցան, այսինքն է երկաքանչիւրի խորագրոց նոյնութիւնն և Յովհ. Մանդակունւոյ գանձք մակագրէլը: Ուստի այժմ կը յաւելունք նաև հետեւեալները: Գ. Դիտելու ենք, որ Բ, Գ, Ե, Թ, ԺԱ, ԻԳ, ՃԱ, ճառերը նոյնպէս կոչուած են այս երկու օրինակաց մէջ ևս. միւս օրինակներէն և ոչ մին ունի այս երեւոյթս: Երկաթագրի Նախադրութեան անծանօթ հեղինակն իսկ այս բաւս գործածեր է՝ աւելի ընդարձակ տարածութեամբ[1], այսինքն է իբրև տեսակաբար և տեսչական մակդիր բոլոր ճառերուն, որոնք իրր թէ մի միայն կազմէին՝ միոյ հեղինակութեան. սակայն այս մասին քիչ վերջը կը խօսինք: Գ. Դիտելու ենք, որ Երուսաղեմի այս օրինակ՝ ինա-
յեալներու համեմատութեամբ՝ ամենէն աւելի քիչ տարբերութիւն-
ներ ունի երկաթագրէն. այս եղելութիւնս՝ որ ուրիշ կերպով ժժուար է մեկնել, բազդատութեանց ձեռքով դէտ աւելի պայծառ պիտի ցուցնենք: Ե. Երկաթագրի մէջ այլեայլ էջերուն խանգարուած բառերն և բացատրութիւնքն իսկ՝ Երուսաղեմի օրինակը որոշ ընթեր-
ցուածներով կը լրացնէ և կը հաստատէ, ինչպէս որ գտած էր յայնժամ: Աւրդ՝ այս կէտերուն, — ի բաց առեալ վերջորդը, — պարսկեան օրինակը նոյն մերձաւորութիւնը ցոյց կու տայ երու-
սաղէմեանին հետ, ինչ որ վերջինս ունի ընդ երկաթագրին:

Երկաթագրիս Նախադրութիւնը՝ որ կը պակսի նոյնպէս և այս երկու օրինակներուն մէջ, աւելի կու տայ կասկածելու, որ զոցա ծանօթ չէր երկաթագրին: Սակայն այս ենթադրութիւնս հաստատուն կռուան մի չունի, մտածելով որ, եթէ ծանօթ ևս եղած ըլլար, սա-
կայն և այնպէս այն գրչագրաց նպատակին դէտ էր ընդօրինակել զայն. որովհետև յիշեալ երկու օրինակներն ևս էջմիածնի և վա-
զգայ Գ. և ԻԳ. բորդ ձառընտիրներուն նման բազմապիսի ուրիշ գրուածներ ևս կը պարունակեն, միայն Մանդակունւոյ գործին նուիրուած չէին, ինչպէս կ'երաշխաւորեն այն ձեռագրաց որպիսու-
թեան մասին տուած տեղեկութիւնքը: Եթէ էջմիածնի թիւ 918 ձա-

1. Անշուշտ Երուսաղեմի օրինակին կամ անոր բնագրի հեղինակը, կարգացած էր Նախադրութեան այս տողերս, և անոր ընդարձակ առածքը է որ, բաց ի վերս յիշեալ եօթը ճառերը, ուրիշ 18 ճառերու վրայ ևս Բ-ՂՂ տիտղոսը գրած է:

ռընարի պէս՝ ըստ պատշաճի աւուրց մեծի պահոց՝ մէջ ընդ մէջ ընդօ-
րինակած են Մանդակունւոյ ճառերը, այն ժամանակ կարող ենք ըսել, թէ այդ պատճառաւ իսկ անտարակոյս յառաջ եկած են թէ երուս-
աղէմեան և պարսկեան և թէ միւս օրինակներուն սէջ իրարմէ աւելի կամ նուազ ճառերու դիրքակարգութեանց, և գուցէ թէ նոյն իսկ խորագրոց զգալի փոխոխութիւնքն: Բայց ասկէց աւելի զօրա-
ւոր պատճառ մ'ևս եղած է, ըստ ես, այս և նման այլափոխու-
թիւններ յառաջ բերելու բոլոր մեզ ծանօթ այս կարգի գրչագրաց մէջ, եթէ ճշմարիտ իրողութիւն համարինք վերն ըրած մեր եզրա-
կացութեան երկրորդ կէտը. այսինքն թէ մեր թիւ 994 երկաթա-
գրէն աւելի հնագոյն բնագիր մի կար Մանդակունւոյ ճառերուն, որուն վրայէն ապա յԺԲ. դարու սկիզբը կազմակերպեցաւ երկաթագրէն: Այ՛, այդ անյայտացած բնագիրն՝ որուն գոյութիւնը կը թուին հաստատել Գէորգայ օրինակին հետ նաև մեր ծանօթա-
գուցած ձառընտիրք ևս, զգալի կերպով կը տարբերէր յերկաթա-
գրէն. այսինքն է՝ միապաղաղ գրուածք մ'էր, Գրիգոր Պապի Հո-
գւոյն. այսինքն է՝ մի ապաղաղ գրուածք մ'էր, Գրիգոր Պապի Հո-
գւոյն. այսինքն է՝ մի

Նոյն և բանից Թղթոյս չարագրութիւն ոչ խաւան ի խուռն զամենայն անօրէնութիւն առալի արկեալ ցուցանեն... այլ ըստ խնդրոյ խնդրողին[1] զնորին անօրէնութիւն չարութեանն ծանուցանեն »: Դարձեալ ի վերջ կոյս նախագրութեան՝ 25 ճառերու տեսութիւնն ընելէն վերջ, կը գրէ[2]. « Եւ արդ զայս ամենայն վոքր ի չատէ ծաղկաթաղ[3] արարաք. բայց են և այլ անթիւ հոյլք խորհրդոց և բազում օրինակք չարեաց և առաքինութեանց, և որք կարևոր են առաջնորդաց եկեղեցւոյ ի խրատ և յանգիմանութիւն և յերկիւղ և ի զգուշութիւն ամենայն ժողովրդոց...: Անաչխատ խրատէ ղեկեղեցին Թղթոյս[4] վերդատաբեռութեամբ », և այլն:

Ուրեմն այս այսպէս ըլլալով, կարելի եղրակացնել ասոնց հետևեալ երեք բաները. Ա. Թէ Մանդակունեաց ճառերը պարունակող այն հին ձեռագրերն, որոնք թիւ 994 երկաթագրի կամ անոր բնագրին, — եթէ եղած է երբեք, — խմբագրութենէն յառաջ օրինակուած են, կարող էին իրարմէ տարբեր խորագրեր ընդունել այլև այլ ճառերու վրայ, ինչպէս որ յաճախ կը դատէին անոնց հաւաքողներն և ընդօրինակողները: Բ. Թէ Գէորգայ օրինակն և գործս մէջ յիշատակուած այն ճառընտիրներն իսկ, որք ԺԲ. դարէն վերջ գրուած են և երկաթագրէն կը տարբերին, պէտք է որ այն կարգի ձեռագրերէ ընդօրինակուած ըլլան. մեր Դ. ճառընտիրն և պատրիսեան թիւ 57 օրինակն՝ անոնք մի կը թուին ներկայացնել մեկէն

1. Այս բացատրութենէս այնպէս կ'երևի, թէ ճառերէն ոմանք նամակի ձևով ուղղեալ ըլլան առ առանձնական ոմանս: Այսպէս է, օրինակի ազագաւ, խորագրեալն Թուղթ վասն նախնեաց, որուն վերջաբանին մէջ կ'ըսուի. « Հնազանդեա Հոգւոյն սրբոյ հրամանաց, և քերանով Աստուծոյ որ ասացաւ եղիր իղձիդ »:

2. Տես տպագրեալն, յԷջ 10–11:

3. Այս բացատրութիւնս սեզմ առմամբ նախագրութեան համար հասկնալու է, և ոչ թէ ուրիշ ընդարձակ գրուածքի մի համար, յորմէ յիշեալ ճառերը թարգմանած, կամ լաւ ևս հաւաքած ըլլայ: Բայց այս իսկ պիտակ կու տանք, որ Մանդակունեայ հրատարակութեան մէջ կան ճառեր, որ օտար քնագրէ թարգմանուած լինելու յայտնի նշաններ ցոյց կու տան: Նախագրութեանս հայկազան չարագրութիւնն իսկ ԺԲ. դէն աւելի՝ Ե. դարէ քնագրոյմ ունի, և կարծեք թէ թարգմանութեան մ'առթիւ գրուած ըլլայ. սակայն պարմանք չէ, որ նոյն իսկ ԺԲ. դարում այդ լեզուով չարագրող մէկէն եղած ըլլայ: Նմա Սարկաւագի՝ Գոբթոյ Մեխոքեան և Անդրեաս Կեսարացւոյ՝ Յովհ. Յայտնութեան Մեխոքեան թարգմանութիւնները մէկէն աւելի օրինակ են այսպիսի հայկազանութեան:

4. Պիտելու է որ նախագրութեան հեղինակն՝ Մանդակունւոյ բոլոր ճառերու խորագրերը Վասն բառով մէջ կը բերէ միշտ, և ոչ միոյն վրայ Թուղթ բառը մակագրած է. ուստի ասկէց իսկ կը հետևի, թէ նա Թուղթ տիտղոսով՝ ամբողջ գրութիւնը կ'ուզէ հասկնալ և հասկացնել:

ի միտս: Գ. Եթէ ենթադրուած պղէքոֆրէն կամ ամենահին բնագրին մէջ ճառերուս հեղինակի անունն ևս երկաթագրի պէս խնդրարուած էր, կամ գրուած չէր, շատ հաւանական է որ Եփրեմի, Յովհ. Ոսկեբերանի, և այլն, անուանց փոխարէն մակագրութիւնքն իսկ անոի պատճառած ըլլան: Եւ այս երեք կէտերը՝ ձեռագրացս ընդարձակ տարբերութիւններով աւելի ևս պիտի հաստատուին:

ՀԱՅԵԱՑՔ ՄԻ[1] ԵՐՈՒՍԱղԷՄԵԱՆ ՕՐԻՆԱԿԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

Ա. Ճառի սկիզբն և վերջն՝ ինչ ինչ տարբերութիւններով նոյն են տպագրեալին[2] հետ. կան քերականական ձևոց, բառական կազմութեանց և ուղղագրական տարբերութիւնք նաև ամբողջութեանը մէջ:

Բ. Ճառին սկիզբը և վերջը նոյն են, միայն թէ տպագրեալի յԷջ 17 « վայելել ի զեմանէ Որդւոյն Աստուծոյ » բանից տեղ կը գրուի՝ վայելել է Նմանէ, որ ոչ է ուղիղ: Գրչագրողի ձեռքով եղած է այս խանգարմունքս. վասն զի բացատրութեանս յաջորդող խոսքն՝ ֆէել, և այլն, բառերն ևս կը պահանջեն հօս:

Գ. Երրդ ճառին սկիզբը տպագրեալին հետ նոյն է. բայց վերջաւորութեան մէջ փոխանակ տպագրեալի « լուսով » բառին՝ ֆոսֆ ֆաւորուած է: Տպ. « և լուսաւոր » բացատրութիւնը կը պակսի յօրինակին, որը սակայն ունի՝ եւ զաջքս բարոնեան բացատրութիւնը տպագրեալէն աւելի:

Դ. Երրդ ճառին սկիզբը նոյն բառերով կը սկսի ձեռագիրս, սակայն տպագրեալի « իմաստուք զբանս ճառիս » բացատրութեան տեղ կայն տպագրեալի « իմաստուք զբանս ճառիս[3]. վերջն՝ նոյն է ըստ ամենայնի:

1. Այս տեղ պէտք եմ ըսել, որ Երուսաղէմի օրինակը կամ անոր ընդօրինակութիւնն աչքի առջև ունեցած չեմ, այլ Սահակ եպիսկոպոս Խալայեանի առած տեղեկութեանց համաձայն եղած են քաղդատութիւնքն, որուն համար յոյժ երախտապարտ եմ:

2. Այս և հետագայ բաղդատութեանցս ժամանակ Վենետկոյ 1836 ի տպագրութեան համաձայն պիտի ընեմ էջերու և տեղեաց կոչումները, ուր նշանակուած են թէեան համաձայն պիտի ընեմ էջերու և տեղեաց կոչումները, ուր նշանակուած են ծանօթութեամբ ուրիշ մի քանի օրինակաց տարբերութիւնքն ևս:

3. Այս տարբերութեամբս կը հաստատուի վերը յայտնած մեր կարծիքը. վասն զի ֆէէ բառն Ս. Գրոց համար ըսուած չէ: Երկրորդ՝ եթէ այնպէս առնունք, այն ժամանակ կը հետևի, որ այդ ճառը Ս. Գրոց մեկնութեան մի յորդորակ եղած ըլլայ. և սակայն չէ:

Ե· բորդին սկիզբը նոյն է. իսկ վերջաւորութեան մէջ կան այս տարբերութիւնքս, այսինքն է՝ փոխ. յէջ 44 ապագրեալ «արդ» բառին՝ ունի վանն որդ: Բառս՝ ածխով, ձեռագիրս միայն ունի. այսպէս և՝ զաղտոպս կը գրէ, փոխանակ «զքաղցեալս», ֆառանգելոցոյ փոխ. «հնձեցուք»ի:

Զ· բորդ ճառին սկիզբը ապագրեալի հետ նոյն է, ի բաց առեալ երկու աննշան տարբերութիւնները: Վերջը կը տարբերի բառերու յետ և առաջ շարելովը միայն. էական տարբերութիւն մի չընծայեր ճառս:

Է· բորդ ճառի սկզբան այս բացատրութիւնս՝ Ոչ ասաց, Պատուէրեաց նոր պատ յԵղ, չի գանուիր ապագրեալին մէջ. իսկ ի վերջաւորութեան կը պարունակէ ձեռագիրս նաև հետեւեալ հատուածը. Զի մէշ լուացեալ բերբեռէ է մեռս նոցա անշէջ հուրն նախանձոյս, և զողայ և զեղնի, և հաչէ և մնչէ հանապազ ընդ եղբօրն պատուէրն և ընդ յաւուրքն ննջելոցն, և ընդ մեղուցելոյ եղբօրն մէշ (ի) մեռս երբ հանապազ պատերազմէ, բայց ոչ երևեցուցանէ սա է բազմոց ամբոխն. այլ գաղտնի նենգութեամբ հանապազ ապականի և չար ակամբ չօգով նայէ երբեմն ընդ ընկերն. վասն որոյ բազում ապերանեցոյ պէտ են վէրքս այսոցիկ. բազում ողբոյ և արտասուաց և անդուլ աղաչից, հառաչելոյն անդադար խնդրուածոյ: Զի այնպէս դժուար և անբերելի է աչուն նախանձս և չարակրութիւնն, մինչև բազում հնարից և բիւր պերճաց վերուստ ընկերութիւն վէրացն խնամոյ, զի նա և սա չնկերանան պղծութեան գործոյ. լծակից է ասպանայիչ, չար նախանձոյս և մահաբեր և ընդ նմին ֆառանգիչ զերծացան պարտուցս գեհենին, երբ ոչ գործոյ ասպէն պերճանել է չար նախանձոյսն հետանդութեանն, և արդիւ պերծեալքն պրծեցէք, յաստենաբար բարութեանցն և ի գառնալոն ուրախութեանցն և յաղթ[1] կրաւնիցն (ֆ) յաստենայնէ և ամենայնէ ոչ ինչ օգտիլ յորմէ ընդ եղբօրն նախանձ և չարակրութիւն առնիցէ և պետաւոր ապերութեան մաքեալ ուանի է արդին, ոչ ինչ ապրելոյ. յորմէ մի՝ ֆառանգելոցոյ նոցա (ֆ), այլ բարեաց գործոց նախանձոյսուր լիցուս շնորհուս և մարդասիրութեամբ պետուն պերոյ և գրկեցին Յեսուսի Քրիստոսի, ընդ որոմ Հաւր և Հոգւոյ[2]:

1· Այս բացատրութիւնս, — այսպէս և անոր նախընթացը և յաջորդ տողերը, — մեծապէս խանգարուած են, կամ տգէտ ընդօրինակողին և կամ բնագրի քաշքշուածքներուն պատճառաւ: Այս խանգարումներն կ'ուղղուին մեր ԻԴ· ձառընտրով:

2· Այս ընդարձակ հատուածս կայ նաև մեր թիւ 1441, այն է ԻԴ· ձառընտրի մէջ, — յէջ 395, — բայց մեծամեծ տարբերութիւններով: Հին երկաթագրին մէջ այս հատուածս և յաջորդ ճառի սկիզբը պարունակող թերթին, — երես 183 և 184, — ինկած է, որով միայն կարելի էր իմանալ Երուսաղէմի օրինակին մերձաւորութիւնը:

Ը· բորդ ճառին սկիզբը տարբերութիւն չունի, բայց ի յառաջնումն (թենէ) սեռականէն. ասկայն ի վերջաւորութեան կը պակսի ապագրեալի «լուսաւորեալք» բառը: Փոխանակ ապագրեալի, — յէջ 68, — «ցանկք հօտիդ» կը գրէ ցանկ է հաւտիդ: Այս ընդերցուածս աւելի ճիշդ է. մի երկաթագրին ևս ունի «ցանկին հաւտիդ». է նախկինը՝ վրիպակաւ պրչին միացած է ցանկին հետ երկաթագրոց սովորութեան համեմատ: Տպ· 69 իջում «գայլատառնեալ»ի տեղ ունի օրինակս գառբաժնեալ, և յէջ 72 փոխ. «սիրընկոնք»ի՝ ունի պետնդոնդն[1]:

Թ· բորդ ճառին սկիզբը նոյն է՝ բայց ի սեկ տարբերութենէն, այսինքն է՝ փոխ. ապագրեալի «հեծէ անձն իմ»ի՝ ունի ձեռագիրս հնեցեր: Իսկ վերջաւորութեան մէջ կան հետեւեալ տարբերութիւնքը՝ և ասա ոդբալով (տպ· «ողբա աաելով»). երկ յաջնոյն պրեի գրչութեամբ[2] ղղնմոյ բացատրութիւնը չկայ ապագրեալի մէջ: Տպագրի էջ 136 «վասն զի չկռթեալ վարդեցին զընութիւն իւրեանց, զառնային լինել կանացի և զկանացին առնոյ», ձեռագիրն ունի չկռնելու... արտ ընդ արտս զանաբրենութիւն գործելով և եգ՝ ընդ եգ չարչնելու. արտ ընդ արտս զանաբրենութիւն գործելով: Էջ 138 փոխ. «յիմար կուսանացն» բառերէ պղծութեան գործելով: Էջ 139 տպ· «թերևս երկայնամտեալ գթոյդ տէր» ձեռագիրն ունի յաւելուածով այսպէս. թերևս վասն ապաչխարութեան ի երկայնամտեալ գթոյդ տէրն պերոյն է ընդունելոյ արտասուս վշտացնել արդ ի[3]:

Սակայն դիտելով, որ մեր թիւ 1441 ձառընտրէն մեծապէս կը տարբերի, կրնանք ըսել, թէ վերջինս ընդօրինակուած չէ, այլ երկաթագրէն, որ ԺԴ· դարամ դէտ այսպէս խանգարուած չէր, և կամ անոր բնագրէն: Ճառիս միացած մասին՝ զոր այսպէս խանգարուած չէր, և կամ անոր բնագրէն: Ճառիս միացած մասին՝ զոր ընծայէ երուսաղէմեան օրինակը, երկաթագրէն ունեցած ոչ ինչ տարբերութիւն իսկ կը հատատաէ լուսծնիս:

1· Այս բառս ուրիշ տեղ պէքնդն, ննդնդն և ննդնդն ևս գրուած է, բայց պէտնդոչ ոչ երբեք: Բառս՝ հայերէն պէտ կարծեր է գրչագիրն, սակայն օտար է ամենեն ծագմամբ, և կը նշանակէ ֆոբնդնէց: Նեագրի լուծմանց մէջ, ԺԴ· ֆոբնդնէցոյ-նեն թարգմանուած է: Իսկ հին բառարանը յոգնակի «ննդնդնդ՝ որ է հնայոդական բեն թարգմանուած է: Իսկ հին բառարանը յոգնակի «ննդնդնդ՝ որ է հնայոդական գործ» կը գրէ: Օրինակիս ընծայած հատուածը՝ ԻԴ· ձառընտրի և Գէորգեվանքի» կը գրէ: Օրինակիս ընծայած հատուածը՝ ԻԴ· ձառընտրի և Գէորգեվանքի մէջ պակասաւոր է, որով և այդ բառը չկայ անոնց մէջ. հատուածը, ուրեմն, կրնանք ըսել, թէ երկաթագրէն ընդօրինակուած է, վասն զի երկաթագրի մէջ ևս յոգնակի պէքնդնդ կը գրուի: Ուստի ընդօրինակողի ձեռքով երկաթագրի է տասն՝ ն կարգացուած է և «տասը՝ ը:

2· Այս տողս ունին համաձայնութեամբ նոյնպէս Գէորգեվանքի օրինակն և մեր ԻԴ· ձառընտրին:

3· Ընդհերցուածս աւելի ճիշդ է. զի Գէորգեվանքի օրինակն ևս ունի գայս. մեր Դ ձառընտրին ունի միայն գաբաչաաանոյ:

4· Այս տողերս նոյնութեամբ ունի նաև Դ· ձառընտրին: Գէորգեվանքի օրինակին

Ժ· բորգի սկիզբը աննշան տարբերութիւն մի կայ, այն է՝ ածել՝ փոխանակ «ածելով» ի տպագրին· բայց վերջաւորութիւնը տպագրին բոլորովին կը տարբերի· ահաւասիկ· «Այլ ոչ ժամ է ոչինչ ընդ առաքս առնել, զոր ձառայս Քրիստոսի պահել, ոչինչ հաւատացելոց հնազանդել է· հաւանել ոչնաւաց առաւելոցն է· մարքարէիցն է· մարգարէութեան առնդրէք եղեալ· զի ընդ նոսին փառաւորիցեն զամենառարքն զերդորդութիւնն այժմ է· ինչ է յա՜...»: Տպ· յէջ 142 «հայհոյեն» բայը չունի օրինակս, և 143 յէջ «կասկելով»ը՝ կոթնելով կը գրէ: ԺԲ· բորդ ճառին սկիզբը կան օրինակիս մէջ հետևեալ տարբերութիւնքը, այսինքն է՝ տպ· «հոգոց» ին տեղ ունի՝ աղոյ, «եկեղեցի» բառէն վերջ ունի բայս պետանէմ, և փոխանակ «իրրև» ի՝ որպես է վեր գոցելով: Իսկ ի վերջաւորութեան, այսինքն է յէջ 86, տպագրեալի վերջի պարբերութեան մէջ հետևեալ բառերը, զորս չունի ձեռագիրս՝ հաւ, գոցելով· մոտեցեր, պետանէն: Իսկ վերջանակ տպ· «ապանձեցէք զքեզուս ի չարախօսութենէ» ձեռագիրն ունի՝ ապերնէ+ զբերան է բաբեանոց և կոպոցե+... է լեզուներնէն կը գրէ· փոխ· «ուղղեցէք զսիրտս ի շար խորհրդոց» ի տպագրին· «աղօթիւք» էն վերջ ունի՝ պահատ և ապեռներմբ և...: Տպ· յէջ 82 անհասկնալի «որ» ին տեղ՝ ունի եպ· փոխ· «կոտրեցոյն» ի կոպոցել, և փոխ· «չարապատիժս» բարդութեան՝ ունի չարչար պոչիչս:

ԺԲ· բորդ ճառին սկիզբը «Ո՞ւր երթեալ դադարեցից զանէդ և լացից անդադար զահեղ անաւրէնութիւնս, որ զնոսն ճմլեցուցանէ և (տպ· և կամ ու) լռեալ զաւղէն (տպ· եցից) թագծեալ (տպ· մեզաքս) յամենայն զազրալի և չարաչար (տպ· լուր) համբաւոց (տպ· այս), որ միշտ զսիրտ իմ գելու և գալարեցուցանէ զաղիս իմ և զորովայն իմ ողբալով և հանապազ լալով»: Գծուածներն են տարբերութիւնք ձեռագրիս: Վերջաւորութիւնը նոյն է: Յէջ 126 տպագրեալի «ոչք զնաւաբարայինսն» բառին կը յարէ ձեռագիրն՝ ընդ ապոստաձայութեան[1] սպառնալիք, ըստ[2] զերծմանն խոստացոյնս ախորժելով ընկալան, ձեռքին ես ձոքին: Յէջ 127 փոխ· տպագ· «ուսեն և չնայ-տանան համանգամ կերակրոցն» բացատրութեան՝ ունի լիզնեան և շոայդին համարտա[1] կերակրվէ+:

ԺԳ· բորդ ճառին սկիզբը այնքան կը տարբերի տպագրեալէն, որ բաց ի առաջին բառէն «բազում», մնացեալ տողերու մէջ հազիւ թէ իմաստի նոյնութիւն՝ կը նկատուի: Ահաւասիկ՝ «Բազում պարտահատ և սպառնալէ+ են յԱստուծոյ, զոր յօգուտ և ի զգոնշումն ձեղ տարուցանէ· զի թէպէտ և ձեղ պարտհաս ցասմն երևէ, այլ առ մեզ զգութ խնամոց մարդասիրութեան ցուցանէ[2]»: Վերջաւորութեան մէջ իսկ կան նշանաւոր տարբերութիւններ· օրի· տպագրեալի «դրախտէն» վերջ եկող պետառ բառը չկայ յօրինակիս, բայց անոր տեղ ունի օրինակս է պայծառ: Տպ· «և ի լուսե-ղէն» բացատրութեան հանդէպ ունի՝ և ձառանգել· է լուսաւոր որբ էպղտէն է լոյս (տպ· «ընորհս») ծառայ որբ երերդրդութեան» նշանաւոր նախադասութիւնը[3]: Տպ· յէջ 149 «զտան ևս» օրինակս ունի պրառ միայն· յէջ 150 «յանձինս մեր» բառերը չունի ձեռագիրս: Յէջ 153 տպագրեալի 12–15 տողերն այսպէս ունի օրինակս· «Եւ ոմանք անդրգնեալ և ի բաց ընկեցեալ զնաւասաս քրիստոնէութեան և զզաւրութիւն որբ խաչին, պնդեն ի հմայս և ի պեղծութիւն դիւաց յանասունոցածոյնս, որ է կռապաշտութիւն և մերժուն յաստուածային աւրինացն և ոչ ապաշխարեն»:

Ժդ· բորդ ճառին սկիզբն եղած տարբերութիւնք՝ քերականաց ձևոց նկատմամբ են աւելի, այսինքն է՝ փոխ· տպ· «ահաւորք» ին՝ ահռչին, «խորհրդին» խորհրդոյն, «յերկուս վարեալ» ին՝ յերկուց վարեալ: Այսպես և ի վերջն ունի «առաքինութեամբ» բառին կից՝ վարեցոց: Այսպես և ի վերջն ունի «առաքինութեամբ» բառին կից՝ վարեցոց: Ա յսպես և ի վերջն ունի «առաքինութեամբ» բառին կից՝ վարեցոց:

1· Այս ընդհատուածս բոլոր օրինակաց մէջ տարբեր է· Դ ձառընտիրն՝ հանգամ ներուր+ կը գրե· Իմ ձառընտիրն ունի՝ համգամն ներուրվ· իսկ Գէորգեայ օրինակն՝ համանգամն ներուրվ: Երուսաղեմեան օրինակի ընդհատածն ամենևին չի երևիր· միւս օրինակներն՝ առաջին բառով երկաթագրին կը մտանեն, իսկ նէն ձիշտը կ'երևի· միւս օրինակներն՝ առաջին բառով երկաթագրին կը մտանեն, իսկ նէն ձիշտը կ'երևի· Ուրեմն հատարակաց և հնագոյն քնա-վերջին բառի գործիականով՝ երուսաղեմեանին:

և անձնաւորութեամբ. «ահաւոր» ին տեղ՝ անաւորէ. «ի մարմնոյ և յարեան» ի տեղ՝ է մարդին և յարեան: ՅԼ 158 վրա. տպ. «Այլ ընտրեալ սովորութեան հարեալ խղճի մտաց» ին՝ ունի այլ ըստ ընտրեալ սովորութեան հարեալ խղճի մտացն. վրա. «պղպղն ինչ» ի՝ ունի չքաւոն ինչ է բայ...: ՅԼ 161 ունի օրինակս «ի խորհրդոյն և ի միրաւելենեն», համաձայն ծանօթութեան մէջ բերուած միւս օրինակաց: ՅԼ 162 «այլ հաւատով ճշմարիտ» ունի նման 2.ծան. մէջ յիշուած օրինակաց: ՅԼ 153, տող 7–8 ունի ձեռագիրս հաբեհան... աբրահոնէն:

ԺԵ.բորդ ճառին սկիզբը շատ կը տարբերի տպագրէն: Մէջ կը բերեմ զայն, գծելով միայն ձեռագրիս ունեցածները. իսկ միւս տարբերութիւնքը տես ի տպագրէն. «Զի՞նչ ասացից, զի՞նչ խոսիցայց, զի՞ր թողէց կամ զի՞ր պատմեցից. զի զոր աչն համբերն ոմանք կարեւոր և դեր, ի խորհուրդս ժողովել չարժէ զլեզուս: Վասն զի կարեւոր տեսանեմ զմիտս ճառիս, կամաւ և ես խաւեցայց և պատմեցից[1]»: Վերջաւորութիւնն յար և նման է: Տպ. յէջ 61, տող 12 «դիւրաւ», և այլն, բացատրութեան տեղ ունի օրինակս՝ «զի՞ր ասդ ճարեա է սակաւորդ, չճարեա զկարեւոր պէտս մարմնոյդ հոգի՞ և զոյ ճարեա և սակաւորդ, չճարեա զկարեւոր պէտս մարմնոյդ հոգի՞ և զոյով և պահոյ ընանի՞[2]»: Մի և նոյն իմն ծանօթագրեալ 17 բորդէն 20 բդ տողերն՝ այսպէս են ձեռագրիս մէջ. «Եւ վասն աղոյ որովայնին բազում ասպիկ երկնէ բնկանէ զոյդս և կարաճմեան յամենայն կողմանց ի վերայ նոցա»: ՅԼ 62, 63, 64 թուագրեալ բառերով կը համաձայնի տպագրեալին. 66 իջի 19 տող միջանկեալ հատուածն՝ օրինակիս մէջ ևս կը պակսի:

ԺԶ.բորդ ճառին սկիզբը կան չորս տարբերութիւնք տպագրէն, այսինքն են «խորհուրդս», և տպագրեալի «զարթիր» էն վերջ՝ և չանի օրինակ. տպ. «թափեա» ին տեղ՝ ընթափեա, և «թաւ խանձանաց» ին տեղ՝ կը դրէ ընթիծանոցն: ՅԼ 175 տպագրեալի 10 բորդ տողէն մինչև վերջ եղած միջանկեալ հատուածն[3], որ երկթագրին պակս կը դրէ ճշդութեամբ:

1. Այս սկզբնաւորութեան տպէս բնաւ տարբերութիւն չունին Գէորգեայ օրինակի մէջ եղածէն. Գ. Ճառընտիրն ալ երկթագրին պէս կը դրէ ճշդութեամբ:

2. Այս տպերս այսպէս ունի նաև օրինակն Գէորգեայ, որուն մէջ սակայն տառ-ջին երեք բառերը տարբեր կերպով մէջ բերուած են, այն է՝ «զի՞ր ասդ ճարեա»:

3. Որ կը գտնուի նոյնպէս ԻԳ. բորդ և Գ. բորդ Ճառընտիրներու և Գէորգեայ օրինակին մէջ: Բայց երուսաղէմեան օրինակը՝ միւսներէն ևս կը տարբերի, որոց երկրորդը մանաւանդ նորագոյն և ոչ-նա գրիչ մի քոլորովին ազատագիր է, ուզելով խանգարեալը վերականգնել:

կաթագրի մէջ ինկած է, և ուրիշ նօտրագիր օրինակի[1] մ՝առնուած, ունի նաև ձեռագիրս՝ բայց բազմաթիւ տարբերութեամբ. ահաւասիկ. «Վասն որոյ և դուքիս՝ վարժանելոցն մերոց սաղմոսիւք և օրհնութեամբք յուղարկեմք իրրև զընծայ Աստուծոյ՝ աղաւնիս Աստուծոյ նուիրեմք. յաղագս այսորիկ ոչ է պարտ լալ և ողբալ քրիստոնէից և հեղհեղուկ. զի նոքա են ողբոյ արժանի, լալոյ և աշխարելոյ, սգոյ և աղաչանաց, և կոծոյ մեծի. այլ մեք մխիթարեցուք զնոսանքա՛ է կենդանութիւնս: Եւ արդ վասն այսմ(ր) ամենայնի բարձեք զկոծ. խաբանեցէք զողբս. ի բաց արարէք զտրամութիւն. զադարեցուցէք զտրտունջս. անդրդնեցէ՛ք չյոյնասիրնո՛ս, լռեցուցէք զկառաչիւնս վայելչն. արհամարհեցէք զեղանակամարս լալականաց. խափանեցէ՛ք զվեհութիւն և զվ(ղ)նաս. հալածեցէք զարիւնահանն և զմոխրացանն. թշնամանեցէք զմերկանգամանն (և) զհայտառակեալն. մեկնեցարո՛ք յանդնաբարն զվ(ղ)նասակ մոլեգնութենէն. հեռացարո՛ք ի հեթանոսական սնոտի բարքէն զոչ-նագործ սովորութենէն և համբերեցէ՛ք զնոցա փարատեցէ՛ք զսուգ տատանական և զանչո՛ռութիւն ամենևին(ր) ի բաց

զուրժէ » բառերուն. միւսներն աննշան բաներ են: Վերջը ապագրեալին համաձայն է:

ԺԹ. բորդն ըստ ամենայնի համաձայն է ապագրեալին:

Ի. բորդին սկիզբը մի միայն տարբերութիւն կայ, այն է « ողջ պահելով » : Վերջաւորութիւնն՝ օրինակիս մէջ չատ աւելի ընդարձակ է:

ԻԱ. բորդ ճառին սկիզբը բոլորովին ապագրեալին համաձայն է. իսկ վերջը գլխովին տարբեր: Ահաւասիկ անկէ մասն մի. « Երբ կամելէ և լուելէ ինչ, ընթրոնիս երկնէդ կերկէ. ապա երբ ոչ կոպկէ, ոտ կերկեայ զնէզ. արդար է հրամանն, այլ է կամն ապաւան առնէ. բայց ապաւանայ հրամանաւ կարծեցուցանէ և զգոյն և զանձնային ինչ, զի ընդդէմ ակնայ համբերացու և փորձել և աներկիւղացու և լրջալոյ դատապարտութեացու. այլ մէ ոչ եմ հրամանաց ձառայ. բայց անյնէչեան կամաւ երթէ մեղացն հնազանդիմ՝ արդարութենանն ձառայելոյ. պես որպես[1] », և այլն: Ապագրեալի յէջ 184 « գերեացիս » ձեռագրիս մէջ գերեզեցոյս է. յէջ 185 « հեռացեալ ես » . յէջ 186 « ոչ պահեաց » . յէջ 188 « այլ հրամանաս դիւացն կասարել » . ծանօթագրեալ բառերը « ի կիւս » նոյն են: Իսկ ապագրեալի « ի շեղջախտիս, յոգոնահմայս, ի գեղահմայս » ձեռագրին ունի ի շէջախոքս, յոգոնահմայս, ի գեղահմայս: Աստնցմէ դուրս կան զարձեալ յընթացս ճառիս գեռ ուրիշ բառական և շարադասական տարբերութիւններ:

ԻԲ. բորդ ճառին սկիզբը՝ ապագրեալի « զվէրն » ձեռագիրն ունի զվէրս, « չերևեցուցանէն » ոչ երևեցոցանէ: Տպ. « զսկիզբն իրացն երևեցուցանէ[2] » բացատրութիւնը չունի օրինակ, որով և յայտնի նախադասութեան բառերու հետ՝ իմաստն ևս աղաւաղուած է ձեռագրիս մէջ. ապագրեալի « վարուք »ը՝ վրոց կը գրէ. չունի նոյնպէս յայտնի բայս « կատարէ » և « վարձուց » էն վերջ եկող « վասատակոց » բառը: Տպ. « ընծայիւքն Յեփթայեայ » ին տեղ՝ ունի պոռոգաձառ Յեփթայեա(յ), և « զգործս անօրէնութեան »ը կը գրէ գործ անաւրէն: Վերջը՝ ապագրեալին հետ նոյն է:

1. Վերջաբանիս պատան զգալի կերպով կը տեսնուի երկաթագրի մէջ. տակայն թուղթ ինկած չէ, այլ կ'երևի, թէ այդքանը միայն ընդօրինակուած էր: Այս իսկ նշան է, ուրեմն, թէ աւելի ընդարձակ և հնագոյն բնագիր մ'ևս առաջիս եղած է, յորմէ ընդօրինակուած են երկաքանչիւր օրինակք, մինն համառօտիւ, իսկ միւսն ընդարձակաբար: Մէջ բերուած տողերէն գուսպ գեռ կը չարունակէ երեսապահման օրինակն: Մեր միւս ձառընտիրներուս մէջ բոլորովին կը պակսի այս ճառս, որով միայն կարելի էր իմանալ հին բնագրի սրպիսութիւնը:

2. Այս բացատրութիւնս ունին նաև բոլոր միւս օրինակներն՝ ի բաց առեալ երեսապահմներ:

ԻԳ. բորդին սկիզբն՝ հեռևեալն է՝ իւր մէջ ունեցած տարբերութիւններով. « Ամենայն բնութիւնք մեզաց և սիրգ ախտից անաւրէնութիւն(քն) չանան ծածկել ի մարդկանէ զանաւրէնութիւնս իւրեանց. իսկ բարկութեան ախտին մոլութիւն անհաբոյր է և վայրենաբարոյ, անամաւթ և անակնածող և գազանամիտ, «ան գոչնոյն գազանս գազանախոս և սրտբեղծ յաղագակել իրրև զհաւայհալածս մրգապահաց, որ չեւ է սքոյն[1] ինչ ազդեալ, և նա անգէն սկսի կարկամել ցուցանելով զիւրոյ բնութեանն թերևութիւն. այնպէս և բարկացողն չև ի սրտին ազդեալ ընդդիմութիւն ինչ բանից, և նա իրրև զհուր . . . » : Վերջը. « Չսէրտիրեացուք, զնահարհութիւն առաջացուք, զհնազանդութիւն ընկալցուք, և է հաշտել ընդ ընկերին մեր յաւուրս գոհութեան, ի համարձակութեամբ ղերկնից բարութիւնս ժառանգեացուք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր[2] . . . » :

Տպագրեալի 94 երես 1 ծան. ունի ձեռագիրս. « Եւ ոչ այնչափ մնէ՛ն՝ է գնացն, որչափ բարկացողքն է ցասմանէն. քանզի գեւն բարկանէ՝ է գնացն, որչափ բարկացողքն է ցասմանէն. քանզի գեւն միշտ վրէ ի նախանձ » : 95 երես 1 ծ. և 96 երես 1 ծ. տեղերը նոյնպէս են և յօրինակիս: Երես 87 ծան. 1 օրինակս ունի « գձուձ և ցնցոտաւոր զքեզ կոչեաց » : Տպ. 98 եր. 1 ծ. քերուած բառին տեղ ունի օրինակս « չէ է հոգ գիմեալ, այլ ի խոնարհութիւն » :

ԻԴ. բորդ ճառին սկիզբը. « Ահեղ անաւրէնութիւն և սաստիկ չարութիւնս սեռանեամ(ք) զոխապարհացն և զքինահանացն քան զամենայն(զ)մեզաց անաւրէնութիւն(ս). գի մեզք և անաւրէնութիւնք երբեմն բռբռոթեալ սոսկանան (սաստկացեալ բորբոքին) և երբեմն չէնչել դադարին[3] » : Գծուածները ձեռագրի մէջ եղած տարբերութիւնքն են. իսկ փակագծի մէջ առնուածները տպագրեալին: Վերջաբանը նոյն է: 101 երես ծան. 1, օրինակս ունի գոհաբեալ: 102 եր. ծան. 1, « յորդեցն Լս և տանց » . 104 երես ծ. 1, ունի գձուձ յաչէց. նոյն իրաւմ ծ. 2, « զաւրաւորէն » :

ԻԵ. բորդին սկիզբը տարբերութիւններով նոյն, « Անկոծ գողանայ և աներևոյթ յափշտակէ զսիրս մարդկան սատանա(յ) և ներքնել հանի

1. Մեր Դ. ճառընտիրն ևս ունի « գոյ »:

2. Ճառիս սկզբան և վերջաւորութեանը մեր Դ. բորդ և ԻԴ. բորդ ճառընտիրք ևս մասամբ կը համաձայնին և մասամբ կը տարբերին, որոնք նոյնպէս տպագրեն և իրարմէ տարբերութիւններ ունին:

3. Այս սկիզբն և վերջ Դ. բորդ և ԻԴ. բորդ ճառընտիրներէն ևս կը տարբերին, ինչպէս անոնք ալ իրարմէ և տպագրէն ունին ինչ ինչ տարբերութիւններ. ոչ մեկը միւսին հետ նոյն է բոլորովին:

ղերկիւղն Աստուծոյ և մտաւոյանէ զպատուիրանս նորա, և իբրև ըմբռնէ զամենայն խորհուրդս և զգայարանս և ապա պատրաւակէ ի ճշմարտութենէն ղերծոյ նոցա[1]» : Վերջաւորութեան մէջ չունի օրինակ ոտ. «սրբութեամբ զաւուրս մեր անցուցցուք» բացատրութիւնը : Ծան. 1 ունի ղընդվայրաբանութիւնս զատղեցուցոյ. յայորդ «և»ը կը պակսի : Տպ. «զվախճանն» բառէն վերջ ունի մեր : 106 երես 4 ծան. հ(յ)ովր ի որ է ջրակիս ի՝ համաձայնէ տպագրին. նոյն իմում 5 ծ. «Եբաղոյ պղատոնոյ ապաշխարեցին», տպագիրը լրացնող օրինակին համաձայն է : 107 երես 1. ունի կրթեցուցոյ. 2. հրամանագրութիւն. 3. ոչ մնաձայն է : 107 երես 1. ունի կրթեցուցոյ. 2. հրամանագրութիւն. 3. ոչ մնաձայն է : 108 եր. 1 ծ. Ե յաւժամանակեայս տարբ. 109 եր. 1 ծ. Ե առ անդիւրաբար ջնջեալ առնուցս :

Իզ. բորգ ճառին սկիզբն՝ «Յայժ չար են ազնային սովորութիւնք չարին, այլ առաւել ևս ախտ չար և սովորութիւն անաբէն է երեսումն և այնչափ զրկել[2] է ոչ (՞) յիմարեցուցանել սովորութիւն ախտին՝ մինչև ընդելական սովորութենէն չարիքն չարիք խակ ոչ երևէին[3]» : Վերջաւորութիւնը դեռ աւելի նուազ տարբերութիւններ ունի. տես. տպ. «կացցուք»ին՝ կեցցուք, «անդ»ին՝ անդր, «ի խոստացելոյ բարութեանց»ին՝ խոստացելովք բարութիւնս վայելեցուք : 112 երես 1 ծ. «եթէ յառաջ քան զամենայն, չէ երկուսին է անուսութիւնն» . 113 եր. 1 ծ. «և կամ ընդ խաղ, կամ ընդ վայր» 114 եր. 1 ծ. և մանաւանդ ցընծութեանցն և աղօս լեզուացն» . 115 եր. «իսկ յամենայն և ազօտալեզուացն» . նոյն իմում 1 ծ. ընդվայրածն, 2. «որոյ մխաքն» :

Իէ. բորգին սկիզբը տպագրեալի «արտասուօք»ին տեղ՝ ունի պաղատանօք, և «իցեն»ին տեղ՝ են. միացածները պարզ տարբերութիւններ են : Վերջն է. «Եւ զոգիս մեր սրբեցուս և շնեսցես ծեր

1. Ոման նոյնութիւնք և ուրոյն յատուկ տարբերութիւնք այս ճառս սկզբան և վերջաւորութեան նկատմամբ կը ներկայացնեն նաև յիշեալ ձառընտիրները. սակայն մանաւանդ տեսակէտով մի նշանաւոր է Իգ. բորգ ձառընտրի մէջ եղած վերջաբանութեան յաւելուածն, որ ոչ միայն մէջ չի գանուիր, «և անմեղութեամբ զվախճանութեան կատարեցուք. չէ գոյ անհնէթեան հանդերձ ընչեցելոյն յերկոյ և ծերոյ հանգոյցելոյն և ծ+ չէ փոփոխելի զրախտն ժառանգ...» :

2. Գ. բորգ. և Իգ. ձառընտիրները կ'ունդրեն այս ընթերցուածս այսպէս՝ «և այնչափ վհուհելեն յիմարեցուցանէ» :

3. Ճառիս, ինչպէս նաև յայտրգին սկիզբն և վերջաւորութիւնը՝ Գ. բորգ. և Իգ. բորգ ձառընտիրներ ևս աւելի կամ նուազ տարբերութիւններով մէջ կը բերեն, որով կրնանք ըսել, թէ չկայ օրինակ մի՝ որ առանց տարբերութեան համաձայն ընթանայ միւսին :

կատարեցուցոյ և զվախճանն բարի ընկալցուք, զի յանանց ի կեանսն փառաւորեցուք և ընդ հոգեկէնսն զասակցե(ա)ցուք», և այլն : 117 երես ծ. 1 «որք խաւարեալք են ի լուսոյ պատուիրանացն» : 118 եր. ծ. 1 «նոյնպիսիք են՝ որ զմի ի պատուիրանացն լսեն» . ծ. 2 «և լքեալ ի առաքիչ անյնաւէրութենէն, աներկիւղ գործեն» . ծ. 3 «անդրէն առաց, երկն (տպ. նոյնպէս) արբեցողք և բամբասողք զարքայութիւնն» : 120 երես, ծ. 1 «զի միշտ ի մթի (տպ. և ի խաւարի) պահէ և աբեցուբեաւ է ընթունէն» . ծ. 2 «որք վասն արբեցութեանն չուայտանան մատածին ևս բանիւք» : 122 երես ծ. 1, 2 «և արդ (տպ. մեք) մի սովորութեամբ (տպ. խակ) կապեացուք ընդ չար գիւին» :

Իը. բորգ ճառին սկզբան երկու տպերը միայն նոյն են. ահաւասիկ. «Տէր մեր Յիսուս Քրիստոս վասն փրկական բանիցն յանդիմանութեան չարչարանաւք խաչելոյս յաստուածամարտ ազգին և յընդդիմական ժողովրդենէն, և ընդ յաւիտենական կրօսկանն չոգնեցուցանել զհնարեցս սատանայի[1], որ ընդ պատուական ամառնութենն արկանէ կրծից զոհութեանց. Հանդերձ յոբեմ կամ մերդ է ըզն խոնարհել, ապա Աստուած ընդունի

ՀԱՅԵԱՅԳ ՄԻ[1] ՊԱՐԻՍԵԱՆ ՕՐԻՆԱԿԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

Նախ և յառաջ դիտել կու տամ, որ այս օրինակիս մէջ ևս երկաթագրի նախադրութիւնը բոլորովին կը պակսի: Ձառերն իակ յաջորդաբար գրուած են, այսինքն է՝ առանց ընդմիջելու ուրիշ գրութիւններով. այս բանս յայտնի կը տեսնուի թերթերու յառաջատազաց չարունակութենէն, զորս նշանակած է Կարիէր, և կը դնեմք առընթեր ճառիցն՝ վակագծի մէջ:

Ա. ճառին (թերթ 1–5) սկիզբն և վերջն՝ աննշան տարբերութիւններով նոյն են ապագրեալին հետ: Ա.յապէս են նաև Բ. բորդ ճառն (թերթ 5–9) և Գ. բորդն (թ. 9–13)[2]:

Դ. ճառին (թ. 14–18) սկիզբն և վերջաւորութիւնը նոյն են. բայց ամբողջութեան մէջ եղած տարբերութիւնքը չատ հոծ են և նշանաւոր:

Ե. բորդ ճառին (թ. 18–21) սկիզբը նոյն է, իակ վերջը չատ կը տարբերի տպագրեալէն:

Զ. բորդին (թ. 21–24) սկիզբն և վերջը նոյն են, բայց հանդերձ նշանաւոր տարբերութեամբք:

Է. բորդ ճառին (թ. 24–27) սկիզբը նոյն է. իակ վերջաւորութեան մէջ նշանաւոր տարբերութիւնք կը վիճանի:

Ը. բորդ ին (թ. 27–29) սկիզբը տպագրին նման է՝ հանդերձ այն տարբերութիւններով, որք նշանակուած են ի տողս 106 էջին: Վերջը նոյնանման է՝ ինչ ինչ տարբերութիւններով. երկու ամբողջ տողեր ալ յաւելցուած են:

Թ. բորդ ճառին (թ. 29–33) սկիզբը նոյն է, բայց ի վերջաւորութեան բնագիրը մեծապէս կը տարբերի:

1. Ա.յս հակիրճ տեսութիւնս՝ ազնիւ բարեկամիս Ա. Կարիէրի հաղորդած տեղեկութեանց համաձայն կ'ըլլայ, զոր ի անկարելի էր ամբողջ ընդօրինակութիւն մի ձեռք բերելը: Ա.յս տեսիս հրապարակաւ ևս խորին շնորհակալութիւնս յայտնել պարտական եմ: Չամեհամատութիւնք գործեալ վենետկոյ 1836 ի տպագրութեան հետ կ'ըլլայ:

2. Ա.յս թերթիս գալով՝ գրութիւնը կը փոխուի, և հայագէտս կը ծանուցանէ, թէ առաջին երեք ճառերը գրուած կը տեսնուին ուրիշ և աւելի հին ձեռագրի մի սկիզբը վերադրելու համար, որ 14 բորդ թերթով կը սկսի: Առաջին 13 թերթերու ընդօրինակողի նպատակն յայտնի կ'ըլլայ՝ ի տողս 13. բորդ թերթին ըրած յայտարարութեամբը, թէ կ'ընդօրինակէ նա ինքն ճառիս առաջին բառերն՝ իսկզբան 14. բորդ թերթին:

Ժ. բորդ ին (թ. 33–39) սկիզբը տարբերութեամբ նոյն է. վերջաւորութեան մէջ ևս կան ոչ սակաւ տարբերութիւնք, թէ և ոչ կարևորք:

ԺԱ. բորդ ճառը (թ. 39–44) կը սկսի՝ «Յայժ չար է սխալ աղբերութիւն[1]», և այլն. ի վերջն՝ բնագիրը չատ տարբեր է:

ԺԲ. բորդ ճառին (թ. 44–48) սկիզբն է՝ Յայժ չար են ազնուական սովորութիւնք չարեաց, այլ առաւել ևս չարեաց է երջանից սովորութիւն»: Իակ վերջն է՝ «սատ կեցցուք առաքինութեամբ, և վախճանեսցուք հաւատովք, և անդ երթեալ շքեղապայծառին Աստուծոյ ժառանգեսցուք, և շնորհացեալ բարին վայելեսցուք ի Քրիստոս Յիսուս ի մէջ մեր, ընդ որում հաւր և սուրբ հոգւոյն վայել փառք յաւիտեանս[2] ամէն»:

ԺԳ. բորդ ճառին (թերթ. 48–51) սկիզբը նոյն է. բայց ի վերջաւորութեան կան տարբերութիւններ:

ԺԴ. բորդ ին (թ. 51–55)[3] սկիզբը նոյն, ի վերջ այսր՝ բնագիրը չատ կը տարբերի:

ԺԵ. պին[4] (թ. 55–66) սկիզբը նոյն է, բայց վերջաւորութիւնը տարբեր է. այսինքն է՝ ձեռագիրը չունի[5] տպագրեալի վերջի պարբերութիւնը:

ԺԶ. բորդին (թ. 66–69) սկիզբը նոյն է, բայց ինչ ինչ տարբերութիւններով. վերջը տարբեր է:

ԺԷ. բորդ ճառին (թ. 69–72) սկիզբն է՝ «Հայեաց ի յոյն վերին». վերջաւորութեան նշանաւոր տարբերութիւնք կը տեսնուին:

ԺԸ. բորդին (թ. 72–76) սկիզբն և վերջը տարբերութիւններով նոյնանման են:

1. Ա.յս բառս անծանօթ է մեզ օրինակաց. ոչ տեղեկութիւն կը գտնեն:

2. Ճառիս վերջն աւելի կրճատեալման օրինակին և ԻԳ. բորդ Ճառընտրին մերձաւոր է. բայց ոչ միոյն հետ ըստ ամենայնի նոյն:

3. 53. բորդ թերթը մի և նոյն գրչի ձեռքով վերանորոգուած է, որ գրած է 1–13. բորդ թերթերը: 56–62. բորդ թերթերը սպիտակ մնացած են, այսինքն է առանց գրութեան: 63. բորդ թերթով բնագիրը վերստին կը սկսի, բայց մի ուրիշ տեսակ հին գրչութեամբ:

7· ԺԴձ սակաւ ննջեցուս և սակաւ արբցուս և սակաւ ննջեցուս: ԻԴձ սակաւ կերիցուք և պատելըդն բոթին հանցուս հոգւոյ: Ես պղտոր ննջուցուս. պի հոգին մարմնոյ լինէց և եղբայր է, ի պղինցուս պնա. ոսկա ննջեցուս: Ե0, Պ0, Կ0 և սակաւ ուտել և սակաւ ըմպել և սակաւ ննջել:

8· ԺԴձ և անդադար աղաւթել արասցուս: ԻԴձ անդադար աղաւթեցուս: ԺԴձ և աղաւթել անդադար: Դձ և աղաւթիւ հանապազ: Ե0, Պ0 և աղաւթք անդադար մատուցանել:

9· Ե0, Պ0· Այլ մանաւանդ պարտ է:

10· ԺԴձ չունի:

11· ԻԴձ պի:

12· ԺԴձ ընձեռել և մատուցանել: Կ0 զայն աղքատաց ընծայել: ԺԴձ, Դձ աղքատաց ընձեռել: ԻԴձ աղքատաց տալ զայն:

13· ԺԴձ զի դու քաղցեցես: Ե0 արդեօ ըն դու քաղցիցես: Պ0 զի քաղցցես:

14· ԺԴձ, Պ0, ԺԴձ զմեղս քո ...ես: Ե0, Դձ և զմեղս քո քաւեսցես: ԻԴձ և մեզքն քո քաւեսցին: Կ0 և զմեղս քո սրբեսցին:

քաւեսցի: Այս [1] են պահք սուրբք եւ աստուածականք, եւ սքաւք [2] լինին ընդունելի [3] ամենայն վչտամբերութեանցն [4] ճգնութիւնք, որ [5] բժշկեն զվիրաւորեալսն մեզաւք, փրկեն զգերեալսն ի սատանայէ. կանգնեն զկործանեալսն [6] անաւրէնութեամբքն, յարուցանեն [7] զհիւանդացեալսն ապաշխարութեամբք. արբեն զաղտեղեալսն [8] պղծութեամբք, լուսաւորեն զխաւարեալսն մոլորութեամբ [9], եւ մաքրեն եւ արդարացուցանեն [10] զպահողսն յամենայն [11] յանցանաց, եւ կացուցանէ մեծապայծառ լուսով [12] առաջի ահաւորի եւ լուսաւոր [13] բեմբին աստուծոյ. եւ [14] ընդ նմին ժառանգեն [15] զանանց բարութեանցն զվայելչութիւնն ի քրիստոս յիսուս ի տէր մեր [16], որում փառք յաւիտեան»: —

Զեռագրաց այս բազդատութենէս ակներև կը տեսնեն ընթեր-

1· ԻԴձ· Այսոքիկ են պահք սուրբք և ...ոցն: ԺԴձ· Աստ այս են պահք, և այլն: Ե0, Պ0· Այս են պահք սուրբք աստուածականս: Դձ այս են պահք հոգւոյ:

2· ԺԴձ և ...ալ:

3· ԻԴձ ընդունելի Աստուծոյ:

4· ԺԴձ ամենայն վչտամբերութեան և ճգնութիւնք: Ե0, ԺԴձ ամենայն վչտամբերութեան ճգնութեանց: ԻԴձ հոգեբերութեամբ և ճգնութեամբ:

5· Ե0, Պ0 չունին որ: ԻԴձ· Սոսա բժշկէին վիրաւորեալս մեզաւք, և փրկին գերեալքն ի սատանայէ:

6· ԺԴձ պնդացուցանել:

7· Կ0 բժկեն զհիւանդացեալս ...ս:

8· Կ0 սրբեն զպղծեալսն պոզ(ո)կութեամբ:

9· ԺԴձ խաւարութեամբ ...ս:

10· ԺԴձ չարդարին: ԻԴձ չարդարին:

11· ԺԴձ յամենայն ...ս:

12· ԺԴձ, ԻԴձ հոգւոյ ...ութեամբ: Կ0, Դձ ...ութեամբ: Ե0 ...ս:

13· ԺԴձ, Դձ և ...ն ԲՒՒՆ փրկոսն ընդ ...բս: ԺԴձ բեմին փրկոսն ...ս: Ե0, Պ0 ...ն Աստուծոյ: Կ0 բեմին Աստուծոյ, ...բն և պայծառ երեսս և ...ս հոգւոյ:

14· ԺԴձ· Ընդ նմին:

15· ԺԴձ· ժառանգել զանանց ...ութեան զվայելչութիւնս: ԺԴձ· ժառանգեցուս և զանանց վայելչութիւնն: Կ0 վայելին զանանց բարութեանց: Դձ ժառանգել զանանց բարութեանց, և այլն: Ե0· Վայելին զանանց վայելչութիւնն: Պ0· ժառանգին զանանց վայելչութիւնն և ...բս:

16· ԺԴձ· Ընդ որոյ հոգւ և ...բն հոգւոյն և պարտ յաւիտեան յաւիտենից: Կ0 որում փառք, աւիտեան, ամէն: ԻԴձ որում փառք յաւիտեան յաւիտենից, ամէն: ԺԴձ որում վայելին փառք իշխանութիւն և պատիւ այժմ և յաւիտեան յաւիտենից: Դձ, Ե0, Պ0 երկաթագրին պէս:

ցոլք, թէ ո՛րքան մեծաթիւ և նշանաւոր տարբերութիւններ կան գրուածքիս միայն 8 օրինակաց մէջ. և թէ ո՛րքան աւելի պիտի լիներ անոնց թիւն, եթէ ի ձեռին ունեցած ըլլայինք 10–20 օրինակ ևս: Այս զգալի երևոյթս՝ յայտնի նշան է ճառերուս հնութեան և իբրև չահեկան գործ՝ շատ անգամ ընդօրինակուած ըլլալուն: Սակայն դիտելու ենք, որ այս տարբերութեանցս մի մասն, — որպիսիք են՝ ըստ իս՝ վրիպակ ուղղագրութիւններ, այլայլութիւնք քերականական ձևոց և յեռեյոառաջութիւնք բառից և բացատրութեանց, — ընդօրինակութեան կամ տպիչ գրչաց անմիջական արդիւնք են. որով յառաջ եկած են յաճախ անհամաձայնութիւնք, նոյն իսկ ընդհանրապէս իրարու համաձայն ընթացող օրինակաց մէջ: Այս կարգէս են մանաւանդ ԴՃ, ԻԴՃ և Կ0 օրինակներն, որոնք եթէ բանիբուն գրչաց ձեռքով ընդօրինակուած ըլլային՝ երևսաղեմեան և պարիսեան օրինակներէն շատ չպիտի տարբերէին. ինչպէս վերջիններս ալ իրարմէ բնաւ չպիտի տարբերէին: Միւս մաս մ՛ալ, — ինչպէս են յաւելուածք, յապաւումներ, այլայլութիւնք շարադրութեանց, կամ լաւ ևս՝ մեկնաբանութեան ձևով պարզաբանուած տողատ թիւններ, — ուղղակի ճառընտիրները խմբագրողներու ձեռքով յառաջ եկած են: Այս տեսակ տարբերութիւններ՝ նոր օրինակաց մէջ աւելի զգալի են, և իրօք ԻԴՃ, Կ0, և Գ0 մեկէն աւելի չափելի օրինակներ կ՛ընծայեն մեզ, զորս ծանօթութեանց մէջ իսկ նշանակեցինք մասամբ իւրք: Իսկ մնացած մասն, — օրինակի ազատ՝ հին երկաթագրին մէջ չգտնուած ընթերցուածներն, և նոյն իսկ անոր ընթերցուածոց հակառակ ելլող այն տարբերութիւնները, զորս իրարու կատարեալ համաձայնութեամբ կը ներկայացնեն բոլոր միւս օրինակները, — կրնանք ըսել, թէ արդիւնք են երկաթագրէն տարբեր և գուցէ թէ հնագոյն բնագրի մի, որոյ գոյութիւնն իսկ անոր համաձայն ընթացող ուրիշ աւելի կը հաստատուի ԺԳՃ ով և անոր համաձայն ընթացող օրինակներու ընթերցուածներէն:

Այս կերպով ի նկատի առնելով բազդատութեանցս արդիւնքը, կարելի է վստահութեամբ եզրակացնել հետևեալ ճշմարտութիւնը. Ա. թէ Երուսաղեմի և Պարիսոս բոլորգիր օրինակներն՝ որովհետև իրարու կը համաձայնին [1] ընդհանրապէս, — ի բաց առեալ ընդ-

1. Այսինքն է՝ վերոյիշեալ հօթն գրչագրաց 366 տարբերութեանց մէջ՝ 214–220 անգամ իրարու համաձայն կ՛ընթանան այս երկու գրչագիրք: Այս համաձայնութիւնս 300 անգամու ևս պիտի հասնէր եթէ նկատելու ըլլանք, որ այս երկու օրինակներս շատ անգամ պատահաբար կամ գրչաց անհոգութեամբ է որ իրարմէ կը տարաձայնին, լոկ

օրինակողաց ձեռքով երկուստեք սպրդուած այն մի քանի աննշան տարբերութիւններն կամ խանգարմունքը, — ուրեմն պէտք է, որ կամ իրարմէ և կամ մի և նոյն հնագոյն բնագրէ մի ընդօրինակուած ըլլան, որուն չատ հեղ կը համաձայնին նոյնպէս ԴՃ, ԻԴՃ և Կ0: Այս բնագիրս՝ ըլլալու է կամ նոյն իսկ մեր հին երկաթագիրն, և կամ լաւ ևս անոր հետ սերտ վերաբերութիւն ունեցող մի աւելի հնագոյն երկաթագիր օրինակ: Արդ իրարմէ կամ մի և նոյն բնագրէն ընդօրինակուած երկու օրինակներ՝ չէին կարող յիշեալ 26 ճառերը տարբեր հեղինակներու անունով մակագրել՝ բայց եթէ պատահաբար: Այս պատահական պատճառս, — զեթ պարիսեան օրինակի նկատմամբ, — այժմ իսպառ պարզուած կը տեսնենք. այսինքն է, այս ձեռագրիս մինչեւ մասը միայն՝ (թերթ 46) որ գրուած է ԺԹ–ԺԵ րորդ դարուն՝ բոլորգիր, կ՛ընծայէ յամին 1836 ի վենետիկ տպուած Ս. Եփրեմի Գործոց ցանկը՝ գրուածքով հանդերձ. իսկ առաջին և վերջին մասերը, յորս կը պարունակուին խնդրոյ նիւթ եղող 26 ճառերն՝ մի այլ ցանկով, ԺԷ. դարուն գրուած է, երբ հին երկաթագրի մակագրութիւնն արդէն իսկ եղծուած էր և անընթեռնլի: Ուրեմն այս երկու կէսերս իսկ բաւական պատեհներ կը ներկայացնէին վերջին ընդօրինակողաց՝ յիշեալ ճառերն Եփրեմին մակագրելու, այնու մանաւանդ որ, ինչպէս կը վկայէ Ա. Կարիէր, բոլորգրով գրուած մասին մէջ պարունակուած Մանդակունեայ ճառերէն ոմանց վրայ վերնագիր իսկ չկայ եղեր ի սկզբան, այլ յետ ժամանակաց և տարբեր գրչութեամբ յաւելուած են: Բ. թէ մեր թիւ 994 հին երկաթագիրն՝ ոչ առաջինն և ոչ իսկ ամենակատարեալ օրինակն է Մանդակունեայ ընծայուած ճառերուն, ինչպէս ի սկզբան կը կարծուէր. ապա թէ ոչ միւս օրինակները չպիտի կարենային համաձայնութեամբ մի ուրիշ հին, օրինակի այն է ԺԳՃ. այնպիսի ընթերցուածներ ընծայել մեզ, որոնք երբեմն կը պակսին նոյն իսկ երկաթագրին մէջ, և երբեմն ալ կը սրբագրեն զայն՝ քաղայարմար կերպով, զորս ցոյց տուինք մեր բազդատութեանց մէջ. այլ տուգիս պէտք է, որ եղած ըլլայ անկէ աւելի հին և անթերի օրինակ մի, որուն վրայ նախ կատարուեցաւ ԺԱ–ԺԲ. րդ դարուն յիշեալ երկաթագրի խմբագրութիւնն, և յետ այնորիկ Գ-րորդայ օրինակի բնագրի խմբագրութիւնն, իրեն յատուկ ձեռակերպութեամբ: Աստուգիս այսպիսի մի հնագոյն օրինակի՝ իրրև ընտրելագոյն ներկայացուցիչ կարող

բայից, բառից հոլովմանց և տուից վերջաւորութիւններով, և երբեմն ալ գրչութեանց խանգարուած ըլլալուն պատճառաւ:

էինք անուանել մեր ԺԳ. րորդ ձառընտիրն, որ ինչպէս բաղդատութենէն իսկ լաւ տեսնուեցաւ, մէկ կողմէն երկաթագրին հետ ամենամերձ և յաճախակի առընչութիւններ ցոյց կու տայ, և միւս կողմէն ալ անոր ընդօրինակողի կամ խմբագրողի ձեռքով ներմուծուած վրիպակ ընթերցուածները կ'ուղղագրէ և թերութիւնքը կը լրացնէ, իբրև օգնական և ձայնակից ունենալով իրեն միւս օրինակներէն մերթ այս և մերթ այն, և մերթ ալ զամէնքն ի միասին: Բայց կը ցաւինք որ այս պատկառելի ձառընտիրս՝ երկու ճառեր միայն ունի, այսինքն է մին Վառ պահոց՝ Եփրեմի մակագրեալ, իսկ միւսն ի Ս. Եղիազար-ին՝ յանուն Յովհ. Մանդակունւոյ: Սակայն վերջինէն, – որ չի գտնուիր թիւ 994 երկաթագրին մէջ, – կարելի է հետևցնել, թէ առաջինն ևս այնպիսի մի օրինակէ գաղափարուած է, որ այսօր մեզ ծանօթ եղած բոլոր օրինակներէն հնագոյն[1] ըլլալու էր, դիտելով որ ձառընտիրս 1270–1280 ժամանակամիջոցին գրուած է: Գ. Գէորգեայ օրինակի բնագրի խմբագրութիւնն՝ երկաթագրի խմբագրութենէն աւելի նոր ըլլալուն յայտնի ապացոյց են այն նորամուտ բառերն և բացատրութիւնքը, զորս նոյն ձեռագրի տարբերութեանց մէջ փոքր ի չատէ արդէն իսկ մատնանիշ ըրինք. անդրադարձ ապացուցութեանց պէտք չկայ:

Մանդակունւոյ ընծայուած ճառերու բնագիրն այս կերպով վերահաստատելէն և իւր ընդարձակ պարագաներով նկատելէն յետոյ, մնաչինք ուրեմն այսուհետև քննել անոնց հարազատութիւնը կամ անհարազատութիւնն:

1. Սակայն այսպիսի մի հնագոյն օրինակի մէջ անգամ Վառ պահոց ճառին՝ Եփրեմի մակագրուած ըլլալը՝ նշան է, թէ գուցե բաց ի վերև նշանակած պատճառներէն, ուրիշ անյայտ՝ բայց հիմնաւոր պատճառներ ևս եղած են ի վաղուց, որոց հաւանականագոյնն է՝ ըստ իս՝ անոնց առանց հեղինակի անուան և մակագրի ատա և անդ յածելն, զորս Ժ. րդ գարու հաւաքաբան մ'իսկ կարող էր ըստ կամս այս կամ այն Ս. Հօր մակագրել, անոր ոճէն կամ նախապարակից գրուածքէ մի մակաբերելով զայն:

ԳԼՈՒԽ Ի.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ՎԱՒԵՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆ

ԵՒ ԱՆՈՐ ԱՆՈՒԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԱՌԵՐՈՒ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԵԱՆ

ԴԷՄ ԵԼԼՈՂ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՓԱՍՏԵՐՆ.

Ձառերուս գէթ մեզ ծանօթ գրչագրաց ընդարձակ ուսումնասիրութենէն փոքր ի չատէ տեսնուեցաւ, թէ ինչպիսի արտաքին պատճառներ և պարագաներ վրայէ վրայ գալով՝ հայազգի հեղինակին ընծայուած գործը հետ զհետէ այլակերպեր և երկբայութեանց են՝ թարկած են: Տեսնուեցաւ, թէ և ի՞նչպէս յառաջացեր են այդ պատգաներ, և թէ ի՞նչ չափով գարձեալ կու գան կը միաբանին թիւ 994 երկաթագրին, կամ անկէ աւելի հին և հաւանօրէն աւելի կատարեալ նախօրինակին հետ, որ թէպէտև անյայտացեր է, բայց և այնպէս թողլով մեզ, – ԺԳ. րդ հնագիր ձառընտրի միջոցով, – իւր վաղեմի ստոյգ գոյութեան ակնյայտնի հետքերն, որոց միւս գրչագիրք ևս, ինչպէս տեսանք, կը համաձայնին: Այժ, մնար ազին համեմատութեանց ձեռքով՝ չափով մի արդէն պարզեցինք և այն թանձր քօղի ծայրերը, ցոյց տալով գէթ Մանդակունւոյ գրաւոր գործի նախկին կացութեան և կազմակերպութեանց հետ՝ նոյնպէս և հեղինակի բնորոշ հետքերը: Այնպէս որ այժմ կարող ենք ասել, թէ ոչ կէսմաքսի ե. րորդ օրինակն և ոչ իսկ ԴՃ, ԺԴՃ և ՊՕ են, որք Մանդակունւոյ վերաբանութեան դէմ կը դնուին, վասն զի այդ գրչագրերն ԺԵ–ԺԷ. րորդ դարում գրուած են, երբ երկաթագրին արդէն եղծուած և կարէր անհմուտ գրչաց իսկ այլ ընդ այլոյ մակագրութեանց ընդարձակ առպարեզ բանալ: Այլ ընդ հակառակն ԺԳ. րդ դարում, – այն է յամի տեառն 1270, – գրուած մատենադարանիս ԺԳ. ճառընտիրն՝ ընաիր բոլորգրով, որ Վառ պահոց ճառը Ս. Եփրեմի կը մակագրէ. և ասկէ աւելի նոյն իսկ Մանդակունւոյ ընծայուած ճառերու նելքին և արտաքին այն հանգամանքներն, որոց առջև հարկ է

քննադատին կամաւ կամ ակամայ կանկ առնուլ, և անաչառու-թեամբ քննել։

Այս դժուարակնճիռն հանդամանաց մին է երկաթագրին մէջ ճառերէն յառաջ զետեղուած Նախադրու-թիւնն, որ լեզուին յատակու-թեամբ և ընտիր ոճով Մանդակունւոյ ճառերու չարադրութենէն շատ վար չի մնար։ Արդ՝ այս նախադրութիւնս, եթէ ստուգիւ Ե· դարդ կամ սակեդարու բովին մէջ թափուած համարուի, այնուհետեւ իրաւամբ պիտի հետեւի, թէ Մանդակունւոյ այն ճառերն, որոնք յա-նուանէ կը յիշուին անոր մէջ, աւելի յօտար և անյայտացած բնա-գրէ մի թարգմանուած ըլլան, քան թէ ինքնագիր· որովհետեւ դժուա-րին է հաւատալ, թող թէ գտնել և ապացուցանել այն դարուն մէջ գրուած ուրիշ ինքնագիր և նոյնակերպ երկասիրութիւն մի, որոյ հանդիպ մի և նոյն երեւոյթը կրկնուած ըլլայ, ի բաց առեալ պատմական կամ կանոնական գրուածոց հակիրճ յատկաբաններն, որոնք յետագայ գրիչներ ներմուծած են յաճախ։ Իսկ նկատմամբ թարգմանութեանց՝ Ս· Գրքին սկսեալ՝ ունինք դեռ ուրիշ օրինա-կներ ևս, յորս բնագրոց նիւթին հետ՝ հակիրճ բովանդակութիւնն ևս մէն մի գրոց և գլխոց առանձին նախադրութեամբ կարգեալ կան։

Բ· Դիտելով, որ,—նախընթացաբար կատարուած առանձին բաղ-դատութեանց համաձայն,—Գէորգայ օրինակի ընծայած ճառերը, բաց ի սովորաբար ամէն գրչագրաց մէջ տեսնուած տարբերութիւն-ներէն, ունին այնպիսի ընդարձակ յապաւումներ և յաւելուածներ, մանաւանդ որ մեծն է, առհասարակ լեզուի և շարահիւսութեան այն-պիսի այլափոխութիւններ, որոնք գոգցես իմն ուրիշ կերպով չեն մեկնուիր, բայց եթէ հետեւցնել, որ իրարմէ տարբեր ժամանակի մէջ կատարուած կրկին թարգմանութիւններ եղած ըլլան՝ մի և նոյն հեղինակի, տարի և յոյն բնագրոց վրայէն։

Գ· Յաղթ պէս պէս տուժկնութենց ճառն, որուն ոճն ևս տար-բեր է Մանդակունւոյ միւս գրուածոց ոճէն, Հռիփսիմեանց երկրորդ թարգմանութեան հանգոյն՝ օրինակք առ հատարակ Մովսէսի միայնա-կեցին կը մակագրեն, իբրև թուղթ խրատական՝ գրեալ առ Սիմոն։ Արդարև, այս պատառիկս ոչ միայն Մանդակունւոյ չէ, այլ և ոչ Մովսէսի միայնակեցի։ Թարգմանուած է այն,—հաւանօրէն ի ԺԱ–ԺԲ·րդ դարում՝,—հօրն Եւսեբեայ անուամբ եկած այն ընդ-արձակ ճառէն, որ հրատարակուած է ի Մաքենոփարանի Հռիփ՝ ԺԲ· հատորին մէջ,—յէջ 391–392։ Սակայն դիտելու է, որ Մանդա-

կունւոյ ընծայուածը,—մեր թիւ 994 երկաթագրին մէջ,—չորա-բանութեամբ մեծապէս կը տարբերի Հարանց վարքէն, և ի սկզբ-բան չորս տողերն ևս աւելի ունի, որով կարելի է ըսել, թէ նոյն իսկ հին թարգմանութենէն մնացած ըլլայ։ Հակառակ պարագայի մէջ՝ երկաթագրի խմբագրութիւնն ԺԲ· դարէն յառաջ չի կրնար եղած ըլլալ։ Դիտելու կէտ մ՚ևս հետեւեալն է, զի ուր Եւսայի «Երեք են առաքինութիւնք», և այլն, նախադասութիւնքը կը գործածէ, հայ թարգմանիչը «չորք են» նախադասութիւններու փոխած է միշտ, կամ իւր գաղութիւնը ծածկելու և կամ ընթեր-ցողաց առաքինութիւն մի կամ խրատ մի աւելի չամբելու դի-տումով։

Դ· Ճառն որ Յաղթ պէս պէս տուժկնից՝ անյարմար կերպով տրուած է Մանդակունւոյ, և բոլորովին ուրիշ հեղինակի գործէ մի քա-ղուած է։ Հռիփսիմեանց երկրորդ հին թարգմանութեան մի քանի օրինակ-ներ Մակարայ կ՚ընծայեն զայն, և անոնց ներկայացուցածը գրե-թէ հին երկաթագրի ունեցածին, կամ լաւ ևս Մանդակունւոյ գոր-ծոց մէջ հրատարակածին կրկինն է։ Այս բանս յայտնի կը տես-նուի նոյն իսկ Հռիփսիմեանց երկրորդ 1855 ին ի Վենետիկ եղած հրատա-րակութենէն[1], ուր սակայն ընդհակառակն անանուն մէկու մի տրուած է՝ ուղղեալ առ Հայրն Մակար, հետեւեալ մակագրով· Հռիփսիմեանց վանն սրբոյ-Լուսաւորչեան (չար) խորհրդոց· միայն թէ վերջինս ունի տարբերութիւններ թիւ 994 երկաթագրէն։ Պարիսու թիւ 57 օրինակին և երուսաղեմեան խորագիրներն,—ինչպէս տեսանք,—ի բաց առեալ երեք բառից փոքրիկ յաւելուածն, քալ կը թուին հա-մաձայնել Հռիփսիմեանց երկրորդ 1855ի հրատարակութեան։ Արդ՝ ի նկատի ունենալով կանխաւ դիտել տուած այս երկու գրչագրաց խորագրոց բովանդակութիւնը, կրնանք ըսել, թէ ասոնց ծանօթ ըլլալու էր Հարանց վարուց հին թարգմանութենէն դուրս՝ նաև նոր թարգմա-նութիւնն· մինչդեռ Մանդակունւոյ թիւ 994 օրինակն՝ հինը միայն ճանչցեր է, և թէ նոր թարգմանութեան առ Մակար ուղղուած Հռիփսիմեանց մէջ եղածն՝ իրօք պատասխանք են ի Մակարայ, հետե-ւաբար անանուն հեղինակի մի գիւտ, պարզապէս նոր թարգմանու-թեան թարգմանչի ձեռքով յառաջ եկած։ Այլ զարմանքն այն է, որ հանդերձ այսու՝ Պարիսեան օրինակն՝ Եփրեմի, և Գէորգայ օրինակն և Էջմիածնի թիւ 918 և 920 ճառընտիրք՝ Յովհ· Մանդակունւոյ

1· Տես վերջ Հռիփսիմեանց, հա· Բ· եր· 571–575։

կը մակագրեն զայն։ Մէյ մ· Յովհաննէս վանքի մէջ գրուած բո-
լորգիր և անթուական ձառընտրին մէջ դեռ աւելի ընդարձակ ծա-
ւալ ստացեր է՝ միացուելով Յովհ· Ոսկեբերանի մակագրուած մի
ուրիշ ճառի հետ՝ վասն աղքատասիրութեան [1] և ողբմածութեան խորագրոց
ներքև, որ կը սկսի այսպէս· « Փառաւորեացուք զբարերարն Աս-
տուած », և այլն։ Զնայելով Ոսկեբերանի անուան՝ միայն դիտել կու
տանք, որ այս ճառիս մէջ աղքատասիրութեան և ողբմածութեան վրայ
խօսք մ'անգամ չկայ, այլ ապաշխարութեան։ Ուստի յայտնապէս կը
տեսնուի, որ թէ Հոբանց վրայ և թէ այս գրչագրացս մէջ իրարմէ
տարբեր գրուածոց քաղուածոյից հետ՝ այլևայլ հեղինակք ևս, — ժա-
մանակակից կամ մերձաւոր ժամանակաւ, փոյթ չէ, — իրարու հետ
տպեղ կերպով շփոթուած են։ Հեռևարար կրնանք ըսել, թէ Մանդա-
կունւոյ գործոց և Հարանց վարուց մէջ հրատարակուած այս գրու-
թիւնս ոչ անոր կարելի է վերագրել, ոչ Յովհ· Ոսկեբերանի, ոչ
Մակարայ և ոչ այլ անծանօթի ուրուքն առ Մակար· այլ անոր
բուն հեղինակն է յամի Տեառն 379–399 ապրող և մեծահռչակ
յոյն վիսյնակեացն Եւագրէս Պոնտացին։ Այս՛, սա բաց ի բազմա-
թիւ և անյայտացած գործերէ, ամբողջ գիրք մ'ալ գրած ունի առ
Աննատոլիոս [2], վասն սրբոյ խորագրաւ, որուն յոյն բնա-
գիրը տակաւին կը մնայ անյայտ։ Սակայն Սոկրատ [3] և Սոզոմէն [4]
դրուատեօք կը յիշատակեն զայն, այսպէս և Պալլատիոս՝ որ աշակեր-
տեցաւ Եւագրի և յետոյ անոր դէմ սրեց իւր գրիչը։ Բայց մենք
երախտապարտ ենք Գեննատիոսի, որ իւր Յովհ· Ժ.Ա· գլխում ոչ միայն
տեղեկութիւններ կու տայ Եւագրի յիշեալ գրուածքին վրայ, այլ
ազատ համառօտութիւն մ'ևս ասանդած է մեզ՝ ի լատին բարբառ։

Գեննատիոսի մեզ ընծայած գրութիւնն այսպէս կը սկսի· « Octo

1· Այս խորագիրս կը կրեն Գէորգայ օրինակի մէջ Ը·րդ և Պարիսու օրինակի
ժ·րդ ճառերն, որոնք կը համապատասխանեն երկաթագրի Ե·րդ, այն է Յովհ-
աննու սրբոյ-բերան գոնէ ճառին։ Եթէ ուրիշ ապացոյց ևս չունենայինք Ոսկեբերանին ըն-
ծայուած ճառիս հարազատութեան դէմ, այս երկու գրչագրաց ընծայած ճառի բովան-
դակութիւնը միայն բաւական էր, որ խորագրին այնպէս կը յայտնէր, ինչպէս
դլուխը մարմնոյն· մինչդեռ Ոսկեբերանին ընծայուածի խորագիրն և պարունակութիւնն
երբոր կը հակասեն։

2· Տես Bigot cum Palladii Vita S. Chrisostomi, կամ Bibl. Maxima, Paris, 1680, T. V, p. 698· – Migne, p. 1271-1273. – Gallandi, Bibl. T. VII. – Ceillier. T. VIII։

3· Պատմ. եկեղ· Դ· գիրք գլ· ԺԸ։

4· Պատմ. եկեղ· Զ· գլ· Լ·

summa vitiosarum cogitationum genera sunt, sub quibus omnis cogitatio continetur. Prima gulae; secunda libidinis; tertia avaritiae; quarta tristitiae; quinta irae; sexta desidiae; septima inanis gloriae; octava superbiae. Haec autem [1] omnes ut animae negotium facestant vel non facestant, in nobis haud quaquam situm est» · Մանդակունւոյ ընծայուած ճառին և Գեննատիոսի աւանդածի մէջ նմանութիւնը չատ անկատար է։ Այս երեւոյթս մասամբ անով կը մեկնուի, եթէ մտածենք, որ Գեննատիոս իսկ ատեն անտի քաղելով մէջ բերել ուզած ըլլայ Եւագրի գրուածքին։ Սակայն մեր Մատենադարանի թիւ 75 գրչագիրն, — այսինքն է Յովհաննու սրբոյ Բ· րդ օրինակն, — որ կը ներկայացնէ 22 երեսներէ բաղկացեալ Եւագրի յիշեալ գործի հայերէն թարգմանութիւն մի, և ասկէց աւելի թիւ 424 նօտրագիր օրինակ մի Եւագրի ճոխ, բայց մեծաւ մասամբ անյայտացած Հաւտմն [2], որ դեռ աւելի ընդարձակ թարգմանութիւն մի կը ներկայացնէ մեզ Եւագրի Յովհաննու-ընկ չոր խորհրդոց գրուածքին, ուր ընդարձակ գլուխներու բաժնուած, 29 մեծադիր թերթեր գրաւելով, բոլորովին չեն արդարացներ Գեննատիոսէն լոկ պատճառաւ անհամաձայնութիւնը, Մանդակունւոյ և Եւագրի գրուածոց մէջ· վասն զի վերջնոյս հայերէն ընդարձակ և հարազատ թարգմանութիւնն իսկ ըստ ամենայնի բառական համաձայնութիւն ցոյց չտար առաջնոյն հետ։ Ուրեմն պէտք է ըսել, որ Մանդակունւոյ հրատարակութենէն դէմ հայագիրք վերջապէս, և Հաբանց վրայ մակբերուած հատուածս ճառը կամ անհայտացաւ ուրիշ հօր մի ձեռագրոց մէջէն բաբթմանուած է, և կամ — եթէ հայերէն ընդարձակ Եւագրի ձեռագրին — ապրի անդի դուրս գալով, յաւելմամբ և յապաւումներով մէջ բերուած է։ Եւ ստուգիւ այս բանս համեմատութենէ իսկ յայտնի կ'երևի· վասն զի բաց ի ստորև իջիս ծանօթութեան մէջ դրուած դիտողութենէն, հետևեալ պարագայքն իսկ ունինք մեզ կռուանս· այսինքն են·

1· Այս կետէս կը սկսի հայերէնի նոյնութիւնը՝ Եւագրի լատին թարգմանութեան հետ· « Այս ամենայն վերջ են որ յերկն չունին մարդոյ » բացատրութեամբ։ Սակայն Մանդակունւոյ ճառի իններորդ տողին մէջ եղած այս բացատրութիւնս անյայտ բիր և անհամապատասխան կը տեսնուի, եթէ չենթադրուի, որ առկէ յառաջ եղող ուղիղ խորհրդոց յիշատակութիւնը դուրս թողուած ըլլայ, և անոր տեղ ուղիղ տող ուրիշ յաւելուած մի յերկրուած։

2· Ցոյժ հետաքրքրական գործս անկատար կերպով արդէն իսկ հրատարակուած է· բայց մատենադարանիս յիշեալ գրչագիրն գրեթէ անթերի է, և արժանի առանձին հրատարակութեան։

Ա· Հայերէնի մէջ փոխանակ Եւագրի՝ ըլլը չար խորհուրդնե-
րուն՝ ենթն միայն մեզաց յիշատակութիւն կայ, և այս ըստ քմաց
հայ թարգմանչին:

Բ· Դիտել կու տանք, որ՝ ուր Եւագրիոս յիշեալ ութ խորհըր-
դոց իւրաքանչիւրն՝ ուրիշ այլևայլ տեսակաց կը տոհրարաժնէ, և
իւրաքանչիւրոց դէմ Ս· Գրքէն մի մի յարմար ասութիւններ մէջ
կը բերէ իբրև վահան, ըսելով· «Առ խորհուրդն որկրատութեան...
առ խորհուրդն հպարտութեան...» և այլն: Մանդակունւոյ ընծա-
յուած ճառի հաւաքողն՝ թողլով զայս և նման մասունքը, եօթն գըլ-
խաւոր ախտերու ծննդաբանութիւնը կամ լաւ ևս տոհրաբաժանմունք
քը միայն համառօտած է, ընդհակառակն, չոր և ցամաք կեր-
պով: Վերն ենթագծեալ հետևութեանս առաջին նախադասութեան
տուգութիւնն՝ յաջորդով աւելի պիտի պարզուի:

Ե· Մանդակունւոյ հրատակութեան Բան իբրեու — ծչնաորս խո-
րագրուածն ևս ոչ ամբողջական ճառի մի բնոյթն և բովանդակու-
թիւնն ունի, և ոչ իսկ առ միանձնուս Հայոց ուղղեալ է: Գրու-
թեան լեզուն և նորահնար բառերու կազմութիւնքն իսկ Ե· դարու
պարունակէն դուրս են և յետին ժամանակի անվարժ թարգմանչի
գործ: Մանդակունւոյ հին օրինակաց մէջ իսկ չի գտնուիր բնաւ·
երկու նոր դրչագիրք միայն ունին զայն, ինչպէս ըսինք ուրիշ տեղ:
Ուստի նկատելով գրութեանս ներքին և արտաքին պարագաները,
չենք վարանիր ըսել, թէ Ս· Եփրեմի Յաղթս առաքինութեանց[1] և
ակոխէ ընդարձակ ճառին այն մասէն քաղուած է, որուն խորա-
գիրն է Յօժարութենէ հոգւոյ: Այս տեղ Եփրեմ իբր խօսքն ուղղակի
հոգևկան և մարմնական յօժարութեանց վրայ մանրաւորելով՝ կ'ըսէ·
«Dicendum est igitur etiam de *iis quae ad animam et corpus pertinent, videlicet de passionibus*». և կը թուէ զանոնք մի առ
մի, նախ հոգևկաններն և ապա մարմնականները, որոնք քալ կը
համաձայնին Մանդակունւոյ ճառի մէջ թուարկածներուն: Բաց ասոր
ուրիշ ատորաբաժանում մ'ալ կ'ընէ Եփրեմ յօժարութեանց, այս-
ինքն է մարդուս բանական, յուզական և ցանկական կարողութեանց հա-
մաձայն, և Մարկոսի ուրուն խոտակեցի անուամբ կը նկարագրէ
զանոնք: Արդ՝ Մանդակունւոյ ընծայուած ճառի հայ թարգմանիչն՝
Եփրեմի շնչականը՝ (passiones animae) ալոյ ակոխ թարգմանած է,
իսկ մարմնականը՝ (passiones corporis) ահեկն: Այսպիսի մի փոխո-

1· Opera omnia, Romae, T. III, p. 426-433:

խութեան իրրև բանաւոր պատճառ կարելի է նշանակել, — իրմէ
կամ ուրիշ մեկնողական գրուածքէ մի, — ներմուծուած մի քանի տող
ներածութեան սկիզբը գրուած Ս· Գրքի այն տեղին, որ կ'ըսէ·
«Մի յայլ խոտորիր, և մի յահեակ»: Ալոյ և ահեկեան բացա-
տրութիւնը Մանդակունւոյ մի ուրիշ ճառի մէջ ևս կը հանդիպինք:

Եփրեմի այս երկտասան ճառովս կը մեկնուի նաև այն երևոյթը,
այսինքն թէ, ինչո՞ւ համար Մանդակունւոյ այս և Յաղթս պես պես
ակոխէ ճառերը՝ միւսներուն պէս առանձին գլխահամար չեն կրեր
իրենց վրայ երկաթագրի մէջ· վասն զի սոքա՝ թէև դիպուածով
իրարմէ անջատուած, սակայն Ի ե·րդ ճառին, այն է՝ Յաղթս պես
պես առաքինութենանց խրատս խորագրուածին իբրև ճշմարտապէս ամ-
բողջացուցիչ մասունք կը կազմեն: Այսու կը հաստատուի նոյնպէս
վերև ըրած մեր դիտողութիւնը: Երկրորդ՝ դիտելով, որ Եփրեմի
այս ճառս թէպետև Եւագրի յիշեալ գրուածքէն օժանդակուած[1],
բայց Մանդակունւոյ ընծայուածին հետ չատ աւելի նմանութիւն
ունի՝ թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ բաժանման նիւթոց և
մասանց: Ուստի կ'եզրակացնենք առանց երկիւղի, թէ Մանդակու-
նւոյ հրատարակութեան Ի ե·րդ և անոր յարակից միւս երկու խրա-
տական մասունքն ուղղակի Եփրեմի Յաղթս առաքինութենանց և ակոխէ
ճառէն յերիւրեալ են թարգմանաբար:

Զ· Ի սոքա Երրորդ-ին և ի Յանուանէ Քրիստոսէ Աստուծոյ վերջ
ճառը, այնու աւելի երկբայական երևցած է, վասն զի հին երկա-
թագրի և Մանդակունւոյ բոլոր օրինակաց մէջ չի գտնուիր: Բ· Էջ-
միածնի թիւ 920 ձառընտիրն և Երուսաղեմի թիւ 972 նօտրագիրն
տարբեր խորագրով ունին զայն: Գ· ձառիս առաջին մասն, այս-
ինքն է՝ սկիզբէն մինչև 10 րորդ տողը՝ փոխառութիւն է Գր· Նա-
զիանզացւոյ նոյնանիւթ ճառէ մի[2], որոյ հայերէն թարգմանութիւնը
կը գտնուի վանայս Չեռագրատան Իզ· ձառընտրի մէջ, յէջ 47,
խորագրով· Յաղթս սոքա Երրորդ-ինեան... ընդդէմ Աբիոյ:

1· Օրինակ իմն, երես 429 Հռովմայ հրատարակութեան, այս հատուածս· «Octo sunt omnino cogitationes, quae malitiam continent. Prima gulae; secunda fornicationis; tertia avaritiae; quarta iracundiae: quinta moeroris; sexta negligentiae; septima vanae gloriae; octava superbiae. Haec omnes cogitationes, non in nostra potestate est, ut turbent, aut non turbent», etc·

2· Այս ճառս՝ վանայս Գ· րդ ձառընտրի մէջ Աթանասի մակագրուած է· պա-
տգամ մի՝ որ Նազիանզացւոյն, քան թէ Մանդակունւոյ հարազատութեանը դէմ կը
դնուի:

Արդ՝ այս գժուարութեանցս պէտք եղած կարևորութիւնը տա-
լով հանդերձ, մեր համոզմամբ այդ գրուածքը պէտք է որ ստուգիւ
Մանդակունւոյ աւելի մի ընդարձակ և անյայտացած գրութեան
մասն եղած ըլլայ: Ահաւասիկ մեր փաստերը: Նախ և առաջ դի-
տելու ենք, որ յամի Տեառն 1270 ի Սիս գրուած մեր ԺԳ. ձա-
ռընթերն, — որ անտարակոյս իրմէ շատ աւելի հնութիւն ունեցող
և ընտիր երկաթագրէ մի գաղափարուած է, — Յովհ. Մանդակու-
նւոյ մակագրած է զայն: Երկրորդ՝ ճառիս մնացած մասին մէջ, —
որ հայ վարդապետիս ոճին յատուկ ոխով ունի, — Բանին Աստուծոյ
մասին՝ հետևեալ բացատրութիւնը կ'ըլլուի. « Ըստ տեսչութեանն՝
Աստուած մարդացեալ, և ոչ մարդ՝ աստուածացեալ», որ ոչ նախան-
զացոյ և ոչ իսկ Ոսկերերանին կարելի է տալ. որովհետև այս եր-
կու վարդապետաց քով[1] իսկ յաճախ կը գտնենք հակառակ բացա-
տրութիւնս. « Աստուած մարդացեալ և նոյնպէս մնացեալ, և մար-
մինն (այլուր մարդ) աստուածացեալ և ոչ յանմարմնութիւն փո-
խեալ»: Այս երկու տեղեաց առաջինն՝ անտարակոյս կամ Նես-
տորի մոլորութեան դէմ ուղղեալ է, որ չնորհօք կամ պատահ-
մամբ, կ'ըսէր, զմարդ աստուածացեալ, և ոչ անձնաւորական միու-
թեամբ. և կամ Եւտիքէսի դէմ, որ բարձմամբ մարդկային բնու-
թեան կը վարդապետէր զՔրիստոս աստուածացեալ: Ուրեմն աս-
կէց կը հետևի, թէ գրութեանս հեղինակն իսկ Նեստորէն և Եւ-
տիքէսէն յետոյ ապրած և գրած ըլլար. և այս բանս Յովհան Ման-
դակունւոյ աւելի կը յարմարի, քան թէ նախեփեսոսեան աստուածա-
բանի մի:

Այսպէս նաև Վան վերոյ ճառն և Աղթ-ը դժուար է ընդունել
իրրև հարազատ գործ Մանդակունւոյ, թէպէտև վերջինս նկատմամբ
առաջնոյն՝ նուազ դժուարութեանց կը բաղխի, և նոյն իսկ մնացած
ճառերուն հետ համաձայնութեան կէտեր ցոյց կու տայ: Իսկ առա-
ջինը նախ բոլորովին կը տարբերի լեզուով և ոճով Մանդակու-
նւոյ կորովի և կենդանի ոճէն: Բ. Ինչպէս սկզբնաւորութենէն իսկ
քալ կը տեսնուի Յովհ. Աւաքելոյ Կաթ. Ա. Թղթի Դ. րդ գլխու
վրայ գրուած ուրիշ սուրբ Հօր մի ընդարձակ մեկնութենէն, և կամ
յորդորական ճառէն առնուած մասն ինչ է անտարակոյս: Եւ ստու-
գիւ զայս կ'ակնարկեն նոյն իսկ անոր հետևեալ խօսքերն. վասն զի
յետ ըսելու, թէ « Այլ է սէր հոգւոյն և այլ մարմնոյն », անդէն
վրայ կը բերուի՝ « զոր յառաջ գնացեալ ասացաք յԱբրահամ »:
Այո՛, հեղինակ ճառիս յառաջ կ'երթայ և կ'աւարտէ աստուածային
սիրոյ ներբողն, առանց ամենևին հասնելու իւր նախապէս յայտա-
րարած բաժանմանն և բարդաւասմանն:

Բայց թէ ո՞վ է այդ սուրբ Հայրը, կամ անոր ընդարձակ գրու-
թիւնը, դժուար է ճշդիւ որոշել: Յովհ. Երզնկացւոյ կամ Պլուզ անու-
անեալ մեծանուն վարդապետի կանոնական քանի գլուխ գրուածքին
ԺԱ. րդը խորագրուած է Վան վերոյ: Այս գրութեամբս կ'ուղղուի
մատենադարանիս Մաշտոցներէն միոյն մէջ սպրդուած այն աղա-
ւաղ մակագրութիւնն, ուր՝ ինչպէս և Գ. գլխու վերջի ծանօթութեան
մէջ՝ դիտել տուինք, Մանդակունի և Պլուզ անուանք չփոթմամբ
իրարու հետ միացուած են, և թէ կարգալու է այսպէս. Երանելոյն
(Յովհաննու) Երզնկացւոյ՝ որ Պլուզ ասէ, ասացեալ վան վերոյ: Սակայն
Պլուզ վարդապետի սոյն խորագրի ներքև եղած գրութիւնը գէթ
չարաբանութեամբ բոլորովին աննման է Մանդակունւոյ ընծայուա-
ծին հետ՝ ի լեզուն ամիկերէնի մօտ է: Բայց որովհետև Երզնկա-
ցւոյ ճառի առաջին մասին մէջ գէթ ըստ իմաստից՝ մի և նոյն գա-
ղափարները կ'արտայայտուին աստուածային սիրոյ վրայ, Յովհ.
Ա. կաթ. Գ. գլխու համաձայն, և երկրորդ մասին մէջ մարմնաւոր
սիրոյ տեսակաց վրայ կը խօսուի, ուստի կրնայ ըսուիլ, որ Պլուզ
ընդարձակաբար օգտուած ըլլայ մի և նոյն աղբերէն: Ն. Շնորհալի
և Սարգիս իսկ կրկին մեկնիչք Կաթողիկեայց Թղթոց, սովորա-
կանէն աւելի կը ճոխանան Յովհաննու Աւաքելոյ յիշեալ տեղւոյ
մեկնութեամբ, սակայն ասոնց քով իսկ Մանդակունւոյ ընծայուածը
չի գտնուիր նոյնութեամբ. հետևաբար ասոնք ևս չեն կրնար ան-
միջական աղբիւր նկատուիլ Մանդակունւոյ մակագրուած խրատին:
Մեր եկեղեցւոյ ծխարանաց և մայր ժամագրոց մէջ չատերուն
ծանօթ Աւագ Հինգշաբաթու Ողջույնի կանոնը կը թուի վերջա-
պէս պարզել Վան վերոյ գրութեան գաղտնիքը: Արդ՝ այստեղ Յով-
հաննու Կաթողիկեայց Ա. Թղթի Դ. րորդ գլխու ընթերցուածէն ան-
միջապէս վերջ զետեղուած կը գտնենք, — մի քանի օրինակաց մէջ, —
խնդրոյ նիւթ եղած ճառն ճիշդ այնպէս՝ ինչպէս որ կայ Մանդակու-
նւոյ գործոց վենետկեան հրատարակութեան մէջ. և կանոնին վրայ
արձանագրուած է այսպէս.

« Կանոն Մեծի հինգշաբթին Ողջոյնին, ըստ որոյ ասացն Յհաւ, ըն
օրինակ ի եօթ յեղ: Զոր սրբեալ է սրբոյն Եփրեմ խորին ասորոյ, զոր
և ընթցմանեաց առաջ պէտպետն Հայոց Գրիգոր Վկայասէր»: Ուրեմն

1. Տես ի ճառն « Բանն մարմին եղեւ և բնակեաց ի մեզ» երկաքանչիւրին վար-
դապետութիւնն, այսպէս և յայլ գրուածս, եթէ կ'ուզես:

յիշատակարանիս վկայութեան համաձայն Ս. Եփրեմ եղած է հեղինակ այն քարոզին, և Գր. Վկայասէր անոր թարգմանիչն, ԺԱ. դարուն:

Այո՛, մենք ևս այսպէս պիտի կարենայինք եզրակացնել, եթէ ատուգիս մեզ հասած ըլլար Եփրեմի յիշեալ Կանոնի՝ յոյն կամ ասորի բնագիրն. սակայն ոչ միայն հասած չէ, այլ և ոչ իսկ յիշատակուած ի Մատենադարանին Ասեմանեանց: Ուստի աւելի հաւանական կ՚երևի մեզ ըսել, թէ Գրիգոր Վկայասէր՝ ոչ եթէ ամբողջ Ոսկեղուայի Կանոնն. ըստ նորոյ կարգաւորութեան, այլ միայն անոր մէջ եղած «Փառաւորեսցէ զէնեզ Տէր ձեր», և այլն, իր կացրդով, «Տէր ձեր Յիսուս Քրիստոս Աստուած սիրանէլտիզ», և «Հովիւ ոչ, հովիւ բոլէ» աղօթքները թարգմանած է Եփրեմէն: Իսկ միւս երգերն, և ընթերցուածներու և սաղմոսաց մեծագոյն մասն ինքն Գրիգոր յարմարցուցած է: Մեր յայտնած կարծիքին ի նպաստ դիտել կու տանք հետևեալ եզերութիւնքը. Ա. Վկայասիրէն մեկ ու կէս դար յառաջ գրուած Մատենադարանիս ամենահին Մաշտոցին մէջ, – թիւ 457, հին երկաթագիր մագաղաթեայ, – կը գտնուի Կանոնն Ոսկեղուայի առանց անուան և իր նախկին պարզութեան մէջ. այսինքն է՝ Սաղմ. ԻԸ. կցուրդ Զայն Տեառն, – Յով. Առաք. Ա. Կաթ. գլ. Դ. 7, – Ալէլուիա Տէր հովուեցոյ զիս, – Աւետ. ըստ Յովհ. ԺԳ. 1, – Աղօթք Տէր Աստուած մեր, որ ըստ բազում աքանչելագործութեանց քոց, – Քարոզ պատուիրանի. «Լուարուք որդեակք իմ» միայն կը պարունակէ: Բ. թիւ 1133, թիւ 338, թիւ 744, թիւ 178 Մաշտոցներն՝ որոնք Վկայասիրէն մեկէն երկու դար վերջ գրուած են, այսպէս և թիւ 178 Մայր ժամագիրքը՝ թէպետև Եփրեմի կ՚ընծայեն Ոսկեղուայի կանոնն, և նոր կարգաւորութեան համաձայն ճոխացուած, սակայն և այնպէս չունին «Աստուած՝ ձեր է խրատը: Գ. Ոմանք ալ առանց Եփրեմի անուան կը ներկայացնեն Ոսկեղուայի կանոնը, հանդերձ այս խրատով:

Է. Ոգի է վերայ անապաշխար ծեղասրոց, ինչ ձևով և չափով որ տպագրուած է, այնպէս ևս կը գտնուի ի թուս. Հայոց ՊՅԳ. կտուց անապատի մէջ գրուած ձառընտրի մէջ, զոր ընդօրինակած է մեր Հ. Ներսէս Վ. Սարգսեան: Իսկ որովհետև այդ ոտանաւորն չափով, կամ ուղղոտնեան է, որուն գոյութիւնը Ե. դարէ առաջ տեսնուած չէր երբեք և ոչ ալ ապացուցուած[1] է դեռ. ուրեմն գէթ

1. Յիրաւի, այն հնագոյն երգերն և տաղերը՝ զորս հասուցած են մեզ Ե. դ էն մինչև ԺԱ. դ դարու հայ պուէտք Շարականաց և Գերականութեանց միջոցով, ոմանք մեծաչափ են և ոմանք առանց չափի և անյանգիր:

ներկայ ձևովս անկարելի է Մանդակունւոյ գրչէն ելած ընդունել զայն, այլ Ն. Շնորհալւոյ, կամ անոր ժամանակակից միոյն ձեռքով յօրինուած: Հաւանօրէն այդ ոտանաւորին, – ինչպէս նաև Գաղ ղբրո-ընեանց չարականին, – իբրև հիմն կամ առաղձ ծառայած է Մանդակունւոյ Յաղթո աղբրո-ընեան ճառին 52–53 էջի ընդարձակ պարբերութիւնք՝ Քրիստոսի գալստեան և դատաստանի վրայ: Այս բանիս ապացոյց են երկուստեք աչքի զարնող նմանութիւնք իսկ մաքուր բանից և բացատրութեանց:

Սակայն այս արտաքնայարդար զժուարութենէս աւելի՝ կան չօշափելի փաստեր, որոնցմէ, ըստ իս, ընդհակառակն կ՚եզրակացուի: Յիրաւի, նախ դիտել կու տանք, որ այդ ոտանաւորն ոչ եթէ ութոտանեան չափով է, ինչպէս կը կարծուի. այլ հայկական մեծաչափ, այն է՝ քառանդամ քառավանկ, նման Ղևոնդեանց, Վարդանանց և Հովհաննիսեանց չարականներուն: Բաւական է առ այս ակնարկ մի ձգել թիւ 994 երկաթագրին վրայ ըստծնիս հաստատելու համար: Դիտելով որ երկաթագիրք քիչ անգամ բաւերու բաժանման և կէտադրութեան հոգ կը տանին, հօս ընդ հակառակն կէտադրութեամբ չանացեր է գրիչը տողերն իրարմէ բաժնել. բայց այս կէտերս միշտ (քառավանկ) քառանդամէն վերջ գրուած[1] են, և ոչ երբէք երկանդամ (ութ վանկերէն) վերջ, նման տպագրին: Բ. Դիտելով, որ Մանդակունւոյ միւս ճառերուն մէջ իսկ ընդհանրապէս դատաստանի և դժոխոց նկարագիրն՝ ապաշխարութենէն անբաժան է, կրնաք ըսել, որ Ողբն ևս Մանդակունւոյ ղղլական սրտին արդիւնք է, նոյն իսկ եթէ ատուգուի, որ յետագայ մէկը զայն չափածեւ կան ոտանաւորի վերածած[2] ըլլայ:

Թ. Բաղդատելով Յովհ. Ոսկեբերանի՝ Մեկ. Մատթէի[3] ԺԲ. ճառը՝ Մանդակունւոյ վաղ անօրէն Ներսէսի ճառին հետ՝ նմանու-

1. Օրինակի ազագաւ ընդօրինակենք այստեղ տողս ինչ.
«Որ տաղնապաւ կոչէ զաղինս ի մեծ աչեղ աւր աստենին.
Զէ չարաչար մարտաւ ընդ իս ամենամեղն սատանայ. եւ
կարեվեր զիս արարեալ հանելով ընդ ինեց զէս յանմահ փառացն», և այլն: Ընդծագծուած բառս, զիս, անչարմար կերպով կրկնուած է հօս, վրիպակաւ ընդօրինակողին. Կտուցի ձառընտրի մէջ չկայ ամենևին:

2. Այս անհաւանական և անընդունելի կ՚երևի ինձ. ապա թէ ոչ՝ ԺԲ. դ դարու գործածական քերթողական արուեստին համաձայն՝ զէթ յանգաւոր ըլլալու էր, և չէ:

3. Տպգ. Վենետկոյ, երես 367–371:

թիւնն ակներև կը տեսնուի, այնպէս որ՝ կը հարկադրուի ընթերցողն հետևցնել, թէ վերջինս՝ առաջնոյն վրայ ձեռնած և ընդլայնուած է յետ ժամանակաց: Եւ այս աչքի զարնող նմանութեան վրայ պէտք է ուշադրել մանաւանդ յաճախակի թատերաց և գուսանաց նկարագրութիւնն, որ ուշելի Բիւզանդիոնի և Հռովմայ ամփիթատրոնները կը յիշեցնէ մեզ, «եւեալ ի վերնադիտակ տեղիս նստին» բացատրութեամբ: Այդ՝ այս բանս Հայոց, հետևաբար և Ե·րդ դարու հայազգի պերճախօսի մի համար անհասկանալի, մանաւանդ թէ գլխովին կասկածելի կը թուի. մտածելով, որ յիշեալ դարու հայ մատենագրութեան մէջ չի լսուած և հազուագիւտ օրինակ մ'է թատերաբեմի այդ նկարագիրն: Այսպէս Մանդակունւոյ ԻԲ·րդ ճառի 167 իջի պարբերութիւնքն՝ Ոսկերերանի Եփես. թղթի Մեկնութեան (հա. Ա.) 201 և 700 էջերու փոխառութիւնք կ'երևին: Մի և նոյն ճառին յէջ 173 Բ. պարբերութիւնն. «Այլ բազում երկիւղիւ անձանց զգուշացուք» 27 տող հատուածը կը գտնուի բառ առ բառ նաև Հոբոնց վարդ., հա. Բ. էջ 606, հետևեալ խորագրոյն ներքև. թէ ո՛րպէս պարտ է սրբել զանձն, և այլն: Վասն սրբեցողաց ճառին մէջ 121րդ էջը նոյն է գոգցես իմն Մեկն. Ա. Տիմ. 110–116 էջերու հատուածոց, և 128 էջը՝ նման է Ոսկ·111 իջին, Ա. հատորոյ: Դարձեալ Մանդ·վասն ինքնաբուխ վախճանելոց ճառի 175–176 էջերու երկու ամբողջ պարբերութիւնքը՝ նման են Ոսկերերանի (Մեկն թղ. Պաւղոսի հա. Բ.) 774 իջի պարբերութեանց: Բաց ի սոցանէ, զարմանալի և ամենամօտ զուգադիպութիւն մ'ալ կը տեսնուի Մանդակունւոյ ընծայուած և թիւ 215 բոլորգրի մէջ հասաքեալ Յովհ. Ոսկերերանի Յորդորակներուն վրայ մակագրուած ընդհանուր խորագրոց մէջ. այնպէս որ այն խորագրերը կարգացած ժամանակ՝ դուք կարծէք, թէ անոնց ներքև Մանդակունւոյ նոյնանիւթ ճառերն ևս պիտի գտնէք անվրէպ: Եւ որչափ որ ըստ ամենայնի նոյն չեն այդ ճառերն իրարու հետ, սակայն և այնպէս չատ և չատ նման կտորներու կը հանդիպինք անոնց մէջ: Օրինակ մի միայն յիշենք. յիշեալ ձեռագրի 663 իջւոյ. «Յաղթօ սրբոցն Ղեպնակեցոյ» խորագրեալ Յորդորակին մէջ այն աքանչելի նկարագիրը՝ զոր կ'ընէ Ոսկերերան երանելի միայնակեցաց սակաւապէտ կենացը մասին, կարծէք թէ նոյնը փոփոխութիւններով կը գտնենք Մանդակունւոյ վասն ապաշխարութեան ճառին մէջ, համաձայն Գէորգայ օրինակին և ԻԲ· ճառընտրին: Ուրեմն այս և սոյնց նման դէպ ուրիշ նմանութիւններէ, – զոր մարթ էր առանձին գլխով և ընդար-

ձակաբար ապացուցանել, – կը հետևի, որ Մանդակունւոյ անուամբ հրատարակուած ճառերն՝ ըստ էական մասին՝ ուրիշ բան չեն, բայց եթէ մեր թիւ 215 բոլորգրի և երուսաղեմեան թիւ 972 նօտարագրի ներկայացուցած Յորդորակներու վրայ Ի·Բ·րդ դարուն յերիւրեալ մի նոր խմբագրութիւն, որ սխալմամբ կամ մեզ անյայտ մի ուրիշ պատճառով Յովհ. Մանդակունւոյ մակագրուած է ձեռագրաց ոմանց մէջ, որոց սակայն կը հակառակին ուրիշ ձեռագիրներ:

Ստուգիւ այսպիսի մի ենթադրութեան կը նպաստեն նաև արտաքին երկու փաստեր:

Ա. Դիտելու է որ մատենադարանիս թիւ 1307 ձառընտիրն Ի·Դ·րդ, երկաթանման բոլորգիր հին, և Կլիմաքոսի յիշեալ օրինակն իրենց մէջ պարունակուած վասն ապաշխարութեան և ուրիշ մի քանի ճառերն Յովհ. Ոսկերերանին մակագրած են:

Բ: Ենթագծեալ ճառիս, – վենետկոյ 1860 ի հրատարակութեան մէջ, յէջ 22, – ծանօթութեամբ գրուած այն ընդարձակ հատուածը [1], յորում ճառախօսը գեղեցիկ նկարագիր մի կ'ընէ նախնի Հարանց առաքինութեան և իւր ժամանակակցաց գաղջութեան և զեղխութեան մասին, բառ առ բառ կը գտնուի նաև չնորհաբան Սարգսի կաթողիկեայ թղթոց մեկնութեան մէջ: Հեղինակս՝ ինչպէս ամէն տեղ՝ այսպէս և այս մասին թէև խոր լռութիւն պահած է իւր գրականն գողութեան և անոր նախկին աղբեր վրայ, սակայն անոր գործի քննութիւնը ցոյց կու տայ մեզ, թէ նա ինչպէս միւս ճառերուն՝ այսպէս և այս ճառիս յորդորակը Յովհ. Ոսկերերանէն ուղղակի փոխառած է: Այս բանիս յայտնի և անժխտելի ապացոյց է լեզուի և ոճոյ այն ահագին տարբերութիւնն, որ կ'երևի անոր մեկնութեանց և յորդորակներու [2] մէջ ընդհանրապէս: Ուրեմն ըստ այսմ պէտք է, որ դիտողութեանցս հետևութիւնն իսկ անխուսափելի կերպով հաստատուի:

Ա.հաւասիկ այս և դեռ այսպիսի ուրիշ բանաւոր դժուարութիւններ [3], զորս Մանդակունւոյ հրատարակութեան վերայ եղած և

1· Այս հատուածս թէպէտև հին երկաթագրի մէջ չկայ, սակայն այնպէս կը յարմարի անոր վրայէն եղած 1860 ի հրատարակութեան 22 իջի թուագրեալ տեղւոյն, ինչպէս ակն ի մատանուջ:

2· Դիտելու ենք, որ ընդհ. այս փոխառեալ յորդորականներուս և ոսկեղենիկ թարգմանութեան է, որ Սարգսի գրուածքն և լեզուն այնքան փայլ և փառաւորութիւն զգեցած են. եթէ սրատես և քանիքուն քննիչք յաւուր միւսմ որոշել փորձեն, այնուհետև պղտկորոյս և տերևաթափ ծառի մը կերպարանք պիտի առնու:

3· Օրինակի աղագաւ, վասն պահոց պնդ·րնեան ճառի մէջ՝ անապատականաց նուի-

վինելիք անաչառ քննադատութիւնք կը հանեն անոր հարապատութեան դէմ։

Առաջին և երկրորդ դժուարութեանց պատասխանն արդէն գրուեցաւ Զ. բորդ գլխու մէջ տուած ենք, եօթնաթիւ գրչագրաց բազդատութենէն հանած արդեանց և եզրակացութեանց ձեռքով. հետևաբար չենք ուզեր այս տեղ վերստին անոնց վրայ դառնալ և ծանրանալ, և կամ թեր ու դէմ փաստերով խճողել մեր կարծիքը։ Գ. բորդ, Դ. բորդ և Ե. բորդ դժուարութիւններէն իրենց յարակից փաստերով կ'ընդունինք այնպէս, ըստ որում ցոյց կը տրուին Մանդակունւոյ ընծայուած այն ճառերու նախկին աղբիւրներն, և անոնցմէ օժանդակեալ իբրև նորագոյ խմբագրականներ։ Զ. րդ և Է. րդ դժուարութիւններու նկատմամբ ուրիշ նոր ապացոյցներ չունինք, ոչ ի նպաստ և ոչ ալ հակառակ. և կը մնայ յերկբայս առատութիւն։ Իսկ Թ. բորդ և բազմադիմի դժուարութեան նկատմամբ կ'ուզեմք հետևեալ դիտողութիւններն ընել՝ անոնց իբրև ի պատասխանի։

Նախ և առաջ դիտել կու տանք, որ վան անօրէն Նոպէրաց ճառի հեղինակի խօսքն այնպիսի թատերաց մասին չէ, որոնք Բիւզանդիոնի և Հռովմայ պէս բարձրագոյն կրթութիւն ունեցող ժողովրդոց մէջ աւելի դոյութիւն ունէին յայնժամ. այլ պարզապէս հրապարակաց մէջ եղած խաղարանաց և կաքաւչաց ձեռքով կատարուած այն լսիրչ տեսարանաց վրայ, որոնք թէ յայնժամու Հայոց և թէ Հայերէն աւելի նուազ զարգացած արևելեան ժողովրդոց մէջ յաճախած էին։ Իրաւունք բազդատելով այս ճառիս մէջ թատերաց մասին եղած նկարագիրն՝ Ոսկեբերանի յունական թատերաց մասին ըրած նկարագրին [1] հետ, երկուքին մէջ եղած տարբերութիւնն ակներև կը տեսնուի. վասն զի առաջնոյն քով ոչ թատերական տարազոց, ոչ երաժշտական գործեաց, կամ երաժշտութեան յիշատակութիւն կայ. մինչդեռ վերջինս ոչ միայն այս, այլ և յոյն ժողովրդեան այլևայլ դաստակարգերու հանգամանքն ևս մատնանիշ կ'ընէ մեզ։ Բ. Հայոց մէջ օրինաւոր թատերաց և թատերախաղաց գոյութեան ի հաստատութիւն մինչև ցայսօր ոչ գրաւոր և ոչ ալ արձանա-

բեալ գեղեցիկ գրուագը, որ կը պակսի Գէորգեայ օրինակին մէջ, և վասն հմայից Բէ-Նախնոյ ճառն, որ խմաստասիրական ոճով և լեզուական կազմակերպութեամբ միւս ճառերէն մեծապէս կը տարբերի։

1. Տես Մեկն. Մատթէի, Վենետիկ 1826, հա. Բ. եր. 566–572. — և Մեկ. Եփես. Թղ. Ճառ ԺԲ.

կան ծնացորդ մի հասած է ձեռքերնիս. մինչդեռ առ Ցոյնս և Հռովմայեցիս ամբողջական չինուածք իսկ դեռ կանգուն կեցած կը պատմեն պայնս։

Ապաշխարութեան ճառին մէջ ծանօթագրեալ հատուածը, դիտելու ենք, որ չկայ ո՛չ Կլիմաքոսի Ե. րդ օրինակին և ոչ իսկ թիւ 1307 ձեռագրին մէջ, ուսկէ առաջինն ընդօրինակուած է. վասն զի երկուքն իսկ պակասաւոր են, այսինքն է տպագրեալի 23 էջի Բ. պարբերութեան. «Իսկ զինչ արասցուք զիշանչենաւոր ցաւս» բառերով կը սկսին։ Կը մնայ, ուրեմն, Սարգիս մեկնիչն, որուն համար ասկայն հետևեալը դիտել կու տանք. այսինքն թէ, նա Ոսկեբերանի գործերէն՝ միայն ըստ հայերէն թարգմանութեան փոխառութիւններ ըրած է. և այս բանիս մէկէն աւելի ապացոյցներ կան առձեռն։ Իսկ Ոսկեբերանի գործոց, — զէթ մեզ հասած թարգմանութեացն, — ոչ միոյն մէջ հանդիպած չենք վերը յիշատակուած հատուածին։ Կրկին նկարագրութիւններ կան, մին ի Մեկն. Ա. Տիմ. ԺԲ. ճառին [1] մէջ՝ վանորերոյ կենցաղին և աղօթակացութեան վրայ, իսկ միւսն թիւ 215 Հաւաքման ցորդորակաց 663 իջումն՝ անապատականաց ճգնութեան վրայ. սակայն երկուքն ալ Մանդակունւոյ վասն ապաշխարութեան և վասն պահոց պնդութեան ճառերու մէջ եղածներէն տարբեր են՝ իրենց պարունակութեամբ և չարաբանութեամբը. այնպէս որ քիչ անգամ բառական նմանութեանց կը հանդիպինք յերկուստեք։ Ասոնի այս պարագայս ի նկատի ունենալով, կ'ըսենք, թէ Սարգսի լուսաբերնէն հանուած հետևութերնէն աւելի զօրաւոր է Գէորգեայ օրինակի վկայութիւնն, որ յականէ յանուանէ ցոյն. Մանդակունւոյ մակագրած է այն հատուածը, որ թէև երկաթագրի մէջ կը պակսի, սակայն այնպիսի պարագայով մի, որ յայտնապէս ցոյց կու տայ այն պակասին գոյութիւնը. վասն զի յետ ըսելոյ՝ «և նախանձաւոր լերուք քաջացն քաջութեան և առաքինութեան առաքինեաց», յետոյ վրայ կը բերուի՝ «զի առաւել քան զգիրն երևեցուցին զմտացն ուղղութիւն և զվարուցն առաքինութիւնս»...։

Իսկ գալով վերջին դժուարութեան և ի նմանութեանց յառաջ բերուած հետևութեան, պէտք է ըսել, արդարև, թէ Մանդակունւոյ ճառերու և Ոսկեբերանի Ցորդորակաց մէջ, — զորս կը ներկայացնեն մեզ վանաց թիւ 215 բոլորգիրն և երուսաղէմեան թիւ 972 նօտրագիրն և պարիսեան թիւ 58 մի ուրիշ նօտրագիրը [2], —

1. Տպ. Վենետկոյ 1862. հա. Ա. եր. 125–130։

2. Որուն ընդօրինակութիւնն ունինք մեր ձեռագրատան մէջ։ Այս գրչագիրս

երևցող ընդհանուր նմանութիւնքն և փոխառութիւնքեղեայց՝ անհերքելի և կատարեալ իրողութիւն մ՚է: Սակայն եթէ օրինաւոր է երբեք այդպիսի նմանութիւններէ եզրակացնել, թէ հայազգի վարդապետին ընծայուած ճառերն՝ յոյն վարդապետի Յորդորակներու վրայ չինուած և ընդարձակ կազմակերպութիւններ առած են յետ ժամանակաց, ինձ աւելի հիմնաւոր կ՚երևի Ե·րորդ դարում և նոյն իսկ Մանդակունեայ ձեռքով, քան թէ ԺԲ·րդ դարուն և անծանօթի մի ձեռքով կատարուած ընդունել, որուն չատ աւելի և ծանր դժուարութիւնք հակառակ կը դնուին: Առաջին կէտի նպաստող փաստերն՝ առանձին դլխոյ մի վերապահելով, երկրորդին նկատմամբ՝ հետևեալը դիտել կու տանք այստեղ· Ա· Ոսկեբերանի Յորդորներու խմբագրութեան ամենէն հնագոյն օրինակն, այն է թիւ 215 բոլորգիրը, գրուած է ԺԳ·րդ դարու վերջերն, այսինքն է Սբոյ գիտնական Յակոբ Ա· Կաթողիկոսի վերջի տարիներն (1283–1287)· որուն համար կը խնդրէ գրիչն յիշատակարանին, «դասել ընդ տիեզերալոյս վարդապետին Յովհ· Ոսկեբերանի»· մինչդեռ Մանդակունեայ երկաթագիրն, ինչպէս ըսուեցաւ, ԺԱ·րդ դարու վերջերը գրուած կը կարծուի· իսկ անոր՝ ինչպէս և ԺԲ·րդ ձառընտրի աւելի կատարեալ բնագիրը չատ աւելի հին ըլլալու էր, ինչպէս ակներև տեսնուեցաւ գրչադրաց բազդատութենէն: Բ· թիւ 215 բոլորգրի յիշեալ Յիշատակարանին մէջ յետ յիշելոյ զՅակոբ Ա. և զՅովհան Ոսկեբերան, կը յաւելցուի հետևեալը՝ «և առաւել զՅովաննէսէ հոգին պայծառացոյ ի քո յերկնային խորանս»· և ի տողև աստեղանիշիւ գրուած է մի և նոյն հին գրչութեամբ· «Զոքովանեցոյն, չէ երախտաւոր է լեալ այս Յովհ·»: Արդ՝ այս տեղ երկրորդ անգամ յիշուած Յովհաննէսը, այն է Զորովանեցին, անծանօթ է մեզ, և չենք ալ գիտեր, թէ ինչ բանով երախտաւոր եղաւ Յակոբ Կաթողիկոսին· սակայն հաւանական է կարծել, թէ գրաւոր վաստակաք, որուն համար և անանուն յիշատակագիրը պարտք կը համարի յիշատակել զայն՝ այս խմբագրութեանս մէջ, իբրև ստացարիչ· ապա թէ ոչ նորա ինչ փոյթն էր գիտ-

անտարակոյս թիւ 215 գրչագրէն ընդօրինակուած ըլլալու է· վասն զի երկուքն ալ Ոսկեբերանի՝ Անտիանց դէմ գրած Գ·րորդ ճառի վերջին հատուածով կը սկսին, որ է ըսել, որովհետև թիւ 215 բոլորգրի մէջ ինկած են առաջին թերթերը, – և երկուքն ալ «Տեառն եղիշայի վասն յէլոփուոյ ի կանոնագրոց» խորագրուած գրութեամբը կ՚աւարտին, թողով զայն կիսկատար, որ է ըսել, որովհետև թիւ 215 բոլորգրէն թուղթ ինկած ըլլալով, թիւ 38 գրչագրի ընդօրինակողն ևս այնտեղ կանգ առեր է:

նալ, թողլ թէ յիշել անոր ընտանեկան և ներքին երախտիքն առ կաթողիկոսն: Ուստի այսպէս կամ այնպէս կարելի է ըսել, թէ Յակոբ Ա· Կաթողիկոսի հրամանով առաջին անգամ խմբագրուեցան Ոսկեբերանի Յորդորակներն ի մի, և թէ այդ խմբագրութեան առաջին ներկայացուցիչն է թիւ 215 բոլորգիրն: Ուրեմն Մանդակունեայ ճառերու խմբագրութիւնն ինչպէս կարելի է անոր վրայէն եղած ընդունել, մինչդեռ թիւ 994 երկաթագիրն անկէց մէկ դար յառաջ արդէն գոյութիւն ունէր· այս հակասական է գլխովին:

Ուստի մանական և կէս ի կէս նմանութիւններէն աւելի, – որոնց նման գրական կամ գաղափարական աղերսներ յաճախ ցոյց կու տան նաև ուրիշ սուրբ Հայր իրենց գրութեանց մէջ, – ուշ դնելով այս ճառերուս՝ Ոսկեբերանի և Եփրեմի նախանձախնդիր ճառերէն ունեցած ընդհանուր և ամենամեծ տարբերութեանց և առանձնայատկութիւններուն, կը վստահինք ոչ միայն ընդունել, այլ և ապացուցանել, թէ Մանդակունեայ անուամբ հրատարակուած ճառերն, – ի բաց առեալ հետևեալները, այսինքն են վասն պէտս, – յաղթութ պէս պէս առաքինութեանց խրատս, – յաղթութ պէս պէս չարեաց, – Բան խրատս սա ճգնաւորս, մասամբ իւրք նաև Աղջիկն և Ոչբ+ վասն անապաշխար մեղաւորաց, որոնք աւելի օտար բանաքաղութիւն կամ թարգմանածոյ ըլլալու երևոյթն ունին, – հայազգի վարդապետիս հարազատ գրութիւններ են: Ասոր կը նուիրենք հետևեալ երկու գլուխներն:

ԳԼՈՒԽ Ը.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ՀԱՒԵՐՈՒ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՆՈՐՑ ՆՊԱՍՏՈՂ ՓԱՍՏԵՐՆ

Մանդակունւոյ հաւերու հարազատութեան նպաստող փաստերու տեսակն և աստիճանաւոր զօրութիւնն զգալի ընելու համար՝ կարելի է երեք դասաւորութեան ստորաբաժնել զանոնք. այսինքն են ի բացասութենէ յառաջ բերուած փաստեր, արտաքին կամ պատմական փաստեր, և հուսկ ապա ներքին ստորագական փաստեր: Սկսինք յառաջիններէն, վերջիններն առանձին գլխոյ մի վերապահելով:

Նախ և յառաջ երկբայական ո՛ր և է գրուածք մի քննադատած ժամանակ, պէտք է աչքի առաջ ունենալ, — իբրև ծանօթ եղրեր, — այն հեղինակաց ուրիշ ծանօթ գրութիւններէն, որոնք աւելի-կն ընդունուած են իբրև հարազատ: Երկրորդ՝ այս տեսակ գրութեանց լուրջ ուսումնասիրութեամբը նախապէս լաւ ճանչնալ այն հեղինակաց գրչին և գրուածոց առանձնայատկութիւնքը, որոնց մակագրութեամբ հասուցեր է մեզ հնութիւնը նոյնպէս և երկբայականները: Եւ համեմատելով իրարու հետ՝ երբ տեսնենք, որ անոնք երկուստեք իրարու հակառակ առանձնայատկութիւններ մեզ կը ներկայացնեն, պէտք է այնուհետև առանց վարանելու նոյնպէս հակառակ հետևութիւն յառաջ բերել. այլապէ՝ հետևութիւնն առանց տուեալ եղերաց և սխալ կ'ըլլայ: Ձիւդ այսպիսի մի վճռական տեսնի առջև կը գտնուին, ահաւասիկ, խնդրոյ նիւթ եղող ճառերն, որոնք իրարմէ տարբեր հեղինակաց, այսինքն է Մանդակունւոյ, Ոսկեբերանի և Եփրեմի անուամբք ներկայացան մեզ, և մենք մերօրեան չնայելնին պէտք եղած հարցափորձութիւնքն անաչառութեամբ կատարել: Եւ որովհետև խնդրոյն բոլոր ծանրութիւնն ցոյց. Ոսկեբերանի վրայ կեդրոնացաւ, և անոր գործոց հետ՝ գրչի առանձնայատկութիւնները ևս ծանօթ են մեզ. ուրեմն կարող ենք անոնցմէ բացասական ապացոյցներ կազմել ի նպաստ ցոյց. Մանդակունւոյ:

Ա. Դիտած ենք, որ Ոսկեբերանի առանձին խօսած ճառերը շատ աւելի ընդարձակ ծաւալ ունին, քան զանոնք՝ որոնք նմանապէս Մանդակունւոյ կը տրուին. իսկ ցորդորականերն, որոնք այլ և այլ Մեկնութեանց վերջաբանները կը կազմեն, ոչ միայն համառօտ են, այլ գլխովին տարբեր բնոյթ ունին միւսներէն. այսինքն է՝ հապիւ կամ մանաւանդ երբեք մէկ նիւթի վրայ չեն կենար և բարդաւաճեր զայն. այլ ընդ հակառակն կամ Ս. Գրոց այս կամ այն գլխոյ բազմիմաստ բնագրին վրայ տուած մեկնութեանց քանի մի կէտերը գործնական կերպով ունկնդրաց յարմարցնելու ընդհանուր ձգտումն ունին, և կամ անոնցմէ սրուած զէնքերովը ժողովրդեան մէջ ըղծող այլևայլ սխալները միանգամայն մերկացնել և ապանել կը ջանան: Երկրորդ՝ անոնց սկզբնաւորութիւնը կարդացած ժամանակ, չուտով կ'իմանանք, որ դաքա ամբողջական ճառի բնորոշ յատկութիւն չունին բնաւ իրենք իրենցմէ, և անգլուխ իրանի մի կը նմանին: Մանդակունւոյ ընծայուածներն, ընդհակառակն, մի միայն նիւթով կը սկսին և կը բարգաւաճին, ներկայացնելով ամբողջ քարոզի մի որպիսութիւնը: Ուրեմն հետևութիւնն յայտնի է:

Բ. Ոսկեբերան՝ այն բարոյախօսներէն է, որ բան մի չի գրեր կամ խօսիր, որ իւր ժամանակին և ժողովրդեան վրայ ձեւած չըլլայ: Դժուար է գտնել ճառ մի, որուն մէջ սրբազան պերճախօսն՝ յայն ժողովրդեան և կամ անոր վարք ու բարքի վերաբերեալ այս կամ այն մասին որոշ յիշատակութիւն մի չընէ. ուստի քարոզչին հետ մեկնչի, պատմագրի և հրապարակախօսի դերն ևս կը կատարէ նա անպակաս. այնպէս որ անոր մէն մի ճառը կարդացած ժամանակ՝ չենք տարակուսիր բնաւ, թէ անոր գրողն յայն ա՛ր է անպատճառ, և թէ Դ. դարում ապրող յայն ժողովրդեան ուղղած է զայն. և թէ անոր ախտերու կամ բարեմասնութեանց, տուրևառուներու, կամ ժողովրդեան, քաղաքային չուայլութեան կամ խնջոյքի, և այլն, կենդանի և մարմնացեալ պատկերն է՝ զոր կը տեսնենք ակնարկ երևւ: Նոյն իսկ այն հետևակ կամ հանճարեղ հեղինակներն, որոնք իրենց գործին վրայ Ոսկեբերանի անունը մակագրել են, ամենամեծ ճիգն թափեր են նախ անոր ոճին նմանել, և ոճի նմանողութեամբ համբաւ առնել: Մանդակունւոյ անուամբ հրատարակուած ճառերուն ոչ միայն մէջ, ընդհակառակն, կարելի է գտնել այս ըսած պարագաներէս մէկը: Այո՛, կը կրկնեմ և կ'երդնեմ, թէ չկայ բնաւ անուն մի, պատմական դէպք մի, ընտանեկան կամ քաղաքական նկարագիր մի, որ մեզ Խիզանդիոնի կամ Անտիոքայ ժողովուրդը յիշեցնէ,

որով կարենանք ըսել, թէ ահաւասիկ ասոնց գլուղն ևս յայն մէկն ըլլալու է: Մանաւանդ թէ միշտ կալոյ և հնձոց, անդոց և հօտից, պաղոց և պատարագաց խօսքեր կը յեղյեղուին ամենուրեք, որոնք աւելի մեր ազգին և աշխարհին կը վերաբերին: Ուրեմն անկարելի է, որ յայն վարդապետը խօսած ըլլայ զանոնք:

Գ. Դիտած ենք, որ Ոսկեբերան իւր մ՛ը և է գրուածքի մէջ քանիցս անգամ առիթ ունենայ յիշել իր նախատիպն և սրտի սիրած Ս. Աւագեաղն Պաւղոս, կամ բացագանչութեամբ, և կամ դրուատեօք՝ երբեմն երկայն և երբեմն համառօտ ներբողեան մ՛ևս կը ձօնէ անոր. երբէք լռութեամբ կամ լոկ յիշատակութեամբ չթողուր չանցնիր: Մանդակունւոյ ճառերուն մէջ, ընդհակառակն, թէպետև չատ անգամ յիշուած է նոյն Աւագեաղն, բայց առանց յիշեալ պարագայից, և այս յայտնի նշան է ըստ իս տարբեր հեղինակութեան:

Դ. Ոսկեբերանի գրուածոց հայերէն թարգմանութեանց մէջ մենք կը տեսնենք, որ յաճախ հին կտակարանէն մէջ բերուած տեղիքը՝ կամ ըստ թարգմանութեան Թէոդիտոնի, կամ Սիմաքոսի և կամ մեզ անծանօթ մի ուրիշ յոյն թարգմանութեան համաձայն են. իսկ նոր կտակարանի վկայութիւնքը թէպետև ըստ Եօթանասնից թարգմանութեան, բայց չատ անգամ ազատ կերպով մէջ բերուած են, և երբեմն երբեմն ալ փոփոխութեամբ բառից և բացատրութեանց: Մեր ոսկեդարեան թարգմանիչք անգամ նորա գործերն հայերէնի յեղած ժամանակ՝ գոգցես իմն պատկառելով անոր մեծ հեղինակութենէն, անոր յառաջբերութեան համաձայն չանացած են վերատին թարգմանել զանոնք, քան թէ մեսրովբեան և սահակեան թարգմանութեամբ յառաջ ածել: Դառնալով Մանդակունւոյ ճառերուն, բոլորովին ասոր հակառակը կը գտնենք հօս. այսինքն է, բոլոր Ս. Գրքէն մէջ բերուած տեղիքն Եօթանասնից հայերէն թարգմանութեան համաձայն են, ի բաց առեալ Գէորգայ օրինակի մէջ եղած գրչագրական մի քանի տարբերութիւնքն՝ որոնք նշանակութիւն չունին առանձինն. վասն զի այդ յետին ժամանակի կատարուած խմբագրութեան հեղինակն, — ինչպէս տեսանք, — իրեն նպատակ դրած է նոյն իսկ Մանդակունւոյ բնագրի ամբողջ կարգն ու չարքն ևս փոփոխել, յապաւելով և յաւելլով: Իսկ որովհետև հակառակն է այս երկու դէմ ընդ դէմ վարմունքս մի և նոյն հեղինակին, այն է Ոսկեբերանի ընծայել, ուրեմն նա չէ հեղինակ այս ճառերուս:

Ե. Դիտելով որ Ոսկեբերանի այլևայլ գրուածները նոյնպէս

Մէջ բերենք նախ այդ հմայից և դիւթութեանց ազգաբանութիւնն և մի քանի նշանաւոր պարագաներ՝ որոնք ճառիս առանձնայատկութիւնը կը կազմեն. «Աւդ յորժամ ի խաիրս և ի հմայս երևի կիւսս? (կիւս) և պիւրոխիւնս և ի խոչրոխիւնս և ի հոգանոցոխիւնս և ի հառհմայոխիւնս և ի մաղբախոխիւնս և ի տոառհարցոխիւնս և ի հեղհարոխիւնս և ի հմայոխիւնս և ի գիշգիւռոխիւնս և ի գերբերոխիւնս, յասրիգագիւռոխիւնս, ի պիւռհոգրոխիւնս, յօբռնմայս, ի լոռանախրիս և ի չեղչախրիս, յոզրոռնհմայս, ի գեղռմայս, ի ռննիկռս, յոռոռս, ի բաղրս, ի ճախռոգիրս և ի գիր պռնարռնի, և յամենայն ի շարչմախ բչչռնայ, հմայից, պիւրոյ, յորս կոչեն զգևան յաղ, յերկիր, ի ջուր, ի նարօտս, յիաղս, ի գարի, ի յուլռնս, ի մահ, և ի հեր գելոյ, և յամենայն պղծութիւնս՝ որով պղծեն և կորուսանեն զոգիս հնազանդելոցն»։ Յէջս 197, 198 և 199 մէջ կը բերուին օրհնմայք չորքչարաթին և չարաթուն, և խաիրք լուանոյ և կը հերքուին, ըսելով. «Աւրբեր էչնան գործոյ ոոյ չչարքուին՝ չառուրան հմայից... ի՞ ընառակ է չարքուին և չորչ-չարքուին... ընգերջ ոռնս չչուրնոգ պարծառս եղծանելոյ և նորոգելոյ»։ Յէջ 192 կ'ըսուի. «Աւդ երիկ ասես՝ երիկ և նոգս (հմայք) գրիպռոնեայգ են և գիրիպռոսի անառարքն ուռուինն, այլ և չգիրան կս պարառուգ եկեղեցոյ և աբեղայգ գրեն»։ Յէջ 193. «Այլ և առաչնորդացն (եկեղեցւոյ) կս (եթէ) ոիս ի մարգինս խղեացին, և կամ ցառ ինչ ապաք անկանի, պիւրս ի գոռանս աչեն ան ի յուուրել. և ոչ գի(այն) ապրանքն պիւրիւգն վաչրին, այլ և անչանոյ կս ուռուրս ուռանին, և գրել պահարանս, և ի գողս ցառաչինն արկանեն, և ժամչմախ մարացաչին բանիչ. և չռնառաս՝ որ ոչ լոի ի պարուիչրանս, գրաչս առնեն, և չռնառս գիրիպռոսի ընդ նռսին արկանեն, զի գրաչն առրուռաչանի հռմարիւոյ»։ Եւ յէջ 194 յեա յիչելոյ զհմայս, յուռուրթս և զգիրս պահարանայ, անմիջապէս կ'ըսուի այսպէս. «չրբ գրեն մանկռնս անիչիչ, և հռմարին կալ ի ապառս արբոյ սերռնոյն Աոռոչոյ»։

Աւդ, ըստ իս, իսկապէս հայկական բնագրոյմ ունեցող այս տեղերուս պարզ յառաջերուրթենէն իակ կարելի էր հանել այն հետևութիւն առ որ ուղղեալ են, առանց անդրադարձ քննութեանց. բայց որովհետև իրաց տեղեակ չեղող մէկը՝ կասկածանօք պիտի նայի այս ճշմարտութեան վրայ, իբրև յանառուգութեան, ուստի և ես կ'ուզեմ ազգային վաւերական յիշատակարանօք հաստատել Մանդակունւոյ ճառէն մէջ բերուած տեղիքը։

Շահապիվանի ժողովն, որ Ե. դարս ծովացեալ չարեաց

դէմ ազգու մէջոցներ ի գործ դրաւ, երեք պատժական կանոններ սահմանած է առ այս. այսինքն են՝ Ը. րդ, Թ. րդ և Ժ. րդն: Առաջինն ուղղեալ է կախարդութեանց դէմ՝ այսպէս. «Եթէ ոք ի կախարդութեան գայթ, այր կամ կին, և ի զղջումն ապաշխարութեան ոչ եկեսցեն, ըստ գրոցն հրամանի քարկոծ լիցին», և այլն: Իններորդն դիւթութեան դէմ այսպէս կ'օրինադրէ. «Որք ի հարցուկս երթան կամ ի դիւթս՝ տուգան կալցին, եթէ ազատ է Մ. դրամ, եթէ չինական է՝ գան արբցէ ԺԵ. կրկին, և Ճ. դրամ տուգան կալցին... Ապա եթէ եպիսկոպոս կամ երէց երթեալ իցեն ի հարցուկս և առուգեսցին... եպիսկոպոսն յեպիսկոպոսութենէն անկցի և երէցն յերիցութենէն լուծցի... Ապա եթէ ի կարգէ պաշտօնէիցն և յուխտէ աբեղայիցն երթեալ իցեն ի հարցուկս, զպատուհաս, զտուգանս և զապաշխարութիւն զաշխարհականացն կրեսցեն և ի կարգէ պաշտօնէիցն ի բաց կացցեն: Եթէ այր և եթէ կին երթեալ իցեն ի հարցուկս՝ կանոն այդ լիցի»: Հուսկ ուրեմն Ժ. դին մէջ կ'ըսուի դիւթից համար. «Որ լոկ դիւթեն և ոչ կախարդեն՝ թէ այր թէ կին ի դիւթութեան գային ԺԵ. կրկին գան արբցեն, խանձեսցին, մրեսցին, ոսկրարկցին, յուրկանոց տացին», և այլն:

Ինչպէս կը տեսնեն ընթերցողք, Թ. րդ կանոնը շատ ընդարձակ նիւթեր կը բովանդակէ իւր մէջ, այսինքն է դիւթութեանց և հմայութեանց, և եկեղեցական առաջնորդներէն սկսեալ մինչև ոսկ աշխարհական դասակարգը, և լաւ կը համաձայնի Մանդակունւոյ յիշեալ տեղեաց մէջ աւանդածներուն:

Յիշեալ ժողովոյն ժամանակակից և բարձակից նշանաւոր մատենագիր մ'ևս, այն է Եզնիկ Կողբացի՝ դեռ աւելի կ'երաշխաւորէ մեզ զայն իւր առաջին և երկրորդ գրոց մէջ: Ընդարձակ տեղեկութիւններ տալով դիւական և դիւթական գուշակութեանց կամ պատրանաց, լուսնի և լուսաւորաց կարծեցեալ ազդեցութեան նկատմամբ: Թէպետև այդ գրոց առաջինն՝ հեթանոսական աղանդոց՝ և երկրորդը պարսից քէշլին կամ զրադաշտական մոլորութեանց դէմ ուղղուած է, բայց որովհետև այդ հեթանոսական մոլորութիւններն,— ինչպէս ցոյց կու տան մեզ Ռուզանդացին՝ Ե. դպ. ԼԱ. գլխում, Մովսէս Խորենացի, Կորիւն և Մ. Կազանկատուացի, — դարերէ ի վեր սպրդած էին նաև հայ ժողովրդեան մէջ, արմատ ձգած և իւրք զարգացած իսկ. ուստի այդ զարգացմամբ և եղանակաւորութեամբ է, որ զանոնք մէջ կը բերէ և կը հերքէ Եզնիկ: Այո՛, Աստուածաշունչ առաքելոյն դուրս՝ Ա. գրոց ԻԴ. գլխում և Բ. գրոց

ԺԴ, ԺԹ, Ի, ԻԴ գլուխներում հրէշներու, դիւաց, լուսաւորաց և մարդկային մարմնոց վրայ աւանդած խորութիւնքն և գուշակութիւնքը հայկական են և Մանդակունւոյ աւանդածները զէթ մասամբ իւրք կը հաստատեն: Զորեքշաբաթին և շաբաթու օրահմայից մասին Եզնկայ քով որոշակի աւանդութիւն չկայ. բայց կան մէկէն աւելի նման տեղիք[1] զորս վերոյիշեալ ճառին հեղինակն յեզ-

1. Դնենք հոս համեմատութեամբ այս տեղերէս մի քանին Եզնկայ 1826 ի և Մանդակունւոյ 1860ի տպագրութեանց համաձայն

ԵԶՆԻԿ	ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
Յէջ 86 «Զի եթող ոմն զԱստուած, զսուրբս, զպահս, զաղօթս, և ի կախարդն, որ անձին չկարէ օգնել, ապաւինեցաւ».	Յէջ 195 «Թողեալ զչնորհսն Աստուծոյ, զաղօթսն, և զպահս և զաղօթս ցաւածին, և ինքեանք յուսութիւս և ի գիր զառածանին».
«Զի՞ ոք ի կախարդաց անցաւ և անդէն և անմահ իցէ».	Յէջ 194 «Աղէ ցոյց զոք ի կախարդաց՝ որ անցաւ և անմահ եղև».
Յէջ 220. «Ի չորից հիւթոցն յօդեալ են՝ յերկրէ և ի ջրոյ, յօդոյ և ի հրոյ ամենայն մարմնաւորք որ ի ցամաքին են և որ ի ջուրս ի ներքս».	Յէջ 198. «Զի հիւթք չորք են որ զարմանին զարարածս Աստուծոյ, հրամանաւն Աստուծոյ, հուր և ջուր, և հող և օդ».
Յէջ 159 «Գանդի ոչ գիտեն եթէ իցեն և եթէ չիցեն, այնու զի չեն մատուորք բանաւորք».	«Եւ ինքն զինքն ոչ գիտէ եթէ է ինչ, և կամ չէ, զի չունչ և կենդանութիւն ոչ գոյ ի նմա».
Յէջ 87 «Այլ մեք ասեմք, թէ մըտանելոյ ի մարդ չունի (սատանայ) իշխանութիւն առանց Աստուծոյ թողացուցանելոյ».	Յէջ 200. «Եւ եթէ ի սատանայէ հարկաւոր զազականութիւն գործոց քոց, սատանայ առանց քոյոյ կամաց և Աստուծոյ թողացուցանելոյ՝ արարածոց Աստուծոյ ոչ իշխէ».
«Ցայտ անտի է՝ զի յորժամ ի խաղից երամակն մտաբերեցին մտանել, ոչ կարացին՝ եթէ ոչ նախ ի փրխատոսէ առին հրաման: Եւ յորժամ զՅոբն կամեցաւ փորձել սատանայ, ոչ իշխաց ժամ՝ եթէ ոչ նախ յԱստուծոյ առ հրաման փոքձելոյ».	«Դու իսկ գիտես եթէ ի խաղից երամակ ոչ իշխեաց մտանել. բայց եթէ հրամայեաց (Փրխատոս). և զինչ նոցա (Յոբեանց) ոչ իշխեաց կորուսանել, բայց եթէ ի Տեառնէ առ հրաման».
Յէջ 88. «Եթէ ոչ յԱստուծոյ տեսչութիւն լինէր նմա (սատանայի) չարաչար մահուամբ սատակէր (զմեզ).	«Եւ եթէ առանց մերոյին կամաց իշխէր սատանայ մտաց մերոց, հաճոյ Աստուծոյ և ոչ միւսմ ումեք տայր լինել, այլ զամենեսեան ընդ մեղօք արկեալ կորուսանէր»:

նըկայ փոխ առած է անտարակոյս. ուրեմն հետևութիւնն անուրանալի է, այսինքն թէ Ցաղաթ հմայից պէ-ռնականաց ճառին հեղինակն Եղնկայ գրուածենէն վերջն է և անկէց իսկ օգտուած. իսկ այս քալ կը յարմարի Մանդակունւոյն:

Ուրիշ հատուած մ'ալ Մեսրովբայ անուամբ պահուած է Կանոնագրոց մէջ, հետևեալ խորագրով. Եբանելեայն Մեսրոպայ Հայոց վերջապէսի առացեալ, որ հմայից և երազոց դէմ ուղղեալ է: Այս գրուածիմէջ, — բաց ի հմայից այլևայլ անուանակոչութիւններէն, — կան նաև ուրիշ բացատրութիւններ ևս, զորս կը գտնենք Մանդակունւոյ յիշեալ ճառին մէջ իսկ. այսինքն թէ, թէպէտ և Քրիստոս Տէրն մեր չարին յաղթեց, բայց անոր խայթոցը դեռ մինչև այսօր իսկ հմայից ձեռքով կը կորսնցնէ զմարդիկ, — չերթալ ղէտ հմայից, այլ պատուիրանացն Աստուծոյ, — թէ այսօր Աստուած ոչ միայն տեսլեամբ չյայտնէր ծածկեալ խորհուրդներ, այլ նոյն իսկ մարգարէութիւնք և առաքելութիւնք լռած են, — թէ հմայք նզովեալ են յեկեղեցւոյ և յաստուածային հրամանաց, և թէ այնպիսիք ընդ սատանայի իջանեն ի տարտարոսն: Ահաւասիկ ամբողջ այդ հատուածն. « Բարիոք ողբայր ոմն ի սրբոցն, Գիտացէք, ասէ, ո՛վ սիրելիք, զի Ընկէր և բևեռեալ Տէրն ջնջեաց ընդ խաչափայտին, սակայն խայտիպ նորա մինչև ցայժմ խոցոտին ջնջուելիկ է կորուած՝ հմայից, յոռութեան, չեղահոգեաց և ամենայն բժժանաւաց դիւահարաւաց, և ազ ած բ(ա)նա(յ) է մարդ զնահաբեր սերմանա չարին. այլ զ' վարել հմայից, այլ սոբբ աղաւնի աս Աստուած կարգալով. և զ' երթալ զնեա եղջերոյ, այլ սանձ ընդէր լինել պատուիրանացն Աստուծոյ: Մի ոք զՅովսէփ և զԴանիէլ բերցէ ի մէջ. զի այն ժամանակաւորք էին և հարկաւոր պէտք, ի

Յէջ 59. « Աւանք, եթէ քնութեամբ իցեն չարիքն, ընդէր օրէնք ի թագաւորաց զնիցին... ընդէր պատժիցեն զայն՝ ոչ որ կամօքն չար իցէ ».

Յէջ 60. Նայնպէս՝ յորժամ դուստր՝ զմայր անարգիցէ, և նու՝ զսկեսուր իւր, և կին զայր, և ծառայ՝ զտէր, և եղբայր՝ զեղբայր, մի ինչ տարբին ընդ միմ՝ որք անարգեցան, այլ արգահատեսցին նոցա որպէս ի չարէն բռնադատելոց ».

Յէջ 205. « Եւ բանագուշեալ խօսին սուտ, եթէ մարդ ընդ հրամանս վարի և գործէ... Ապա և թագաւորք ոչ պարտին զգողն և զպոռնիկն և զըսպանողն տանջել. զի ոչ իւրով կամաւ գործէ զայն ».

« Ապա եթէ որ (այսինքն է՝ կին) պիղծ այր սպանանիցէ, կամ նու՝ զսկեսուր, կամ դրացի՝ զդրացի, կամ ծառայ՝ զտէր, կամ աղախին՝ զտիկին... չպարտի ոք մեղադրել և կամ պատուհասել, զի զհրամանն կատարեն ».

ձեռն սրբոց արանցն զծածկեալ խորհուրդն յայտնէր Աստուած տեսլեամբ. արդ այսուհետև ոչ երազք և հմայք խոտեալ են միայն, այլ և մարքաբեռնիք և ասուելուիք լռեալ են. երազք և հմայք, և յոռութ և ազգանք և պէռնութիւնք և նուիրութիւնք և հերցուածք և չեռնաձոյք և զեղահոգիք և խոխըք, և որ ինչ նման է սոցին՝ նզովեալ է ի սուրբ եկեղեցւոյ և արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանացն. և որ առնէ զմի ոք ի նոցանէ, կամ ընդունի, ընդ նովին նզովիւք կապեալ է, և ընդ նմին սատանայի իջանէ ի տարտարոսն գահն տանջանացն գեհենեայն, զորոյ վտարանդութիւնն ընկալաւ »:

Ես չեմ կարող հաստատել, թէ ստուգիւ հատուածս Ս. Մեսրովբայ մեծահռչակ թարգմանչի գրչէն ելած է, թէ յետնագոյն մի ուրիշ համանուն վարդապետի, և կամ նոյն իսկ Մաշտոց Կաթողիկոսին, որ ծաղկեցաւ Թ. դարուն դարում, և ոչ ալ որոշել, թէ ո՞վ էր այդ « ոմն ի սրբոցն » կոչուած անծանօթ հեղինակն, և թէ մինչև ո՞ւր կ'աւարտէին անկէց մէջ բերուած խօսքերն. այլ կարեմ ըսել, որ գրուածոս հեղինակն եթէ մի այլ Մեսրովպ էր, հարկ է որ անոր ծանօթ ըլլար Մանդակունւոյ վառն հմայից պէ-ռնականաց ճառն, իսկ եթէ թարգմանիչն՝ անով նոր ապացոյց մ'ալ կ'ունենանք ի նպաստ Մանդակունւոյ:

Սակայն Մանդակունւոյ ընծայուած յիշեալ ճառին իսկապէս հայկական յատկութիւնքը դեռ աւելի ակներև ընելու համար, տեսնենք նաև այն հեղինակութիւնքը, որոնք ե. դարէն վերջ գրուեցան և անկից փոխառութիւններ ըրին: Սիմէոն[1] եպիսկոպոս Աղձնեաց՝ իւր վառն աբբեցոցաց և ֆռռոնաց ճառին մէջ կախարդութեան հետևեալ տեսակները կ'աւանդէ մեզ. « Դարձեալ սատանայ այլ ևս չարս տայ գործել, որ է վնասակար հոգւոյ, չեռնաձոյ, ֆռըընկէց, ըռոմի, ախնախաղ, երազահան, ևռը ասի ռըմնել, որ է նա պեղծ և հակառակ աւազանին. ճրաֆոմահ, կրակահան, աղբենաբոյծ, խմոբռնաղ, և այլ ևս անհամար բժժուսն դիւական տայ գործել սատանայ »: Եւ ապա կը գոչէ նման Մանդակունւոյ. « Դուք քահանայք զի՛ պարտիք ի ձայն գոռանաց երթալ, որ հրաժարեալ էք յայդմ յիմարութենէ... Կրաւնաւորք և ծերք և պարկեշտ կանայք, զի՛ թողեալ զպատուիրանն Աստուծոյ և զտուն աղաւթից և երթայք զհետ կամարարաց սատանի »:

1. Ոչ այնքան ծանօթ հեղինակ՝ է — Ը. դդ դարուն ապրած և գրած կ'երևի. մինչև անդամ կը կարծուի լինել նոյն ինքն Սիոն կաթողիկոսն, որ նոյնպէս Աղձնեցի մականուանուած է:

ԺԲ. դր Ոակեփորիկի մէջ, թիւ 848, անանուն հեղինակի՝ մի թերթ հարցման ձեւով կայ դիւթից և հմայից վրայ, որուն ենթագծուած բառերը Մանդակունւոյ ճառի 194 էջի տեղէն առնուած կ՝երևին. «Դիւթն այն է՝ որ ձեռօք և նիւթովք գործէ, որպէս ըմբէ և ալեր և ասող և ջոր և տոբ, և թզով չափէ... Հմայն է որ ի տես աչաց կամ ղձայնն հմայէ զթռիչս, զկռիչս հաւուց և... այն կրակի և զաճառաց և զդրան, կամ աքիատ տեսեալ, կամ բէճ կամ մուճակ և այլ ինչ այսպիսի: Կախարդն է՝ որ անօթ ինչ թաղէ ի հող կապս, կամ մոմ, կամ եղկեր, և պէսպէս բժժանօք յարմարեն զարուեստն»:

Հայոց Աղաբէթէ մէջ չորեքշաբաթին և շաբաթը միշտ զգուշանալու օրեր ցոյց կը տրուին. զի առաջնոյն հմայքը՝ լուանին և կանանց յղութեան հետ կապելով, կ՝ըսուի. «Պատրաստ կենայ չորեքշաբաթէն, զլուսինն որ նոր տեսնու՝ կարիճ տղայի երես թող հայի. դէպ յարևելք պիտի, և իւր հագուստն, կապոյտ, կարմիր, դեղին չնորհաւոր է: Հիւանդանայ Ա. տարւոյն», և այլն: Նորածին մանկան համար կ՝ըսուի. «Չորեքշաբաթին աւուր տղայն չպայոյղ լինի, և խղդով և զրդռող, չարիք, և միշտ զչարեացն զրուցէ և գանգատի, ապա ինքնաբնութիւն լինի և բարկացող, այլ սակաւ ընչիւք հարուստ, և չար կամք շատ ունենայ, և մահն ի սրոյ լինի»: Իսկ շաբաթ օրուան համար կ՝ըսուի: «Եթէ կաղանդն շաբաթ՝ (հանդիպի) ձմեռն խիստ, գարուն գիժային և չար. ամառն՝ հողմային, աշունն՝ օդախառն. պտղոց նուազութիւն, ոչխարաց մահ. ի տեղիս տեղիս այրեցութիւն և հրդեհութիւն»: Եւ ուրիշ տեղ մի կը զգուշացնէ զերիկ մարդ՝ երբ լուսինն ի Խոյն, կամ Աւիւծն և կամ ի Տանուտէրն Աղեղնաւոր տեսնէ, «Պատրաստ կենայ է շաբաթն՝ զլուսինն որ տեսնու՝ ի կոյս աղջկան երես թող հայի կամ ի ջուրն. զանդուռն և ի մանրքն դէպ ի հարաւ արասցէ. հալաւն՝ կարմիր, կապոյտ, ճերմակ թող հագնի, չնորհաւոր է. մատանի պղպջադ ոսկեզրած ի ձախմատն դնէ: Հիւանդանայ Բ. տարւոյն», և այլն: Լուսնի բակառութեան վրայ ևս տասնևերկու չար և բարի գուշակութիւններ կան, ըստ թուոյ 12 ամսոց. նոյնչափ ևս նորա խաւարման մասին, որոնք լաւ կը համաձայնին Եղնկայ Բ. գլ. ԺԴ. 155 իջի և յաջորդ էջերուն աւանդուածներուն և Մանդակունւոյ ճառին հետ: Այս և նման հմայութիւններ կը գտնենք նաև Գրոպանակ կամ գիր հրամանաց կոչուած այն մագաղաթեայ և գոգցես իմն անվերջ գլանաձևերու մէջ, յորում Մանդակունւոյ ծանուցածին պէս՝ Քրիստոսի Աստուծոյ և սրբոց անուանքը նենգութեամբ

խառնած են կախարդասարք չարանուն հոգւոց և հմայութեանց հետ՝ վերջիններս աւելի դիւրամատչելի ընելու համար նաև երկիւղածաց: Սոցա ծագումն, աստիճանաւոր զարգացումն և կրած փոփոխութիւնքը թէև դեռ լաւ ուսումնասիրուած չեն, սակայն մենք կարծենք, որ այս տեսակ գրուածոց կամ գէթ գիտութեան ծագումը Ե. դր դարէն շատ յառաջ էր ի Հայս, և Աբրահամեան տիրապետութենէն վերջ շատ և շատ նորութիւններ ևս յաւելեալն անոնց մէջ, իբրև ժողովրդական աւելապաշտութեանց գործիք, մանաւանդ երբ վաղենտինեան, մանիքեան, պաւղիկեան և այլ բազմաթիւ աղանդաւորք, որոնք ապաստանած էին յԱփրիկէ և ի Միջագետս, մեր ազգաբնակութեանց մէջ ևս մուտք գտան և տարածուեցան:

Երկոտասաներորդ դարու մատենագիր մի, այն է Ալօկայ որդի Դաւիթ[1] վարդապետն, իւր յիսուն և երկու գլուխներէ բազկացած կանոնական գրութեան[2] վերջընթեր գլխոյն մէջ, շատ նոր և ընդարձակ տեղեկութիւններ կու տայ մինչև իւր ժամանակ Հայոց մէջ շրջող տեսակ տեսակ հմայութիւններու վրայ, դնելով անոնց ծագումն ի Մանիքեացւոց անտի. այնպէս որ այս հետաքրքրական գրուածքը կարելի է մասամբ փոխառութիւն, և միացածով լրումն և հաստատութիւն համարել մինչև հիմայ մեր ըսածներուն: Նշանաւոր է, — նկատմամբ Մանդակունւոյ աւանդածին, — հեղինակիս մէկ ակնարկութիւնն, այն է՝ հմայութեանց մագաղաթեայ գրուածոց մասին, զոր ինքը տեսած էր նոյն իսկ մանկանց և անասնոց վզէն կախուած:

Գրութեանս յիշեալ գլուխը կ՝ուզեմ ամբողջապէս արտագրել այս տեղ, ենթագծելով Մանդակունւոյ ճառին նման տեղերն և գործածուած արուեստական բառերը, ցոյց տալու համար անոնց մերձաւորութիւնը: «Է՝ և այլ ինչ չար սովորութիւն՝ զոր ասացի առաջագոյն, որով օթարացոցանէ զմբդիկ ի ճշմարիտ ջերմեռանդն. և է սկիզբն կախարդութեան և հմայութեան, որ են աղգայինք Մանիքեացոյն, և չար աղանդոյ նոցա պաշտօնեայք և աշակերտք. և են նոքա առաջնա-

1. Կիրակոս՝ Լ—ացւոյ ևս կ՝անուանէ զնա, յիշատակելով անոր մահն և գրութիւնն, այսպէս «Եւ զկնի ամի միոյ (այն է թուի. հայ ՇՀԹ=1230) վախճանեցաւ սուրբ Լուսաւորիչն Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինագրութիւնս զեղեցկայարմար և պիտանացու՝ ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Աղբայութիւն, ի քաղաքէն Գանձակայ:

2. Գրուած է ի թուի. Հայոց ՈՒԳ. և կը գտնուի մեր Բ. Ջ. և Թ. դր կանոնագրոց և Սամ. Անեցւոյ օրինակներէն միոյն մէջ:

յախօսք և դիւահոչք, և ազգի ազգի անուանս եղեալ դիւաց: Եւ զկերմուխիւն մտաց նոցա տեսեալ դիւաց՝ ի ցոյց և ի տեսիլ գան նոցա, նաև օգնականութիւն խոստանան և զօրութիւն Աստուծոյ կարծեցուցանեն զանձինս, թէ իցեն: Իսկ ի հոգւոյն ծերկոցեալ մարդիկ յոսան է ապաշնայ որպէս է ջրոխիւն Աստուծոյ. և յարբանեակս նորա, որ են դեւք՝ յոսան որպէս ի սուրբ հրեշտակս Աստուծոյ. քանզի և խաւարային դէպ կերպարանին ի հրեշտակս... Այլ և օտար և ազգի ազգի անուանս յօդեն միմեանց, և կոչեն յանուանէ իշխանք ինքեանց և պետք, Գաբրիելի և Միքայելի անուամբ, որպէս պետք և իշխանք ամենայն հրեշտակաց գոլով: Եւ անդէպ մարդիկ հաստատեն ապաշնայ՝ ընդ Աստուծոյ, և դիւաց՝ որպէս հրեշտակաց, և անուանց որ կոչին որպէս հրեշտակաց Աստուծոյ: Եւ այսպէս չարամիտ մարդիկ ընդունելութեամբ դիւաց՝ ի նոսա յարեցան, և ջնաւոյքն խորհուրդս նոցա ոճան է կորուսոյ անյանց. և բազմացուցանեն զչար ուսուցմն, զոր ուսան ի սատանայէ. աշակերտեցին զնոսա և եղեն իրրև զնոսա, մերկացեալք ի մկրտութենէ չնորհացն՝ եղեն անմեկնելի բնակութիւն դիւաց. և ոճալէտ զչար պատճառն պերճանկոխիւնովք ապաշնայ և վարդապետութիւնովք դիւաց ջերն զանուանան [1] զայն, և ի նեբտս խոստնեն զհրեշտակս անուանս և զբերոյ Աստուծոյ, զառաքելոց և զմարգարէից, և այլ բազում հոգեկորոյս և օգտապատոյնչ յԱստուծոյ բանս յօդեն և ջերն լի մոգապետիւն՝ ծակեալ կնոջն պերճանական խաչէն, չի զայր Աստուծոյ կոքծեցցեն. և առեալ դնի ի դրմի: Այլ և կալեն է բազում, և ի պատանոցս [2] մանկանց իւրեանց և անասնոց, ձիոց և եզանց և ոչխարաց, և պահապանս կոչեն զայն: Այլ և չնեռնաձուիւն [3] առնեն մանկանց տղայոց իւրեանց, ասեն ոչ լինել ցաւ ի մարմինս նոցա: Այլ և ի [4] բերանս էրեանց չնեռվ մաչեն զայնոսիկ. որ ասեն, ի չալոչիսդ է հիւանդացեալ է, և մի առցէ դարձեալ յաչազուսն: Այլ և պատաւուհք անօրէնք յորանչեն [5] և չիպոճն առնեն ընդունդացեալ մանկասքն: Այլ և

1. Մանգակունի՝ յէջ 193. « Եւ զանուան որ ոչ լսի ի պատուիրանս՝ զդածս առնեն, և զանուն Քրիստոսի ընդ նոսին արկանեն, զի զդածն աստուածական հաստատեսցի »:

2. Մանդ. « Եւ զրել պահարանս, և ի փողս ցաւածիցն արկանեն, և ժամմունկս մատցածին բանիս »: Եւ յէջ 191 « զծրարս բժժանաց ի ձեռին և ի յակին և ի պարանոցի կապել »:

3. Մանդ. « Եւ զկանայս ձեռնածուս ի տունս մուծանիցէ »:

4. Մանդ. յէջ 191. « Ի ձախ զիւթէ և ի յայ ընդնէ, զնաչն անարգէ և զԲրիստոս թէչնամանէ »:

5. Մանդ. « Ադէ տես զինչ գործէ չարապիւթն .. ընդ մտանելն յորանչոյ », և այլն:

ընկենուն կոյծ [1] է կրակի է Քոր և արբուցանեն մանկացեալ հիւանդաց. վասն զի ակն առած է, կամ ոչ առնու: Այլ և հալեն կապոր և արկանեն է Քոր ամանով, և դնեն ի վերայ կրծից մանկանն, և առնեն, թէ դեղ է սրտաթափի, և ջերմնոտի և առամնացաւի... Այլ և ի ծննդեան բազում հմայութիւնս առնեն հեթանոսականս, յորժամ ժեռեալն հանեն ի տանէ, նաև ի հարսանիսն: Բազում հմայք և վասն ճանապարհի, և յորժամ առաջի աւազաց երթայցեն, եւ ի հնձանս, և ի կարասի, ի վաճառել և ի գնել, և զհանդերձս ի կարելն, ի զենուլ, ի-ղբղբութիւն [2], ի հանելն յամանէն, ի վերայ որսոց, ի նաբտանէրկութիւնս [3] յոլով, յոստայնանկութիւնս՝ հմայութիւն, այլ և յամենայն օրինակ արուեստից: Եւ ի խնդրել ումեք Քոր [4] ի գիշերի՝ անցուցեալ ընդ նա դանակ երեքբևեռի և այնպէս տան ըմպել նոցա: Այլ և արգելուն ընդ երեկս տալ ջուղ և կրակ՝ խնդրողաց: Նոյնպէս և յաւուրս Աւելեացն հինգ՝ արգելուն տալ բան խնդրողացն: Եւ ի գալ նաւասարդին ընկենուն երկոն [5] ի կուժ, և քարչեն ծիր զերդ բնակովն: Եւ յառաւօտուն յղեն զաղկուհանն շրջել քարինս ի բացեայ, և հայել ի ներքոյ նոցա, թէ գտանի ջուղ [6] սպիտակ... հարսնացուցանեն զնա առն ալևորի, և եթէ սեաւ՝ ասեն թէ բաղդի հասաւ տալ օրիորդն երիտասարդի: Նաև առ երեկս թէ բաղդի հասաւ տալ օրիորդն երիտասարդի: Նաև առ երեկս թէ հաւ խօսի հմայեն, և ի մարեաց եթէ ածէ ձայն աքաղաղի՝ հատանեն զդլուխն: Եւ ամենայն արուեստաւորք ի մուտս տարուոյն՝ յարուեստն իւր հմայեն. գործքն կոտոր [7] ի հարկանէ զոլ. օստայնանկն թել մի քարչէ և կկոցէ, և բիճաւն՝ երիս հարկանէ. մանկն թել մի քարչէ և կկոցէ, և բիճաւն՝ երիս հարկանէ. նողն թել մի ձգէ և տայ զայն զիւկաւ: Նաև է գործեկոտ գծոտ և ակնհաղեցական նուէրք՝ խոստնեն բազում հմայութիւնս: Այլ և ի հարկանել ժամահարին՝ զժամանակն հմայեն. և ի մտանելն և յելանելն իւրեանց, կամ օտարաց ընդ դուրս տանն հմայեն: Այլ և ի լուանալ զհանդերձ, կամ զղջութ արանց կամ կանանց՝ հմայեն: Նաև յորդնապահութեան և յապրիչմաքարչին՝ բազում և անթիւ հմայութիւն, զոր ոչ գիտեմ և ոչ կարեմ ասել: Որ և գլուխ դիւթութեանցս այսո-

1. Մանդ. « ածուղ »:
2. Մանդ. էջ 194 « յիւղս »:
3. Մանդ. « ի նաբտաս ». յէջ 191 « կամ ասղնէ առնուլ ւորդր »:
4. Մանդ. տես յէջ 191 և 194 « ի ջուր »:
5. Մանդ. « յորկաթ »:
6. Մանդ. « ի հեր գլխոյ »:
7. Տես եղնիկ երես 105, և Մ. խորենացի Բ. գլ. ԿԱ. Արտաւազդայ առասպելն և կռանահարելն գարբնաց:

ցիկ հոպհոպայութիւն, որ է գոբընկեցութիւն: Աբևահոպայութիւն չար և անբժշկելի, յորժամ տեսանեն յայգուէ դէպ հանայ կամ կըծառայ՝ փոխանակ խնդալոյ ընդ առաջնորդս հոգւոց իւրեանց՝ հմայեն:

Աբդ այս ամենայն չարին խորհուրդք և սատանայական ապականագործութիւնք զհոգիս մարդկան կորուսանեն... Աբդ քրիստոնեայ անուն յարանց կամ ի կանանց զայսպիսի չար սովորութիւնս մի՛ իշխեսցեն... և որ առնեն յայլազգեաց կամ ի քրիստոնէից, մի՛ իշխեսցեն երթալ և հարցանել ի նոցանէ ի դէպս կամ է կատարած ի ջաբոտութեան և է գոբընկեցն և յայլ հմայս»:

Վերջապէս Մանդակունւոյ ճառի հարազատութեանն իրրև ամենազօրեղ և չշափելի փաստ մ՛ալ կ՛ընծայեն մեզ, յէջ 195 և 196, այն տեղիքն, որոնք առնուած են ուղղակի Ոսկեբերանի՝ Մեկնութիւն Բ. Տիմոթէոսի ութերորդ ճառի Յորդորակէն, — ըստ հայերէն թարգմանութեան, — և Մանդակունւոյ հետ բառ առ բառ նոյն են: Դնենք այս տեղ դիմաց դիմաց նախ այդ տեղիքը, որոց նոյնութեան համեմատ՝ եզրակացութիւնն ևս անխուսափելի պէտք է որ լինի:

ՈՍԿԵԲԵՐԱՆ [1]

Էջ 253–254. «Եւ արդ դիմ՞րդ, ասեն. Եթէ յորժամ ասեն (դիւթքն) և իրքն լինիցին՝ չիցէ պարտ հաւատալ: Վասն այնորիկ լինի, զի դու այնպէս հաւատաս, թէ և լինելոյ ինչ»:

«Աղէ ասա, եթէ առ աւազակապետ ոք թագաւորի որդի հատուած գնայցէ յանապատս և ի լերինս, ոչ ապաքէն ընդ նորա ձեռամբ և ընդ իշխանութեամբ լինելոյ, և չէ այնուհետև տէր ոչ կենաց և ոչ մահու. քանզի նա

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Էջ 195. «Այլ և ասես ևս. զոր դիւթքն գործեն և ասեն, այսպէս լինի: Եւ եթէ երբեք պատահէ՝ մի՛ խաբիր, ով մարդ... այլ և թէ չերթայիր առ դիւթն՝ քեզ ի ժամուն այն այնպէս պատահէր. բայց դու զաստուածոյ ողորմութիւնն՝ դիւթին զօրութեանն կարծեցուցանես».

Էջ 196. «Որպէս որդի թագաւորի յորժամ կամօք թողու զթագաւորն, և երթայ ի լերինս առ աւազակապետ մի, և տայ զինքն ի ծառայութիւն նմա, ապաքէն տէր և իշխան է աւազակապետն կենաց և մահու նորա»:

1· Մեկն· Թղթոց Պաւղոսի· տպ· Վենետկոյ 1862, Հա· Ա:

արար զնա իւր տէր, և իշխան այնուհետև սպանանել և ապրեցուցանել»:

«Այլ յանկարծադէպ ինչ երբեք իրք պատահիցին, եթէ յանկարծուրեք զոր ինչ ասիցեն (դիւթքըն) լինելոյ. որպէս կուրաց զի յանկարծ ինչ առ խարխափ ընդ ոտն հարկանիցի».

«Եւ չպատահելն ոք չհմայի, այլ թէ յանկարծ դուն ուրեք դիպիցի:

«Չի յառաջնոցն զամենայն ինչ ասէր (Աստուած), և վասն իշոյ անգամ կորստեան... քանզի տղայք էին. իսկ զմեզ ոչ կամի, եթէ յայնպիսի ինչ ի խրխիրս անկանիցիմք, և մեզէն զանձանց վնասն (վասն) ծածկելոյ ինչ հոգայցեմք»:

Էջ 195. «Բայց ի ձեռն դիւթաց բազում անգամ չլինի, և երբեմն լինի, ոչ եթէ զօրութեամբ դիւթին լինի, այլ իբրև կուրաց ընդ խարխափս գտանես».

«Բայց մարդիկ յիմար ի չպատահելն չհմային, բայց եթէ զինն պատահել տեսանիցեն»...

Էջ 196. «Զայն գիտութիւնն՝ որ առաջնոցն երևէր, որպէս Աստուած, վասն իշոցն կորուսելոց յայտնեաց. վասն զի տղայք էին... բայց առ մեզ կատարելութեամբ են ճշմարիտ ոգւոց գիտութիւնք. զոր ոչ կամի վասն մեր, եթէ զմարմնաւորս ինչ խնդրեսցուք, վասն այսր ծածկեաց ի մէնջ զայն գիտութիւն»:

Երկուստեք մէջ բերուած տեղեաց նմանութիւնն անժխտելի է, և թէ որ այս երկու ճառերս՝ մի և նոյն պարունակութիւնն ևս ունենային, սկիզբէն ցվերջ իրարու նման, այնուհետև չպիտի վարանէինք ըսել, թէ Մանդակունին, — որուն անուամբ հրատարակուած են այս և միւս 26 ճառերը, — միայն թարգմանիչ կամ յարասող եղած ըլլայ Ոսկեբերանին. սակայն իրն յինքեան այսպէս չէ: Եւ յիրաւի, նախ դիտել կու տանք, որ Ոսկեբերանի վերոյիշեալ ճառի նիւթն և պարունակութիւնը բոլորովին տարբեր են, և միայն վերջին երկու երեսներու մէջ խօսքը կը փոխուի չարի և բարւոյ, անձնիշխան կամաց և կանխագիտութեան վրայ. և բաց ի մէջ բերուած տեղերէն՝ ուրիշ նշանաւոր բան չկայ դիւթութեանց մասին. իսկ Մանդակունւոյ ճառն ընդհակառակն, — չնայելով որ ի վերջն պակասաւոր է, — 16 երեսներէ կը բաղկանայ, և իւր խորագրին համաձայն՝ սկիզբէն մինչև ցվերջ դիւթութեանց և հմայից վրայ կը դառնայ, առարկելով և բարգաւաճելով այնպիսի կէտեր, որոնք չեն

գանուիր նոյն իսկ Ոսկեբերանի միւս գրուածոց մէջ։ Երկրորդ՝ Բ. Տիմոթէոսի Ը.րդ ճառէն մէջ բերուած այս տեղիքս ցոյց կու տան մեզ, թէ Մանդակունի անկէց անմիջապէս իրրև ի նախնական աղբերէ փոխառութիւններ ըրած է, այդ ճառի մէջ, ուստի հարկ չկայ մի ուրիշ անյայտացած գրութիւն երազել. և որովհետև այդ փոխառութիւնքն ուղղակի հայերէն Թարգմանութենէն եղած են, ուրեմն փոխառուն ևս պէտք է՝ որ Ոսկեբերանի յիշեալ գործի Թարգմանութենէն վերջ գրած ըլլայ իւր ճառը։ Այս եզրակացութիւնս կը զօրէ Մանդակունւոյ միւս ճառերուն համար իսկ, — որպիսիք են վասն արբեցողաց, վասն անօրէն ընթերցոյ և վասն ղեռաշրինչաբէ ի սուրբ խորհուրդն ծնչենալոյ, — որոց մէջ նոյն կերպով փոխառութիւններ [1]

1· Այս տեսակ փոխառութիւններն՝ արդէն էջերով հարդերձ նշանակեցինք ենք. բէ գլխուս, և ընթերցողք իսկ կարող են զանոնք համեմատել· այս տեղ կը բաւականանանք եփեսացւոց Թղթի մէկնութենէն եղածները միայն գնել դիմաց դիմաց։

Մեկն· եփես· հՏ· Ա· էջ 700

« Ի միտ առ... զու, յայն վենուամն և ի պատարագ մերձենաս, յորմէ և հրեշտակք զաղան, հրեշտակապետք սարսեն ».

« Որ պիղծ ձեռօք և չրթամքք ժամբցիս ի մարմինն »։

« Եւ զթագաւոր ոք չէշխեիր համբուրել, եթէ հոտ ինչ ի բերանոյդ գայր· և զերկնաւոր Թագաւորն հոտեալ հոգւովդ համբուրես. մեծի թշնամանաց իրք են »։

« Աղէ ասա, անլուայ ձեռօք յօժարիցիս ի պատարագն մերձենալ· ի փոքուն այնքան երկիւղած ես, և ահաւադի ոգւովդ անխոիր ժոխս հաղորդիլ ».

Յէջ 201 « Ամենայն որ ոչն հաղորդեսցի խորհրդոյն՝ անամօթ է և ժլերբհոգեամբ կայ ուր չէպարտնամ կալ »...

« Յորժամ պատարագն ելանիցէ ի սեղանն, և Քրիստոս ի վերայ գնիցի զառնն անարատ... յայնժամ տեսանիցես.. եթէ երկինք ի վերուստ բանին և հրեշտակք իջանեն ».

ՄԱՆԴ· ՃԱՒ ԻԲ· էջ 167

« Եւ արդ տես թէ յո՛ր սեղան ա նօրէնութեամբ մերձենաս, յորմէ վերին զօրութիւնքն սոսկան և սարսեն »։

« Եւ զու պիղծ չրթամքդ յանդգնեալ մատչիս »։

« Զի եթէ հոտ ինչ չարեաց հարկանէր՝ առ թագաւոր ոք չէշխեիր մերձենալ. և զերկնաւոր թագաւորն ի հոտեալ հոգիդ ընդունիս. և ոչ մեծաւ աչիւ հիանաս »։

« Ցխոտ ձեռօք ի կերակուրս խղճես մերձենալ, և զեռաթաթաղ ոգւովդ անխոիր հաղորդիս »։

Յէջ 167· « Ամենայն որ ոչն է արժանի խորհրդոյն, և ոչ ի ներքս կալոյ » (արժանի է)։

« Յորժամ խորհուրդն սուրբ ի սեղանն ելանիցէ, յայնժամ երկինք քանին ի վերուստ, և Քրիստոս իջեալ անդր հաստանիցէ, և զօրք հրեշտակաց յերկնից յերկիր ծաւալիցին և չուրջ զսեղանովն բոլորին »...

կը տեսնուին Ոսկեբերանի յորդորակներէն։ Ուստի Ոսկեբերանով իսկ աւելի կը պայծառանայ Մանդակունւոյ ճառերու հարազատութիւնը, քան թէ կը խրթնի։

Ի նկատի ունենալով մէկ կողմէն այս և այսպիսի նմանութիւններ, միւս կողմէն ալ Մանդակունւոյ ընդհանուր գրութեան ոճը, մի ուրիշ հարց ևս կը ծագի այստեղ· այսինքն թէ, Մանդակունի զեռ իւր ճառերը չի գրած, կարելի՞ է որ Ոսկեբերանի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի Թարգմանած ըլլայ, որով և յոյն պերճախօսին այնքան ընտանեցած։ Այս բանս հաւանական միայն կ'երևի ինձ, բայց դժուարաւ ապացուցանելի, այնու մանաւանդ որ Մեկնութեանց մէջ կան այնպիսի ոճեր, կամ դարձուածք բանից, որոնք Մանդակունւոյ ճառերու մէջ ի զուր է որոնել. այսպէս ալ վերջնոյս քով կան նորաձև ասութիւններ, որոնք առաջնոյն, կամ լաւ եւս նորա Թարգմանչին ծանօթ չեն։ Երկրորդ, վերոյիշեալ յորդորակէն՝ եղնելիայ քով ևս նման փոխառութեանց կը հանդիպինք։

Արդ՝ անաչառութեամբ և ընդարձակ վերաբերութիւններովին ի միասին ուսումնասիրելէն վերջ Մանդակունւոյ խնդրոյ նիւթ եղող ճառերն, աւելի և աւելի համոզուեցանք նոցա հարազատութեան վրայ. և չենք տարակուսիր, թէ ապագային ըլլալիք ուսումնասիրութիւնք և նորանոր յայտնութիւնք ևս հետզհետէ պիտի հաստատեն այս ճշմարտութիւնս։

Երկբայութեան ասպարէզը շատ դիւր և ընդարձակ ըլլալով, թերևս ըլլան, որք ըսեն, թէ յիրաւի բոլոր այդ փաստերը կը ցուցնեն, թէ ստուգիւ ոչ յոյն և ոչ ալ ասորի, այլ հայազգի վարդապետ մի գրած է զանոնք. սակայն այդ վարդապետը կարող էր լինել նոյն իսկ անկէց երկար դար վերջ ծաղկող Յովհան Օձնեցին, որուն համար կ'ըսէ Ցոհ. պատմաբան, թէ « Այլ և ճառս ևս ինչ-ինչ ի բանասիրեցն յարդարել, ղկնայո-ցնէս չար ցոքծոց և յորդորական ի պէտս ապաշխարողական առիթ »։

Անտարակոյս՝ Օձնեցին ուրիշ գրուածներ ևս կարող էր գրել, որոնք տակաւին յայտնուած չեն. բայց որովհետև ինչպէս տեսանք Յովհան պատմաբանը՝ նոյն վկայութիւնը Մանդակունւոյ համար ևս

« Լսեցիս, զինչ ազազակէ քարոզն եթէ ապաշխարողք յաղթիա կացէք, որ ոչն հաղորդի՝ ընդ ապաշխարողսն... որ ոչ էք կարող՝ երթայք »։

« Լուր և զահեղ բողոք քարոզին. Մի ոք յերեխայից, ասէ, մի ոք ի թեբահաւատից և մի ոք յանյուսից »։

կու տայ, և մենք ալ լեզուի և ոճոյ անհուն տարբերութիւն[1] մի կը զգանք Յովհան Օձնեցւոյ մեզ ծանօթ գրուածոց և Յովհ. Մանդակունւոյ ճառերու մէջ. ուրեմն բացէ ի բաց չենք կրնար համաձայնիլ այսպիսի մի առարկութեան, և զայն իբրև հիմնաւոր ընդունել. այլ կ'ըսենք ընդհակառակն, թէ յամին 1836 ի վենետիկ երկրայութեամբ եղած հրատարակութիւնը կրնանք մենք այսօր իբրև Մանդակունւոյ հարազատ գործ՝ ամենայն վստահութեամբ կարդալ և գնահատել: Եւ այս պիտի ըլլայ նիւթ յաջորդ գլխոց:

1. Յիրաւի, անդուդական է Օձնեցի իր տեսակին մէջ, սակայն և այնպէս անոր լեզուն և ոճը շատ հեռի են հինգերորդ դարու քնարոշ յատկութիւններէն: Եւ եթէ կարելի ըլլար մերձեցնել զայն ե. րդ դարու հեղինակութիւններէն մէկուն, խորենացւոյ Պէտոյէ Գրոց լեզուին և ոճին վրայ աւելի կարծեք թէ ձուլած և ձեւած է նա զիւրն. և հայերէն լեզուին ձեռնհաս եղողք՝ երկաքանչիւրին ընթերցմամբ իսկ կարող են տեսակել զայս:

ԳԼՈՒԽ Ժ.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ ԻԲՐԵՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԵՐՁԱԽՕՍ ԵՒ ԱՆՈՐ ԱՐԺԱՆԻՔՆ

Գենդանի բարբառը, կամ խօսքն՝ երբէք այնպէս զօրաւոր ազդեցութիւն ունեցած չէ մարդկային սրտի և մտաց վրայ, որպէս երբ կը միանայ աստուածային խօսքին հետ՝ անոր հոգւովը վառուած սուրբ պաշտօնեի բերնին մէջ. որ զինուած սիրով առաքինութեան՝ իբրև հրեղէն սրով՝ կը հնչեցնէ իւր երկնաղղեցիկ ձայնը սրբազան թեմին հաւատացեալ ժողովրդեան լսելեաց մէջ: Եկեղեցական դասատուած էջերու մէջ այնքան հիացմամբ դրոշմուած ոսկիբերան Յովհաննու և լուսապայծառ Բարսղի և այլոց անուանց հետ՝ հոգեշունչ ձայներն իսկ դեռ լուած չեն կարծես, այլ կը հնչեն և ինչեն մերթ հինաւուրց մագաղաթներու մէջէն, և մերթ կիսականգուն տառարաց և մենաստանաց խորերէն. կը հնչեն ամայացած և անհետացեալ հրապարակաց միայնութենէն: Այո՛, ինչպէս ունեցաւ յունական եկեղեցին իւր հրաշունչ Բարսեղները, Գրիգորները, Յովհաննէսները, և լատինականն՝ իւր Ամբրոսիոսներն և Աւգոստինոսները, և նոյնպէս ունեցաւ մեր եկեղեցին իւր պերճապայծառ Սահակները, Մեսրոպները, Յովհաննէսները և զուարթափառ Ներսէսները: Բայց ես երկուց ժամանակաց, — այն է հնոյն և միջնոյն, — միջակէտն յառելով՝ ամենապայծառը կ'ուզեմ միայն նկատել, «Մանդակունի՝ իբրև իսկական տիպար՝ սիրելի և սխրալի քարոզչի: Ղազար Փարպեցին՝ առաջինն է, որ իբրև ճաշակ մի հայկական պերճախօսութեան կը հնչեցնէ ի լուր ապագայից անոր մէկ առենախօսութիւնն, և Յոհան պատմաբան և Վարդան՝ դարերէ վերջ կը կրկնեն արձագանք: Սակայն մենք ոչ Դունայ դաշտէն է որ կը լսենք Մանդակունւոյ հոգեբուղխ ձայնը և ոչ այլ վահանաշէն տաճարաց երկնակամար գմբեթի տակէն. այլ նուիրական մատենի մի միջէն, որ գուտտեմբերգեան լուսովը լուսաւորուած՝ կ'ընծայէ մեզ Մանդակունւոյ պանծալի քարոզները, մանաւանդ անոր սրտին և մտաց ճշգրիտ լուսապատկերն, իւր ժամանակակցաց և յաջորդ դարուց վրայ գործած մեծ ազդեցութիւններովը:

Այ՛, այդ քարոզներու մէջ հիանալի կերպով կը փայլին հեղինակի յորդաբուղխ սրտին և հանճարոյ ամենարուեստ խաղացմունքը՝ բոլոր իրենց սաստկութեամբն և սիրունութեամբ. թէպէտև մենք կրնանք ըսել, թէ ամէն արուեստակութենէ աւելի՝ զգայուն բնութեան և բարեկիրթ ճաշակին բնական արտայայտութիւնք են իսկապէս: Արուեստակեալ ձևեր, բռնազբօսիկ ճիգեր, բառական կամ բանական խաղեր, որոց յաճախ կը հանդիպինք Աւգոստինոսներու և նմանեաց քով, այդ ամենայն Մանդակունւոյ հետ բնաւ գործ չունին: Նորա խօսքն ևս իր անձին և աստիճանին պէս լուրջ է, վեհ և վսեմ. այն ժամանակ արուեստին տեղի կու տայ, երբ արուեստըն ինքնին, իբրև բնածին տուրք, անոր բնութեան և բարուց հետ սերտիւ միացած է, գոգցես ինն պերճախօսութիւնն աւելի ևս հրաշագործելու համար: Սին ցոյցեր, մարդահաճութիւն, գովեստ կամ դրուատիք սեփական ազգին, աչխարհի, կամ իշխանի, և կամ անցելոց դիպաց բնաւ չեն երևիր. այլ հովուական պարտուց և պաշտաման ճիշդ ըմբռնողութիւնն, աստուածային պատգամաց երկնահրաւիրակ ձայնն և ժողովրդեան կարիքն, – յորոց խորապէս զգածուած կը տեսնուի յամենայն ի բանս, – են անոր հոգւոյն և լեզուին միակ չարժիչ և կենդանացուցիչ պատճառներն: Հոգեշունչ վարդապետիս պերճախօսութեան մեր վրայ թողուցած տպաւորութեան մեծագոյն գաղտնիքը պարզելու համար՝ ներուի ինձ անշունչ օրինակ մի. այսինքն է, ով որ աւելի ունեցած է տեսնել այն բարձրաբերձ ժայռը՝ ուսկից ահեղ խոխոջիւնով կը բղխի և կ՚ընթանայ ականակիտ հոսանքը, չի տարակուսիր բնաւ, թէ բնութեան խորը ծածկուած լայնատարած սահանք են, որք յառաջ կը բերեն այն յափշտակիչ տեսարանն, որ թախանձիկ օդոյ և արեգական երփներանգ ճառագայթից ներքև աւելի ևս կը վեհանայ և գառնայ հրապուրիչ: Այսպէս քանիցս անգամ աչքէ կ՚անցնենք Մանդակունւոյ այս ինչ կամ այն ճառը, դիմացնիս կ՚արձանանայ, – կրանիտեայ ժայռի նման, – անոր վեհ և վսեմ հեղինակն, որոյ բերնէն կը հոսին՝ յորդութեամբ՝ քառավտակ աղբիւրք պերճաբանութեան, որոց իրրև սպառուած և անսպառ չտեմարանք՝ անոր զգայուն սիրտն և բազմաբեղուն միտք են:

Հայ պերճախօսն՝ իր առաջարկեալ նիւթը խորապէս ուսումնասիրելէն վերջ, կը լուծանէ այնուհետև իր լեզուին և գրչի կապանքները. կը բարձրացնէ իր զօրեղ և ազդեալ ձայնը: Ուր հարկ կայ յանդիմանութեան և սպառնալեաց՝ կը գոչէ իրրև առիւծ.

կ՚ելեցնէ ի քթթել ական երկնից հրահոսան գետերն, և երկնից արդարութեան որոտացող չանթերը՝ մեղաւորաց գլխուն վրայ. կը բանայ տարտարոսի խաւարակուռ բանտերն իր ունկնդրաց առջև. կը ցուցնէ դժոխոց կատաղի դահիճներն և դիւաց տանջանարանքը. կը լսեցնէ դատապարտելոց յուսահատ լացն ու կոծը: Իսկ ուր պէտք կայ կարեկցութեան՝ ընդհակառակն՝ կը զգենու գթած հօր մի բոլոր խանդաղատանքը: Կ՚ողբայ, կ՚արտասուէ և կանչելէ բնաւ չդադրիր՝ մինչև որ իր անառակ որդիներն իր գիրկը վերադարձած տեսնէ: Զարմիտ չարակամ յամառելներն հարուածելէն յառաջ՝ երբեմն երբեմն այս չքնաղ հնարագիտութեանս կը դիմէ, որ յատուկ է խոնարհ և սրբասէր հոգւոց. այսինքն է՝ իրմէն սկսիլ և ներկայացնել անոնց ինքզինքն իրրև մեծամեղ մեղաւոր, ողբս և վայս առեալ ի բերան. այնպէս՝ որ մարդ ամէն բանէն յառաջ կը զարմանայ այդ անմեղ մեղաւորին վրայ, որ հեթանոսաց առաքելոյն պէս գիտէ «Ընդ ամենայնի ամենայն լինել» որպէս զի զամենքը շահի ի Քրիստոս: Յաճախ անգամ ալ կը նկարագրէ մեղքերն իրրև ահռելի և զզուելի հրէշներ, և մեղաւորներն ալ անոնց անգթութիւններուն ենթարկուած ամենաթշուառ գերիներ:

Բազմապիսի ախտերով վարակուած հօտի պիտոյից համեմատ՝ բազմահնար միջոցներ ևս պէտք էին հեղինակին ի գործ դնել, սպասուած արդիւնքներն յառաջ բերելու համար, և մենք կրնանք ըսել, թէ յայտ իսկ լաւ յաջողեր է հայազգի պերճախօսն: Բոսիւէի, Բուրդալուի և Մասիլեոնի պէս տրամաբանական հսկայ ձեռնարկութիւններ և աստուածաբանական ցուցակութիւններ ի զուր է որոնել առ Մանդակունւոյ. վասն զի այդ ոճը նոր ժամանակի և հարկի արդիւնք է բոլորովին, և Ոսկեբերան ու Նազիանզացին անգամ այնպէս խնամով բարգաւաճած չեն. մանաւանդ այս առաւելութիւնս, որ այժմու գիտութեամբք զարգացած ժողովրդեան և քարոզչաց համար անհրաժեշտ պահանջ մ՚է, Դ. և Ե. դդ. գարուց համար թերևս անհասկանալի և ապարդիւն մնար բոլորովին: Ուստի նա իմաստութեամբ և հանճարով է, որ իր ունկնդրաց մակարդակին վրայ կանգնած՝ բոլորովին տարբեր ոճով և ուղղութեամբ կ՚արտափայլէ իր գիտութեան եւ կորովոյ պերճանքը. այսինքն է մէկ կողմէն Ս. Գիրքն ունի ի բերանի, որուն վերջին աստիճան հմուտ է եւ հաւատարիմ, եւ ի դէպ ժամու յարմար տեղեր կը բերէ իր լուսաւոր մտածութեանց հետ կը մարմնաւորէ: Ս. Գիրքը կ՚ըսեմ, այն է յաւիտենական իմաստութեան և կենաց անսուտ պատ-

գամն, որ քրիստոնեայ ժողովրդեան ամենասիրելին է և ամէն բանէ աւելի ազդեցիկը: Իսկ միւս կողմէն մարդկային բնութեան և կարեաց կենդանի նկարագիրը, զոր ամէն մարդ աւելի կամ պակաս յինքեան իսկ կը տեսնէ, կը զգայ և կարէ համեմատել: Այս կէտերուս, մանաւանդ վերջնոյն մէջ՝ անզուգական է Մանդակունին և ատուգիւ մեծ: Զաքարիա կաթողիկոս, Յովհ. Երզընկացի, Սարգիս և Մեծն անուանեալ Վարդան իսկ՝ իրրև բանաքաղ՝ չանացեր են նմանիլ պերճախօսիս. սակայն բաղդատելով անոնց ճառերը Մանդակունւոյն հետ՝ կը տեսնուին իրրև թզուկներ՝ առ հսկայիս, և անոնց խօսքերն՝ իրրև տղայական թոթովանքներ մշակուած պերճախօսութեան քով:

Մանդակունւոյ պերճախօսութեան նմոյշ մի տալու համար՝ կը թողում, որ ինքը լսեցնէ իւր ձայնը. և ահա աղքատ պարտապանին կրած տագնապն և ագահ վաշխառուի անգթութեան հակապատկերներն: « Եւ եթէ աղքատ ևս իցէ փոխապարտն, ի ծուխս և ի հոգս մաշի հանապազ: Անքուն և գառնաքուն ի գիշերի ննջիւն նորա. տխուր և արտում և մտայոյզ ի տուընջեան չրջի, և ոչ գիտէ յո՛ երթայ: Երբեմն սուղ ինչ զպահրէն կամի վաճառել, զի հատուսցէ զվաշխին տակոսիս. և երբեմն զանօրէն գողանալն ախորժէ, զոգիան կորուսանել և դիմադարձ լինել Աստուծոյ, վասն պահանջողի վաշխի փոխիցն. և երբեմն խորհի գաղտագնաց լինել ի տար աշխարհ: Շրջի թափառական յաղագս պարտուցն բռնութեան, և ի բազում խորհրդոցն վարանիցի, և մտացն չփոթելոցն զաղօթսն առ Աստուած մռռանայ: Եւ յորժամ ձայն ոտիցն հարկանի, նա ի ներքս սրտաբեկ լինի յերկիւղէն. և եթէ արտաքոյ տեսանէ փոխառուն զփոխատուն, փախչի և թաքչի իբրև ի տարակուսանաց աղէտից, և սիրան թափեալ՝ զդողի հարկանի, և կայ գլխարկեալ և լեզուակապ, և ամենևիմբ յերեսս նորա նայել ոչ իշխէ. զի տակոսիք վաշխիցն բազմացան ի վերայ նորա, և ոչ ինչ ունի հատուցանել և հաճել զփոխատուն:

Եւ արդ տես, ո՛վ պահանջողդ վաշխից, եթէ քանի՞ տարակուսանօք և ընդ վշտաք զեղբայրն արկանես, և քեզ քանի՛ կողկողանաց և աղէտից ետ պատճառք՝ դիմադարձդ Աստուծոյ, և բազում մեղաց պարտապան, արկանելով ի վերայ փոխոցն վաշխ, և վաշխիցն վաշխ. չար ծնունդ՝ չար թոռունս ծնուցանես. և այս են օձք՝ ծնունդք իժից: Իժից ծնունդք զորովային մօրն ծակեն ելանեն, և փոխիցն ծնունդք՝ զոգիս վաշխաժողովացն պատառեն և

սպանանեն, և դառն տանջանացն և ահեղ հրոյն պատրաստեն. զի դառն արուեստ և անօրէն մշակութիւն ստացաւ, որ առանց երկրի տնկեալ՝ յանդգնի և առանց սերման հնձել. որոյ սերմն ժանտ է, և հունձք՝ չարաչարք. և մշակք անօրինք, և սատանայ սատարիչ, վարիչ և յորդորիչ անօրէն հնձողաց զչար փոխոցն տակոսիս: Որ վառէ իբրև զհուր անօրէն վաշխիցն ցանկութիւն, և հանապազ սուր և հուր ժողովէ յընտեմարանս, և չարաթոյն սատակիչս քան զօձս և զիժս և ծնունդս քարբից ժողովէ ի տունս փոխոցն և տակոսացն: Եւ ոչ լուաւ զողբումն մարգարէին, որ ի թևս զաղաւնոյ ըղձանայր՝ հեռանալ ի քաղաքաց. վասն զի ոչ պակասեաց ի հրապարակաց նոցա վաշխ և նենգութիւն...: Ո՛վ չար ախտի՝ անօրէն ստացող, յորմէ պարտ էր հեռանալ ի տակոսեաց՝ գթով, նա բազում ցանկութեամբ ըստ չահից վաշխիցն ընտանենայ, որ զուշն ապչեցուցանէ չհայել ի պատուիրանս Աստուծոյ. զսիրտն յիմարեցուցանէ չյիշել զօր ահեղ դատաստանին. զմիտսն քարացուցանէ ի գութ կողկողել եղբօրն խոնարհել. խնդ զլսելիս և զտեսանելիս, յամօթոյ տեսողացն չամաչէ, այլ յանդգնեալ հոլանեալ ժողովէ և գանձէ հուր յաւիտենական՝ ոգւոյն թշուառացելոյ: Եւ որպէս երկրագործքն՝ յաղագս անձրևաց աղաչեն և մաղթեն յԱստուծոյ, վասն սերմանցն և լիութեանց աշխարհի. իսկ վաշխաժողովքն՝ կարօտութիւն և տարակուսանս և սովս սաստիկս և հարկապահանջս աշխարհի ըղձանայ, զի ի գործ և ի չահ վաշխիցն ինչքն անկանիցին: Ի ժամ փոխոցն տալոյ զուարթերես կեղծաւորի. և յորժամ ժամգրութիւն վաշխիցն հասանիցէ, տեսանելով զչքաւորութիւն և զտարակուսութիւն պարտապանին՝ ոչ ողորմի, և ոչ երգման հաւատայ մաղթողին. ոչ խոնարհի յաղաչանս վարանեցելոյն, այլ պչրել անխոնարհելի և անհաչտ, և իւր ծառայ զփոխատուն համարի փոխատուն: Գիտել եթէ զի՞նչ ինչք նորա իցեն նմա արժանի. հետազօտէ, թէ ո՞ր տարեալ թագուցանէ. արտաքոյ զդուրս պահէ, ի մէջ բազմութեան թշնամանէ, ի սիրելիսն ամաչեցուցանէ, ի հրապարակն խեղդէ: Չար պատահումն ի տուն, ի կեանս չար քան զմահ տեսանէ փոխապարտն. առէ զաւուրն ժամադրութիւնս, երկընչի յամօթոյն. երեսքն խոնարհի՝ տեսանել ի պահանջողն. աչքն պատրուակին՝ իբրև չուն ըմբռնեալ ի տեղիս, ամօթովն ազապարի: Տեսէք զողորմելի պեսոն, տեսէք զչար մեքենայն սատանայի. տեսէք զանօրէն չահն նզովից. զի մոլար ախտիւն անամօթեալք՝ ղընչաւէտն աղքատացուցանեն, զաղքատն մերկացուցանեն, զմերկն

խեղդեն, և յարտասուաց՝ արծաթ ժողովեն, և բերկրին ընդ անօրէն չահիցն յաճախութեանցն »։

Ո՞ւր տեսնուած է այսպիսի մի անձուկ շրջանակի մէջ գծուած այնքան ընդարձակ, բազմատեսակ և կենդանի պատկեր։ Եւ սակայն մեր ճարտասան ատենախօսն ոչ միայն գծած՝ այլ և անոր առանձին մասանց ջիղ, մարմին և հոգի և երակ ևս տուած է, իւր կենդանացուցիչ գրչովը։ Որքան նայինք մտաց աչօք այդ մանրանըկարին վերայ այնքան աւելի կ'ընդարձակուի և կը գրաւէ մեր հիացումը։ Նորանոր գաղափարներ՝ շղթայաշար իրարու կը յաջորդեն՝ վսեմական երևակայութեամբ և ազնիւ զգացումներով։ Հոն կը տեսնենք դէմ յանդիման զիսխառուն և զվաչխատուն՝ բոլոր իրենց ընդդիմամարտ հոգեկան և մարմնաւոր դիմագծերովը կատարեալ։ Աւաչինն՝ որ յետին աղքատութեան և թշուառութեան բուռն հարկի ներքև՝ բռնի կորուսեր է իւր մարդկային բնական և կրօնական բարեմասնութիւններն, և եղած է անարդ ստրուկ մի, որ չնչենւոյ մի համար իսկ իւր հոգին և զԱստուած կը վաճառէ. իսկ վերջինս՝ կ'երևի իբրև մարդապաղան մի, որ առանց վարուցանի, առանց կաթիլ մի մարդասիրութեան, աղքատին յարկէն, մորթէն, արիւնէն և թշուառութենէն ոսկիներ կը կորզէ և կը կըլլէ անյագաբար, և անդէն դժոխագէմ օձեր և լժեր կը վիժէ իւր պիղծ և սալացեալ սրտէն։ Աւտին կը տեսնուի վաչխից և տոկոսեաց տունը՝ պատեալ ծխով և ծծմրով արտաքուստ, և ներսէն կը լսուի օձերու և լժերու զարհուրելի խօշիւնն և խղուըրտիւնը. իսկ անդիէն Աստուծոյ արդարութեան և հրացայտ բարկութեան շանթերը, որոնք կը տեղան ի վերուստ և յաւիտենական հրոյ անծախելի ճարակ կը դարձնեն զանոնք։ Մէկ կողմէն ագահ փոխատուին երազած երաշտութիւնը, կարօտութիւնը, սաստիկ սովն և հարկապահանջք, որք կ'ամայացնեն դաշտերն, և անհնարին տարակուսանաց և թշուառութիւններով կը պատեն անօգնական գաւառացին. իսկ միւս կողմէն անիրաւ վաչխառուն, որ մերթ նենգութեան ժպիտով առ լինքն կը հրաւիրէ զանոնք, և մերթ արեան ծարաւի վագրի մի պէս կը սպառնայ կը հալածէ. կը մտնէ աղքատին խրճիթները, կ'ոտրոնէ անոնց ոգեպահիկն, կը կորզէ ամէն բան, կը թշնամանէ և կը ծեծէ ամէնուն առջև, և հրապարակաւ վիզէն բռնած կը խղդէ զայն։ Ի՞նչպէս չի հիանանք այդ մէկ էլ կարուկ պերճախօսութեան առջև, ուր առանց Զոլայի և զոլայական խոզաբանութեան և ստայօդ չաղփաղբանաց այնքան բանաստեղծական հնարագիտութեամբք և

բնական հոգերանութեամբք ներկայացուած են աղքատութեան տըխուր հետևանքներն և արծաթասիրութեան ըրած բիւրաղդի զոհերը, որոնք մարդու սիրտը կը ճմլեն և աչքերէն արտասուք հոսել կուտան բուռն զօրութեամբ։ Միթէ Ոսկերերանն անգամ ասկէ լաւագոյնը կը փափագէր գծել, և կամ ուր գծած է երբէք այսպիսի հակիրճ և միանգամայն կատարեալ պատկեր։

Եթէ ըսուած է երբէք, թէ Մանդակունի չհայել էի խօսս և կըրկնաբան. անճիշդ է այդ և անիրաւ։ Այս նկարագիրս և դեռ ասոր նման շատեր, զորս առիթ պիտի ունենանք ընթերցողաց առջև դնել, բոլորովին հակառակը ցոյց կուտան մեզ. վասն զի իրաւ կը տեսնուին այստեղ գեղեցիկ գիւտեր և բարձր գաղափարներ անպակաս՝ ոչ միայն ազամանդեայ բազմաբուսեան, բազմակողմեան ճաճանչակներու նման՝ որոնք ոսկեղէն շղթայով և կարգաբանութեամբ իրարու կը յաջորդեն, այլ իրենց կենդանի գոյներով և ոգևորութեամբ իսկ ամբողջ մարմին մի կը կազմեն, միշտ հայկաբանութեան ճոխ և հարուստ պատմուճանաւն զգեստաւորուած։ Այդ գեղեցիկ մարմնոյն և մասանց մէջ՝ յայտնի կը տեսնուի նաև կանոնաւոր աստիճանաւորութիւն մի, որոյ մէկ սանդղամատէն ի միւսն վեր եւլած ժամանակ՝ աչխուժիւ կը վարէ կը տանի իւր հետ պերճախօսն նաև ունկնդիրները, և կը հանէ ի գերաստիճան անդր, ուր կը սպառին վերջապէս իրք և կիրք։ Թողունք ամբողջ դրուագն և անոր վերջին խօսքերուն վերայ միայն դարձնենք ուշադրութիւննիս, ուր իրօք քարոզչի խանդավառ ձայնին հետ՝ ամենայն ինչ ի բարձրութեան անդ կը սպառի, այսպէս. « Զի մոլար ախտիւն անաստիճելւոյ՝ ընչասիրացոցանէն — զողոպուտ՝ ծերկոցոցանէն — զծերն՝ խեղդելն — և յարտասուաց՝ արծաթ ժողովելն — և բերկրելն ընդ անօրէն չահիցն յաճախութիւն »։ Խրատացի է այս տեղ ազդու ձայնիդ խորհրդաւորհուրդ լռութիւնն, ո՛վ հրաշալիդ Մանդակունի. վասն զի դուն վերջին բառովդ հասար գտար անյագ վաչխառուին բոլոր տմարդութեանց վերջին վախճանը, այն է « չահից յաճախութիւն », և ճարտասանութիւնն և փիլիսոփայութիւնն, անտարակոյս, քու գիւտիդ առջև գլուխ պիտի խոնարհեցնեն յաւիտեան։

Մանդակունեայ մէն մի ասութիւնն՝ ազդու և կարուկ առած է, իւր մասնագիտութեան մէջ. և այդ առածները ոչ միայն իրաց բըննութեան և փորձառութեան վերայ հաստատուած են, այլ գիտնականին հաւասար՝ ոսկին և տպիտին դիւրամատչելի։ Անոնցմէ իւրաքանչիւրն ունի իւր մէջ բանաւոր պատճառն և պատճառաբանու-

թիւնը: Եղնիկ՝ որ բնախօսութեան և իմաստութեան վարժապետ համարուած է, յունաց իմաստնոց և անոնց դրութեան դէմ խօսած ժամանակ՝ յաճախ ուղիղը կը հերքէ, — երկնային չարժմանց, և այլն մասին, — և սխալն և անգոյն կը ճգնի հաստատել. վասն զի պարզապէս Ս. Գրոց նկարագրական ձայնին կ՚արբանեկէ, և կամ բնազանցութեան սահմանէն դուրս չելլելը: Մանդակունին, ընդհակառակն, գիտութեան երբէք չի դիմագրեր: Ա՛ս այս բաւական է կարդալ միայն վասն հմայից դէ-Ֆականոց ճառը, որ ոչ միայն իմաստասիրական է իբրև զեղնիկ, այլ և աւելի գիտական և ճշմարտապատում քան զնա: Եւ ո՞ գիտէ, թէ դեռ մարդակազմութեան ինչպիսի՛ ճոխութիւններ պիտի ցոյց տար մարմնոյ մասանց և անոնց վերաբերեալ հմայութեանց մասին, 191 իջուամ, զոր երկարութեան համար լռած [1] է դէրեղդարար:

Փոխանակ չոր ու ցամաք տրամախօսութեան, որ նոյն իսկ Բուրդալուի քով յաճախ տափակութեան և ձանձրոյթի կը վտխուի, նա սովոր է միշտ հակիրճ հարցումով մի, կամ ընդդիմադրական ձևով հակառակորդաց առարկութիւններն ևս մէջ բերել, առանց խուսելու ի դժուարութենէն. և մէջ կը բերէ զանոնք՝ միանգամ ընդ միշտ ի հիմանց տապալելու համար: Ցայսմ ևս ակներև կը վայլի անոր ճարտարութիւնը. վասն զի այնպիսի երկայրի սուրեր կը կազմէ անոնցմէ և այնպիսի բառերով կը յեռանէ և սրէ զանոնք, որոց մի միայն հարուածը բաւական է կտրել զխան և զախտաւորն՝ իւր ախտաւորութեան մէջ: Ա՛րդ այսպիսի բնորոշ յատկութիւն ունեցող ճառեր արտասանելու համար պերճախօսը՝ կամ ունենալու էր աստուածային յիշողութիւն, և կամ յանպատրաստից խօսելու անսովոր դիւրութիւն մի: Վերջին կէտը մեզ աւելի հաւանական կը թուի, նկատելով մէկ կողմէն, որ անոր յիշողութեան հասակը գուցէ անցած էր, երբ այդ ճառերն արտասանեց. միւս կողմէն ալ դիտելով անոր ազատ թռչանքն, որով ո՛ր և է կաշկանդող և անձուկ սահման կտրած անցած է բուռն թափով պերճախօսութեան:

Անտարակոյս ճառերուս ընթերցողը տեսնելով անոնց մէջ այնքան յատակութիւն և կարգաւորութիւն գաղափարաց, այնքան գեղեցիկ դիւտից ճարտարահիւս յօրինուածոյութիւն և Ս. Գրքէն ճըշդութեամբ մէջ բերուած խիտ առ խիտ տեղիքը՝ պիտի զարմանայ

1. Ըսելով. « Ա՛րդ եթէ էր պարապ զմասանց մարմնոյ զուտութիւս մի ըստ մեծի պատմել, ծաղր կացուցանէի զյիմարեալ միտս զիւթին առաջի ամենեցուն »:

և հարցնէ. ի՞նչպէս կարէր այդ ամենայն յանպատրաստից յղանալ և արարատեան բարձր բարբառին հետ յօդել: Ա՛յո՛, իրաւացի է տարակոյս. սակայն Վահանայ մարզպանութեան առթիւ ըրած հրաշալի ատենաբանութիւնն՝ այդ դժուարութիւնն իսկ կը թուի լուծել, և մենք կրնանք ըսել, թէ գաղտնիք մ՚է այս ամենամշակեալ և վեհագոյն պերճախօսից, որոց միայն տրուած է, — ի ժամու և ի տաբաժամու, — մտաւորական ստեղծագործութեանց հետ՝ լեզուին բոլոր գանձերն ևս նորահրաշ կերպով հեղուլ զեղուլ արտաքս. մանաւանդ երբ աստի աստուածային նախանձու՝ և անտի աւետարանական սիրոյ հոգիներ կը յուզեն և կը շարժեն զանոնք:

Ա՛յո՛, այս կրկին ոգիներով ներշնչուած յերևան կու գայ Մանդակունին՝ մէկ մի իրրև նոր ոմն Սամուէլ՝ հնոյն, և Ղևոնդ՝ նոր օրինաց Երէց, և հրացայտ դէմքով և տիգօք արեգակնափայլ աչաց կը խաղայ անիրաւ զրկողներու վերայ, և մէկ մ՚այլ իրրև հովիւ գթած՝ պաշտպան կը հանդիսանայ խեղճ աղքատին, որբին և այրոյն:

Ո՞ր քարացեալ սիրտը, ո՞ր սառուցեալ հոգին կարէր մնալ անկարեկիր, երբ կը լսէր պատկառելի և վշտագնեալ ծերունւոյ բերնէն այնքան ջերմ զգացմամբ և հաւատքով չէշտուած հետևեալ տողերը, ցաղթօ ողբմոնեան փնտնկոց ճառին մէջ. « Զտառապանս նորա զմտաւ ա՛ծ, թէ և եղբայր իմ է, և անդամ և մարմին. և պէտս ունի որպէս զիս, և կարօտ է ամենայնիւ՝ ընչիւք և յարկաւ. և առ վտանգս քաղցոյն բռնութեան՝ յածի և շրջի անհանդիստ: Ի տօթոյ տապանայ, ի ցրտոյ դողայ. որովայնն սին և մարմին մերկանդամ. հերքն թաղկեալք. զէմքն դեղնեալ և թորշոմեալ, և ամենայն մարմինքն գգուաղեալք և երիթացեալք: Թափառի, վարանի և ի դուրս դուրս երերեալ և դադարեալ՝ կառանչէ և խանդաղատի. ողորմուկս արկանէ՝ առ աղէտս վշտին, և զանագորոյն զմիտս մեր դիտելով, զեղեղ անդամս ամօթոյ՝ անակնածելի ցուցանէ. զի զանողորմութիւնս մեր ի գուբ խոնարհեցուցանէ: Ցանդգնի, լրբի, և սուղ ինչ կերակուր՝ բաղում աշխատութեամբ գտանէ: Երկիւղիւ ի դրունս, երկիւղիւ ի գաւթիս, երկիւղիւ ի տունսն մտանէ. զի ի տունսն ամենայն ի չանցն դողայ, յանասնոցն երկնչի: Զի ձիքն՝ կիցս հանեն, եզինքն՝ եղջիւր ածեն, շունքն՝ վիրաւորեն, և մարդք չարք և անողորմք՝ բամբասեն և թշնամանեն և իրրև նետիս խոցոտեն. և մանաւանդ եթէ խեղք և կոյրք իցեն և ցաւագնոտք: Եւ վասն քաղցոյն՝ վարանի և յայնպիսի ալեկոծութիւնս դիմէ. յերեսս անողորմիցն իրրև ի դէմս գազանաց դիմեալ երթայ հասանէ. յորոց

յառաջ Թշնամանին, ապա թէ կարիցեն ինչ առնուլ բազում բամբասանաց: Արդ այս է խորհիլ զաղքատն և զտնակն, յորժամ ըզմտաւ ածիցէ, և քաղցրաբարբառ բանիւք և գթագին ողորմով զկարօտեալն մխիթարիցէ. զի այսպիսեացն ետ երանութիւն մարգարէն. Երանի որ խորհի զաղտոն և զտնանին »:

Դիտելու ենք որ հայ պերճախօսն Ի. դր Սաղմոսի 2. դր տան վերջին խօսքէն առեղծած է այս աքանչելի դրուագս, որուն մէջ ծածկուած գանձուց բանալին իսկ ինքն ունէր ի ձեռին: Առեղծագործութիւն մի՝ յորում պերճախօսի մտաց բեղմնաւորութեան հետ՝ հանդերձեալ յուսոյ պայծառ աստղն ևս ի վեր կը ցոլանայ: Սակայն նա քալ գիտնալով, որ աղքատ Ղազարոսներու այսպիսի վերքերուն անկարելիր մեծատուններ ևս կարեն դտնուիլ, անոր համար երանութեան քաղցր ձայնին յաղորդել կու տայ զսոսկալին վայրը. ուստի ահաւոր տեսարան մ՚ալ ասոնց առջև կը բանայ. և այս տեսարանս ոչ է մարգկային, այլ աստուածային վերջին դատաստանին: Նայելով որ վերջին դրուագս՝ թէև աւելի համառօտ քան զառաջինն, բայց այնպիսի երևակայութեամբ լի, զոր իրաւամբ կըրնանք Մասիլիոնի Յաղթ ասլաւոլնեան ընդելոց ճառի վերջաբանին նախատիպ անուանել, և անկէ ոչ ինչ նուազ ազդու:

Մանդակունւոյ մէկ ճառի ընթերցումէն երբ միւսին կ՚անցնինք, կարծէք, թէ բարոյախօսական մի նոր աշխարհ կը մտնենք, լի տարբեր տեսարաններով. սակայն և այնպէս ակնյայտնի նշաններ՝ ցոյց կու տան մեզ մի և նոյն աղբերակ հոգւոյն, որ անծերանալի Կռնոսի պէս դիմացնիս կանգնած՝ կը հոլովէ մարգկային բազդի և թշուառութեան անիւն ի վեր և ի վայր, և դուք կը տեսնէք մարդկութիւնը՝ բոլոր իւր բնական և բարոյական կարիքներով. կը լսէք դարձեալ մի և նոյն ձայնը, մի և նոյն բարբառը, մի և նոյն յափըշտակող ճարտասանութիւնը: Այս տեղ՝ թշուառական աղքատին՝ Աստուծոյ դէմ ժայթքած յուսահատ արտունջներէն յուզեալ, կու գայ իրրև պատգամաւոր իւր անյիշաչար Տիրոջ կողմէն սփոփել զանոնք: Եւ ահա նորա առաջին գիւտը, մանանիշ ցոյց տալ ապերախտին յերկինս՝ արգարութեան արեգակն Աստուած. իսկ երկրիս վրայ ա նոր սփռած բնական և գերբնական բարիքները, և թէ այդ ամենայն հասարակ են աղքատաց և մեծատանց: Երկրորդ քայլափոխին՝ անսովոր ճարտասանութեամբ և ներկուս փիլիսոփայի մի աշխարհայեցողութեամբը բեմին վրայ կը հանէ մեծատանց կարծեցեալ վայելից և երջանկութեան բիւրազգի տագնապներն և հոգերը: Երրորդ տեսարանին՝ կը բանայ մէկ կողմէն երանաւէտ հայրենեաց և յաւիտենական քաղաքի լուսեղէն խորաններն, բոլոր իրենց անպատում բարութիւններով, և միւս կողմէն՝ դժոխոց մշտագիշեր բանտերն և տանջանարանքը. իսկ ինքն՝ յաւիտենական հսկայի մի պէս կեցած աղցաւորիս և յաւերժութեան կրկին սահմանաց մէջ՝ կը գոչէ այսպէս առ լքեալն. « Իսկ, դու, ընդէ՞ր դողաս յաղքատութենդ... Քանզի կրկին նեղութիւնք են և հեչտութիւնք մարդոյ. մին՝ աստ, և միւսն՝ ի հանդերձելումն. զի կամ զյաւիտենական զանանց բարութիւնն ժառանգեսցես, կամ զաստի անցաւորն... կամ աստ ես սգալ և լալ, և կամ անդ. կամ աստ համբերել նեղութեանց և տանել, կամ անդ »:

Անտարբերութեան ախտիւ ընդարմացած ոգիներն՝ ինչպէս կ՚ուզեն՝ թող դատին այս գիւտիս էութիւնը. սակայն մենք կարող ենք ըսել, թէ կարելի չէ որ կրօնասէր աղքատին բեկեալ սիրտը՝ աղամանդի պնդութիւն չառնու այս տեսարանիս առջև, և մարմնասէր մեծատունը՝ չքակէ զինքը աչխարհիս կապող և կաշկանդող գրգանքէն: Իսկ այն տեղ՝ իբրև անպարտելի դիւցազ մ՚աւետարանին՝ կը մենամարտի մեկնէն աւելի ախոյենից դէմ. այսինքն է՝ արբեցողաց, անասնամոլաց, կնաթողաց, լկտի գուսանաց, թատերաց և դիւական հմայից: Ամենուն մէջ տարբեր զէնքեր կը գործածէ, ամենուն վրայ յաղթանակ կը կանգնէ: Այս և ասոնց նման ուրիշ համաճարակ ախտեր, որոնք մեր կարծածէն աւելի տիրած էին Ե. դարուն վերջին կիսում, նա աւելի իւր ճառերով՝ քան թէ այլք սրով և պատժական օրինօք հարուածեցին: Ուստի իրաւամբ կրնանք ըսել, թէ Մանդակունւոյ ճառերէն շատերն՝ յայնժամու հայկական պերճախօսութեան մի մի գլուխ գործոց են: Սոցա հաւասարներ՝ խիստ ցանցառ, կամ հազիւ երբեք կը տեսնուին մեր նախնեաց մատենագրութեան մէջ: Ն. Շնորհալի՝ իւր Աբենախօսութենաց մէջ, Լամբրոնացին՝ Համբարձման, Հոփեփալոփեան ճառերով և պատարագի մեկնութենէն յառաջ ըրած Տրամախօսականներուն, և Յովհ. Օձնեցի՝ Նոպղես Երևութականաց ճառերով՝ կը ներկայանան մեզ ճարտասանութեան մի մի չքնաղ տիպարներ. սակայն Ե. դարու ոսկեղէն բնաղրոշմը ցանկ և ոչ մին կը բերէ յինքեան, այնպիսի պարթևական վեհութեամբ և վսեմութեամբ: Նոյն իսկ Մանդակունւոյ դարակից, — թէ ոչ և դասակից, — Խորենացին և Դաւիթ Անյաղթ՝ իրենց ծանօթ գրուածներով՝ ճարտասանութեան վեհագոյն վարժապետներ կը հանդիսանան. բայց հայկաբանութենէն աւելի յունական հռե-

տորութիւն կը ներշնչեն յաճախ մեր լսելեաց մէջ: Կարծեմ, թէ չենք սխալիր, եթէ ըսենք, թէ այս ամենուն քով՝ Մանդակունին միայն կարելի է դնել պարագլուխ բեմական պերճախօսութեան և բարոյախօսութեան: Եղիչէ միայն անոր հետ կարէ գալ ի կշիռ՝ իւր ի թուղթ Քրիստոսի ճառով: Այո՛, այս ճառիս[1] մէջ, – յէջ 297, – այն եզական դրուագովը, ուր Քրիստոսի լիմպոս իջնալը կը սկսի այս բառերով նկարագրել. « Զառ ի ներքոյ արեգականս զամենայն զիրկաւ գործն կատարելով, և ի սաորին կողմն երկրիս ամենայն զօրութեամբ իւրով խաղաց գնաց՝ իջանել տեսանել զզօրութիւն մահու. և մահուան ճիչ առեալ և աղաղակաւ լայր դառնապէս », և այլն, Եղիչէ իբրև բանաստեղծ կը թուի ոչ միայն գերազանցել զՄանդակունի, այլ նոյն իսկ Միլտոնի ժ. դդ Եբէլին ևս նախագաղափար ըլլալ, եթէ հարազատ իցէ այս գործս: Սակայն և այնպէս չեմ տարակուսիր բնաւ, որ եթէ Մանդակունւոյն վիճակեր մի և նոյն նիւթին վրայ ներբողել, գուցէ թէ այն ժամանակ յիշեալ դրուագն աւելի ևս ուժգնութիւն և վեհութիւն առնոյր: Միով բանիւ, այն ինչ՝ որ Եղիչէի ճառերուն մէջ հազուագիւտ է, Մանդակունւոյ ճառերէն չատի մէջ կը գտնենք անպայման. ո՛ւր թողունք վերջնոյս բարոյախօսական մեծ առաւելութիւնքը, որով առանց չափազանցութեան կրնանք ըսել և ապացուցանել, թէ Մանդակունին է Հայոց Ոսկեբերանն:

Եւ սուտ իւր՝ բոլոր վերոյիշեալ հայ բեմասացներէն որո՛ւն ճառն որ կ'ուզէք, ցոյց տուէք ընթեռնուլ. բայց այդ ընթերցումէն վերջ՝ երբ ձեռք առնունք Ոսկեբերանինը, կարծէք թէ նոքա մէկէն ի մէկ կ'ապօտանան և կը կորնչնեն իրենց փայլը, յունական հանճարիս յորդարուղիս լուսոյն առջև, ինչպէս աստեղք և լուսին կը նահանան ի ծագել արեւու: Բաղդատեցէք, ընդհակառակն, Մանդակունւոյ ճառերն Ոսկեբերանի հետ, և պիտի տեսնէք արդարև, որ հայ հանճարն ոչ միայն չի փոքրկանար, չի նահանար, այլ մանաւանդ թէ յաճախ նոյնանիւթ ատենաբանութեանց մէջ՝ այնպիսի ինքնուրոյն ցոլքեր և փայլեր և երանգներ կը նկողէ յաչս մտաց, և ներդաշնակութիւն մեր լսելեաց մէջ, որք չեն տեսնուիր նոյն իսկ առ վարդապետին պերճախօսաց: Եւ ո՞ գիտէ, թէ այս իսկ եղած չէ մի այլ պատճառ յետագային՝ Ոսկեբերանին ընծայելու այն քարոզները: Զրի և առանց հիման ոչ հայ պերճախօսը բարձրացնելու դիտաւորութիւն ունիմ այս տեղ, և ոչ այլ յոյնը վար զարնել, որու փառքն անկասկելի է:

1· Տես Եղիշ· Մատենագրութիւնք· տպ· Վենետկոյ 1859, յէջ 297:

Բաղդատեցէք առաջնոյն վառն պանդխտեան ճառը, և ի մասնաւորի ճգնող Հարց դրուագը՝ Ոսկեբերանի Մեկն. Ա· Տիմոթէոսի ԺԳ· դդ ճառի նոյնանիւթ դրուագին հետ, և ըսածս ձիշդ պիտի գտնէք: Գեղեցիկ է վերջինս և մեծավայելուչ՝ իւր ժամանակակից կենցաղավարութեան հետ ըրած զուգակշռութեամբը. սակայն անով կարծէք թէ անապատական կենաց նկարագիրն՝ աշխարհի կենաց նկարագրովը իւր կենդանի միութիւնէն ընդհատած է միշտ, այսպէս և փոխադարձաբար. իսկ Մանդակունին առանձինն և աւելի ազդու կերպով կը լսեցնէ նախ անապատի խորերէն անոնց պէս պէս ձըգտութեան ձայնը, այնպէս որ դուք կը կարծէք ականեւս տեսնել անապատականաց մէն մի չարժուածքը, ձևն, մեռուցումներն, արթնութիւնն և քունը՝ բնութեան և բանաստեղծութեան խորհրդաւոր ամայութեան մէջ: Եւ յետոյ անոնց նիւթական ծոմապահութեանց հետ՝ հոգեկան պահեցողութիւնն իսկ ճարտարութեամբ կը բերէ ի զուգակշիռ իւր ունկնդրաց: Բաղդատեցէք, դարձեալ, վառ պիքրութեան վախճանելոց, վառ ինոխոյ և վշեխոյ ճառերը՝ Ոսկեբերանի նոյնանիւթ ճառերու հետ, և պիտի տեսնէք ըսածիս ճշմարտութիւնը: Սակայն ես կ'ուզեմ, – այս գլուխս դեռ չի կընքած, – մի նմոյշ[1] ևս դնել այս տեղ համեմատութեամբ նոյն իսկ Մանդակունւոյ վառ պբիեցողաց ճառէն, որ Ոսկեբերանի Ա· Տիմոթէոսի ԺԳ· դդ ճառի[2] Յորդորակին հետ ամենամերձ նմանութիւն ունի, ցուցնելու համար, թէ նոյն իսկ այսպիսի պարագայից մէջ ինչպէս կը փայլի Մանդակունւոյ ինքնուրոյնութիւնն, և թէ նա չնորհարան Սարդսի պէս նմանող և բանաքաղ չէ:

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ յէջ 127–128	ՈՍԿԵԲԵՐԱՆ
« Եւ արդ՝ եթէ չար է պոռնկութիւն, չար է և արբեցութիւն: Այլ ոմանք և զայրերն ոչ	« Եւ զոր օրինակ աչացն բըբացն յորժամ արտաքին արկածք նեղեօքն թանձրանայցեն, չտան

1· Մանդակունին իւր իսկ բնական կարզաբանութեան համաձայն և առանց ընդհատութեան մէջ կը բերեմ, որ նախ արբեցողին նիւթական վիճակի նկարագրովը կը սոսկացնէ զմեզ այն պզտլիկ ախտէն. և այդ նկարագիրն այնքան կենդանի է, որ մարդուս սիրտը կը նողոկացնէ. և ապա անմիջապէս կը յարէ հոգեկան խանգարումներու նկարագիրը: Իսկ Ոսկեբերանին քով՝ որովհետև մերթ այս և մերթ այն կը նկարագրուի, առանց որոշ կարգաբանութեան, մանաւանդ թէ բոլորովին տարբեր օրինակներով ընդհատուած են անոնք իրարմէ, անոր համար ստիպեցանք Մանդակունւոյ կարգին համեմատ քաղել և դնել զայնս:

2· Տպ· Վենետկոյ, 1862, Հտ· Ա· էջ 11, 12, 14:

իմանան. զօձիցն չարաթիւնից բուռն հարկանեն, և դառնամահ սատակումն, որ անտի է, ոչ իմանան: Զորոց ոչ միայն զոգիսն սպանանեն արբեցութեանն զեղխութիւնք, այլ և զմարմինն փեստեն և ապականեն գինւոյն նեխութիւնք, և հանապազ զսիրտն տաղտկացուցանեն և նեղեն նողկալովն և շմալովն, և որովայնին վքալովն. և զողորմելի ոգիսն միշտ նեղ և չարչարէ իբրև զթշնամի, և արգելեալ պահէ ի մթին և ի խաւարի՝ յորժամ մթերք կերակրոցն և ըմպելեացն ի ներքս ամբարիցին, և ընդ ցեխ աղբոյն և տըղմոյն որդունքն զուղիցին, և զկարգըս աղեացն ողողիցեն. և զաղբարոյն որովայնն փտեալ ապականիցէ: Եւ միշտ հեծէ և հառնապազ թառանչէ՝ յորովայնին ծանրութենէ ժահահոտ զգայութիւն նեխութեան զմերձաւորսն զազրացուցանիցէ, և ի կարկառակոյտ աղբոյն յաճախութենէ՝ զառ ի վեր փախածք ելանեն, և զառ ի վայր խողխողանք արձակին. և չոգին աղտեալ՝ ընդ երեսն մտանէ, և ընդ օգան տարածանին. և ազգի ազգի ցաւս ի մարմինն արկանէ. զսիրտն մեղկէ, զմարմինն թուլացուցանէ, զստամոքսն խանգարէ, զուղեղն ապականէ, զտեսանելիսն գիշացուցանէ, և զամենայն անդամն ջրգողացուցանէ. այլ և ի նեխութենէ լճացեալ աղբոյն զեռունք զեռան և տեսանելեացն զլոյս տեսանել, զի ճառագայթք լուսաւորութեան գայցեն ի թանձրութիւն՝ իբրև յորմն հարկանիցի. նոյնպէս և յորժամ մարմինն գիրանայցէ, ծածկէ թանձրութեամբն զլուսաւորութիւն մտացն: Այլ որ մեռանիցին և փտիցին՝ բազում աւիշկ ի մարմնոյն ելանիցէ, նոյնպիսի ինչ ի բարեկեցիկսն է տեսանել. անդ խօզ, անդ ասր, անդ շմալ, անդ հեծել, և անդ փսխել և զգայուել և զայլն ևս որ աղտեղի է ասել... Աւելի ժանդիւքն և չար հոտովքն լնուամք զանձինս, յորժամ կարի խորտկօքն գայեմք, իբրև տիկ ուռուցեալ նիտայցէ որովայնն, զգայուիցէ, թառանչիցէ, տագնապիցէ. և բազում չոգոց՝ որ իբրև զծուխ ցոլացեալ ի մարմնոյն ելանիցէ և զուղեղ գլխոյն ապականիցէ: Զի թէ արտաքին հոտոցն այնչափ վնասի ուղեղն, որչափ ինչ անտի՝ որ անդէն ի ներքուստ ի ներքոյ յորովայնէն ի գլուխն տայցէ. որպիսի՞ ինչ վտանգ զարիւնաբուղխս առուովք կայցէ, որ եռանն ելանել, և անդրէն նահանջին. որպիսի՞ ինչ գայլ և չչուկ գլերդիւն և զփայծեղամբն և կամ զաղբոյն գայլանոցովքն:...

ճճիք ծնանին. որոց բազում անգամ զսիրտն նեղեալ յանկարծամահ սպանանեն: Արդ այս և այսպիսի ցաւք և աչխատութիւնք են ի մարմնոյ զեղխութենէ արբեցութեանն:

Իսկ զոգւոյն ցաւոց զի՞նչ ասացից, կամ ո՞ր բերան բաւական է պատմել զանհնարին աղէտիցն ցաւոց՝ որ կան և պահին ի պահանջումն ամենայն մեղաւորաց և արբեցողացն: Եւ եթէ մարթ էր ցուցանել յանդիման, աստէն իսկ ի տանջանս և ի դատապարտութեան ցուցանէր զոգիս արբեցողացն. զի միշտ ի մթի և ի խաւարի պահէ արբեցութեան թմրութիւնն, և իբրև ի յանդունդս ինչ աղխամղին անկեալ զնի ի մարմին. և միշտ նեղեալ ի գինւոյն գիշութենէ՝ թաղեալ կայ հանապազ, իբրև մեռեալ ի գերեզմանի՝ կիսամահ և տխուր. և որչափ ի մարմինն թանձրութիւնն յաւելու, նոյնչափ և ոգին ի տկարութիւն իջանէ: Եւ արդարև իսկ յիրաւի, են յայսպիսի խաւարի արբեցողացն հոգիք, որք զտիւն ամենայն յարբեցութեան ծախիցեն, և զգիշերն ողջոյն ի քուն հանիցեն. և այգուցն յարուցեալք ծանրաթունք իբրև զխեղաղարս դանդաչիցեն. և չև երեկուն թմրութիւնն թափեալ, անդէն ի նոյն դառնայցեն, և զճառս երկիւղին Աստուծոյ և վարուց առաքինութեան ոչ ճանաչեն: Արդ՝ չիցե՞ն եւ ընդ այն ինչ մի հայիս եթէ երեսքն կարմիր են, այլ ի ներքս զմիտսն քննեսջիր, և տեսանելի ամենայն տրտմութեամբ. և եթէ մարթ էր հանել զոգիսն ի մարմնոյն և աչաց ցուցանել, ապա տեսանէիր տրտում և տըխուր, անաւագ և վհատ զոգիսն... այնպէս մեռեալ կայ իբրև յանդունդս ինչ խաւարինս գիշեալ և չիշեալ, լի ամենայն պզծութեամբ կրիցեն ոգիքն զմարմինն.. զի որչափ մարմինն գիրանայ և յօրանայ, ևս քան զևս ոգին անաւագի և տկարանայ. մանաւանդ զի իբրև ի գերեզմանի թաղիցի... Յորժամ զամենայն ժամանակս ի ճաշ և յարբեցութեան անցուցանիցէ, չիցէ՞ ի խաւարի, չիցէ՞ մեռեալ: Եւ այգուցն յորժամ թուի թէ արթուն իցէ՝ չէ ատոյգ արթուն, զի երեկոյին գինին չև ևս թափեալ է ի խելացն, և անդրէն ի նոյն ցանկութիւն փափիցէ և ի նոյն խոկայցէ. զի և ընդ առաւօտս և ի հասարակ աւուր և ընդ երեկս ի նոյն անառակութիւն փութայցէ, և զամենայն գէշերն ի խոր քուն անկեալ խորդայցէ, և ընդ առաւօտն ևս աւելի, զայնպիսին ընդ կեն-
դանի՞ս համարիցիմք»...

յանդոյս խաւարի այնպիսիքն. չի-ցէն ի միգի և ի մոլորութեան մեռեալք և թաղեալք ի բարեաց, և ի չարեացն միայն կենդանիք. որք արբեցութեան չուայտանաց մտացածին ևս բանիւք անօրէ-նութեան բանս ևս յօդեն և ա-սեն » ...

Արդ՝ այս նմանութիւնս եթէ դիպուածի արդիւնք համարինք և եթէ դիտմամբ եղած, բնաւ չպիտի նուազեցնէ Մանդակունւոյ յար-գը՝ հանդէպ Ոսկեբերանի. վասն զի երկաքանչիւրին ալ ճառերու ամբողջական կարգն և գաղափարաց չարքն իրարմէ տարբեր հանգա-մանքներու հետ լծորդուած են, և տարբեր լեզուով արտայայտուած: Ինչպէս Բոսիւէ սիրոյ է և հետևող Տերտուղիանոսի և Աստուածա-բանին, այսպէս և Մանդակունին՝ Ոսկեբերանի. այս առանց տարա-կուսի է: Սակայն ինչպէս երբ կը տեսնենք Բոսիւէի դամբանական ճառերու [1] մէջ մէկէն աւելի նմանութիւններ Աստուածաբանին, չենք կրնար ըսել, թէ նուաղ հանճար է քան զՆազիանզացին, և կամ լոկ բանաքաղ. այսպէս ևս պէտք է դատել Մանդակունւոյ և Ոսկե-բերանի մասին. զի երկուքն ևս ունին իրենց յատուկ կատարելու-թիւնները, ինչպէս և թերութիւնքը: Ոսկեբերան՝ աւելի բազմակող-մանի ձիրքերով և գիտութեամբ օժտուած պերճախօս մ'է. բայց յաճախ նիւթէն դուրս կը թափառի, և ատկէ ատկէ կիրառութեամբ օրինակաց՝ ճառին միութիւնը կը խզէ. Մանդակունին, ընդհակա-ռակն, աւելի համաղրական է և կեդրոնացնող, աւելի դրական է և պարզ:

1. Համեմատէ Բուրգոնեան էչման Գանդէի վրայ խօսած դամբանականը՝ Նա-զիանզացւոյ ի Վեղկն հրաժեշտն իւր արտասանած ճառին հետ, զոր ուղղեց առ ե-կեղեցին Կ. Պոլսի:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՆ ԻԲՐԵՒ ԲԱՐՈՑԱԽՕՍ, ԵՒ ԱՆՈՐ ԲԱՐՈՑԱԽՕՍԱԿԱՆ

ԱՐԺԱՆԻՔՆ

Կան հրաշալիք նկարչական արուեստի, զոր ո՛ր կողմէն որ դիտես՝ նոքա ալ գլեզ կը դիտեն, կարծես թէ տեսանելեացդ հետ՝ հոգւոյդ խորն ևս ուզելով թափանցել: Կան և տեսարանք բնութեան, զոր ո՛ր դիէն որ զննես՝ միշտ նորանոր և հիացուցիչ տեսարաններ կ'ընծայեն աչացդ: Այսպէս ո՛ր և է արուեստէ և բնութենէ գե-բաղանց հոգին Մանդակունւոյ՝ սրբազան պերճախօսութենէ դուրս՝ բարոյախօսական այնպիսի բարեմասնութիւններ իսկ կը ներկայացնէ մեզ, որոնք իրաւամբ արժանի են ուսումնասիրութեան:

Նախ և յառաջ դիտելու է, որ Մանդակունւոյ ընտրած նիւթերն՝ ոչ թէ ընդհանուր կերպով բարոյախօսութեան մէջ ճառելի և վե-րացական խնդիրներ են, և ոչ իսկ յինքեանս միայն գոյութիւն ու-նեցող հայեցողութիւններ. ո՛չ, այլ նոյն իսկ Ե. դր դարում ապրող ժողովրդեան՝ առօրեայ կենաց և կենցաղավարութեան մէջ մարմնա-ցեալ և կենդանի ախտեր: Ախտեր՝ որոց ամենուն անուանքն յիշա-տակուած կը գտնենք Շահապիվանի ժողովոյ կանոնաց մէջ, և հայ-ազգի բարոյախօսն իրրև թունաւոր օձեր և խժեր կը տեսնէ և կը զգայ զանոնք, գրեթէ իւր ամէն ճառերու մէջ: Անտարակոյս մարդ-կային ընկերութեան թիւնաւորուած սրտերու հետ՝ առօրեայ գոր-ծերն ևս ապականող այդ ղղուելի և մահաբեր ախտերն՝ իրենց խս-կական էութեան և բնակավայրին մէջ ճանաչելու և հարուածելու համար, կամ հոգեկան և զգայական բերումները զննող և քննող խոհ-տասէր ըլլալու է մէկն, և կամ ժողովրդեան ծոցն ապրող և նմանավիշտ կարեօք զգածելով և փորձառու ումն: Մանդակունւոյ համար՝ պատ-մութենէն աւելի նոր բան մի չենք գիտեր, այս կէտերուս վերաբե-րեալ, քան ինչ որ գրութեանն առաջին գլխուն գծեցինք. թէպետև Եփրեմներ, Բարսեղներ, Եպիփաններ և Նազիանզացիներ, զոր կա-րեմք բառիս սեղմ առմամբ կրօնաւոր անուանել, գերազանցապէս

մարդաբան իսկ էին։ Իսկ անոր մեզ հասած գործերն՝ թէ իմաստասիրական մակածութեանց և թէ ժողովրդեան խաւերու մէջ հաւասարապէս խորասուզուած մէկը ցոյց կու տան, թէև մեր համոզումով վերջին դպրոցին մէջ աւելի հմտացած է և կ'արտափայլէ նորա բազմափորձ հանճարը, — այլ և այլ ճառերու և պարագայից մէջ, — որոց գեղարուեստական կողմերն արդէն մասամբ քննեցինք և ի յաջորդն պիտի քննենք։

Վասն Բարկոցողց Բարոց ճառին մէջ՝ գեղեցիկ կապով միացուած կը տեսնենք, ստուգիւ, անոր գիտական ծանօթութիւնքը՝ փորձառականին հետ, իբրև նոր ումն Սենեկայ. մանաւանդ թէ ինչ ինչ կէտերու մէջ՝ Աւետարանի աշակերտն՝ շատ աւելի տրամաբան կ'երևի մեզ, քան Ստոյիկեան մեծանուն փիլիսոփայն։ Վերջնոյս քով[1] բարկութեան բնորոշ յատկութիւնը խիստ անորոշ սահմանի մէջ դրուած է. « Զիք անշուշտ և ոչ մի ի կրից՝ որոյ ժանտագոյն իցեն կերպարանք... որպէս մարդոյ բորբոքելոյ. վասն զի զայլս ի կրից մարթ է դանդաղել և յապաղել, զի և անագան բժշկին. իսկ սորայս չարագրգիռ և ինքնաքարշ բռնութիւն ոչ տակաւ և մեղմով յառաջ խաղայ, այլ ուր սկիզբն է նորա՝ անդ և կատարած »։ Այս բարկութեան արտաքին երևոյթն է, և ոչ թէ էութիւնն։ Իսկ Մանդակունին գեղեցիկ գիւտով մի ցոյց կու տայ մեզ անոր բուն էութիւնն ևս, այսպէս. « Ամենայն բնութիւնք մեզաց և պիղծ ախտից անօրէնութիւնք չանան ի մարդկանէ ծածկել զանօրէնութիւն իւրեանց. իսկ բարկութեան ախտին մոլութիւն անամօթ և վայրենաբարոյ, անակնածող և գազանամիտ, արագ չարժի յաղաղակէն, իբրև զհաւահաւլածն մրգապահաց, որ մինչև օդոյն ինչ չարժեալ՝ և նա սկսանի կարկաչել, ցուցանելով զիւրոյ բնութեանն զթերևութիւն. նոյնպէս և բարկացող մարդն »։

Սենեկայ՝ բարկութեան գործած ահագին արհաւիրքը՝ պատմական անցքերով կը պատկերէ, որոց չարժառիթներըը՝ կարող էին նոյն իսկ բարկութենէ գլխովին տարբեր բաներ եղած լինել. Մանդակունին, ընդհակառակն, երեք խօսքով ուղղակի մարդուս մէջ յառաջ բերած և բերելիք բոլոր անոր յեղափոխութիւնքը կու տայ նկատել, ըսելով. « Զամենայն զգայութիւնս նորա յիմարեցուցանէ և վառէ, որպէս կամի, զլեզու նորա ի չարութիւն, զբերանն՝ ընու թշնամանօք, զմիտան գազանացուցանէ »։ Ստոյիկեան իմաստասէրն՝ բարկութիւնը միշտ և անպայման կերպով վնասակար և անբանաւոր կը համարի, և կը չանայ բոլորովին չիջուցանել զայն. իսկ բանաւոր զայրոյթն ալ բարկութիւն չի համարիր։ Երկաքանչիւրն իսկ անճիշդ են և տարապայման։ Մանդակունին ընդհակառակն կը գոչէ իմաստութեամբ. « Է՛ և ցասումն արդար, և բարկութիւն արդարութեան, յորժամ զվրէժս ինչ պատուիրանացն Աստուծոյ խնդրեսցես, կամ վրէժխնդրութեան եղբօրն զրկելոյ »։ Եւ յիրաւի ոչ միայն սուրբ Գիրք, այլ և տարեգիրք դիւցազանց լի են գանձելի գործովք այսպիսի բարկութեան, որ նպատակաւ և ուղղութեամբ միայն կը տարբերի մեսէն, և ոչ երբէք բնութեամբ չարժմանն։

Սենեկայ՝ բարկութենէն ազատելու իբրև զօրեղ միջոցներ կու տայ. « Ի խորին և ի դժուարին ուսանիմք ի բաց հրաժարել պարտ է դիւրագրգիռ բնութեան... զուարճալեօք զբօսեցուցանել զմիտս, վերծանութեամբ քերթուածոց ամբել և առասպելախառն պատմութեամբ զբաղեցուցանել »։ Սակայն այս միջոցներս ոչ միայն անզօր են, այլ և ոչ իսկ արժանի այնքանուոյ իմաստասիրի։ Ո՛րքան խորհրդաւոր է, նաև այս տեղ, Մանդակունի, երբ Աստուծոյ բանը կ'ընծայէ իբրև հատու սուսեր բարկութեան, գոչելով ի լսելիս բարկացողին. « Որ տարապարտուց բարկանայ եղբօրն՝ պարտաւոր լիցի ի դեհենի հրոյն », և մատնանիշ կ'ընէ յաւիտենական երանութեան աչն պսակաց և պարգևաց վրայ, որք կան և ինան համբերողաց։

Վերջին դիտողութեամբ մի կնքենք այս երկու բարոյախօսութեանց զուգակշիռը։ Սենեկայ բարկութեան կիրքն, այսինքն է ցասումն զուգակշիռը՝ ծագումով բոլորովին տարբեր կը ներկայացնէ ցանկականը՝ ծագումով բոլորովին տարբեր կը ներկայացնէ ցանկականը՝ նէն և անոր յարակից բերմանց, և կ'ըսէ. « Այլ ուր սկիզբն՝ անդ և կատարած »։ Այս հակառակ է ճշմարտութեան. վասն զի ցասկութիւնն է՝ որ կը ծնանի զցասումն, և վերջինս դուստր է առաջնոյն։ Ցանկական կարողութեամբ կը ձկտի մարդ առ բարին բնութեան իւրոյ, իսկ ցասմնականով կ'ուզէ յաղթել արգելչաց, կամ զայն բռնաբարողաց, և հոն թափելով իւր թոյնը՝ կը դադարի։ Եւ ահաւասիկ այս ամենայն կը գտնենք Մանդակունւոյ այս չորս տողերուս մէջ. « Եւ զոր օրինակ թիւնաւորքն՝ զթոյնան ընդ իւրեանս կրեն հանապազ, սոյնպէս և բարկացողքն՝ զցասումն և զբէն նախանձու, և յամենեսեան յարձակին՝ իբրև զչուներս կատաղիս. իբրև զխողխ է հոտ մրեալ՝ վատ է ցասումն բարկութեան անօրէնութեան է զրկելոյ... բազում բանս ձևացուցանեն, իւրաքանչիւր ոք՝ զինքն արդարացուցանելով... և զընտս կոտրելով է վերս, ընկերին՝ չանայ ամենեցուն առաջի, կոծեցուցանելով զնս ընտակոյ », այսինքն է՝ իւր բարւոյն։

1· Սենեկայ, տպ. Վենետկոյ, 1849· Յղկ. Բարկութեան։

Մեր բարոյախօսն անցնելով բարկութենէն ոխակալութեան և քինահանութեան, մարդկային սրտի մէկ խաւն ևս կը պեղէ խոր-համուխ, ուսկից հնոցի և հրաբղխի պէս ծածուկ նախանձու ևատելութեան ծուխեր կը մխան անդադար։ Այս ճառիս մէջ չատ նրբութեամբ կը սահմանէ Մանդակունին այդ ախտի տեսակարար դանազանութիւնը յառաջինէն։ Բարկութիւնը թէպէտև դժնեայ և անբանական, թէպէտև բանաւոր բայց միշտ բնութեան դրդիռ մ'է անժուժ, և լուրջ մարդկանցմէ աւելի՝ տղայոց և անմեղներու մէջ իսկ կը բորբոքի և չիջանի, ապստամբելով յանախ ի բանէն։ Իսկ ոխակալութիւնն, ընդհակառակն, զբանն ինքնին նուաճած է չար կամաց իշխանութեան ներքև, և անոր թելադրութեամբ միշտ կը գործէ։ Զէ պարզապէս ծնունդ բարկութեան կամ բնածին կրից, այլ սատանայի, որ լրջամիտ ոգիներու վրայ աւելի կը տարածէ իր իշխանութիւնը։ Այս տեսութեամբ Մանդակունի բարոյախօսն սահմանէն իսկ վեր կը ճեմէ, և բնազանցական աստուածախօսութեան ամենակնճռոտ խնդիրներ կը լուծէ մեզ։ Իսկ այսպիսի լուծման զօրեղ և ամենանուրբ փաստերը կը գանենք այն ախտի գեղեցիկ նկարագրութեան մէջ, ուր կը ներկայացնէ մեզ ոխակալն՝ իբրև մարդակերպ հրէշ մի, կամ լաւ ևս՝ երկնքէն երկրիս վրայ սահող և յածող դժոխոց Սատան, զոր մերթ խորամանկ և խայթող իժի նման կը ղրկեցնէ ի ժողովս մարդկան, լի թիւնով նենգութեան. և մերթ կը նստեցնէ գինս տրտում և տխուր հրապարակաց մէջ, դիւական խոհեմու մէջ ընկղմած։ Երբեմն կը մտցնէ յեկեղեցին իբրև քրիստոնեայ, բայց անոր ազօթքը փոխանակ առ Աստուած ելլելու՝ կը մխրճին յերկիր, վասն զի «պիղծ են քան զպղծութիւն զոհից». և երբեմն կը յածեցնէ գինս ընդ ծով և ընդ ցամաք՝ ընկերին չարիք նիւթելու բոլոր կեղծուպատիր նենգութիւններով և ահռելի ոճիրներով։ Կարելի չէ բանաստեղծական աւիւնով լի այս գեղեցիկ էջերն ընթեռնուլ. և մտքով բաղդատութիւն մի չընել Դրախտ կորուսեալի Թ. երգին հետ, որուն նախագաղափար իսկ ըլլալու արժէքն ունի։ Տարբերութիւնն յայտ կը կայանայ, որ Միլտոն՝ զատանայ մարդակերպ կը յածեցնէ երկրագնդիս շուրջը, որ լոկ երևակայութեան մէջ գոյութիւն ունի. իսկ Մանդակունին, ընդհակառակն, զմարդն ոխակալ ի սատան կերպաւորած է. վասն զի հոգւով սատանայի կը վարի այնպիսին, կ'երկնէ և կը գործէ։

Վասն անօրէն Նաբէթայ ճառին մէջ՝ երկու ընդդիմամարտ կրքեր, այն է՝ ցաւոց և ցասման, բոլոր իրենց սաստկութեամբը կը թուին

ծախել ապառել պՄանդակունի. սակայն մեր կորովի բարոյախօսն իբրև խմաստուն՝ գիտցած է քալ կարեկցութեամբ մեղմել բարկութիւնը, և արդար բարկութեամբ՝ հետ զհետէ զօրացնել պնդել իր ոգւոյն եռանդը, վերահաս չարիքը տապալելու համար։ Վերջին աստիճան ատելութիւն մի ցոյց կու տայ թատերախաղացց դէմ, և գէ-ոմոլոգ-ներ՝ իսկ կ'անուանէ զայն։ Ի նկատի առնելով արդի թատերախաղացց գեղարուեստական և կրթիչ բնաւորութիւնները միայն՝ չափազանց երևելի գուցէ Մանդակունւոյ յարձակումներն, և նոյն իսկ անձուկ մտաց արդիւնք։ Բայց այս պատրանքս դիւրաւ կը փարատի, և մենք կը ստիպուինք շուտով իրաւունք տալ բարոյախօսին, երբ ձեռքերնէս բռնած ցոյց կու տայ մեզ յայնժամու գուսանական, լկտի և լսկիրչ տեսարանները, որոնք զուրկ էին բոլորովին կրթիչ և բարերար ազդեցութենէ։ Լսենք պահ մի բարոյախօսի ձայնը. «Վասն որոյ պարտ է լալ և ողբալ զայնպիսի անառակութիւնս, մանաւանդ զկատարած գործոցդ որ ի միջի լինիք քաղաքականացն. էքէլ զյաճախաբար յափըն, ձուին, գելոն, ափսոքն և զամենևսին ազդով բերանոյն զաղբացուցանեն. զոմանս հայհոյեն, զոմանս բասքասք, զոմանս ընչանանք և զոմանս յաղէ, խեղուխեամբ և ամբոխով կոբացուցանէ...։ Կանայք՝ ի բաւ բուղէց կերպարանեալ, և արք՝ յինց մարդակնաղաց, որք անօրէն զաղբաքանաւրնեամբն և ֆան գանասանս ևս ի վայր կ'ընծեն, և ֆան գշանց ֆսխածն ազգեզգոյնս ֆսխեն գրագրկուլ բանէյն գէբգլուրնեամ, յորմէ չարաչ նեխութեան և հոտ զազրալի ելանէ, որ զանձինս երկիւղածացն զզուեցուցանէ և դիւացն է ցանկալի. զի ուր կատակք և գուսանք են, և խաղ և ծաղր լկտիք, անդ և գևք ընդ նոսա ի պարու անցանեն»։

Մ. Խորենացի՝ Տրդատ Բագրատունւոյ և Ջնարահար Նպաստիկի պատմութեամբ, և Շահապիվանի ժողովի կանոնները՝ լոկ ակնարկութիւններ կը պարունակեն. Մանդակունին առաջինն է, որ այս և նման տեղերով կը պարզէ մեր դիմաց Ե. դարու գուսանականութեան բնորոշ յատկութիւնները։ Բաց աստի՝ պարտական ենք Մանդակունւոյ՝ նաև այն անբարոյացուցիչ և աշխարհաւեր աղետներու ծանօթութիւնը, զորս իբրև անմիջական հետևանքներ գուսանականութեան՝ իր կենդանի ոճովը կը նկարագրէ այսպէս. «Զի անտի յորդորին կռսանք՝ ի պոռնկութիւնս, ամուսնաւորք՝ ի շնութիւնս. անտի լինին կանայք՝ ատելի արանց, և արք՝ կանանց արհամարհելի. անտի ,որդիք՝ ի հարանց թշնամանին և ծառայք՝ ի տերանց. անտի ծերոց անհամուրթիւն և երիտասարդաց կատաղութիւն. անտի է պառաւանց յայրաստութիւն և աղջկամարդկացն՝ գիշութիւն և արանց լկտութիւն,

և կանանց կատաղութիւն։ Անտի են մարդելուզութիւնք և կնահատութիւնք և մանկասպանութիւնք և այլազրկութիւնք, յաղագս զարդուցն պաճուճանաց. անտի են անպատուութիւնք և պճնութիւնք և բազում մեքենայք չարաչար ախտից։ Անտի են զանազան պղծութիւնք, զոր և ասել իսկ ազտեղի է։ Այլ և ուսուցանէ անձին լկտութիւն, ոգւոյ մեղկութիւն, մտաց քայքայումն, աչաց յարատութիւն, լեզուի դատարկաբանութիւն, գործոց հեղգութիւն, և պարապեցուցանէ յամենայն ի չարիս։ Թատերքն ուսուցանեն զամբարտաւանութիւն, զհպհպոյութիւն, զնենգութիւն, զմեղմախօսութիւն, զչարակնութիւն, զնախանձ և զբամբասանս » և այլն։

Այս ճառիս մէջ ևս յերևան կու գայ Ոսկեբերան, իբրև նախագաղափար մեր ոսկիբերան վարդապետին. վասն զի Մատթէի ԺԸ-ԲՒՒ ճառի Յորդորակը [1] համեմատելով սորա հետ՝ նմանութիւններ զգալի կերպով աչքի կը զարնեն։ Սակայն Մանդակունի՝ իւր նախորդին վսեմն՝ աւելի ևս վսեմացուցեր է, և գեղեցիկը գեղեցկագոյն ըրած։ Այսպէս է ստուգիւ նախ սորա այն սիրաշարժ նախերգանքն՝ յորում իւր ժողովրդեան մեղսամած և մահամերձ դիակին առջև արձանացած՝ կ'ողբայ իւր և իւր խնամոց յանձնուած հօտին եղկելի կացութեան վրայ, որ կը յիշեցնէ մեր երկնաւոր վարդապետին այն օրինակը, որ Ղազարու շիրմին վրայ լալով թշուառ մարդկութեան արտասուքը կ'ուզէր սրբել։ Նոյն իսկ թատերախաղուց նետերին բացուած ժողովրդեան մահարեր վէրքերու ընդարձակ թուարկութեամբ և անոնց աստիճանաւոր ստորաբաժանումներովը՝ Մանդակունին աւելի խորազննին բարոյախօս և ճարտար վիրաբոյժ կը հանդիսանայ, քան թէ լոկ ճարտասանութեամբ ոգևորուած և տեսական հռետոր, որ շատ անգամ ստուերն՝ իր կը ներկայացնէ, և իրականը՝ ստուերական. և երբեմն ալ կը թուի սովորական մակարդակի վրայ գտնուող եղելութիւնքը լեռներու հաւասարեցնել։ Բնականութեան չրջանակէն դուրս այս թերութիւնս, որ սովորական է Ոսկեբերանի, Մանդակունւոյ համար կրնանք ըսել, թէ խիստ չափաւոր է։ Ցոյն բարոյախօսն՝ ամէն սեռի և հասակի համար վտանգաւոր կը համարի թատերական տեսարանները՝ ըսելով. « Այս ուրեմն որ ի թատերսն երթայ, նա է որ զամենայն կարգս հոգևորս եղծանէ ». հայն ընդհակառակն « զթեթևամիտ և զչուաղաբարոյ ազգն կանանց » մանաւոր կերպով կը ջանայ պատսպարել սատանայածիգ նետերէն. վասն զի արանցմէ

1· Տես ապագ. Վենետկոյ, 1826, Հա, Բ· էջ 566–572։

աւելի « և՛ երադալուր և՛ դիւրահաւան և վաղապատիրք » են։ Դիւրութիւն մի՝ զոր այժմ իսկ և միշտ կարելի է քարոզել և ճշմարտել։ Ոսկեբերան՝ իւր ունկնդիրները բուժելու համար՝ կ'ուզարկէ զանոնք « ի բուրաստանս, ի ծովալիճս և ի հանգրուանս մարտիրոսաց ». այստեղ իսկ շատ աւելի վսեմ կ'երևի Մանդակունին՝ երբ կը բանայ, ընդհակառակն, անոնց առջև մէկ կողմէն « զդիչերն այն ահեղ և սոսկալի՝ խաւարին և աղջամղջին », յորում կը չրջի թագաթագուր մահն ուրուականակերպ, սուր ի ձեռին, և Պարկայց պէս կը սպառնայ խզել յանկարծ զկապն հոգւոյն ի մարմնոյ. և միւս կողմէն՝ « զօրն լուսաւոր ապաշխարութեան », յանդոյս տարտարոսէն և անչիջանելի գեհենէն ազատելու համար։ Կը լսեցնէ ի հեռաստանէ յուսաբեկ լացի և կոծի ձայներ և դառն հառաչանքներ. և գիտէք, թէ ո՛վ են սոքա. անոնք՝ որք գուսանաց պակչոտ տեսարաններով ուրախացան և բերկրեցան։ Ահաւասիկ մեր ներկուս բարոյախօսի բնորոշ կնիքն յիշեալ ճառի մէջ։

Ցոյժ ազդու է Ընդդէմ անառնամոլաց, ևն, խօսած ճառի նախերգանքն. այս տեղ Մանդակունին՝ կարծէք թէ բարոյախօսական երկու սուրերու մէջ կեցած է, և վիրաւոր սրտիւք կը գոչէ. « Արդ՝ զինչ ասացից... զի եթէ հաւաստեաւ զընութիւն ախտին բանիւ մերկացեալ ծանուցից՝ առ ի քալ ի միտ առնուլ, զերեզուս իմ ազտեղեալ ապականեմ և տղմով չաղախեմ. կամ եթէ զղջացեալ ընդ պատրուակով ասացից, ծածկի չարութիւն մոլեկան ախտիս »։ Սակայն նա սպառազինուած անտեղիտալի զրահիւք սուրբ Հոգւոյն՝ կը յառաջէ այդ երկու սուրերու միջով, մինչև որ անոր գիւտաւոր և ճարտար բանից առջև զլանան այդոքիկ։ Բարոյախօսին համոզմամբ՝ այս ախտս մարդկութեան մէջ գործուած ամէն մեղքերէն և անառակութիւններէն աւելի զազրալին և զզուելին է. վասն զի ոչ միայն մարդկային արժանապատուութեան՝ այլ և բոլոր բնութեան արարածոց հակառակ է։ Անասնամոլն՝ այլ ևս « մարդ չէ, և չէ իսկ ամենևին ». վասն զի կ'ըլլայ անով մի մարմին ընդ անասնոյ. կը սպաննէ իւր հոգին և մարմինը՝ յաւիտենական օրինաց և վճռոց համեմատ, վասն զի կ'իջանէ ի յատին անարդութիւն անբանութեան. մանաւանդ թէ անարգագոյն և անմտագոյն քան զամէն անասուն. « քանզի ոչ տեսանեմք, ասէ, զանասունս՝ ի մարդոյ բնութիւն ախորժեալ »։ Հայ բարոյախօսի այս երկու վէիռներս իսկ հաւասարապէս ճշմարտուած և ապացուցուած են ի ձեռն կենդանաբանութեան և բարոյագիտութեան։ Մարդկային չարարուեստ բռնադատութիւնք միայն կարեն անոնց հակա-

ռակ գործեր յառաջ բերել. սակայն նոյն իսկ այսպիսի պարագայից մէջ՝ բնութիւնն ինքնին կ'ոտնակոխ և կը վերջոտնի յառաջել անդ, ուր չարութիւն մտաց կ'ուզէ տանել:

Ոսկերերան՝ Հռոմ. Թղթի Մեկնութեան Դ. բդ ճառին մէջ նոյնպէս զայրացած՝ ահաւոր կայծակներ կը թափէ այնպիսի մարմնասիրաց գլխոյն վրայ, իբրեն յատուկ կորովով և ճարտասանութեամբ. սակայն Մանդակունւոյ բռնած չափովն՝ աւելի յուզիչ և սրտագրաւ կ'երևի ինձ, քան զամէն ճարտասանութիւն. վասն զի անասնամոլաց մեղկացեալ սրտին և խղճի վրայ ծանրացած այնպիսի մեծեղեռն ախտի տգեղութիւնն և գարշելութիւնն ակներև ընելէն վերջ, չուզեր այլ ևս մաքրասիրաց մտքերը պղտորել դժոխային պատկերներու նկարագրութիւններով, որոց քալ տեղեակ էր՝ ի լոյ. այլ բոլոր իւր արուեստն ի գործ կը դնէ այն թշուառականները համոզելու և դարձեալ իրենց նախատիպ պատկերին վերածելու համար: Եւ ստուգիւ ո՞րքան գթած, ո՞րչափ սիրիչ է այդ պատկառելի բեմբասացի ձայնը, որ դիւաց անթիւ բանակներէ պաշարուած և գերգեռական երամակին հաւասարած մեղաւորին ցուցնելով Աստուծոյ անհուն ողորմութիւնն, անյիշաչարութիւնն և իր գերագոյն վախճանը՝ կը գոչէ սրտագին. « Ոտի՛ր ի մէջոյ նոցա՝ իբրև ի հրոյ կայծականց. փութա՛, անկի՛ր յողորմութիւնն Աստուծոյ. ողբա՛, աւելով. Հայր, մեղա՛յ երկինս և առաջի քո »: Ա՜խ, մարդու չէ այս ձայն, այլ եղբայրսիրութեան և աստուածասիրութեան մաքրագործող բան: Բեմական ճարտասանութեան իբրև մի մի գեղեցիկ ակունքներ են նաև 1467 ին՛ւմ գործածուած հակադրութեան ձևերն, որովք անասնամոլին և արուագիտաց՝ Աստուծոյ դէմ գործած անթիւ չարեաց քով տեսարանի վերայ կը հանէ Աստուծոյ անբաւ մարդասիրութիւնը. մոլորեալ և գլորեալ ոչխարին առընթեր՝ զանիկայ կանդնող հովիւն բարի Քրիստոս. դեռաթաթաղ տղմով տգեղացածին մօտ՝ զամենալուսաց աղբիւրն արտասուաց. սևաթոյր ամբարշտութեամբ ներկուածին հուսկ՝ Քրիստոսի լուսաւոր պայծառութիւնը. յոտից մինչև ցգլուխ վիրաւորուածին առջև՝ զթժիշկն ապաչխարութեան, խոր խաւարի մէջ ընկղմածին՝ երկնային կենաց և չնորհաց բարձրութիւնն, և յուսահատելոյն՝ փրկութիւնաբեր աւետիսը, այլովք հանդերձ:

Այս և այսպիսի ախտերով տառապեալ մարդկութեան ամենաղօրեղ դեղ մի հարկաւոր էր բժշկուելու համար, ամենայարմար միջոց մի՝ որ կարենար մօտեցնել երկիրս՝ երկնից, և մարդն՝ Աստուծոյ. և ահա ցոյց կու տայ մեզ Մանդակունի ընդունելի ազօթքը, որուն

նուիրած է իւր գեղեցիկ և փայլուն ճառերէն մին՝ վասն ընդունելի և անընդունելի ազնիւ՝ խորագրի ներքև: Այս նիւթս նոր չէ, վասն զի Ոսկերերան իսկ մէկը միւսէն աւելի գեղեցիկ ճառեր գրած է այդ մասին, հրաշալի բանիւք և վարդապետութեամբ պատարուն: Քրիստոնեայ հասարակութիւնն ևս գիտէ, թէ ի հաւատոց է աղօթից կարևորութիւնն, որ թէպէտև մարդկութեան հետ ծնած է, բայց յաւիտեանս պիտի մնայ մարդկութենէ անբաժան: Բան մի՝ զոր քրիստոնէից չատերը կ'անգիտանան, այսինքն թէ, ինչ կերպով աղօթելու է. և ահաւասիկ այս կէտս հիանալի կերպով բարգաւաճեր է մեր բարոյախօսն, Ոսկերերանին անգամ նախանձելի հոգեբանական խորութեամբ և պարզութեամբ: Այո՛, այս ճառս մէջ կարծէք, թէ ակներև կը տեսնէք դուք մարդկութեան ոխերիմ և նենգաւոր թշնամին՝ սատանայ, որ հոգւոց կորստեան հետամուտ՝ ամէն կողմ ծածուկ դարանները կը լարէ անոնց ոտից ներքև, ամէն կողմէն մահաբեր նետեր կը տեղայ վիրաւորելու անոնց միտքն և սիրտը. կը տեսնէք և զՄանդակունի, իբրև հոգեսէր հայր մի, որ հազուագիւտ նախատեսութեամբ ամէն տեղ յայտնելով այն որոգայթները՝ կը խայտառակէ զմարդատեաց դաւաճանը. և անդադար դուրս քաշելով այն մահաբեր նետերը՝ վէրքերն ևս կը բուժէ արագ արագ: Դնենք այս տեղ 41 և 44 էջերէն մի քանի տողեր միայն, ուսկից չատ իսկ յայտնի կը տեսնուի անոր չրջահայեցողութիւնը. « Զի աղօթք անարատք, արտասուօք և ողորմութեամբ, ընդ աղօթելն աղօթականին՝ բանան դրունք երկնից, և ի լսելիս Աստուծոյ ելանեն. և եթէ միայն անթերանալի կարզայցեն առ նա: Եւ զայս ամենայն գիտելով սատանայ՝ թէ մեծամեծ զօրութիւնք և անբաւ բարութիւնք յաղօթից գործին, երթեալ մերձենայ առ այն՝ որ աղօթելն կամիցի. և նախ առաջի ի մահիճն պատերազմիցի ընդ նմա, զանկողինն հեշտացուցանելով, զքունն քաղցրացուցանելով, զմարմինն ծանրացուցանելով. այսր անդր յեղյեղու և քոչքոտեցուցանէ: Եւ ո՛ւր ուրեմն յարուցեալ գնայ յեկեղեցին բեկբեկելով, և մտեալ ի ներքս՝ լինի յանդիման Աստուծոյ. և անդ ևս զվիտոն պատրուակէ սատանայ՝ առ ի չլինել զբազմութիւն յանցանաց իւրոց. և ոչ խմանայ եթէ Աստուծոյ կայ առաջի. ոչ զօրհնութիւնն լսէ, և ոչ զփառաբանութիւնան խմանայ, և ոչ ի սիրտս նորա մտանեն ընթերցուածոցն վարդապետութիւնք: Ոչ հեծէ և ոչ հառաչէ զմեզայն զանօրէնութիւնն. ոչ լայ և ոչ ողբայ զհոգւոյն վիրաւորութիւնան. ոչ ապաչէ և ոչ մաղթէ յԱստուծոյ, և ոչ արտասուալից պաղատանաւք զՏէրն հաշտեցուցանէ. ոչ խոստովա-

նեալ զչարեացն զրաղմութիւնս, և յայտնելով զծածկեալ մեթերս անօրէնութեան, զի ապրեսցի յահեղ տանջանացն և յանհնարին խաւարէն... Եւ կամք ընդ սատանայի՝ որ չփոթեալ խառնակէ զմիտս մեր ազգի ազգի մտածութեամբ, և ցրուեալ հոսէ զխորհուրդս մեր ի հոգս և ի զբօսանս աշխարհիս. և գերեալք յօդնութենէ աղօթից չահից՝ գրաւիմք ի չար խորհուրդս չարին. ի ներքս ծուռն խոնարհեցուցեալ յաղօթսն, և միաքն արտաքոյ բազում բանդագուշանօք յածեալ շրջին: Քանզի յաղօթսն խորհիմք զհոգս տանց և զանդաստանացն, յաղօթսն համարեմք զարդիւնս անդոյն և զպտուղս այգեացն, եթէ քանի՞ կապիճ հաց լինիցի իմ, և կամ քանի՞ մար գինի. և զխաչինան և զանդևային յաղօթս ածեմք զմտաւ՝ եթէ քանի՞ արջառ ինձ, կամ քանի՞ ոչխար. անդէն և զդործն և զվարձս վարձկանացն յիշեմք, թէ վայ որ ելանէ այս ի տանէ իմմէ: Այլ և զանդաստանս ևս զընկերին յիշեմք յաղօթսն, և անդէն դասիմք առաջի Աստուծոյ. և մինչդեռ յաղօթսն կայցեմք, տակաւին խորհիմք ևս ամբաստանութիւն զեղբօրէն. և չև յեկեղեցւոյ արձակեալ՝ անդէն սկսանիմք ամբաստանել զոսոխէն, և որպէս լեզեաւ՝ զբաղդրութիւն աղօթից դառնացուցանեմք: Եւ այնպէս յափշտակէ զմիտս մեր սատանայ, մինչև զխորհուրդս ևս աղտեղիս յաղօթսն յիշեցուցանէ. և զվաչխս փոխոցն և տոկոսեացն յաղօթսն համարեմք. յաղօթսն յիշեմք զնախանձն և զթշնամանս ընկերին: Եւ ոչ միայն այսպիսի չար խորհրդովք դատապարտիմք, այլ ընդվայրայած լեզուաք և չատախօսութեամբ վնասեալ յաղօթսն վիրաւորիմք »...:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՆ ԻԲՐԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՒ

ԱՆՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՔՆ

Ասուրբ հայրապետիս բոլոր գրուածոց մէջ՝ և ո՛չ իսկ անգամ մի կը հանդիպինք ազգային կամ Հայաստանեայց մասնական եկեղեցւոյ յիշատակութեան: Սակայն բնաւ պէտք չէ զարմանալ այս բանիս վերայ, և ոչ իսկ այս պատճառաւ օտարազգի վարդապետի մի գրուածոց հետ չփոթել նորա գրութիւնները. վասն զի այս, — այսինքն է ազգային կամ մասնական եկեղեցւոյ, — գաղափարս մինչև Ջ. դար ոչ մի վարդապետի մտքէն անցած չէր, թող թէ բերնով արտաբերել: Այդ և յաջորդ դարերուն մէջ սկսաւ և նշանակութիւն ստացաւ, երբ անկախութեան տենչն կամ բաժանման ոգին՝ ընդհանրականն և կաթուղիկէն՝ մասնականի վերածեց, և աստուածայինը՝ ազգային կամ լոկ մարդկային ընելու մեծ սխալը գործեց: Քաղկեդոնի ժողովէն յառաջ ծաղկող սուրբ Հարց և Հօտապետաց, — այսպէս և Մանդակունւոյ, — Քրիստոսէ հաստատուած Եկեղեցւոյ մասին ունեցած նախադաղափարն էր կաթոլիկո՛ւթիւն, ընդհանրակա՛նութիւն, առաքելակա՛նութիւն, մի՛ութիւն և սրբո՛ւթիւն, ըստ այնմ, թէ Մի Քրիստոս մի մկրտութիւն, մի հաւատք, մի մարմին՝ որ է եկեղեցի: Այնպէս որ Քրիստոսի եկեղեցին՝ այլևայլ և իրարմէ անկախ եկեղեցիներու բաժնելն ուրիշ բան չէր, բայց եթէ բաժնել երկնաւոր վեհային սիրելի հարսը, որ « Մի է միամօր մօր իւրոյ », ըստ Երգերգոցին. էր բաժնել քրիստոնէական սուրբ հաւատքը, մանաւանդ թէ զնոյն ինքն հեղինակ և հիմնադիր հաւատոցս Քրիստոս: Ահա այս վեհ գաղափարով ներշնչուած, և իրրև այսպիսի եկեղեցւոյ հովիւ և վարդապետ կը հանդիսանայ մեզ Յովհ. Մանդակունի՝ իւր ճառերուն և բոլոր միւս գրուածոց մէջ. կը խօսի, կը գործէ, կը խրատէ, կը յանդիմանէ և կ'ուսուցանէ զամենքը:

Այս իսկ պէտք է ըսել, թէ ի զուր է որոնել վարդապետիս ճառերու մէջ՝ աստուածաբանական կամ տրամախօսական ձևի ներքև

բարգաւաճուած բոլոր հաւատոյ մասանց վարդապետութիւնքը, որոց յաճախ կը հանդիպինք ուրիշ տուրք Հարց և վարդապետաց քով, որոնք առիթ ունեցան կամ հերետիկոսաց դէմ գրել և կամ տուրք Գրոց տեսական մեկնութիւններ յօրինել: Բայց ասով չենք ուզեր ըսել, թէ Մանդակունին զուրկ էր անոնց մեղրածորան գիտութենէն. ո՛չ երբեք. այլ նա իւր ընարած նիւթերուն և ժողովրդեան լոկ բարոյական պիտոյքներուն համակերպելով՝ այնպէս վարուիլ ուզած է: Բարոյախօսութեան անձուկ պարունակին մէջ իսկ փակելով ինք գինքը, լաւ գիտցած է նա հին և նոր կտակարանաց վարդապետութեան հրաշալիքը դուրս ցայտեցնել՝ բոլոր իրենց պարզութեան և զեղեցկութեանը մէջ: Սակայն Մանդակունւոյ մեծ արժանիքն ամէն բանէ աւելի յայտ կը կայանայ, այսինքն է, բարոյական և գործնական նկարագրի ներքև՝ ընդարձակել և դիւրըմբռնելի ընել տալ թէ գիտնոց և թէ ագիտաց համար քրիստոնէական վարդապետութեան տեսական առածները: Ներողութիւն կամ հանճար ծախելու համար՝ նա իր համոզումէն և հասկացողութենէ վեր երկդիմի և քօղարկեալ բաներ չաւանդեր բնաւ, որոնց լուծման բանալին ինքը չունենայ ի ձեռին, կամ եկեղեցւոյ դանձատանը մէջ. և ահա այս տեսակէտով իսկ անոր սակաւը՝ չատէն, համառօտն՝ ընդարձակէն և վճռականն՝ անորոշէն աւելի օգտակար է և պատուական մեզ համար:

ՆԱԽԱՆԱՄՈՒԹԻՒՆԸ՝ Մանդակունին Երրորդութեան կ'ընծայէ, և կը տարածէ իբրև գործ աստուածային գիտութեան բոլոր խմանալի և նիւթական արարածոց վերայ, զորս կը նկատէ իբրև գործած Երրորդութեան: Ահաւասիկ անոր խօսքերը՝ զոր մէջ կը բերեմ Երրորդութեան ճառէն. « Որ ակնարկելովն դարմանէ զամենայն արարածս ղերկինսաւորս և ղերկրաւորս, ղերևելիս և զաներևոյթս, ի չէնս և յանչէնս »: Մանդակունւոյ այս համառօտ խօսքերը ոչ միայն հերքումն են Արիոսեանցի, որ բոլորովին կուրանայր աստուածային նախախնամութիւնը, այլ նոյն իսկ բոլոր հին և նոր աստուածեան անուանեալ իմաստասիրաց, որք անարգ արարածները դուրս կը թողուին այն վերնական տեսչութենէն:

ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ի միասին ճառելով Մանդակունի, առաջինը լաւ բարգաւաճած չէ. այսինքն է, Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն իրարու հետ ունեցած առնչութեանց հակադրութիւնները մէջ բերուած չեն աւանձինն, և ոչ այլ Հօր և Հոգւոյ որոշակի յիշատակութիւն. Որդւոյն անձնաւորութեան առանձնայատկութիւնքը՝ մարդեղութեան հետ միացնելով կը ճառէ: Դնենք

հոս անոր ճառէն հատուած մի. « Սրբոյ և զուգական Երրորդութեանն՝ երեք անձինք, մի աստուածութիւն, մի էականութիւն, մի իսկութիւն, մի ինքնակամութիւն, մի թագաւորութիւն, մի է սրբութիւն, արքայութիւն, մի է տէրութիւն, մի է իշխանութիւն, մի է փառաւորութիւն, մի է բնութիւն [1], մի է հաւասարութիւն, մի է սրբութիւն, մի է կամք [2], մի է խորհուրդ, մի է փառք, մի պատիւ, մի յոյս [3], մի սէր, մի հաւատ: Մեծ, հզօր, կարող և ի վեր քան զամենայն. անեղ, անանց, անսկիզբն, անվախճան, անհաս, անառես, անքննին և ոչ իւիք կարօտ և ոչ իմիք ցանկացող: Ամենահայր, ամենաէր, ամենագութ, ամենախնամ, ամենալուր, ամենատարգև, ամենահաս, ամենատես, ամենագէտ, ամենափրկիչ, ամենակեցոյց »:

ՄԱՐԴԵԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ զոր Երրորդութեան ճառին յարած է, այնպիսի նոր և խորհրդաւոր գաղափարներ կը պարունակէ, զորս ուրիշ տուրք Հարց քով դժուարաւ կարելի է գտնել. և որչափ համառօտ՝ այնչափ ևս ընդարձակ ճառերու նիւթ կը մատակարարէ աստուածաբանից: Մաս մի միայն կը դնենք հոս. « Մինածին Բանն՝ կամաւք Հօր եկեալ յերկիր, և ի սրբոյ Կուսէն մարմնացեալ, չարչարեալ, թաղեալ, յարուցեալ յերրորդ աւուր՝ նստաւ ընդ աջմէ Հօր... Որ ըստ էութեան անմայր և ըստ տեսչութեանն անհայր՝ եկն փրկել զարարածս... Զէր հնար և տոկ Աստուծոյ չարչարել, և մեռանիլ չէր հնար. արդ են Աստուած եկն և եղև մարդ և մեռաւ և փրկեաց զարարածս... Արդ՝ այլ ոչ արարիչ և ֆրկիչ Է կեցուցիչ էբէ ընա ոչ եղէ Է ոչ լինելոց է, բայց դիպան ինձն Մէնձինն, է կոսէ ձնելու Աստուած, եղեալ մարդ... այլ ըստ եութեանն Աստուած կոչի, Է ոչ մարդ. Է ըստ պեղսոթիեանն՝ Աստուած մարդացեալ, Է ոչ մարդ աստուածացեալ: Մարդ՝ յերկինս Է յերկրի, ի Է նոյն ինքն՝ դիացեալ դիաւորեալ մարմնով Է աստուածութեամբ... Միջնորդ Աստուծոյ և երաշխաւոր աշխարհի. պատուական մարդն Յիսուս Քրիստոս »:

1. Այս բառս կամ եկամուտ յաւելուած է, կամ ուրիշ բան կը նշանակէ՝ քան էութիւն, եութիւն, զորս կանխաբար մէջ բերաւ: Ըստ իս բառս « բնութիւն » գործածած է հոս Մանդակունի փոխանակ յունարէն ὑπόστασις բառին, այն է ենթակայութիւն. զի հին աստուածաբանից մէջ իսկ կարծիք կար, թէ էութիւն աստուածութեան՝ ոչ միայն երեք անձանց մէջ, այլ է Հօր և Որդւոյ և Հոգւոյ, այլ նոյն իսկ նկատեալ յինքեան՝ է ենթակայութիւն = ὑπόστασις:

2. « Ինքնակամութենէ » վերջ, նորէն « մի կամք » ըսելն՝ ուրիշ կերպով չի մեկնուիր՝ բայց եթէ նկատել իբր վերկայ կամ լաւ ևս յաւելուած տգէտ գրչի:

3. Այս և հետևեալ բառերն, որոնք կը կոչուին աստուածաբանական առաքինութիւնք, Աստուծոյ իբրև աստուածորդութիւններ յիշուած չեն հոս, այլ իբրև պարգև Աստուծոյ առ մարդն, և զոր մարդկան՝ ընդ Աստուած:

տարագ Հօր, և փրկութիւն մարդկան, զատիկ աշխարհի և ոճն տիե-
զերաց. հովիւ մարդկան և պահապան ի թշնամեացն. տուիչ կենաց
և աւետաւոր յարութեան. յաղողիչ կենաց և առիթ արքայութեան.
խաղաղարար աշխարհի և լուսատու խաւարելոց. բաշխող պարգեաց,
փառք արդարոց և փրկանք մեղաւորաց. կեանք կենդանեաց և յոյս
մեռելոց» : Բանին Աստուծոյ մարդեղութեան և փրկագործութեան ար-
դիւնքն այսպէս նկարագրելէն վերջ, լսենք հաւատոյ ուրիշ մի մասի
նկատմամբ Մանդակունեաց խօսքը :

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ ԵԻ ՁՇՄԱՐԻՏ ԴԱՐՁԸ բաւական կը հա-
մարի նա այնուհետեւ արդարանալու և փրկուելու համար, ըսելով
ՅԱ. ճառին. « Այլ և ճշմարիտ դարձն միայն և ուղիղ խոստովանու-
թիւնն բաւական են ի փրկութիւն և յարդարութիւն, ըստ այնմ, թէ
Աստ դու նախ զանօրէնութիւնս քո, զի արդարասցիս » : Իսկ Բ.
ճառին մէջ կը յաւելու խոստովանութեան խորհրդոյ ձեռքով գոր-
ծուած չղթայաշար արդասիքն՝ այսպէս. « Խոստովանութեամբն չնորհս
ընդունին, և չնորհօքն միաքն լուսաւորին, զերկիւղ տանջանացն խմա-
նան, և երկիւղիւն արտասուս և սուգ ստանայ. սուգն՝ պահս ուսու-
ցանէ, և պահքն՝ աղօթս բերէն. աղօթքն՝ յաղորմութիւնս յօժարեցու-
ցանեն, և սակաւ սակաւ յաստիճանէ յաստիճան ելանէ, և դիւրաւ
յերկինս վերանայ » :

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ մասին՝ Իբ. ճառին մէջ այն-
քան լի հաւատով և պայծառութեամբ չեչտուած Մանդակունեայ
խօսքերն՝ ոչ միայն բաւական են քակել ի հիմանց բողոքականաց
նորահնար վարդապետութիւնքը, այլ և արժանի են ոսկի տառերով
դրոշմուիլ և ամենայն հաւատացելոց կուրծքէն կախուիլ. « Եւ արդ
տես թէ յոր սեղան անօրէնութեամբ մերձենաս, յորմէ վերին զօ-
րութիւնք սոսկան և սարսեն, և դու պիղծ չրթամբքդ յանդգնեալ
մատչիս :.. Մէ՛ էբէլ է լոկ հաց հայեցես, և ջ՛ էբէլ ջէնէ հոմբէցես և
պեռանէցես. չէ ու պեռանելէ է ահաւորութեան տարբ խոբհրդոյն, այլ նմանելէ
չօրութեան. տանչէ պէնէ պեռանելէ աստանցաց ծէչ Քրիստոս՝ է խորհրդն,
այլ նմանելէ : Աստուածային բանին հաւատամք, որ ասէն, եթէ Այս
է մարմին իմ և արիւն. որ ոտիկ է մարմոյ նմին, և ըմպէ յարենէ իմ-
մէ, նա յիս բնակեսցէ և ես ի նա. և ես յարթուցից զնա յաւուրն
յետնում : Եւ մեք ճշմարիտ հաւատով ջրիստոս նմանատ է վերայ սեղանոյն,
է նա ծերչինատ, զնա պեռանէտ, զնա շօշափէտ, զնա հոմբուրէտ, զնա ստ-
նումք է ներս և ընդունիմք, և չինիմ մարմին և անարատ և սրտէ Աստուծոյ :
Այդ՝ որ այսպիսի հաւատով ոչ հաւատայ, և զմարմին սրտոյն Աստուծոյ ոչ

նմանայ, հետէ է է չնորհաց Հոգւոյն և ծերծէալ է ի քրիստոնէական հաւատոց » :
Եւ յէջ 167 անարժան հաղորդուողներուն համար կը գրէ. « Զի մարդ՝
որ զմարդ սպանանէ՝ մարդասպան անուանի, իսկ որ անարժանու-
թեամբ ի մարմնոյ Տեառն հաղորդի՝ նա աստուածասպան է, քանզի
վերստին ի խաչ հանէ զՈրդին Աստուծոյ » :

Դիտելու ենք, որ առաջին տեղւոյն մէջ՝ սուրբ վարդապետս ոչ
եթէ հացին և գինւոյ որակութիւնքը կամ պատահմունքը կ'ուրա-
նայ, այլ ճշմարիտ քրիստոնեան կ'ուզէ վարդապետել, և մանա-
ւանդ գոյացափոխութեան իմանալի զօրութեամբը՝ կ'ուզէ հրեամիտ
հոգիներու այն թանձր մոլորութիւնն առ ոտն հարկանել, որոնք կար-
ծէին, թէ Քրիստոս նիւթական կերպով իւր միսն և արիւնը տուաւ
իրենները ուտելու և ըմպելու : Յիրաւի, նաւակատեաց եկեղեցւոյ
հիմնարկութեան Կանոնին մէջ դեռ աւելի որոշակի կ'ըսէր. « Եւ որ
յանուն քո հաստատեցաւ ի սմա տեղան՝ ի սրբութիւն սրբութեանց,
արա զսա, զի որ մատչիցինն ի սմա անարատ պատրաստ՝ փրկիչն է
պատուականութեան և յանապականութեան մարմնոյ և արեան Քրիստոսի » :

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ՝ վերակացութիւն, պատիւ աստուա-
ծային, ձեռնադրութիւն և Հոգւոյն Սրբոյ չնորհք (այն է խորհուրդ)
կ'անուանէ Թ. ճառին մէջ. իսկ քահանայն՝ գործակից Աստուծոյ,
միջնորդ մարդկան առ Աստուած, հրեշտակ Տեառն ամենակալի և
փրկանք քաւութեան մեղաց : Ահա նորա խօսքերը. « Որ և ձեզ ըստ
նմին նմանութեան ամենայն քահանայից և վարդապետաց պարտ է
հանապազ ի սոյն վաստակել. և մանաւանդ որ ինքնակամ կամօք
ստացաւ չքերաչօտութիւն :.. Աստուած արար զմարդն կամաւ ի բարի
և ի չար, և քահանայն զկամս ուղղեալ՝ զարդարէ գործովք առաքի-
նութեան. Աստուած զընութիւնն ստեղծ, և նա աստուածածանօ-
թութեամբն լուսաւորէ... Արդ՝ զոր օրինակ Պաւղոս զՔրիստոս դնէ
միջնորդ Աստուծոյ և մարդկան և երաշխաւոր և փրկանս ամենայն
աշխարհի. արդ ո՞չ ապաքէն նոյն օրինակ և քահանային օրէն է
ամենայն անարատութեամբ լինել առաջնորդ և փրկանք քաւութեան
մեղաց՝ ժողովրդեանն Աստուծոյ » : Ժ. րդ ճառին մէջ կը գրէ. « Տէս,
զի ոչ ընդ նմա՝ այլ ընդ Աստուծոյ մարտնչիս, որ նմա զպատիւ քա-
հանայութեան չնորհեաց. զի ամենայն որ պատուէ զքահանայն՝
զԱստուած փառաւորէ և պատուէ. և որ արհամարհէ՝ զԱստուած
արհամարհէ » ... Դարձեալ. « Զի հրեշտակ Տեառն ամենակալի է
քահանայն. և եթէ արհամարհես՝ ՅԱստուած մեղանչես, որ եւ
զձեռնադրութիւն նորա, և նովաւ ինքն կատարէ զխորհուրդն և զգ-

մկրտութիւն »։ Ձեռնադրութեանկանոնի մէջ, – եթէ սուտգիւ Մանդակունոյ է, – դեռ աւելի որոշ կերպով բացատրուած է խորհրդոյս իսկութիւնն։

Իսկ կանոնական ճառին մէջ՝ կը լուծէ Մանդակունի՝ ձեռնադրելոց նկատմամբ յարուցեալ այն մեծ և կարևոր հարցը, որ այս վերջին ժամանակներս այնքան յուզումն պատճառեց նոյն իսկ ազգային օրագրաց մէջ և մնաց անլուծանելի։ Ահա նորա խօսքերը. « Այլ օրէն է առաւել գիտունն և հասակաւ կատարեալս և առաքինիս արժանացուցանել զանձինս... Որ զմանուկ տգէտ և տխմար՝ որ ոչ կարէ կարդալ զաւետարանն ի բեմի ի լուր ժողովրդեանն և զրոյր ուսումն կարգի քահանայութեան ոչ է ուսեալ, զպատիժ քահանայանալոյ նորա նա կրէ՝ որ ձեռնադրեացն զնա »։

Մկրտութեան Խորհուրդը՝ կը նկատէ Մանդակունի, – Իբ. ճառին մէջ, – ոչ միայն իբրև գործ Հոգւոյն սրբոյ, այլ և դուռն և հաւատք քրիստոնէութեան. « Տեառնէ՞ս զիշխանութիւնն, ոչ լոկ Քոյ, այլ Հոգին սոյնպէս է վերայ նորա հանգուցեալ։ Զի իշխանութիւնն հաւատոյն են ինքնիշխանութիւնն և վայելումն սրբոյ խորհրդոյն »։ Իսկ ԻԳ. ճառին և առ Ղազարայ ըրած ատենաբանութեան մէջ՝ Մկրտութեան խորհրդոյ յառաջ բերած արդիւնքն այսպէս կը համառօտէ. « Որ ի լոսաւորչեան սոյնպէս սաղմնաւ, և ջուր և հոգի անուն սոյնպէս երկրորդութիւնն է վերայ նոցա (մեռելոց) անուանեցաւ, և կնքեալ խալխան՝ նոխբեցան։... Եւ սոյն զոմանց սաղմնաւն Քրիստ լոսացեալ զաղտ հոգւոց ինքեանց՝ լոսաւորեալ նոքօքն, և զարդարութիւն ընձեռին հանդերձ գործովք հին մարդոյն՝ յայնչ հոսի անանցական փոխել կիզուն »։

Սուրբ հայրապետիս կարծիքով Ա. մարդն մեղապարտ՝ ի Մկրտութեան կը կնքուի անուամբ ամենասուրբ Երրորդութեան և կը լինի որդեգիր և ժառանգ Աստուծոյ։ Բ. Ոչ միայն սկզբնական, այլ և ներգործական մեղքերէն սրբուած՝ բոլորովին կը նորոգուի և կը մեռնի առ մեղս։ Գ. Մեղաց հեղինակը չար սատանայ, որ մեղաց ձեռքով տիրացած էր անոր վերայ, կը նուաճուի և կ'ուղարկուի ի հուրն յաւիտենական՝ իւր չար արբանեակներուն հետ, այն է գործովք ապականեալ բնութեան։ Այս ամենայն Մկրտութեան կանոնին մէջ կա, – որուն հեղինակը Մանդակունին է, – ընդարձակաբար աւանդուած է, միացնելով և զխորհուրդն Դրոշմի կամ Կնքոյ՝ իւր յատուկ ձևովը, նիւթով և արգասիքը։

Վերջին Օծումն Խորհրդոց մասին՝ այսպէս կը գրէ Մանդակունի, ԻՁ. ճառին մէջ, խօսելով դիւթական հմայից դէմ. « Զի կա

առաւել ըզնորս պարգևացն արհամարհեցին. զի որ ասէն, եթէ հիւանդանայցէ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն. աղօթս արասցեն ի վերայ նորա, և օծցեն իւղով ի յանուն Տեառն, և աղօթքն հաւատով փրկեսցեն զաշխատեալն »։ Ցէլ 193. « Եւ ինքեանք ոչ ըստ բնէ են, ընդեալ ըզնորհն Աստուծոյ՝ ըզոգին և զիւղն օծման, զոր պարտէրանք հրամայեցին հիւանդին »։ Եւ յէլ 195. « Զի՞նչ հրամայեն մեզ պարտէրանք Աստուծոյ. ոչ ապաքէն ամենայն գործոց մերոց զնաչն հրամայէ պահապան և յօրինիչ, հիւանդաց ողջոյ և ըզնաւն իւղոյ »։

Արդ՝ սուրբ հայրապետիս այս բացատրութիւններէն յայտնի կը տեսնուի, թէ նա կ'ընդունէր վերջին օծումը՝ հանդերձ իրեն յատուկ աղօթքով իբր խորհուրդ Եկեղեցւոյ. վասն զի նա, ինչպէս Մկրտութիւնն և ուրիշ խորհուրդներն, այսպէս և վերջին օծումը կը կոչէ չնորհ և պարգև Աստուծոյ, պատուիրանք Աստուծոյ՝ օրինադրեալ վասն եկեղեցւոյ։ Բ. կը դաւանի Յակոբոս առաքելոյն հետ, թէ այդ վերջին օծման և աղօթքի զօրութեամբ, իբրև ի ջրոյն ջրծնեցելոյ, ոչ միայն առողջութիւն մարմնոյ, այլ նոյն իսկ չնորհք Հոգւոյն կը պարգևուի հիւանդին. և որովհետև զայս՝ սուրբ խորհուրդներն միայն կարող են յառաջ բերել, և ոչ թէ անուանեալքն Գործք ողորմութեան, կամ լոկ արարողականքն և աղաչականք. ուրեմն հետևութիւնն յայտնի է։

Վերջին օծումն, որ Գ. դարէն ի վեր միշտ կատարուած[1] էր Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, ոչ միայն իբրև ծիսական, այլ իբրև քրիստոսադիր խորհուրդ, վերջին ժամանակներուս գրեթէ բարձի թողի եղած է՝ զանցառութեամբ եկեղեցականաց, տալով տեղի անսովոր զեղծումներու։ Եւ զարմանալին այն է, որ այսպիսի զանցառութիւն մի լուսաւորչականաց մէջ միայն տեղի ունեցած է ցարդ, որոնք ազգային հին աւանդութեանց ջերմ աւանդապահներ կը համարին իրենք զիրենք։ Այսպիսի եպերելի զանցառութեան ճիշդ ժա

1. Թէ իրաք ի հնումն քան յայսմհետ կը կատարուէր անխափան նաև օծումն իւղով առ կենդանութեամբ հիւանդին, յայտնապէս կը հաստատեն մեզ, – քան ի Մանդակունոյ, – նոյնպէս Մակարայ Երուսադեմի հայրապետին՝ առ Ս. Վրթանէս գրած դակունոյ, – նոյնպէս Մակարայ Երուսադեմի հայրապետին՝ առ Ս. Վրթանէս գրած թուղթին, և Կորիւն՝ Ս. Սահակայ կենսագրութեան մէջ, ըսելով. « Ի կատարել սմանեան նաւասարդի, է պէտրոն անուշահոտ իւղոյն՝ հանդերձ սաղմոսածահճոյ սրբոյ ընծա, ձերունւոյն ի Քրիստոս աւանդեալ »։ Այսպէս և Յովհան Օձնեցի, Մեծն Խոսրով՝ ժամադրոց մեկնութեան մէջ, Ն. Շնորհալի ի մեկն. Կաթողիկեայց, չնորհաքան Սարգիս վարդապետ, Կիրակոս, Թովմ. Մեծոփեցի և ամենայն Ս. հարք Հայաստանեայց եկեղեցւոյ, կամ հին Մաշտոցք։

մանակն և պարագաներն յայտնի չեն։ Յոհան Օձնեցին՝ այն իւղոյն օրհնութիւնը քահանային կը պատուիրէ « ըստ իւրում ազօթիցն » այսինքն է միաժամանակ. ուսկից կը տեսնուի, թէ Ը.րդ դարուն իսկ այն մասին զեղծումներ տեղի ունեցած էին։ Իսկ Մեծոփայ վանից առաջնորդը Թովմաս վարդապետ՝ իւր ժամանակի երիցանց ոմանց տգիտութեան և անհոգութեան կու տայ այն զանցառութիւնը. իսկ մատենադարանիս ձեռագիր Մաշտոցի մի մէջ՝ հիւանդաց օծութեան կանոնին սկիզբը գրուած է, — նորա անունով, — հետևեալ խրատն. « Բայց դուք ընկալարուք զսա իբրև զտախտակն Մովսեսի և զաւետարանն Քրիստոսի, և մի՛ ոք պախարակեսցէ զսա. զի ի վաղուց ժամանակաց նախատինս կրէաք յաղագս քրիստոնէից, և այսօր ետ զսա Աստուած ի ձեռս մեր. և որ ոչ ընդունի զսա՝ պատասխանի ինքն տացէ Քրիստոսի Աստուծոյ մերոյ »։ Երանի՛ թէ կաթողիկոսական կոնդակաւ իսկ նորոգուէր Մեծոփեցի վարդապետին խրատը, փոխելով զանիկայ պարտաւորիչ վճռի մի. և այս զեղծման հետ՝ ուրիշներ ևս ուղղուէին մեր Ե.դարու Հարց և հայրապետաց կիրառութեան համաձայն։

ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ՝ համառօտ, բայց որոշ կերպով կ'արտայայտէ Մանդակունի, իւր ԻԸ.րդ ճառին մէջ, ըսելով. « Զէ յեռաձայն ժամուս ասացեալդ եմք ասել և անխոթ դադարէն, որոմն գաղտնի ինչ ոմն յայտնին, և չեռցուսդրա սրտից յանդիմանէ, յորմէ ալինչ ծածկի է ճշմարտապես և է բնաւ ականին »։

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԵՒ ԵՐԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆ ևս ոչինչ նուազ պայծառ կերպով վարդապետած է, թէ յիշեալ ճառին և թէ ԻԳ.րդին մէջ, այսպէս. « Ահա այսօր և վաղիւ և այլ ո՛չ ևս լցեմք... Ահա յայլ երկիր կայ անցանել և զՏէրն փառաց կայ պետանել։... Եւ արդ ո՞վ լցէ, որ այնչափ ապաշնորհ և անխմացական միտս ունի և զայս զմտաւ ածելով՝ մեծապէս ոչ մխիթարեսցի, թէ սրպէսի՛ ֆոռօֆ և պոպոռօֆ վախճանելն է յերկինս պոպոռեցաւ, ուր են ամենայն ժողովք սուրբց, բանակք արդարոց և գունդք սրբոցն, երամք մարգարէիցն, դասք առաքելոցն և անթիւ հոյլք մարտիրոսացն. խոբանք պայծառազարդք, բնակութիւնք լուսեղինք և մշտնջենաւոր վայելչութիւնք, և փափագելի դրախտն, անանց բարութիւնք, անսըտուում խնդութիւնք, անծերանալի մանկութիւն, անխախտելի առողջութիւն. սէր սուրբ, տեղի ցանկալի, կեանք փափաքելիք և անյագ ցանկութիւնք հոգևոր կերակրոց, հրճուանք հրաշալիք, գոհունք գոհանաց և սիրուն փափկութեանց և հանգիստ հոգևորական ամենայն ընդ-

տրելոց, ընդ որս և քո վախճանեալն ուրախութեամբ հանգիցէ [1]։ Արդ՝ քեզ պարտ է մխիթարել ամենայն խնդութեամբ, որ ի մարդկանէ՝ սո հրեշտակս փոխեցաս, ի մահուանէ՝ ի կեանս, յաղքատութենէ՝ ի ննջեսդոս, ի ծառայութենէ՝ յազատութիւն, յաշխատանաց՝ ի հանգիստ, ի տրտմութենէ՝ յուրախութիւն, ի մեղաց՝ յարդարութիւն, ի հողեղինացս՝ ի լուսեղէնն վերացս և ընդ հրեշտակս դասեցս »։

Արդ՝ Մանդակունւոյ այս վարդապետութեան մէջ երկու գլխաւոր կէտեր կը պարունակուին, և երկաքանչիւրն իսկ որոշ և պայծառ. այսինքն է, նախ հաւատացեալ վախճանելոյն անմիջապէս, մեռելոց յարութենէն յառաջ, երկինք կոչուիլն, զՏէրն փառաց տեսնելն և փառօք և պատուով ընդ հոգեղէնս դասուիլն։ Բ. աղքայութեան մէջ երանելեաց հետ ստացած անոր երանական վայելչքներն։ Առանց թանձր տգիտութեան և մոլորութիւնները յառաջ բերելու՝ կարելի չէ այս խօսքերս՝ ինքնահնար կայանի վերայ առնուլ, ըստ Կայանադրաց, և կամ վերջին դատաստանի և յայնժամու հատուցման և վայելից մասին. վասն զի կարծեցեալ կայանն, եթէ իրական տեղ մ'ևս համարուի, սակայն և այնպէս այնտեղ գացող հոգիները, ոչ զԱստուած դէմ յանդիման կը տեսնեն, և ոչ այլ երանելեաց հասարակ վայելքն ունին. ուստի հարկ պետի ըլլայ ըսել, թէ կամ հրեշտակաց և սրբոց դասուն հետ՝ նոյն իսկ Տէրն փառաց մնացին և պիտի մընան, մինչև ցհասարակաց յարութիւնն, առանց հատուցման և իրական վայելից արքայութեան, որ անհնարին մոլորութիւն է. և կամ ընդունել, թէ յառաջ քան զհասարակաց յարութիւն՝ կայ անմիջական հատուցումն և աստուածատեսութիւն հոգւոց յերկինս. ինչպէս յետ յարութեան ալ հոգւոց և մարմնոց ի միասին։ Այո՛, այս վերջին կերպով միայն հասկնալի է Ս. Գրոց և Հարց միաքը, որոնք երբ յապառնի անդր կը ձգեն ննջեցելոց յարութիւնն և հատուցումը։

ՔԱՒԱՐԱՆ. Այս բառիս երկու անգամ կը հանդիպինք Մանդակունւոյ Զ.րդ ճառին մէջ, իբրև միմոյ մի մարդկան մեղքերը քաւելու, առանց անդրագոյն և ուրիշ ծանօթութեան։ Մէջ բերենք ա

զաց քոց †ոոոբան վնասա կոչեցեր ի տուն քոյ, յորում աւուր քաւին մեղք »: Դարձեալ. « Եւ քո †ոոոբան մեղայ՝ աղքատացն ժողովք ի ներքուստ ի վեր հային »: Այլուր, այն է Նաւակատեաց եկեղեցւոյ պղծելոյ կանոնի մէջ ալ եկեղեցւոյ յատկացուցեր է բառս, ըսելով. « Քանզի տուն քո տուն աղօթից և †ոոոբան մեղաւորաց »:

Մեր պատարագամատուցի մէջ ևս բառս քաւարան՝ եկեղեցւոյ սեփականեալ է, ըսելով. « Հրեշտակաց բնակարանիս և մարդկան †ոոոբանէ »: Այսպէս նաև Դունբացի կանոնին մէջ. « Աւրդարոց հանգիստ, մեղաւորաց †ոոոբան » կ'ըսուի եկեղեցի: Աւրդ՝ դիտելով, որ այս տեղեաց մէջ եկեղեցի ըսելով՝ լոկ չենք մի կամ անոր չորս պատերը չեն հասկցուիր. այլ « հաւատով չինեալ ազգք մարդկան ի վերայ վիմին հաստատութեան, այլ հաւատացեալ ժողովուրդն », – ինչպէս կը գրէ Ս. Սահակ՝ իւր և լուսաւորչեան կանոնաց մէջ և կը դաւանի նոյն ինքն Մանդակունի՝ յիշեալ կանոնին մէջ, – յորում կը գանուին աղքատք, և առ աղքատս եղած ամենայն գործք ողորմութեան, աղօթք, պատարագք և սուրբ խորհուրդք կենդանեաց և մեռելոց: Ուրեմն, ինչպէս մեր եկեղեցւոյ ծխատրանին, այսպէս և Մանդակունւոյ մէջ բերուած տեղւոյն համաձայն՝ զինուորեալ եկեղեցին է քաւարան վշտակիր եկեղեցւոյ, բոլոր իւր հոգևնպաստ գործերով և պաղատանօքն առ Աստուած: Ա. Դիտելու է, որ Մանդակունին այս տեղ առ կենդանի հաւատացեալս խօսելով՝ կը յորդորէ, որ անընդմիջաբար և ներգործութեամբ աղքատները իրենց մեղքերուն քաւարան կամ քաւիչ ընեն. իսկ ներելի մեղօք, կամ ի չնորհս Աստուծոյ մեռած հոգիներուս համար՝ միշնորդաբար և կրաւորապէս: Աւրեք պէտք է ասկէց հետևցնել, որ թէ Մանդակունի և թէ անկէ յառաջ մեր սուրբ Հարք զինուորեալ եկեղեցիին զատ՝ ուրիչ քաւարան, կամ ներելի մեղաց քաւութեան վայր մի չէին ճանչնար: Հաստատական պատասխան մ'առ այս՝ ոչ միայն յանդգնական, այլ գլխովին անիրաւ պիտի լիներ, նկատելով որ նոքա հաստատուն կերպով դաւանած են միշտ, թէ բաց ի սուրբերէն, – որոնք մեռնելէն անմիջապէս վերջ երանական հատուցման կը հասնէին, – և մահուչափ մեղօք դատապարտեալներէն դուրս՝ ներելի մեղաց մէջ վախճանուածներ ևս կան, առանց կատարեալ ապաշխարութեան: Բ. Անոնց մեղաց քաւութեան համար՝ պատարագ, օրհնութիւն և աղօթք ևս հաստատած են և կատարած. հետևաբար ուրեմն արքայութենէն և

դժոխքէն դուրս՝ քաւութեան առանձին տեղ մ'ևս կ'ընդունէին [1] անտարակոյս, թէպէտև այն տեղւոյն որպիսութեան մասին ոչ որոշ գաղափար ունէին և ոչ ալ նկարագիր մի թողուցած: Մեր այս եզրակացութեան հաստատուն ապացոյցը [2] տուած է արդէն Մխիթար կաթողիկոսի օրով կատարուած Հայոց ժողովը՝ առ Բենեդիկտոս ԺԲ. Պապն գրած թղթին մէջ, Ներսէս անունով մէկու մը ըրած այն ամբաստանութեան դէմ, իբր թէ Հայաստանեայց եկեղեցին Քաւարանը չընդունէր: Այս տեղ այսչափ կ'ուզենք ըսել, թէ անհիւղ է Մխիթար կաթողիկոսի այն յայտարարութիւնը. « Զի եթէ զանուանէն ասիցէ, ճշմարիտ է թէ Հայք ի սակաւ ժամանակաց և այսր ծանեան զքառադ քաւարան ». վասն զի այս բառս ե·րդ դարէն ի վեր գործածուած է, ինչպէս տեսնուեցաւ: Ուրեմն Հայոց տարակոյսը ոչ այն անուան վերայ է և ոչ այլ նորա գոյութեան,

1. Լուսաւորչայ մակագրուած Յաճախապահ դրոց մէջ (ԺԵ· ճառին) յետ նկարագրելոյ վերանական վիճակ արդարոց և զտեղի անոնցանց դատապարտելոց, կը խօսուի ապա յերրորդի մասին այսպէս. « Իսկ զհաւատացելոց մեղուցելոց և խոստովանողաց և ապաշխարողաց և հաղորդեալ վերկական խորհրդոյն և հրաժարեալք յաշխարհէս և նոցա կատարեսցին յիշատակք՝ Քրիստոսի պատարագաւն և աղօթիւք և գթով անանկաց և այլ բարի գործովք· զի վերջնովքս բարեգործութեամբք՝ հանգուցեալքն Նրա-ֆ-ոյին Նրա-ֆ-ՐԻ-ոմ ՂԻՆ-ՅՆ ՈՆ-Վ-Ի-ճ-ՈՆՒՆ »: Աւրդ՝ ճառիս հեղինակն իւր վերջին խօսքերով իսկ յայտնապէս կը ցուցնէ, թէ յիշեալ հոգիները նախ տարբեր վիճակի մէջ կը գանուին մեռած ժամանակնին, և ապա սրբուած և քաւուած իրենց մեղքերէն կը նորոգուին և կ'անցնին ի վիճակ երանական վայելից, յառաջ իսկ քան զհատաբակաց յարութիւնը: Այսն այս և նման բաներով կ'աւանդէ մեզ նաև Մեծն Խոսրով իր պատարագի Մէ-ՒՒ-ԲԻ-Ն մէջ: Իսկ Ահէղ Խրհուրդ †ոհանէսի Շարականի հեղինակն յառաջ անցնելով՝ հոս և խոոր ևս կը գնէ այն տեղ, այսինքն է գաւազանի մէջ, ըսելով. « Հոոր վիճեն, խոոր ծերթէ, տրտմել հոգին ոոբոհոան, զի թողութիւն մեղաց լինի » և այլն:

2. Գրելով այսպէս. « Այդ ամբաստանութիւն ըստ խմիք ճշմարիտ է, և ըստ խմիք ոչ: Զի եթէ զանուանէն ասիցէ, ճշմարիտ է, թէ Հայք ի սակաւ ժամանակաց և այսր ծանեան զքառադ †ոոոբան. ապա եթէ ասիցէ՝ թէ հոգիք մեղուցեալք, նակաց և այսր ծանեան զքառադ †ոոոբան. և ի ձեռն գործոց բարեաց հայցեն յԱստուծոյ վասն ննջեցելոց՝ նախ մեղաց թողութիւն, երկրորդ ազատութիւն ի տանջանաց, և երրորդ յառանգութիւն երկնից արքայութեան. և վերեսին զայսոսիկ ցուցանեմք ի շարականս »:

այլ որպիսութեանն, այսինքն է նիւթական կրակի կամ տանջանաց մասին. սակայն եկեղեցին անգամ այս բանս տակաւին սահմանած չէ, այլ միայն կը հաւատայ և կը վարդապետէ, թէ առանց քաւութեան՝ մեղաց վախճանեալք չկարեն միանալ Աստուծոյ հետ և զԱստուած տեսնել դէմ յանդիման. և թէ առ այս հարկաւոր է, որ նոքա կրեն հոգեկան կամ նիւթական պատիժներ. զի չէք այլ ևս տեղի ներգործական ապաշխարութեան անդ:

ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԵՒ ԱՆՈՐ ԱՆԼՈՒԾԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ աստուածային բանին ձեռքով հաստատուած կը դաւանի Մանդակունի՝ պըսակի կանոնին մէջ, ըսելով. « Կենդանական բանիւդ քո ստեղծեր զմարդն ձեռօք քո, ըստ պատկերի աստուածեղէն կերպարանաց քոց, կոչեցեալ և գոհեցեալ նմա բանիդ ընկեր և կենաց կցորդ՝ զոսկրն, զոր առեր յոսկերաց նորա, և մարմին ի մարմնոյ նորա, և եղեն երկուքին ի մարդն մի: Դու միայն ես ողորմած, որ մարդկութեանս մերոյ պատրաստեցեր զերկնաւորս և զերկրաւորս. զերկնաւոր պսակն՝ սրբոց կուսանաց, և զերկրաւորս ի միաւորութիւն ամուսնացելոց »: Այս տեղ Մանդակունին ամուսնութիւնը իրրև բնական և արարչագիր գաշն մի կը նըկատէ՝ կնքուած արարչին ձեռքով: Սակայն պսակի օրհնութեան առաջին աղօթքին մէջ՝ Քրիստոսի և հոգևոր սիրոյ յօդիւ սրբուած և ցկեանս անլուծանելի եղած ևս կը համարի, ըսելով. « Նախապղծեցին խնամ արբշկան սէրդ ի ոռ արբածո ի, ի ձեռն միածնի Որդւոյ քոյ սիրելւոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գալ ծնանել ի սրբոյ կուսէն և նորոգել զհնութիւն առաջնաստեղծ մարդոյն, առեալ սկիզբն ի Կանայ Գալիլեացւոց ի հարսանիան, և աստուածային քաքանչելիքդ զուարճացուցեալ զհարսնարարանն... օրհնեա զամուսնութիւնս զայս... անբաժ պահելով զսոսա հոգևոր սիրով և ինքնանուիրեմբ է կեանս յաւիտեան... ի ժառանգութիւն որդեծնութեան առաքինութեամբ ի փառս ամենասուրբ երրորդութեանդ »: Վան հնախոսդ թղթին մէջ յառաջ բերելով Պետրոս առաքելոյ այն տեղին, ուր զրուած է. « Արք իմաստութեամբ բնակեսցին ընդ կանայս » և այլն, անդէն կը յաւելու Մանդակունի. « Եւ ոչ ապերանեմբ ինչ հեռանալ հրամայէ (այսինքն է թոյլատրէ). զի ամենայն որ ատէ զեղբայր իւր մարդասպան է, եկ ոչ զկինն էր ապէ (իմա՛ թողու) անյանցապան է »: Երուսաղեմի բոլորգիր օրինակին մէջ՝ այս ճառիս սկիզբը կը կարդացուին ի մէջի այլոց՝ հետևեալ խօսքերն առ կնաթոզս. « Եւ ոչ տայ յիշել զբհամարհօն անէծ ոխիդն Աստուծոյ, որով զամուսնութիւնն հապատիեայց անբաժանելի և սրբնեալ զղօսն »: Այս թղթիս մէջ խօսելով վարդապետ ռամկաց և իշխանաց անիրաւ կնահանութեան վերայ, դեռ աւելի բաներ ըսած էր, սակայն դժբախտօրէն ամբողջ տողեր ինկած են: Կ'երևի թէ Ե. դարում կնաթոզութեան իրրև արդարացուցիչ պատճառներէ մին ստէպ յառաջ կը բերուէր կնոջ ամլութիւնն, անոր համար կը հերքէ զայն Մանդակունի զօրաւոր բանիւք, ըսելով. « Զի՞նչ օգուտ է որդիս խնդրել և զոդիս կորուսանել անէրս ապերանեմբն (այսինքն է կնաթոզութեամբ). զի ոչ եթէ որդւոց խնդիր է առաջի Աստուծոյ, այլ անարատ ոգւոց: Քանզի և մարգարէն ասէ վասն անիրաւ որդիս խնդրելոյ. Որոյ վարձք իւր առ Աստուած են, այն է պտուղ որովայնի իւրոյ, և զաւակ սուրբ արձանութիւն նորա »:

ՍՈՒՐԲ ԳԻՐՔՆ Մանդակունւոյ կարծիքով՝ է կամքն Աստուծոյ լի և ամենակատարեալ: Ահա նորա խօսքերը, զորս յառաջ կը բերեմ վասն հմայից պերճախոսանաց ճառիդ. « Զկնի՞ն ծիլ բառական օրենին բնաբիջք՝ յորս ենն լիով կամքն Աստուծոյ. ընդէ՞ր ունիցիմք զհրամանս նորատուրս և զթուղթս պատիրս, որ թերի և պակաս կարծեցուցանեն զպատճառս հոգելից մարգարէիցն, զերջանկաբանեալ առաքելոցն և զվերջապետականին առեքտրոնին »: Նշանաւոր է Մանդակունւոյ ըրած այս երեք բաժանմունքը՝ ըստ արտաքին կերպարանաց Ս. Գրոց, որ բոնք կը վերածին ներքսապէս ի մի միայն կամս Աստուծոյ անթերի և կատարեալ:

ՊԵՏՐՈՍ ԳԼՈՒԽ ԱՌԱՔԵԼՈՑ ԵՒ ՎԷՄ ԵՒ ՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՑ կը դաւանի Մանդակունի իւր այլևայլ գրուածոց մէջ: Նաւակատեաց եկեղեցւոյ կանոնին մէջ կը գրէ. « Տէր Աստուած մեր, որ յառնն ելևատրին սրբոյ՝ առաքելոցն ի Պետրոսէ անառանեցելոցն վէմ, նմանապէս զսուրբ եկեղեցի քո վէմ անուանեցեր »: Թ. դարի ճառին մէջ խօսելով եկեղեցւոյ վերակացութեան մասին, կ'ըսէ. « Հոգևորապէս ցանկալ այնմ յաղագս առաւել սիրոյն Աստուծոյ, որպէս ցՊետրոս ասէր, եթէ « Սիրես զիս առաւել քան զդոսա, արածեա զոչխարս իմ »: Իսկ առ Ղազարայ պահուած առեներանութեան մէջ կը գոչէ այսպէս. « Աջեք զուրացողս՝ առ աքսորանեան գառնապանն և ֆակոլել Պետրոս »: Դիտելու ենք, որ Մանդակունւոյ գէթ առաջին երկու տեղքը՝ Ս. Սահակայ կանոններէն փոխ առնուած են համառօտաբար. իսկ երրորդն՝ համաձայն է Մ. Կաղանկատուացւոյ ԺԲ. գլխում եզած մէկ տեղւոյն, ուր կ'ըսուի այսպէս. « Հայեցեալ յերանելին Պետրոս, թէ յետ ուրացութեանն կարաց ելանօր առաքելոցն լինել և նշանգաւոն ֆակոլել և եչխան երինից արքայութեան ». (տես. տպ. Մոսկ.

էլ 37)։ Անշուշտ, Աղուանից պատմագիրը՝ Մանդակունիէն փոխ առած ըլլալու է, և հետևաբար զանիկակ ընթերցած։

ԱՆՁՆԻՇԽԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ստէպ ստէպ կը յեղյեղէ Մանդակունի, գրելով ընդդէմ հմայից դիւթականաց. բայց մենք բաւական կը համարինք մէջ բերել ճառիս վերջաբանէն մի քանի տողեր միայն, յորում զօրաւոր բանիւք կը հերքուին ճակատագիրն և կապեալ հրամանք հեթանոսաց. և բարձրագոյն և խորախորհուրդ հիման վրայ կը հաստատուի անձնիշխան ազատութիւնն և անոր գերազանց վախճանը. « Մի՛ մոլորեսցուք իբրև զհեթանոսսն ի բախտ և ի ճակատագիր և ի հրամանս։ Չի զինչ և հրամանքդ տարածին ընդ ամենայն երկիր, և բանդագուշեալք խօսին սուտ, եթէ մարդ ընդ հրամանս վարի և գործէ։ Եթէ այդպէս է, և ընդ հրամանաւ գործէ մարդ, ապա յայտ է՝ եթէ և գործ[1] ոչ վնաս ունեցայ, զի զհրամանս նորա կատարեմք. ապա և պահիմ ոչ վնաս արդարութիւնս... ապա նաֆսոյ ոչ պարտին զիս և զպոռնիկն և զպանդուխտն զոպանդել...։ Բայց ոչ այդպէս. այլ արարածք՝ ընդ հարկաւ և ընդ ծառայութեամբ և ըստ հրամանի սորա վարին, և ճնճղուկ անգամ յորոգայթ ոչ անկանի՝ առանց հրամանի. քայց մեզ զմարդ պէտ է և է վէտ գնդամն պահեցի։ Չէ որպէս ինձն Աստուած ոչ է ընդ հրամանաւ ծառայ, այլ պարտ է զինքս համարել նմին, այսպէս և զմարդն ըստ խոհուն նմանութեան պահեցի պէտ է պարտ է անյնիչխան է զինչմաբար բարոյ է լոքէ։ Եւ կամակոր մարտ եմ բարւոյ գործեմ՝ արհայուիմն խոստացաւ, եմ չար՝ զդժոխս։ Կարող է կատարիչ Աստուած բարւոյ, է ընդ մահ մեղաւորին ոչ կամի, բայց զանձնիշխանութիւն ի մէնջ ոչ բառնայ, քանզի ասէ իսկ՝ եթէ կամիցիք է լուիջիք ինձ »...

Մարդկային անձնիշխան ազատութիւնը՝ աստուածանմանութենէն յառաջ բերել, է աստուածանմանութիւնը բարւոյ է չարի ազատ ճանաչման վերայ հաստատել, ահաւասիկ Մանդակունւոյ վսեմ գաղափարն, որ թէպէտև արտաքին ձևով կրկնաբանութիւն է յոսի չրջան մի կ'երևի, սակայն ամենաճշմարիտ է. որովհետև այդ երկու ճշմարտութիւններն իսկապէս իրարու հետ կը նոյնանան, հետևաբար ուրեմն կը ստորոգին փոփոխակի զիրերաց։ Խորին է նոյնպէս Մանդակունւոյ վերջին նախադասութեան միտքը. այսինքն թէ, Աստուած

1. Այս է հետևեալ երեք հակիրճ նախադասութիւններս՝ երեք ամենազօրեղ է անժխտելի ձեռնարկութիւններ կը կազմեն ճակատագրականաց դէմ. լակոնաբանն անգամ թուկիդիդէս՝ ասկէց աւելի կարճ է ազդու չկրնար լինել։

իւր բացարձակ ամենակարողութեամբ կարէր միշտ չարժել զմարդն ի բարին միայն, ինչպէս իրրև ամենաբարի՝ կամի զկեանն միայն մեղաւորին. սակայն ազատօրէն անձնիշխան մարդոյն վերայ դրած օրինաց համաձայն՝ չի բռնադատեր զայն ի մին միայն, որպէս զի բարիքն ի հարկէ չլինին։

ԳԼՈՒԽ ԺԴ

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ՈՃԸ, ԼԵԶՈՒՆ ԵՒ ԱՆՈՑ

ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՔՆ

Նախորդ գլուխներով փոքր ի շատէ գաղափար մի կազմեցին ընթերցողք մեծանուն հեղինակիս պերճաբանական, բարոյախօսական և վարդապետական բարեմասնութեանց վերայ. այսուհետև հասմառօտ տեսութիւն մ'ալ ընենք անոր ոճոյն և լեզուի որպիսութեան մասին, որպէս զի ըստ կարելւոյն ընդարձակաբար ուսումնասիրած ըլլանք զնա, և արժանիքը գնահատած:

Եթէ ստոյգ է այն հանրածանօթ մատենագրի առածը, թէ Գրէկն՝ է մարդն ինդկն, նոյնքան ստուգութեամբ կարող եմք ըսել վեհ հայրապետիս համար, թէ Նա ինքն է ըրէկ յոպկպէս: Այո՛, Մանդակունւոյ ճառերը դեռ չուսումնասիրած՝ նա մեզ ծանօթ էր աւելի իբրև նշանաւոր գործիչ, իւր մասին տրուած ուրիշ մատենագրաց ցանցառ և աւանդական տեղեկութիւններով. բայց յետ ուսումնասիրելոյս՝ գրիչն աւելի վեհ և վեհ կը հանդիսանայ ինձ՝ իւր խօսուն բարբառով, քան թէ գործիչն՝ իւր քաջահռչակ գործերով: Առանց չափազանցութեան կարելի է ըսել, թէ նա լուսասփիւռ փարոս մի կանգնած է մեր դասական գրականութեան դաշտին վերև, ուր իբրև ընդ հայելւոյ կը տեսնուին և. դարու հայ ժողովրդեան բարոյական կաց ու մնացին հետ՝ նաև մեծ բեմասացին այլ և այլ ախտից և մոլորութեանց դէմ գործածած լեզուական ռազմամթերքն և զինաբանն:

Ագաթանգեղոս, Կորիւն, փ. Բուզանդացի, Եղնիկ, Մ. Խորենացի, Եղիշէ և Ղազար են մի մի ինքնուրոյն լեզուաբանական գանձեր, հայկական դպրութեան գանձարանին մէջ խնամքով պահպանուած, որոց իւրաքանչիւրն սակայն ունի իրեն յատուկ գոյնն և որակութիւնները: Առաջին երկուքն՝ երկար դարերու յեղափոխութեան բովերէն ու ծովերէն անցնելէն վերջ իսկ՝ կարծէք թէ նոյնանուագ կը հնչեցնեն դեռ այրարատեան բարբառոյ և արքունեաց

մէջ խօսուած ալնիւ ձայնից և քաղցրոր դարձուածներու վեմ արձագանքը մեր լսելեաց մէջ, և յետս կ'ամփոփին անչփոթ, իրրու այն թէ միաժամանակ և մի և նոյն բերնէն և մի և նոյն մթնոլորտի մէջ ներշնչուած և հնչուած ըլլային: Այս ճշմարտութիւնս ուրիշ գործի մի մէջ ևս արտայայտած եմք արդէն: Փաւստոս՝ հայ ժողովրդեան այլ և այլ խաւերու մէջ չրջող և չընչող կենդանի լեզուի գոյնզգոյն ծաղկափունջը կը ներկայացնէ մեզ, պատմական, պատերազմական, ընտանեկան և վիպական բիւր ձայներով պճնազարդուած:

Եղնիկ՝ հելլենական իմաստից և տրամախօսութեան բարձր և նուրբ գաղափարները՝ հայկական զուտ լեզուի ճկուն և ճապուկ ձեւերովը մարմնացուցած՝ քրիստոնէական ջատագովութեան իրրև չքնաղ օրինակ մի կ'արձանանայ առջևնիս: Խորենացին՝ հայ հանճարոյ ծնունդը, հայ սրտի բոլոր աւիւնը յունական ատութեանց և առմանց հետ պատուաստած՝ աթենացի հռետորի մի հրաշալիքը կ'ընծայէ հայ մանկտւոյն, բազմատեսակ նկարերով պատարուն. բայց ի մասնաւորի Պլուտէք գիրքն ունինք ըսածնուս կատարեալ օրինակ: Եղիշէով ունեցանք արևելեան դիւանագիտութեան և ռազմայարդարութեան, Մագղեզանց դէնից և հայ դիւցազանց մեծդի նկարագրութիւնները, այն երկու ազգերու և լեզուաց ոխամեմ նորաձևութիւններով հանդերձ: Փարպեցին՝ աւանդեց իր ժամանակի նամակագրութեան և ատենական փաստաբանութեան նորաքանչ լեզուն, ճարտար և ճարպիկ ձևերու ներքև, ոչ միայն ազատ մնալով իւր անմիջապէս նախորդ երկու թարգմանիչներու օտարաբանութիւններէն, մանաւանդ թէ անցնելով զանոնք իւր ճաշակաւոր լսելեաց կաղապարէն՝ իր տեսակին մէջ աննման հրաշակերտ մի յառաջ բերած է արդէն, աչխարհիկ բարբառոյ խակատիպ և գողտրիկ հանգամանքներով: Բանաստեղծութեան յատուկ լեզուն խակ, – գէթ կրօնական ներշնչութիւններով, – մեր եկեղեցւոյ աննման Շարականներով արդէն տարբացուցած էին մեր յաւէտ յիշատակաց արժանի սուրբ Հարքն. և նոյն խակ ժողովրդեան մէջ անող և չրջող վէպերն և զրոյցք այո՛, կարող են անոր իրրև յորդառատ և յարաճուն աղբիւրներ համարուիլ, ընդհանուր կերպով: Բայց բան մի՝ որուն պակասը մեզ միշտ ցաւի և կորանաց առիթ պիտի լինէր, է նոյն ինքն բեմականն կամ բարոյախօսական պերճաբանութիւնն՝ իրեն, մանաւանդ թէ և. դարու յատուկ և արժանավայել ոճովը և բարբառով: Թէպէտև ունինք Ոսկեբերաններ, սակայն նոքա մերը չեն: Ունինք մեր Լուսաւորչին ընծայուած Յաճախապատում ինքնագիր ճառեր, բայց

անոնց լեզուն ոսկեզարու կենդանի և վսեմական լեզուի ներշնչու-
թենէն զուրկ են ամենևին: Դուք կը կարդայք այն տեղ, այո՛, բար-
ձրը գաղափարներ, բայց այդ գաղափարներն՝ նման են այն գեղեցիկ
հոգիներուն, որոնք անդամալոյծ մարմնոյ մէջ կաչկանդուած և նուա-
ղած են՝ ծանր լեզուակապով մի: Այս գրուածքիս և անոր լեզուի
գաղտնիքը ոմանք լուծած կը համարին, Է·րդ դարուն վերադրելով·
բայց մեզ համար կը մնայ տակաւին անլուծանելի: Սակայն այսպէս
կամ այնպէս, գալով մեր նիւթին՝ կարեմք ըսել, թէ վերոյիշեալ
մեծ պակասը, մանաւանդ թէ ցանկալի գանձը ստեղծեր և աւան-
դեր է մեզ Յովհան Մանդակունին՝ իւր ցանկալի գրուածքովը: Ահա
այս տեսակէտովս պիտի չկանգնք ցոյց տալ այժմ անոր լեզուական
արժանիքը, կամ թերութիւնները:

Լակոնաբան Բարսղի Կապադովկացւոյ գործոց ընթերցումէն՝ Ո-
կսկերերանին անցած ժամանակ՝ ինչ տարբերութիւն որ կը զգան յոյնք
և յունագէտք, նոյնը [1] կը զգանք և մենք եղնկայ Կողբացւոյ և Յովհ·
Մանդակունւոյ ոճին և լեզուի մէջ: Եղնիկ՝ եթէ թարգմանիչ հա-
մարինք Մ՞՞ՐՆԷ, կամ Պ՞՞ղոսի ՆՂՆոց ԺՆՈ՞՞ՆՆԱՆ թարգմանութեան՝
աւելի կը մերձենայ Մանդակունւոյ, քան թէ Բարսեղն՝ Ոսկերերա-
նի. սակայն եղբ պղանդոյ ինքնագրութեամբն՝ աւելի կը հեռանայ
անոնէ, չգիտեմ պատճառաւ գրութեանն տեսակին, թէ ընդհակառա-
կըն պատեհաւ ժամանակին՝ յորում գրեց զայն և կամ յերկրեցաւ:
Մանդակունին՝ ոչ հասակակից է Ոսկերերանի և ոչ այլ անոր վար-
ժապետին քով ուսած. սակայն զարմանալի է տեսնել, որ այդ եր-
կուքն ալ ոճով և լեզուով մի և նոյն դպրոցը կը կազմեն: Այո՛, էրեան
դպրոցէն դարեր յառաջ ապրող և գրող այս կրկին հանճարները կըր-
նանք ստուգապէս իրականաց իրրև նախահայրեր և նախապատ-
ճարներ անուանել: Այլաբանական ոճն, որ Փիլոն Եբրայեցւոյն,

1· Ասկէ՝ և մանաւանդ թէ ասկէ աւելի մէկ կողմէն Մանդակունւոյ ընծայուած
երկքայական ճառերու մէջ երևցած լեզուական խանգարմունքէն դատելով, միւս կող-
մէն ալ բաղդատելով առաջին թարգմանչաց գրուածոց հետ՝ թերևս ըսեն ոմանք,
և ըսած իսկ են, թէ Մանդակունւոյ ընդհանուր ճառերու լեզուն Ե·րդ դարու լե-
զուէն չատ տարբեր է, հետևաբար յաջորդ դարուց մէջ կազմակերպուած: Սակայն
ըստ իս մեծապէս կը սխալին այդպիսիք, երբ առաջին թարգմանչաց գործածած լե-
զուն կ'առնուն իբրև փորձաքար· այլ ընդհակառակն երկրորդ թարգմանչի գրութեան
մի լեզուն պէտք է ուղղակի իւր դասակից մի այլ թարգմանչի հետ բաղդատել, ու-
ղիղ եզրակացութեան մի յանգելու համար: Այսպէս հարկ է ուրեմն վարուիլ նաև
այս տեղ:

Որոգինէսին և Ծգոստինոսին անչափապէս սիրելի էր, ինչպէս բար-
ձրաթռիչ արծուոյն՝ այերց նրբագոյն սահմաններն. Ոսկերերանի և
Մանդակունւոյ համար, ընդհակառակն, կամ բնաւ նշանակութիւն
չունին և կամ երկրորդաբար. որովհետև սոքա բաւին բուն նշա-
նակութեամբ բարոյախօսներ են, և հետևաբար ստիպուած են բա-
րոյախօսական ախտերն իսկ՝ երկրաքարշ բնութեան և սրտից խո-
րագետեան խաւերու մէջ որոնել և որսալ. և այնչափ սուր են և
խորաթափանց յետնոցս մտաց աչքերն, որչափ բարձր են և երկնա-
սլաց առաջնոց հայեցողութիւնքն: Սոքա՝ մարդկային կրից և կարեաց,
առաքինութեանց և մոլութեանց վերայ խօսած ժամանակ՝ դէպ ու-
ղիղ անոնց վերացական նախագաղափարները կը վերանան, որոնք
մեծապէս կը տարբերին թանձրացեալէն, և յաճախ կը մնան ան-
ըմբռնելի. իսկ Ոսկերերան և Մանդակունի ընդհակառակն խա-
ւարի, մոլորութեանց և թշուառութեան մթնոլորտին մէջ խորասու-
զուած յածող ու կածող աչխարհիս հետ՝ իրենք ևս, կարծէք, թէ ան-
դուլ անդադար կը յածին և կածին, նման այն բնաղնիւն, որ բար-
ձրադիտին տեղւոյ կեցած՝ կը դիտէ աչխարհիս և մարդկութեան ան-
ծայրածիր թատերաբեմին վերայ կատարուած բարւոյ և չարի, լուսոյ
և խաւարի տեսարանները: Բայց որպիսի՛ իմն հակապատկեր. մեծ
վարժապետն Ոսկերերան և անզուգական աչակերտն Մանդակունի
երբեմն լացողներուն հետ կը խնդան և խնդամոլներուն հետ կու
լան. յաճախ վշտագնեալներուն կարեկից են և սփոփիչ, իսկ յղփա-
ցեալներուն ապականացու ընչիւք՝ իբրև թակ կոչկոճիչ: Աչխարհին
ցեաղներուն ապականացու ընչիւք՝ իբրև թակ կոչկոճիչ: Աչխարհին
առեցող են մեզաց, և վերջին աստիճան արգահատող մեզաւորաց:
Իրենք անմեղ կենօք և կենցաղավարութեամբ անսագիւտ՝ մեռեալ և
անապատ սրտերու մէջ իակ կենսատու գետեր կը հոսեցնեն միշտ՝
աւետարանական վարդապետութեան և երկնային մխիթարութեան:
Երկաքանչիւրի տեսութիւնքը կարելի է մի մի խոշորացոյցներու նմա-
նեցնել, որոց հանդէպ մեզ համար անտեսանելի, և յաճախ սոսկա-
բական կարծուած նիւթերն անդամ՝ ահագին կերպարաններ առած
են, բոլոր իրենց բնածին կամ հոգեբանական խոշորութեամբ, գու-
նով, ձևով և որակութեամբք, բայց առանց իրենց իսկատիպ դիմա-
գծերը մազի չափ փոփոխելու: Եւ որպիսի՛ հիանալի պատկերներ
պիտի ունենայինք դիմացնիս, եթէ անոնց այնքան կենդանի և ճոխ
բարբառով ըրած նկարագիրները՝ յաջողէին նկարիչք պատահի վրայ
ընդօրինակել:

Սակայն հարկ է ըսել, որ յայսմ Մանդակունին Ոսկերերանէն

և կը զանազանի, բայց ոչ ինչպէս Հիպոկրատէսն՝ ի Դիմոկրիտեայ: Ցոյն վարդապետը, չգիտեմ, բնածին բարուք թէ արուեստին ճարտարութեան տեղի տալու կամ ունկնդիրները շոյելու մտքով, շատ անգամ անոնց ախտերու և թերութեանց քով՝ առաքինութիւններն և մարդկօրէն գործուած սխրագործութիւնները ևս յանկարծակի կը դրուատէ [1]. որով կարծէք թէ ատուերին վերայ լոյս մի սփռած կ'ըլլայ, և լուսասիւեռները՝ ատուերներով գեղերեսած: Հայն ընդհակառակն միակողմանի է, մէկը միայն կը տեսնէ յաճախ՝ բոլոր իր տգեղութեան սաստկութեամբ. և դուք կը տեսնէք այն տեղ մարդկութիւնը ապականող ախտերը՝ իրր յաւիտենական խաւարի մէջ խարխափող մի մի հրէշներ, և կը զգայք ձեզի վերայ ծանրացող սխուր տպաւորութիւններ: Ես չեմ կարծեր, որ Մանդակունին դիտմամբ ընտրած ըլլայ աւելի յոռետես լինել, քան թէ լաւատես. վասն զի նա բնութեամբ բարեսէր է միշտ և դթած, և քալ կը ճանաչէ իր նկարած մեղսամած դիմագծերուն մէջ կեցող նաև առաքինափայլ տիպարները: Ուստի ինձ կը թուի, թէ որպէս զի չըլլայ, թէ անոնք օրինապահ փարիսեցւոյ նման յանձնապաստանութեամբ մեղաւոր մեկնին իւր բեմասացութիւններէն, անոր [2] համար կը զգուշանայ իւր վարդապետի բռնած ուղղութենէն: Եւ մ'թէ ախտաւորի զղուելի նկարագիրն իսկ, զոր այնքան ճարտարութեամբ կ'ընէ նա՝ գովեստ մի չէ՞ առաքինասիրաց, և անոնց սրտերը գոհութեամբ չէ՞ լեցուներ: Ուրեմն վերջ ի վերջոյ մենք իսկ ասիպուած ենք ըսել, թէ Մանդակունւոյ կարծեցեալ թերութիւնն՝ այս տեսակէտովս կատարելութիւն մ'է. ո՛ւր Թողունք որ այդ ոճով աւելի ամփոփ, աւելի դիւրըմբռնելի և աւելի դիւթիչ եղած են անոր ճառերը:

1. Ոակեբերանի բռնած ոճը, դիտելու ենք, որ Մասկեռնի ճառերուն մէջ դեռ նոր կերպարանափոխութիւն մ'ևս առած է. այսինքն է, հռչակաւոր գաղղիացի քարոզիչը՝ Լուդովիկոս ԺԴ. րդի և անոր արքունեաց վրդծ ընթացքը իշխանավայել առաքինութեանց դրուատեօք չատ անգամ կը դատապարտէ: Այս պատճառաւ յաճախ քուն քարոզի նիւթը՝ օտար և ընդարձակ միջարկութիւններով կ'ընդհատի և կը կորնչցնէ իւր միութիւնը:

2. Մեր ըրած ենթադրութեան և Մանդակունւոյ այսպիսի մի հեռահայեաց և նուրբ մտածութեան յայտնի ապացոյցը կը գտնենք ատուդիւ մի ուրիշ գրութեան, այն է՝ Ղազարայ քով պահուած առհնաքանութեան մէջ, ուր խօսքը դարձնելով առաքինեաց՝ վերայ կը գոչէ պերճախօսը. « Վասն որոյ զձեզ ազաչեմ, ղՔրիստ հաստատունցէ զձեռ ևս անգայթիցդ, ՚ի Նահանջողականէ ղաղօքս չեր ժողովս՝ ընդ քեզ ընդ քոյ ընդ ընդ ղաղ ղանչիս գործակից եղեալ պարծանս, (զի ՚ի) յաջողիցէ զքրիստ, և զբնաւն յորոգիցէ » :

Այժմ տեսնենք, թէ Մանդակունւոյ բռնած ոճին և ուղղութեան հետ ինչ համեմատութիւն ունի լեզուն:

Արդ՝ ուշի ուշով քննելով մեծանուն պերճախօսիս լեզուն, կը տեսնենք ակներև, որ իւր զօրաւոր և կորովի հանճարոյն, ուժգին թափոյ կրից և լուսաւոր և յորդաբուղխ գաղափարներուն վերայ ձուլուած և թափուած են. և ձուլողն և թափողն՝ է նոյն ինքն Մանդակունի, անձամբ անձին աշակերտ և վարդապետ: Ցայսմ աւելի, քան այլուր, անոր ներքին մարդը՝ արտաքնոյն հետ սերտիւ միացած կը տեսնենք. այսինքն է, խորհողը՝ խօսողին, և խորհուրդը՝ խօսքին հետ: Եւ անոր խօսքերն ընդհանրապէս կայծակի նման արագ են և կտրուկ. կարծես թէ չեչտակի կը տեղան և կը թափանցեն լսողաց ուղեղին մէջ. բայց լսելէն և կարդալէն վերջ իսկ՝ կարծէք, թէ անոնց փայլատականց և որոտման արձագանք կը կրկնուին և կ'երկրկնին դեռ: Ոմանք այս երևոյթս իբրև կրկնաբանութեան թերութիւն կը համարին Մանդակունւոյ ընդհանրապէս. սակայն չէ ուղիղ. վասն զի քիչ անգամ այնպիսի կրկնութեան ձևերու կը հանդիպինք հեղինակիս քով, ուր նոր գաղափարներ յերևան չիգան: Մանաւանդ թէ դիտած ենք, որ այն ժամանակ միայն բառեր և բացատրութիւններ կը կրկնուին, ուր նա ատուդիւ կամ երկիւղ, կամ յոյս և կամ ամենակարևոր սկզբունքներ՝ իբրև բևեռներ՝ ուռամբ իւր ունկնդրաց սրտին մէջ խարբսխելու հարկաւորութիւնը կը տեսնէ: Այս հնարագիտութիւնս ոսխելու հարկաւորութիւնը կը տեսնէ: Այս հնարագիտութիւնս ոսկերաններ կերպարանքով առած է. նոյն իսկ մարգարէից վճռատու պատգամաց մէջ իբրև ազդու ձևեր յաճախ կը գործածուին: Ուստի սխալած չենք ըլլար, եթէ սրբազան հռետորի բորբոքուած եռանդանն ուղղակի արդիւնք համարինք զայն, որ նման այն չարժիչ մեքենային, որ յետ միանգամ չարժելու՝ մինչև որ դադարի՝ հարկ է, որ մի քանի անգամ վեր ու վայր ելլէ և իջնէ, իւր առած թափոյն և զօրութեան համեմատ: Բայց վայ այն ախտերուն և ախտաւորաց, որոնց գլխուն վերայ կ'իջնեն այդ տեսակ հարուածներ բանից և բացատրութեանց:

Մանդակունւոյ ատութիւնները բոլորովին նոր [1] են և վսեմ, նոյն

1. Որոնցմէ մի քանի օրինակ միայն կը դնենք այս տեղ. « Հրամայեաց տրամբ տալ պերճան նորա, վոխ. ըսելու՝ քարով ծեծել). — Ահա մարգարէն ընկենու զղոտիսն (վճարել պատերազմը). — (այսինքն է, կը թողու օրինակը). — Լուծանել զղոտիսդ (վճարել պատերազմը). — Հնազանդեցուցանել զղոտիսդ (յաղթել). — Բարկութիւն է հրոտհոտիլ գիր ինձն (յամառիլ). — Ելնու յատակն (ուրացաւ զմկրտութիւն). — Թափել է ընդ ընդ տրտ բերլու-ընկնե (դադրիլ, մերկանալ). — Զբերն տալես անօրին և անաստուածութիւն (խոս

իսկ ամենաաւելորդական իրաց կամ ծանօթութեանց արտայայտութեան մէջ, այնպէս որ՝ ոճերու փոքրիկ հատոր մի կարելի է ձեւացընել այդ մի քանի ճառերէն, որոնք մեր դասական ուրիշ հեղինակներու քով չեն գտնուիր ամենևին: Հայագէտ բանասէրներէն ոմանք թերևս այդ աստուածիւններէն չատերը օտարաբանութիւն կարծեն. բայց ըստ իս օտար ազդեցութենէ բոլորովին ազատ են, և կամ վայելչապէս հայացուցած: Ի բաց առեալ մի քանին, որք զրչագրաց ձեռքով իսկ կարեն խանգարուած ըլլալ, այլք առհասարակ ընտիր հայկաբանութեան մի մի գեղեցկահիւս գանձեր են արդարև: Եւ յիրաւի՝ ինչ հարկ կար օտարաբանելու, քանի որ նա ոչ եթէ թարգմանածոյ՝ այլ ինքնագիր քարոզներ և թուղթեր կ'արտասանէր. քանի որ առաջին թարգմանչաց գործերու ընթերցանութեամբ և հայ ժողովրդեան մէջ ապրած և ծերացած էր. միով բանիւ՝ քանի որ նա ի լուր հայ ժողովրդեան կը քարոզէր:

Ուրիշ առանձնայատկութիւն մ'ևս ակներև կը տեսնենք Մանդակունեոյ աստուածեանց մէջ, որ հազուագիւտ է դասական հեղինակաց քով, և իրական դպրոցի ներկայ վիպասաններու բնադրոշմը կը կազմէ: Այո՛, չեմ յիշեր հին պերճախօս մի, որ յաղողած ըլլայ յօդաւոր բարբառն այնքան կենդանի և բնական որակութեամբք մարմնացնել, մինչև լսողները կարծեն, թէ բնական իրողութիւնքը կը տեսնեն և կը շօշափեն, քան թէ անոնց անուանքը, կամ բերանացի յառաջբերութիւնքը: Խօսքս այն այլաբանական կամ նիւթական օրինակաց մասին չէ՝ որոցմով լի են Եզեկիէլի, Դանիէլի և ուրիշ երբայական մատեաններ, և ոչ այլ այն փոխաբերական ձևերու վերայ, զորս փոքր ի շատէ կը գտնենք գրեթէ ամէն ճարտասանական և բանաստեղծական հեղինակութեանց մէջ. այլ բուն բառերու և բացատրութեանց կազմութեան համար: Թողունք մեր պերճախօսին որ իւր բերնով պարզէ այն ճարտար բանահիւսութեանց գաղտնիքը.

արգելուս). — Ծրտաահաց լինել (ծարաւէն մեռնիլ). — Անիւրանալ կարդալ սա Աստուած (առանց երկմտութեան, անդադար). — Ցայգ վերայ (բաց յայսմանէ). — Զայն օրէնն հարկանի (իմա լսի). — Լսանէն կտրիլ (խաւարի). — Զլերս իմ վերանել (՞). — Պարբառել է ծէնայէց սաստայէ (իմա զգուշանալ). — Գիրեալ յօգնութենէ աղօթից ընդհատ (զրկեալ, կողոպուտ). — Դիմելալ անխնայրհելէ, անհոլո (աստիճ զայրացած). — Գիտնական ճանապարհորդել (իմա հետի, ցամաքով). — Ի բաց է գուն (իմա բաց է). — Գնայր հասելալ կայ է վերայ (խմբովին). — Զվերջի պարծոյն տալ զոհս. — Գինոյ տալ ընդն (ննջել). — Որ գնդ լսայէ զոք սպանանէ (վասն, փոխանակ մեոյ լսայէ). — Աժամայն գ (ժամանակ ինչ). — Սուտ յորդորութենէն » (զուրկ, մերկ):

և ահաւասիկ նա փոխանակ հասարակ աստուածանս՝ համբուրել՝ կը գրէ. « Ցալս սա բերան համբուրել. — փոխ. յաղթելոյ՝ կըսէ. Լռածանել չկիրս սպասայէ. — փոխ. սուտ երդուելու՝ կը գրէ. Երդնակիր և երդնահաբէ. — փոխ. լսելոյ զբան, կ'ըսէ. Տալ ղանդն բանի. — փոխ. սիրելոյ՝ կապել ղանդն ի սիր » (ուրուք): — Այսպէս են և հետևեալներն. « Ի կշռելոյ սա գնդանս հնարիցն (այսինքն է՝ ի հաւատարակչռութենէ). — Ի գործ սրտի սիրել զԱստուած (իմա ճանաչելով). — Քաջածանէ պատասխանել (քարակոշկոճ). — Եկ է ղեցցուրիւն (զգաստացիր). — Գաղտնի և ղնեա աբածէ (ծածուկ հետամտէ). — Զախալանս յերոյ ընկենուլ (մոռացեալ). — Նոկիլ և շմալ (իմա փսխել). — Ժանհոյ ղէցցուիւ. — Աղբեսցն սրտիկն. — Ի կրկնաւկոյս աղբեցն յածախութենէն գա՛ է վէր էբանդ ելանէն և գա՛ է վայր խոխոջանդ արդելն (արբեցողին). — Ցղայեալ չրեօ (չար մտածութեամբ). — Կալնն ցօղ դառնել (օգնել). — Լեզուանդ (պատանծեալ). — Զձոնէն յորակաբոց պատառէր. — Վազուն է վազնառնել (երկարաձգել). — Զէն՝ կնդ հանեն, եղինդն եղկեր ածեն. — Իբրև ալէդ յալեաց առնուն հոգ և պրպտրիւնդ (իմա ի վերայ գան մեծատան). — Աոպոր է պէրելեաց (զուրկ). — է պարզդ ցրտանայր և է պօղեց պապանայր. — Խոնարհել է բանս պիղրեալ (անսալ). — Կախանաբոյծ ողբալ (բարձր ձայնով լալ). — Զանազան եմ դեղոցեալ (չատ մեզաւոր ողբալ (բարձր ձայնով լալ). — Ոչ բառնալ շրնչամանս դօտ, չբառնալ գլխաս ընկերքն (իմա չհանգեմ). — Ոչ բառնալ շրնչամանս դօտ, չբառնալ գլխաս ընկերքն (իմա չհանգեմ). — Վչերրնկալ կիանդ սրտանդ (վերացեալ կամ վերջն թևակոխ). — Ցողղան շրջէն (խորհին ի միտս, կամ գան ի միտն). — Ընկղմել է գործ պաշարմանս (իմա սևեռիլ). — Աբածրնդունեան գոհանդ՝ է ձեռնադրեալ Երերդրդրիւնեան հանգչելով բազմանուրիւնս. — Տէ՛ն խոնարհել. — Սերմանեալ ղօտարրնրիւն, և վազվզակի գնալ բարեպաշտրիւնն զօրացեալ հնձեց. — Որպես սրբէ որ ինդրեսցէ է հօբէ սէրով և նաշելով » (ողջանաք և տատանմամբ), ևայլն: Այս և այսպիսի գեռ ուրիշ աստուածքն, որոնք առէպ առէպ կը փայլկտան Մանդակունեոյ գրուածքի մէջ, աւելորդ է ըսել, թէ ոճրան վեհմութիւն, ոճրան ազդուժիւն և քանի՛ քաղցրութիւն կը պատճառեն անոր լեզուին:

Մանդակունեոյ աստուածներէն անցնելով բառից և բանից կազմութեան, կը տեսնենք, որ ամէնքն ալ, — ի բաց առեալ ապացոյց, կամ ապացոյց, անդիկն կամ պէրնդնդ, կնաս կամ կիւս բառերը, — հայկական չունին բովէ անցած են և բարդ գաղափարներէ թափուած: Ամէնքն այլ ջղուտ, վայելուչ և նշանակալից են: Բայց այս տեղ յատուկ կերպով կը հրաւիրենք ընթերցողաց ուշադրութիւնը ճարտար կերպով

կազմուած այն բարդութեանց[1] վերայ, որոնց չենք հանդիպած ոչ Ե·րդ դարու միւս հայ հեղինակութեանց և ոչ իսկ Հայկազեան բառա֊ րանի մէջ։ Մանդակունւոյ ստեղծագան հանճարն՝ հօս իսկ յայտնա֊ պէս կը տեսնուի՝ իր բարդութեամբ։

Իկ նուազականով չինուած, օրինակի համար, հաղիկ, ալիկ, բան֊ ջարիկ, ակնեկիկ, ճանկիկ, և այլն ազգական և գողտրիկ բառեր, որոնց տակէտ կը հանդիպինք Ոսկեբերանի Պաւղոսի թղթոց և Մատթէի Մեկնութեան թարգմանութեանց մէջ, առ Մանդակունւոյ բնաւ չեն գտնուիր, կամ խիստ հազուագիւտ[2] են։ Այս երևոյթս եթէ պա֊ կասութիւն ևս համարինք, սակայն և այնպէս Մանդակունւոյ հայե֊ րէն լեզուին վերայ ունեցած ծանօթութեան աղքատութեանը չէ կա֊ րելի վերագրել ըստ իս, այլ մի ուրիշ պատճառի։ Այսպէս նաև եան և եաց, օրինակի աղագաւ՝ խոչեան, արեաց, նահապետ, և այլն, վերյա֊ ցող եզականակերով՝ բայց յոգնանիշ բառերու, ինչպէս նաև աչխար֊ հաբարի ոճով փափկաբանութեանց սիրող և մշակող չէ բնաւ Ման֊ դակունի. վասն զի երկաքանչիւր տեսակէն օրինակներ գտնելն անգամ հազուագիւտ բան մի պիտի երևի։ Սակայն այսպիսի լե֊ զուական առանձնայատկութիւններ, որք Ոսկեբերանի հայ թարգ֊ մանչին, Փ·Բուզանդացւոյ և Ղազարայ չարաբանութեանց անուշու֊ թիւն մի տուած են, Մանդակունեցիին բան մի կորզած չպիտի լինին երբեք. վասն զի նա նման է այն յորդահոս գետերուն, որոնք

1· Այսպիսիք են յէջ 63· վշտիւթիւն, – յէջ 66· ապերթ, – յէջ 72 խոչնարհ, – յէջ 73· երևութիւն, – յէջ 75· տարտուխ, – յէջ 80 երկրպագիւ, երկրպագիւ երկրպագիւթ, – յէջ 86· երկհան, – յէջ 100· հպարհիւ, – յէջ 102· հաւհաւոյթ, – յէջ 107· նախախնամուհ, – յէջ 114· երկիւղ (յաւ ին,) – յէջ 115· հրամանատարութիւն, – յէջ 116· պատերազմանատարութիւն, – յէջ 117· անչնահանութիւն, – յէջ 120· ապաւիչ, – ցոփութ, – յէջ 125. անչնացնող, – յէջ 127· ապերիւ, – յէջ 129· նաթաւիղ, – յէջ 132· խաբարան, – յէջ 139· տէտրանի, խալարան, — յէջ 158· պատուիրեալ, – յէջ 169 արտ(հ)անչ, – յէջ 184· քահանութիւն, – յէջ 188· երթայնչան, – յէջ 195· քաքմալի, – հարատարցութիւն, – մաղթախօսութիւն, – տառապարցութիւն, – հեղհեղութիւն, – փլեփեպութիւն, – երկարբութիւն, – օրհնող, – լուսնկոտիր, – լեզուկոտիր, – ապտնահող, – ե(ր)եկնահող, – յէջ 197· խորհրդերիւ, – յէջ 199· խոհեմասիրութիւն, – երեսարցութիւն, – զինվորաբար, – հարիւր, – յէջ 210· առաքելոր, – խոյսելական, – փարասանութիւնք, – յէջ 191 յարձակէ, ընդունէ, – պարտական, – յէջ 129· նորոգանի, – հաստատուց, – լուսաղբարոյ, – դատաստանիկ, – խորվոյ, – մարտնխոյ, – ջեռուցիւ, – ընդվզիւ, – բժշկանոց, – այլազգութիւն, – ձեռաց, – ձանրութիւն, – անդրբութիւն, – հպարտական, – ինչպէս » և այլն։

2 Եւ այս տեսակ կիրառութեան իրրև միակ օրինակ՝ խնդիր՝ բառը միայն կը յիշեմ վասն պահոց պնդութիւն ճառին մէջ։

նուազիլ չկարեն բնաւ այլ աճել. հետևաբար նա նուազականէն ա֊ նելի՝ բարդութեանց ուղած է ըլլալ ականակիտ աղբիւր։ Բայց մի ուրիշ բնորոշ պատճառ, որ լաւ կը միանայ ասոր հետ և ակներև կը տեսնուի ամբողջ գործին մէջ, հետևեալն ըլլալու է հաւանօրէն. այսինքն է՝ մեծ հայրապետս՝ ըլլալով բնութեամբ ծանրաբարոյ, կո֊ րովի և մտահարուստ, փոխանակ փափկաձայնին՝ վսեմն և մեծավայե֊ լուչն ընտրած է, իբրև բաւականութիւն տուող իւր մտքին և հասա֊ կին. փոխանակ եզականակերով գոյականներու, որոնք իրենց ածա֊ կանաց կամ բայերու հետ լաւ չեն դաշնակաւորուիր, ի վար արկած է միշտ յոգնակի համաձայնութիւններ և այն ամեն ճարտասանա֊ կան ձևերն և ձայնական կանոններն, որոնք քովէ քով չարուելով և լարուելով՝ տուած են անոր լեզուին այնպիսի պերճութիւն, սա֊ հունութիւն և ներդաշնակութիւն, որ խորդութիւնք երբեք ընթեր֊ ցողին լսելիքը չեն վիրաւորեր, կամ խիստ քիչ անգամ։ Այս բանս որ քիչերուն յատուկ է, և այն բացառութեամբք հարկեր, Ման֊ դակունւոյ ճառերուն մէջ կրնանք ըսել, թէ ընդհանուր և անհրաժեշտ օրէնք մ'է. և այս պատճառաւ է՝ որ անոր ճառերուն ախորժով սկսած ընթերցումը՝ յափշտակութեամբ ևս կ'աւարտենք, առանց յոգնու֊ թիւն կամ ձանձրոյթ զգալու, իբր թէ Ոսկեբերան մեզ հետ խօ֊ սակից ըլլար՝ իր հրաշալեան ձայնարկութիւններով։

Ինչպէս փոքր ի շատէ ամէն լինքնուրոյն հեղինակի քով այսպէս նաև առ Մանդակունւոյ կան քերականական կանոնաց դէմ այն֊ պիսի զարտուղութիւններ[1], զորս չենք կրնար միանգամայն անոր կանո֊

1· Դնենք այս տեղ այդ զարտուղութիւնները։ Յէջ 27· «Յուքեան, – յէջ 63· Անօրէն ևս սխտ փոխոց, – յէջ 115· Զի պոր ինչ ի վերայ մեզաց, – Զ֊րս յետ սուսկալի առեանին հարկանոցն տանջանաց, – յէջ 198 բարբառն լեհաց, – յէջ 193 վասն անառաքեալ Աստուծոյ, – 198· Եւ ի գոցանէ ինչ որ պակաս գտանի ի խառնուած֊ սըն, – յէջ 201· Բայց թէպէտ եւս պատրանացն լինել, քան պատրանացն լինել հաւատալոյ սուրբ մարգարէիցն, – յէջ 203· Որ է յայնքան զմովսիսեանան աչխա֊ տէր, – յէջ 206· Ապա ինչ որ պէտքն այր սպանանիցէ չպարտի ոք մեղադրել, – յէջ 215· Զի երկեայրութիւն և սէր ի միասին ոչ բնակէ, – յէջ 72· Այնչափ ինքն ի խո֊ նարհութիւն, – յէջ 41· Նախ սրտէն ի մահիճան պատերազմիցէ ընդ նոսա, – Զի աղօթք անարատ՝ աղօթականին ոչ բանան դրան երկնից, – յէջ 45· Մուտ առաջի Աստուծոյ և լեհաց, – Եւ եթէ պղծէին յանդգնիցեն երկնքից սրտիւ, – յէջ 101· Եւ լծակից է սատանայի չար նախանձմամբն »։

Սակայն դիտել կու տանք, որ այս զարտուղութիւններէս ոմանք՝ Գէորգեայ օրի֊ նակին մէջ չեն գտնուիր· օրի· աղագաւ· « լսեաց » լսաւ, « լսեայ » լսիր, « ի֊ ջաւ » ելի ուղղագրուած են։

նաւար և ոսկեղինիկ չարագրութեան հետ: Ղազարայ քով պահուած առենախօսութեան մէջ երևցած զարտուղութեանց համար, ինչպիսակ են օրինակի յաղագաւ. « Այլ անդէն անկագործեալ ի տեղւոջն՝ ցոցան աղբիւրս, — ըզմանէ ասէ, — յաստուածային այգեգործութեան տնկեալ յոգւոջ ուրուք, — ընդունել յԱյդ Փրկչէն Դերոյ », — ըսուած է արդէն 1873ի հրատարակութեան ծանօթութեան մէջ, թէ « Գուցէ ըստ ճեպ ի ճեպոյ և յանկատարասից խօսից հայրապետին գրեալ է ճառդ, յորում ընդ բազում վայելուչ և պատշաճ խնաստից՝ են և անյարմար բանք »: Այս առենաբանութեանս համար այս տեղ եղած դիտողութիւնն ուղիղ է ըստ իմիք, թէ և ըզմանէ, յորմանէ զարտուղութիւնքը նոյն իսկ Ղազարայ կարելի է վերագրել. վասն զի պատմութեան ուրիշ անկախ էջերում ևս կը հանդիպինք անոնց: Իսկ Մանդակունւոյ ճառերու նկատմամբ, յորոց ոմանք իբրև թուղթ գըրուած են առ ոմանս, և ոչ եթէ յանկատարասից խօսուած, ուրիշ ընդհանուր պատճառներ ևս ըլլալու են. այսինքն է, իմ կարծիքով այս տեսակ խանգարմանց մեծագոյն մասն՝ ընդօրինակողաց և խըմբագրողաց ձեռքով ներմուծուած են, ինչպէս կը ցուցնեն գրչագրերու իրարմէ ունեցած հոծ տարբերութիւնքն, որոց իբրև նմոյշ հաւմեմատութեամբ արտագրեցինք վասն պահոց պնդութեան ճառը միայն: Բ. Դիտելու ենք, որ ինչպէս բարձրագոյն լերան պատուանդանքէն դէպ ի վայր հոսող գետն՝ որչափ ալ ուղուի արուեստական կապերով նուաճել, սակայն և այնպէս զայրացած ժամանակ՝ արձակ կ'ընթանայ, և ականակիտ ջրոյն հետ՝ քար, բոյս, ոսկի, աւազ ևս կ'ածէ կը բերէ, այսպէս կ'ընեն նաև բանաստեղծք և ճարտասանք գրականութեան ընդարձակ դաշտին վերայ արչաւած ժամանակ. այսպէս և մեր Ցովհ. Մանդակունին, որ գերազանցօրէն ճարտասան է: Այո՛, նա կը յարգէ իւր վարժապետաց Սահակայ, Մեսրովբայ և Եղնկայ, մանաւանդ թէ հայ լեզուի կազմակերպութեան կանոնները մինչև կէտ մի. բայց ուր անբաւական կը գտնէ զանոնք՝ իւր եռանդը յաղեցնելու համար, բայց երբ ժողովուրդ մի կանգնած կը տեսնէ իւր հանդէպ, որն իւր ընտանեկան բարբառոյն և հասկացողութեան համեմատ քերականական կանոններէ աւելի՝ բացառութիւններու կը հետևի. միով բանիւ, երբ արգելքներ կ'ելլեն իւր յանկարծածագ գաղափարաց և կրից առջև, և ինքը չուզեր իւր ընթացքէն ոտնակատել, այն ատեն աւելի նորանոր բառեր, բացատրութիւններ և ձևեր պէտք կը զգայ ճարտարել, և իրօք ալ ճարտարած, կոփած և կռած է. որոնց վերայ այսօր գուցէ մենք միայն խորդ աչքով կը նայինք, բայց ոչ նոյնպէս յայնժամու ունկնդիրք:

Մանդակունին, պէտք է ըսել, չունի Եղնկայ նախամտածութեամբ յղկուած և կոկ լեզուն, որ բնական է արամախօս ջատագովի մի և ճշդող և ճշդրտող թարգմանչի. սակայն ունի, կարելի է ըսել, անկէց աւելի նիւթերը պատկերելու և ընթերցողներն յուզելու ամենամեծ դիւրութիւնը: Նա իւր կրճիկ լեզուով և արամախօսութեամբ՝ մտաց հետ աւելի կը խօսի. իսկ սա՝ կարծէք թէ իւր լեզուին վերայ ունի բովանդակ սրտի գաղտնիքը: Եղնկայ լեզուն՝ գրչին ներքև կարծէք թէ նուաճուած է. իսկ Մանդակունւոյ գրիչն, ընդհակառակն, գրեթէ միշտ լեզուին կ'արբանեկէ: Ղազար միայն իբրև ճարտասան և սրբազան պերճախօս կարելի է բաղդատել Մանդակունւոյ հետ. բայց Փարպեցւոյ խօսած բազմաթիւ քարոզներն [1] իսկ անցեր գացեր են ի մէջոյ, և զուգակշռութիւն մ'իսկ աւելորդ է ընել:

Ուրեմն Մանդակունի թէ իր ճարտասանութեամբ և թէ լեզուով կարելի է անզուգական տիպար համարել Ե. դ դարու հայ բեմական պերճախօսութեան. և նա, անշուշտ եմ, որ ո՛րչափ ուսումնասիրուի, այնչափ ևս աւելի պիտի գնահատուի, իբրև սրբազան պերճախօս, իբրև բարոյախօս և իբրև դասական ընտիր մատենագիր:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մինչև ցայսօր Մանդակունւոյ վերայ քիչ բան խօսուած և գըրուած էր, այնպէս որ՝ այս գրուածքս կարելի է եղածներէն ընդարձակագոյնը համարիլ. սակայն մենք երբեք մտքերնիս դրած չենք, թէ ինչ որ կրնար խօսուիլ և գրուիլ՝ խօսեցանք և գրեցինք, և թէ մեր այս ու-

1. Աոուգիւ թէ Ղազար փարպեցին ևս Մանդակունւոյ նման այլևայլ քարոզներ և ներբողեաններ խօսած և գրած էր, զորս անոր հակառակորդները չարութեամբ անհետացուցին՝ գէթ իւր կենդանութեան ժամանակ, վկայ ունինք հաւատարիմ նոյն ինքն փարպեցին՝ իւր առ Վահան գրած նշանաւոր Թղթով: Ահա անոր նշանաւոր խօսքերը. « Մինչ ի զոսա զեռ ևս լռեալ էր նախանձն, յաստղս զօրացեալ էր չնորհն. խակ յորժամ տեսին զբազմութիւն ժողովրդոցն յօժարեալս ի լսել, յորդորեալս ի զովութիւնս, պատմելով միմեանց զչնորհսն յորդորմունս, յարգելով և անմոռաց զարմանալով զլուսաւոր և զանձկալի բանին բղխումն է հրապարակ, է խղճս, յայս Լերն հրաւիրելով սա ճգնանս խոյսոցեալս է նոր նրճանոցն »:

սումնասիրութիւնն՝ ըստ ամենայնի կատարեալ եղաւ, ոչ բնաւ: Մանդակունին՝ իր ժամանակակից պարագաներով և ամբողջ գործերով ուսումնասիրելու համար, դեռ շատ ժամանակի և նորանոր յայտնութեանց պէտք կայ. և թերևս սկիզբը տուողին աւելի՝ անոր ուսումնասիրութեան վերջակէտ դնողն բաղդաւորագոյն դանուի, եթէ կայ երբէք վերջ ուսման և ուսումնասիրութեան: Ուստի այսպէս կամ այնպէս՝ մենք յաւէտ գոհ պիտի մնանք, որ Ե. դդ. դարու մեծագոյն տիպարներէն մին ևս վերջապէս պիտի գտնէ իւր արժանաւոր յարգանքն և մեծարանքը՝ ներկայ հայ գրականութեան մէջ. մանաւանդ եթէ կարելի է ըսել, երկբայութեանց ամպերը մի անգամ ընդ միշտ փարատած ըլլալով՝ զնա չրջապատող հորիզոնին վրայէն, այսուհետև աւելի պայծառ կերպով պիտի նկատենք անոր փառքն ու փայլը, և աւելի զուարճանանք մեր մտաց վերայ սփռած անոր գրուածոց լուսովը: Ուստի մենք այս չնաչխարհիկ մտածեանս գոցած ժամանակ, կը յանձնենք ուխտի մանկանց եկեղեցւոյ և ամէն հայասգի քարոզչաց, որ նորէն ու նորէն կարդան զայն և օգտուին. և այս շատ է մեզ:



ՑԱՆԿ

ՅԱՌԱՋԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ Ա. Կենսագրական տեսութիւն մի Յոհ. Մանդակունւոյ վերայ 7

» Բ. Մանդակունւոյ մեզ հասած գրական գործերն և բաժանմունքն 33

» Գ. Տեղեկութիւն Մանդակունւոյ ճառերը պարունակող ձեռագրաց վրայ 46

» Դ. Խորագիրք առանձին ճառից երկաթագիր բնագրին՝ բաղդատութեամբ ուրիշ ձեռագրաց, և ընծայութիւնք այլևայլ հեղինակաց . . 59

» Ե. Արդիւնք համեմատութեան մակագրոց ճառից. եզրակացութիւն 73

» Զ. Մանդակունւոյ ճառերու դլխաւոր չորս ներկայացուցիչներն և անոնց իրարմէ առնեցած տարբերութիւններն. եզրակացութիւն. . . 80

» Է. Մանդակունւոյ վաւերաբանութեան խնդիրն, և անոր անուամբ հրատարակուած ճառերու հաղաղատութեան դէմ ելլող բացասական փաստերն 149

ԳԼՈՒԽ Ը. Մանգակունւոյ Հաւերու հարազատութիւնն և անոնց նպաստող արտաքին վիճակներն . . 116
» Թ. Մանգակունւոյ հարազատութեան ներքին վիճակներն 181
» Ժ. Մանգակունի իբրև սրբազան պերճախօս և անոր արժանիքն 205
» ԺԱ. Մանգակունին իբրև բարոյախօս, և անոր բարոյախօսական արժէքն 221
» ԺԲ. Մանգակունին իբրև վարդապետ ուղղափառ եկեղեցւոյ և անոր վարդապետութիւնքն . . 231
» ԺԳ. Մանգակունւոյ ոճը, լեզուն և անոնց առանձնայատկութիւնքն 246
ՎԵՐՋԱԲԱՆ 257

Վրէպ.			Ո՛ղ.
Ց Ե Ղ 15	տող 14	անցուկ	= անճուկ
Ց Ե Ղ 19	տող 19	հեւատոյ	= հաւատոյ
Ց Ե Ղ 24	տող 34	նարոգս	= նորոգս
Ց Ե Ղ 28	տող 8	ճիշտ	= ճիշդ
Ց Ե Ղ 57	տող 29	տուայց	= տուաճ
Ց Ե Ղ 61	տող 33	բաւլում	= բազում
Ց Ե Ղ 63	տող 35	կանոնայ	= կանոնաց
Ց Ե Ղ 66	տող 33	բնագին	= բնագրին
Ց Ե Ղ 86	տող 19	գլխարկարգութեանց	= գլխակարգութեանց
Ց Ե Ղ 113	տող 36	տողերէ	= տողերը
Ց Ե Ղ 209	տող 34	ազապարի	= աղապարի
Ց Ե Ղ 211	տող 27	խորհախորհուրդ	= խորախորհուրդ
Ց Ե Ղ 215	տող 13	դատին	= դատեն
Ց Ե Ղ 233	տող 21	ԵՆ	= Է՛Ն

ԱՋԴ. 40 էջի 19. տողն ըլլալու է՝ Նոր Կտակարանի նորգտուած ընթերցուածները. Իսկ 20. տողն՝ Նոր Կտակարանի հին և նախնեաբար յատուկ եղած ընթերցուածներ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0340623